

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)

Նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել **ԱՆՎՃԱՐ**:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать **БЕСПЛАТНО**.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for **FREE** scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlb.am/>

E-mail: info@artsakhlb.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlb.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՍԵՐԳԵՅ ԲԱՐՍԵԳՅԱՆ

ԱՐՃԱՆ-ՂԱՐԱԲԱԳԸ
ՄԵԾ ՀԱՅ
[1941-

sergey barsegyan-kazm.jpg

Тип: Файл "JPG"

Размер: 4,24 МБ

Разрешение: 2055 x 2936

пкс

ՄԵՐԳԵՅ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԸ
ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ
(1941-1945թթ.)

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2015

ՀՏԴ 94(47+57)
ԳՄԴ 63.3(2)
Բ 371

*Նվիրում եմ Հայրենական Մեծ պատերազմի
հաղթանակի 70-ամյակին*

Բարսեղյան Ս.
Բ 371 Արցախ-Ղարաբաղը Մեծ Հայրենականում (1941-1945թթ.)/
Ս. Բարսեղյան.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ.,
2015.- 480 էջ:

Գիրքը նպատակ ունի հասարակության լայն շրջանակներին լայնամասշտաբ տեղեկություններ տալու ծննդով Արցախ-Ղարաբաղից եւ նախկին Ադրբեջանական ԽՍՀ հայաբնակ բնակավայրերից՝ Հայրենական Մեծ պատերազմի աշխարհաճանաչ հայ զորավարների, հերոսների, Փառքի շքանշանների ասպետների, եւ այդ պատերազմում զոհվածների՝ անվանացանկով նրանց հիշատակին կառուցված հուշարձան-կոթողների մասին:

ՀՏԴ 94(47+57)
ԳՄԴ 63.3(2)

ԽՈՍՔ ՅԵՂԻՆԱԿԻ ԿԱՍ ԳՐԻ ԾՆՈՒՆԴԸ

Նման գիրք ունենալու անհրաժեշտություն անշուշտ կար: Չի ստեղծվել, չկար:

ԽՍՀՄ Յայրենական Մեծ պատերազմի (1941-1945 թթ.) եւ աշխատանքի վետերանների ԼՂՀ սույն հասարակական կազմակերպությունը, որ ստեղծվել էր, դեռեւս, նախորդ դարի յոթանասունական թվականներին, մեծ հնարավորություններ են եղել, հենց պատերազմի ավարտից հետո, նրա թարմ հետքերով սերունդներին թողնելու համար որեւէ բան ստեղծել: Սակայն, այդ պատերազմին Լեռնային Ղարաբաղից մասնակցած հայազգի քաջորդիների մասին որեւէ ամբողջական բան չի ստեղծվել:

Հակված չեմ ժխտելու, որ այդ առումով հրապարակված ոչինչ չկա: Պարզապես, ընդհանրացված, ամբողջական որեւէ բան չկար:

Միայն մի բան, որ մնացել է, դա բնակավայրերում զոհվածների հիշատակին կանգնեցված հուշարձաններն են մնացել, այն էլ, ցավոք, ոչ բոլոր բնակավայրերում: Նրանց մի մասը ոչնչացվել էր ագերիների կողմից 1990-ական թվականներին Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմի ժամանակ, իսկ որոշ մասն էլ հայ բնակչության նկատմամբ Բաքվի կողմից հայատյաց քաղաքականության հետեւանքով, իրենց բնակավայրերը հարկադրաբար լքելու հետ կապված՝ փլվել-քայքայվել են՝ հուշարձաններն անխնամ մնալու պատճառով:

Յայրենական պատերազմի եւ աշխատանքի վետերանների ԼՂՀ մեր այս հասարակական կազմակերպության՝ 2008 թ. դեկտեմբերի 18-ին կայացած հաշվետու-ընտրական ժողովում ինձ ընտրեցին այս կազմակերպության նախագահ: Դրանից հինգ տարի առաջ էլ ինձ այդ պաշտոնի համար առաջարկ եղավ, հրաժարվեցի: Այս անգամ հնարավոր չեղավ, ընտրեցին:

Ծանոթ էի կազմակերպության հիմնական խնդիրներին: Ես ձեռնամուխ եղա այդ խնդիրների կատարմանը: Կազմակերպության աշխատանքներում որոշ թարմություն մտցվեց եւ այսօր էլ շարունակվում է այն նույն ձեւով:

Կարճ ժամանակամիջոցում հնարավորություն ունեցանք վերանորոգել կազմակերպության զբաղեցրած տարածքը, բարեկարգել եւ կահավորել սենյակները: Սկսեցինք ուշադրություն դարձնել վետերանների հանգստի կազմակերպմանը, նրանց համար էքսկուր-

սիաների եւ զբոսանքների կազմակերպմանը՝ դեպի երկրամասի պատմամշակութային նշանավոր վայրեր:

Սկսեցինք հնարավորինս ակտիվ օգտագործել վետերանների ներուժը երիտասարդ սերնդի ռազմա-հայրենասիրական դաստիարակության կարելու գործում, կազմակերպել հանդիպումներ Արցախի Պաշտպանության բանակի զորամասերում, աշխատանքային, ուսումնական կոլեկտիվներում, զինծառայության ենթակա երիտասարդների հետ, զրույցներ ունենալ եւ այլ կարգի գործեր:

Դրա հետ միասին ուշադրության կենտրոնում էի պահում պատերազմի եւ աշխատանքի վետերանների կարիքներն ու պահանջները, սոցիալական, կենցաղային, բնակարանային, թոշակի հետ կապված հարցերը, նրանց կողմից բարձրացված հարցերի արագ ընթացքավորմանը:

Բավականաչափ մեծացավ եւ այսօր էլ շարունակվում է ուշադրությունը հանրապետական եւ քաղաքային իշխանության մարմինների, Արցախի Պաշտպանության բանակի ղեկավարության կողմից:

Այնուամենայնիվ, կատարվածով չէի բավարարվում, քիչ էի համարում այն:

Մտածում էի մի բան անել սերունդներին թողնելու համար ու որոշեցի ընդհանրացնել ծննդով, արմատներով ղարաբաղցի աշխարհաճանաչ մեր զորավարների, հորհրդային Միության հերոսների, բարձրաստիճան հրամանատարների ու սպաների, փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետների, մարտադաշտում զոհված մեր քաջորդիների անցած մարտական ուղու, գոնե նրանց հիշատակը հավերժացնող հուշարձանների նկարները, զոհվածների ցուցակներն ու այլնի մասին տեղեկությունները: Անելու բան չատ կար:

Նման մտադրության իրականացումը ինձ մոտ որոշակի դարձավ հատկապես 2010թ. մայիսյան օրերին, երբ աշխարհը տոնում էր Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 65-ամյա հոբելյանը, իսկ մենք ոչինչ չունեինք ցույց տալու համար, բացի պատերազմում զոհվածների հուշարձանները: Ականատեսը լինելով Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների ու անհայտ կորածների հարազատների ԼՂՀ հասարակական կազմակերպությունների նախագահներ Գալյա Առստամյանի եւ Վերա Գրիգորյանի հայրենանվեր գործունեությանը՝ արցախյան պատերազմում զոհվածների ու անհայտ կորածների հիշատակը հավերժացնող հիանալի հուշաթանգարանների ստեղծման գործում, որոնց կողքին, սակայն մենք, գրեթե ոչինչ չունեինք Մեծ հայրենականի վերաբերյալ: Անհերքելի

ճշմարտություն է, որ ամեն ինչ բնության մեջ, հասարակական կյանքում, իսկ մարդու պարագայում հատկապես, եթե դադարում է հիշվելուց եւ կամ լիակատար մոռացության է տրվում, այդ պահից էլ այն մահանում է: Ես ուզում եմ, որ հայրենիքի համար իրենց կյանքը տված ամեն ինչ, բոլորը եւ ամեն ոք մշտապես հիշվեն եւ լինեն անմահ: Այդ գիտակցումով էլ վճռականապես ձեռնամուխ լինել սույն գրքի ստեղծմանը:

Ապագա սերունդները պետք է իմանան եւ հպարտանան, որ այս այն Ղարաբաղն է, որ ընդամենը 120-130 հազար հայ բնակիչ ունենալով, 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմին տվել է իր ծոցից ծնված Խորհրդային Միության մեկ մարշալ, տարբեր զորատեսակների երեք մարշալ, ռազմա-ծովային ուժերի մեկ ծովակալ, մի շարք դերժովակալներ, Խորհրդային Միության մեծաքանակ հերոսներ, բարձրաստիճան հրամանատարներ ու սպաներ, փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետներ, Խորհրդային Միության եւ արտասահմանյան երկրների շքանշաններով ու մեդալներով բազմաթիվ պարգևատրվածներ՝ մարտերում թողնելով շուրջ 22 հազար զոհվածներ: Այդ դեռ բոլորը չէ:

Հիշենք, որ արցախցու հզոր եւ անկոտրում կամքը, ոգու արիությունը, սրբազան հողին անմնացորդ նվիրումը, ինչը ցայտուն կերպով ցուցադրվեց նաեւ Արցախյան շարժումը ճնշելու նպատակով ազերիների 8-10 միլիոնանոց պետության կողմից մեզ պարտադրված անհավասար դաժան պատերազմում արցախցու տարած փառահեղ հաղթանակը: Շնորհակալ եւ հպարտ ենք, որ այդ հաղթանակում մեծ դեր ունեցան մեր նախնիների, հատկապես Հայրենական պատերազմին մասնակից մեր հայրենակիցների անվեհերությունը, հայրենիքի նկատմամբ անմնացորդ նվիրումն ու ռազմական հզոր տաղանդը, ինչն օրինակ հանդիսացավ եւ ոգեւորեց մեզ հաջորդած սերունդներին նոր սխրանք գործելու համար: Ուրեմն, բոլորս պարտավոր ենք մշտապես հիշել նրանց բոլորին, քանզի շատ ավելի է անհրաժեշտ դառնում Արցախ-Ղարաբաղ ֆենոմենի ճանաչելի լինելը Արցախի ներկա եւ ապագա սերունդներին, աշխարհով մեկ սփռված հայությանն ու աշխարհի հանրությանը՝ ընդհանրապես, հատկապես Ղարաբաղի հարցը միջազգայնացնելու համար:

Այդ հանգամանքից ելնելով էլ որոշեցի մի բան ստեղծել:

Նման գործը կատարելը ինչքան ցանկալի, դրանից առավել դժվարություններն էին բազմաթիվ: Այնուամենայնիվ, ձեռնարկեցի սույն գործը եւ սկսեցի այդ կապակցությամբ հավաքել կարելոր եւ անհրաժեշտ նյութեր:

Արդեն որոշակի աշխատանք էի կատարել Ղարաբաղի մասշտաբով, երբ ինձ մոտ նոր միտք հղացավ. իսկ ինչու նույնը չկատարել նաեւ Զյուսիսային Արցախի եւ ընդհանրապէս, նախկին Ադրբեջանական ԽՍՀ հայաբնակ բնակավայրերի մասշտաբով՝ գիտակցելով, նույնիսկ, որ ավելի է դժվարանում գործը, թերեւս անհնար դառնում նրա լրիվ եւ ամբողջական կատարումը:

Շարունակեցի աշխատել: Կազմեցի սույն գիրքը Ղարաբաղում, Զյուսիսային Արցախում եւ մասամբ Ադրբեջան պետության տարածքի որոշ հայաբնակ բնակավայրերից Մեծ հայրենականին մասնակցած հայազգի նշանավոր մեր հայրենակիցների անցած մարտական ուղու ու նաեւ այդ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնելու մասին:

Արդեն Ձեր սեղանին է այն:

Հաջողված է այն, կամ լավ է թե վատ՝ թողնում եմ քո կարծիքին, հարգելի ընթերցող:

**ՆԱԽԱԲԱՆ
ԿԱՄ
ԱՐՑԱՆ-ՂԱՐԱԲԱՂԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒԴԻՆԵՐՈՒՄ**

«Գործունեության լայն թափ, անձնագրի քաջություն, վտանգալի խիզախության հակում, ինքնավստահություն, նահապետականություն ընտանեկան կյանքում: Ահա դարաբաղցու համակրելի գծերը, որոնք խտացնում են հին հայկական առաքինությունները»:

Սերգեյ ԳՈՐՈՂԵՅԿԻ

Արցախը զբաղեցնում է Փոքր Կովկասի Հարավարևելյան լեռնոտ տարածքը: Նրա սահմաններն Արեւմուտքում հասնում են մինչեւ Սեւանա լճի արեւելյան ափերը, Հարավ-Արեւմուտքում՝ Աղավնո /Հագարի/, Հարավում՝ Երասխ /Արաքս/ գետը, Արեւելքում՝ խորանում Մուխանքի դաշտաբերանում եւ Զյուսիսից՝ Ղարաբաղյան լեռնաշղթան:

Երկրամասը ունի խիստ կտրտված լեռնային մակերեսային ծածկված գեղատեսիլ անտառներով: Անտառները կազմում են Արցախի տարածքի ավելը, քան 35 տոկոսը: Արցախը հարուստ է տարբեր տեսակի հանքաքարերի ու հանքային ջրերի պաշարներով:

Ըստ օտար եւ հայ հնագիտական նյութերի, քարե դարաշրջանի եւ հետագա ժամանակաշրջանների բնակավայրերի, բերդերի, առանձին կառույցների ավերակները, հողատակից դուրս բերված զանազան զենքերը, զարդերը ու գործիքները վկայում են, որ մարդն այստեղ շարունակաբար ապրել է հնագույն ժամանակներից: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Հաղուրթի շրջանի Ազոխ գյուղի պալեոլիթյան քարայրից ոչ հեռու անցյալում հայտնաբերված նյութերը, մասնավորապես նախամարդու /Նեանդերթալյան մարդու/ ոսկորները:

Այդ մասին են վկայում նաեւ երկրամասի Թաղլարի ու Զարին տակի քարանձավներում հայտնաբերված հետաքրքիր նյութերը:

Ֆրանսիացի հնագետ Անրի դը Լյումվեյնին լինելով Ազոխի քարանձավում եւ ծանոթանալով նրա հարուստ ու բազմաբնույթ նյութերին, հայտարարել է. «Դրանք հողագնդի վրա մարդկային հնագույն քաղաքակրթության օջախի ապացույցներ են եւ գիտությունը

հնարավորություն ունի տեսնելու, որ լեռնային այս երկրամասը եւս ընդգրկված է եղել մարդաստեղծման ընթացքի մեջ»:

Արցախը հարուստ է, հատկապես, ժայռատեսակ հուշարձաններով, ինչը ժամանակագրական շատ լայն ընդգրկում ունի Զ.ա. 7-րդ հազարամյակից սկսած մինչեւ 1-ին հազարամյակը:

Հայոց Արեւելից գավառներում հայտնաբերվել են նաեւ Բրոնզի դարաշրջանում կառուցված կիկլոպյան ամրոցներ:

Հետախուզական արշավների եւ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ Արցախի տարածքներում հայտնաբերվել են բրոնզե եւ երկաթե դարաշրջաններին վերաբերող քարից, ոսկորից, բրոնզից, երկաթից, կավից եւ այլ նյութերից պատրաստված մեծաքանակ զենքեր, զարդարանքներ, պերճանքի առարկաներ, թռչնակերպ, կենդանակերպ, մարդակերպ արձանիկներ, պաշտամունքային փորագիր պատկերների բարդ նախշազարդերով բրոնզե գոտիներ, ճարմանդներ, դաշույններ:


Հազարավոր տարիներ առաջ մարդու ստեղծած այս արժեքները այսօր պահպանվում են ինչպես Արցախի պետական, այնպես էլ Պետերբուրգի, Գերմանիայի թանգարաններում:

Արցախի այս եւ այլ պատմա-մշակութային արժեքների մի մասը Խորհրդային տարիներին տեղափոխվել է Բաքու քաղաքը, որտեղ էլ առ այսօր ադրբեջանցիներ աշխարհին ներկայացվում են, որպես իրենց մշակույթի «անբաժանելի» մաս:

Տասնամյակներ առաջ հայտնի արեւելագետ Ռ.Վիրխովը քննության ենթարկելով եւ համադրելով հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներից հայտնաբերված նյութերը, գրել է. «Սակավաթիվ պեղումներն անգամ ցույց են տալիս, որ Գուգարքից մինչեւ Թարթառ գետի տարածքներում բնակված հին ազգերը մի կուլտուրայի ներկայացուցիչներ էին», իսկ նշանավոր մարդաբան Բունակը շարունակելով այս միտքը, գրել է. «Արցախի հայերը ոչ միայն պատկանում են հնդեւրոպական լեզվաընտանիքի արմենոիդ մարդաբանական տիպին, այլեւ հանդիսանում են այդ տիպի ամենացայտուն ներկայացուցիչները»:

Հայկական լեռնաշխարհում Զ.ա. 3-1 հազարամյակներում հանդես եկան առաջին պետական կազմավորումները, որոնց շարքում իր ուրույն տեղն ու դերն ունեն Ուրարտուն կամ Վանի թագավորությունը: Արցախը Արգիշտի Ա-ի կառավարման տարիներին ներառված է եղել Ուրարտական պետության կազմում, ինչի մասին է վկայում Կոտայքում գտնված Արգիշտի Ա-ի ժայռափոր արձանագրությունը:

**Հայաստանը Բ.ա. II դարում: Մեծ Հայքի թագավորության հզորացումը
Արտաշես Ա թագավորի (189-160) օրոք**



Վանի թագավորության արքա Սարղուրի Բ-ի արձանագրությունները, Ադախունի տեղանունները, Ստեփանակերտի եւ Խոջալլուի /Լեռնային Ղարաբաղ/ դամբարանաբլուրներից պեղված նյութերը վկայում են, որ Արցախը եւ Ուտիքը Հայոց երկրի թագավորատոհմեր Երվանդունիների եւ Արտաշեսյանների օրոք շարունակել են մնալ Վանի միացյալ թագավորության կազմում, իսկ հույն եւ հռոմեացի պատմիչները վկայում են, որ Հայաստանի արեւելյան սահմանները անցնում են Կուր գետով: Ըստ հույն պատմիչ Ստրաբոնի՝ Արցախը Զ.ա. 1-ին դարում գտնվում էր Մեծ Հայքի խորքում եւ այդ ժամանակները արտաքին աշխարհին /հատկապես պատերազմող երկրներին/ արտահանում էր մեծաքանակ ձիեր:

Շարունակելով այս միտքը, Մովսես Խորենացին հաղորդում է Արտաշեսը Կուրի եւ Արաքսի միջագետքի, /այսինքն Արցախի եւ Ուտիքի/ կուսակալ կարգեց Հայկի սերնդից, որից էլ սերվեց Հայոց արեւելից կողմանց Առանշահիկների իշխանական տունը:

Արտաշես Ա-ի գործը շարունակեց նրա թոռ Տիգրան Բ Մեծը: Նա Հայոց աշխարհում կառուցեց 4 քաղաք: Բոլորին կոչեցին իր անունով՝ Տիգրանակերտ եւ դրանցից մեկը՝ Արցախի Վանքասարի ստորոտում: Հետագայում եկվոր թուրքերն այն անվանեցին Գյավուրդալա:

2006թ. հայ հնագետների ջանքերով հողի տակից վեր հանեցին Արցախի Տիգրանակերտի հնագույն կառույցները եւ թուրքին որերորդ անգամ ապացուցեցին, որ Նոյի ժամանակներից ի վեր այս աշխարհը հայաշունչ ու հայաբնակ է եղել:

Ներոնի ժամանակներից հռոմում պահպանված պատի վրա փորագրված աշխարհի մարմարե քարտեզում Արցախը դիտվում էր որպես Հայոց պետության նահանգներից մեկը: Այս իրողությունը ժամանակին արձանագրել են Զ.ա. 1-ին դարից մինչեւ Զ.հ. 5-րդ դարն ապրած հույն եւ հռոմեացի մատենագիրները:

19-րդ դարի 1-ին կեսերին Ադրբեջանի հասարակական գործիչ ու գիտնական Աբաս-Կուլի-Աղա Բաքիխանովը խոստովանել է. «Դատելով զանազան հանգամանքներից ու աղբյուրների տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ Կուրի աջափնյակը, մինչեւ Արաքսի հետ միախառնվելու վայրը, կազմել է Հայաստանի մաս»:

387թ. պարսկա-բյուզանդական համաձայնությամբ Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց երկու տերությունների միջեւ: Արցախի ու Ուտիքի նահանգները բռնակցվեցին Աղվանից մարզպանությանը:

Երկրի հայրենասեր ուժերը ջանում էին վերականգնել եւ պահ-

պանել հայրենիքի միասնությունը:

Արցախի եւ Ուտիքի քաջորդիները Բակ Առանշահիկ իշխանի գլխավորությամբ Ավարայրի ճակատամարտում թեւ ու թիկունք դարձան Վարդան զորավարին եւ փայլուն հաղթանակ տարան Յայոց թագավորների ձմեռանոց Խաղխաղ քաղաքի մատույցներում:

Ավարայրի նահատակների անունները հավերժացնող բազմաթիվ սրբավայրեր, եկեղեցիներ, մատուռներ են կառուցվել Վարանդայի Ավետարանոց, Սարգսաշեն բնակատեղերում, Վերին Թաղավարդ եւ Մոշխմահատ գյուղերի արանքի սարի գագաթին: Դրանցից շատերը, նաեւ Ղեւոնդ Երեցի հիշատակին կառուցած Սուրբ Ղեւոնդա կոթողը, Վարդան զորավարի անվամբ կառուցված Յադրութի Ամատուկ եւ Մարտունու Մուշկապատ գյուղերի եկեղեցիները կանգուն են մնացել առ այսօր:

Հակապարսկական հուժկու ապստամբությունից հետո //5-րդ դար/, Վաչագան Բարեպաշտի օրոք Արցախի եւ Ուտիքի Առանշահիկ հայ իշխանական տոհմը հզորանալով, իրեն հայտարարեց թագավորություն:

Պետականության հիմքերը անսասան դարձնելու եւ երկրի հոգեւոր կյանքն աշխուժացնելու նպատակով, ինչպես Մովսէս Կաղանկատվացին է վկայում, «Վաչագան թագավորը տարվա օրերի թվով եկեղեցիներ շինեց ու ջերմեռանդություն ցուցաբերեց հայ դպրության տարածման գործում»:

7-րդ դարի սկզբներին Յայոց երկրի անդորրը երիցս խաթարվեց: Այս անգամ էլ արաբական մահասփյուռ արշավանքներից: Դրան դիմակայելու նպատակով պաշտպանական ամրոցներ կառուցվեցին Արցախի Հանդաբերդ, Կաչաղակաբերդ, Զթիշ, Շիկաքար եւ այլ բնակավայրերում:

850-ական թվականներին ծանր ու դաժան մարտեր եղան Դիգակում: Խալիֆը թուրք զորավար Բուղա Շարաբիի գլխավորությամբ 200 հազարանոց զորք ուղարկեց Յայաստան՝ հակաարաբական շարժումը ճնշելու հանձնարարությամբ: Չկարողանալով ընկճել բերդի պաշտպաններին, Բուղան դիմեց խարդավանքի. Խալիֆից Եսայիի համար մի թուղթ բերել տվեց, որով նրան հրավիրում էր Բաղդադ՝ իբրեւ բանակցություններ վարելու համար: Լեռնցի ասպետ-զորավարը, որքան խիզախ ու անպարտ էր, նույնքան էլ պարզամիտ ու հավատավոր: Նրան խաբեությամբ Բաղդադ տարան, բանտ նետեցին ու գլխատեցին:

Դիգակի Տումի գյուղում 10-րդ դարում կառուցված ս.Կարմրավոր եկեղեցու ճակատային քարը, որի վրա արձանագրությունը պատ-

մում եւ հավերժացնում է Եսայի իշխանի եւ Քթիշի անանուն պաշտպանների մաքառումները, առ այսօր պահվում է Արցախի պետական թանգարանում:

885 թ. Հայ ժողովրդի հակաարաբական ընդվզումների արդյունքում վերստին վերականգնվեց Հայաստանի անկախությունը: Աշոտ Բագրատունին ճանաչվեց Մեծ Հայքի նահանգների գերագահ տիրակալ: Արցախը կրկին հայտնվեց համահայկական պետության ուղեծրում:

9-րդ դարում Արցախի արեւմտյան եւ հյուսիսային կողմերում կազմավորվում է Խաչենի իշխանությունը: Առանշահիկները Խաչենի տարբեր գավառներում կառուցեցին անառիկ ամրոցներ, վանական համալիրներ ու խաչքարեր:

Արցախի մյուս ծայրում՝ Արաքսի ափին, 9-րդ դարում ձեւավորվեց Դիզակի իշխանությունը, ուր երկար ժամանակ իշխում էին Նշանավոր Եսայի իշխանի ժառանգները՝ Գագիկ եւ Վաչագան թագավորները: Առ այսօր էլ Դիզակի իշխանների գերեզմանոցի տապանաքարերից մեկի տեղը տեղացիներն անվանում են թագավորի գերեզման, իսկ նրան հարակից շինության բեկորները՝ թագավորի պալատ:

Արցախի բարգավաճ կյանքը նորից խաթարվեց 11-րդ դարի կեսերին: Թուրք սելջուկն այստեղ էր եկել եւ հայի ու հույնի հողի վրա պետություն ստեղծել: Հայը իր տան մեջ նորից զգաց քոչվոր ու օտար ցեղի սահմնկեցուցիչ շունչը: Այս պայմաններում, նույնիսկ, Արցախցի հայը լեռնաստանում շարունակեց պահել իր ինքնությունը:


Եկան նոր ժամանակներ. հայոց միասնությունը անխաթար պահելու նպատակով Չաքարյան իշխանները խնամիական կապեր ստեղծելով Ներքին Խաչենի նշանավոր Հասան-Ջալալյանների տան հետ, միասնական ուժերով պահպանեցին Արցախի ինքնությունը:

Հասան-Ջալալը իրեն համարում էր «թագավոր բարձր եւ մեծ՝ արցախական աշխարհի»: Հակամոնղոլական ապստամբությանը ակտիվ մասնակցելու համար, նրան հողակոտոր անելով սպանեցին: Նրա դին իր կտակի համաձայն տեղափոխվեց եւ ամփոփվեց հայրենիքում իր կառուցած «Գանձասար» վանքի գավթում:

Հոգեւոր թեմը, որ ժառանգական իրավունքով 13-րդ դարի երկրորդ կեսից տնօրինում էր նահանգի եպիսկոպոսությունը, 15-րդ դարից տիրապետում էր ամբողջ Հայոց Արեւելից կողմի կաթողիկոսական աթոռը:

Այդ ժամանակ հայրենանվեր մեծ գործունեություն ծավալեց Վերին Խաչենի կամ Ծարի Հասան իշխանի կին Դուփն, որը դուստրն էր

Տղզրան Մեծի տերությունը (Ք.ա. 69թ. կացությամբ)



իշխան Սարգիս Չաքարյանի: Իշխանուհին չափազանց լայնախոհ, եռանդուն մի գործիչ էր, իր տոհմը կոչեց իր անունով՝ Դոփյան: Իշխանանիստ կենտրոնը Ծարն էր՝ ներկայիս Քարվաճառի շրջանի Ծար գյուղի տեղը, ուր կանգուն են մնացել իշխանուհու կառուցած եկեղեցիները:

14-րդ դարի 80-ականներին նորից արհավիրք: Այս անգամ Այսրկովկաս խուժեցին Լենկ-Թեմուրի հորդաները:

Նրանց կրնկակոխ Հայաստան թափանցեցին կարակոյունլու եւ աղկոյունլու թուրքմենական քոչվոր ցեղերը:

Արցախի Առանշահիկ նախարարական տան շառավիղները, դիմակայելով օտար բռնավորների դժնդակ տիրապետությանը, ավելի մանրացան, եւ կառչեցին լեռնաստանի անմատչելի վայրերին:

Կարակոյունլու Ջհանշահի հրովարտակով լեռնային Արցախի տեր մելիքների իշխանությունը ճանաչում ստացավ:

Ի դեպ, նույնիսկ այդ պայմաններում Արցախում գործում էին կառավարման ժողովրդավարական սկզբունքներ: Այնտեղ որպես կարգ մելիքներին փոխարինում էին իրենց ավագ որդիները: Եվ նրանք ժողովրդի հետ համախոսական-համաձայնությունից հետո էին միայն ստանձնում մելիքական պարտականությունները: Այս կարգը նպաստեց ժողովրդի ու իշխանության միասնության ամրապնդմանը եւ ազգային ինքնության ու ինքնուրույնության պահպանմանը:

...Պարսից շահերը քաջածանոթ լինելով հայ զինվորականության սխրանքներին՝ փորձում էին Արցախի մելիքների ուժը օգտագործել Թուրքիայի ծավալապաշտության դեմ: Այդ նպատակով օրինակա-նացնում եւ խրախուսում էին մելիքական կարգն ու իրավունքներն Արցախում:

Շահ Աբասը, միաժամանակ վտանգ էր տեսնում Արցախի ու Սյունիքի միասնության մեջ: Հետագա բարդություններից խուսափելու նպատակով, Պարսկաստանի խորքերից նա քրդական ցեղեր տեղափոխեց եւ բնակեցրեց Արցախի ու Սյունիքի մելիքությունների միջեւ՝ Արաքսի ափից մինչեւ Մռավի փեշերը: Եկվորները չկարողացան տեր դառնալ հայկական երկրամասին: Այդ մասին են վկայում Քարվաճառի ու Քաշաթաղի շրջաններում 17-18-րդ դարերում կառուցված եւ առ այսօր պահպանվող եկեղեցիների, մատուռների մնացորդներն ու հարյուրավոր խաչքարերը: Մինչեւ 18-րդ դարի առաջին քառորդի վերջերը, Քարվաճառի տարածքում գոյություն ունեին շուրջ 140 մեծ ու փոքր հայկական գյուղեր:

Արցախի մելիքները օգտվելով 18-րդ դարի սկզբներին պարսից

տերությունում տիրող ներքին խռովություններից՝ ստեղծեցին գի-
նական միասնություն, որը պատմությանը հայտնի է սղնախներ
անունով: Վերածնվեց արցախահայ պետականությունը: Սղնախա-
կանների հիմնական ուժերը կենտրոնացված էին Ջրաբերդի, Գյու-
լիստանի գավառներում եւ Մռավի ստորոտում: Մեծ սղնախի ղեկա-
վարն ու ոգեշնչողը Գանձասարի կաթողիկոս Եսայի Յասան-Ջալալ-
յանն էր, իսկ Փոքր սղնախը գլխավորում էր Ավան հարյուրապետը:

Հայոց զորքերը տեղաբաշխված էին Վարանդայի Ավետարանոց
եւ Սղնախ գյուղերի տարածքում, ներկայիս Շուշի քաղաքի շրջա-
կայքում, ուր պահպանվում են պաշտպանական այդ կառույցների
մնացորդները:

Եկան նոր ժամանակներ:

Այս անգամ լեռնաստանի հայությունը հարկադրված էր դիմակա-
յելու ավելի վայրագ ու ահեղ թշնամու՝ թուրքին:

Հայ-թուրքական դիմակայությունը օրեցօր ավելի էր կատաղի
դառնում: 1725թ. Ահեղ ճակատամարտում միայն մի գիշերվա մեջ
Դիզակի մելիք Եգանի եւ Վարանդայի մելիքի աղջկա՝ Գայանեի գլ-
խավորությամբ Վարանդայում ոչնչացվեց 5 հազարանոց թուրքա-
կան մի զորագունդ:

Սակայն ուժերն անհավասար էին... Կրկին հայ բնակչության
գաղթ: Այս անգամ դեպի Շուլավեր, Վրաստանի Գարդաբանի շր-
ջան, Կախեթի Թելավ քաղաք եւ այլ վայրեր: Միայն Շաքի, Շիրվան
գավառներում ու Հյուսիսային Կովկասում հայերը հիմնեցին հար-
յուրից ավելի գյուղեր:

Սղնախների ազատագրական պայքարն Արցախում, այնուամե-
նայնիվ, վախճան չունեցավ: Սղնախների հիմքերի վրա ծնվեցին
վարչա-քաղաքական նոր միավորներ՝ Խամմայի մելիքությունները,
որոնք դարձան հայ ազգային-ազատագրական շարժման նոր
հանգրվաններ:

Հինգ մելիքություններից կազմված սահանգը կենտրոն ունենա-
լով Տող ավանը, Դիզակի մելիք Եգանի գլխավորությամբ ճանաչվեց
որպես հայկական ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում
էին Գանձակի մատույցներից մինչեւ Արաքս գետը: Մելիք Եգանը,
օգտագործելով պարսից Նադիր շահի հետ ունեցած իր ջերմ հարա-
բերությունները, հոգում էր նաեւ ողջ Արեւելյան Հայաստանի հայու-
թյան հոգսերը: 1747թ. Նադիր շահի դավադրաբար սպանության
առիթից օգտվելով, Կուր-Արաքսյան տարածքներում թափառող
ավազակաբարո թուրքախոս ցեղերը միավորվեցին ջեւանշիր ցեղի
առաջնորդ Փանահի շուրջը եւ հիմնավորվեցին դաշտային Ղարա-

բաղում: Փանահը ամրապնդվեց Արցախի հյուսիս արեւելքում գտնվող Տիգրանակերտ բերդանոցում եւ այստեղից հարձակումներ գործեց Խաչենի ու Ջրաբերդի մելիքությունների վրա: Հայ մելիքները, չհանդուրժելով խանի սանձարձակ այդ քայլերը, գրավեցին Տիգրանակերտը եւ Փանահին հեռացրին Արցախի լեռնային հատվածներից:

Սակայն, օգտվելով հարմար առիթից, քոչվոր ցեղի առաջնորդը, որ նենգաբար ոտք էր դրել Ղարաբաղում, իր դիրքերն այստեղ ամրապնդելու նպատակով Ղարաբաղում բնակեցրեց Միլ-Մուղանի տափաստանում եւ այլ վայրերում թափառող ցեղերի:

Փանահը եւ նրան հաջորդած Իբրահիմ խանը անվերջանալի պատերազմ սանձազերծեցին Ղարաբաղի մելիքների դեմ: Այն ավելի արագացրեց Հյուսիսային Ղարաբաղի հայաթափությունը: Շուրջ 8 հազար հայ ընտանիք ապաստան գտան Լոռու Շուլավերի կողմերում, որտեղ այսօր էլ պահպանվում են ղարաբաղյան բարբառը, բարքերն ու սովորույթները: Իսկ Ղարաբաղի տարածքները լցվում էին մահմեդական խառնամբոխով:

Նույնիսկ այսպիսի պայմաններում Ղարաբաղը մնաց հայաբնակ:

Այդ մասին է վկայում Կովկասում ռուսական զորքերի հրամանատար Ցիցխանովի մի զեկուցագիր, որում նշվում է. 18-րդ դարի վերջերին Ղարաբաղում ապրում էր 40-60 հազար հայ ընտանիք: Ամեն մի ընտանիքում կամ գերդաստանում ապրում էր 10-15 մարդ, ասել է թե՛ արցախահայերի թիվն այստեղ կես միլիոնից ավելի էր:

17-րդ դարի երկրորդ կեսին հայ քաղաքական միտքը հակվում է դեպի Ռուսաստան: 1670-ական թվականներին Գանձասարի Պետրոս կաթողիկոսը ուղերձով դիմեց ռուսական ցարին՝ հայերին իր հովանավորության տակ վերցնելու խնդրանքով:


Ռուս-պարսկական խորացվող հակասությունները 1804-1813թթ. եւ 1826-28թթ. վերածվեցին նոր պատերազմների:

Արցախի մելիքները այս անգամ էլ իրենց զինական ու նյութական հնարավորությունները ի սպաս դրեցին ռուսական կողմին՝ ակնկալելով ռուսաց երկրի հովանավորությունը:

- Կուսապատգի Վանի Աթաբեկյանի հնարամտությամբ 1805թ. Վերահաս պարտության վտանգից փրկվեցին Ռուսական զորքերը Ասկերանի եւ Շահբուլաղի բերդերում, որտեղ շարքային զինվորի հետ մարտնչում էին հայազգի զորավարներ Վալերիան Մադաթովը եւ Հովհաննես Լազարեւը:

- 1826թ. հուլիսի 26-ից՝ 48 օր շարունակ 1500 հայ աշխարհագորայիններ թեւ ու թիկունք դարձան Շուշիի ռուսական կայազորին:

Հայաստանի 527-59 թթ.



- Հայության ջանադիր մասնակցությամբ ռուսական կողմի հաղթանակներն ամրագրվեցին Գյուլիստանի 1813թ. հոկտեմբերի 12-ի եւ Թուրքմենչայի 1828թ. փետրվարի 10-ի պայմանագրերով:

Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղը, որպես առանձին ազգային պետական միավոր, մտավ Ռուսաստանի կազմ:

Արցախում, կառավարման համակարգում զգալի փոփոխություններ կատարվեցին. Ռուսաստանի հպատակության տակ եղած շրջանում Արցախը ընդգրկվեց Նախ Կասպիական մարզի, այնուհետեւ՝ Շամախու Նահանգի, իսկ 1868 թվականից՝ Ելիզավետպոլի կազմում:

Թաթար խաներն ու բեկերը, սիրաշահելով ռուս աստիճանավորներին, տեր են դառնում հայկական գյուղերին ու մելիքների տիրույթներին:

- 1836թ. մարտի 11-ին վերացվեց Գանձասարի կաթողիկոսությունը: Միակ լուսավոր կետը մնաց Շուշին:

Օրեցօր բարգավաճում էր Շուշին: Այն դարձավ Այսրկովկասի ստեղծագործական, առեւտրական ու մշակութային կենտրոն: 1847թ. ստանում է քաղաքի կարգավիճակ: 19-րդ դարի վերջերին Շուշին, արդեն ուներ 33.252 բնակիչ, որի 62 տոկոսը կամ 20.584-ը հայեր էին: Շուշի այցելած օտար ճանապարհորդներն այն համարեցին «հայկական Փարիզ»:

19-րդ դարում Շուշին առեւտրական թելերով արդեն կապված էր արտասահմանյան երկրների հետ:

1880թ.-ի տվյալներով Շուշիում կային 952 առեւտրական եւ արդյունաբերական ձեռնարկություններ: Գերմանական «Ալգեմայն ցայտունգ» թերթը, դեռեւս 1846թ. նոյեմբերի 15-ին գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին, առանց չափազանցության կարելի է համարել Ջիբրալթար»: Հավաստի տվյալներով 1900թ. Բաքվի Նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների 29 տոկոսը պատկանում էր Ղարաբաղյան ծագումով հայ գործարարներին: Օրեցօր ծաղկող Շուշին իրեն էր ձգում հայ մտավորականության սերուցքին:

Նույնիսկ, անհնարին պայմաններում, արցախցին շարունակել է արարել, ստեղծել գիտության, արվեստի, ճարտարապետական, վանական եւ այլ ասպարեզների անկրկնելի արժեքներ:

Երիցս հիշենք Նրանցից մի քանիսը.

- 4-8-րդ եւ հետագա դարերում (15-18) կառուցված բազմաթիվ վանքերը, եկեղեցիները, եկեղացական համալիրները, ժայռափոր եւ վիմափոր եկեղեցիները, որոնց թվում Ամարասի վանքը, Ծիծեռնավանքը, Հռոմեկավանքը, Եղիշե Առաքյալի վանքը, Այրիվանքի եկեղե-

ցիները, 9-13-րդ դարերում Թարգմանչաց վանքի համալիրը, Գոշավանքը, Դադիվանքը, ճարտարապետության գլուխգործոցներից Գանձասարի վանական համալիրը, որը ռուս գիտնական Անատոլի Յակոբովսկին այն համարել է միջնադարյան հայ ճարտարապետության հանրագիտարան, մարգարիտ, Արցախի Մեծառանք գավառի /Մարտակերտի շրջանի Քուլատակ գյուղ/ մոտ /Ժ Յ Բ- / 853 թ./, հին կաթողիկոսանիստ ս.Յակոբավանքո, Դադիվանքի երկու հռչակավոր խաչքարերը:

- Ասպարեզ եկան ծննդով Արցախցի անվանի ուսուցիչներ, ուսուցչապետեր, փիլիսոփաներ, տոմարագետներ, մաթեմատիկոսներ, գրողներ: Յովհաննես Սարկավազ Իմաստասերի շանքերով 11-րդ դարում հիմնվեց Անիի համալսարանը: Մերոպ Մաշտոցը առաջին դպրոցներից մեկը հիմնեց Ամարասի վանքում, հետագայում նաեւ Տորում, Խաչենում, Յաթերքում:

- Վարդապետարաններն ու համալսարանները վերածեցին գիտության կաճառների: Վանքերը դարձան գրչության կենտրոններ:

- Ստեղծվեցին տասնյակ ձեռագրեր, որոնք այսօր էլ պահպանվում են պահվում են Մատենադարանում:

- Միջնադարյան պատմագիտական միտքը անհնար է պատկերացնել առանց արցախյան դպրոցի ներկայացուցիչների. Եսայի Յասան-Ջալալյան, Մովսես Կաղանկատվացի, Մովսես Դասխուրանցի, Կիրակոս Գանձակեցի, Վանական վարդապետ Տավուշեցի, Վարդան Արեւելցի, Գրիգոր Ակնեցի, Յովհաննես վարդապետ Ծարեցի եւ շատ ուրիշներ:

- Արցախում ու Ուտիքում հայկական պետականության գոյության պայմաններում (12-րդ դար) ստեղծվեցին հասարակական կյանքի կանոնավորման իրավական նորմերը: Նրա նախաձեռնողը եղավ Դավիթ Ալավկատրոփի Գանձակեցին, որի շարունակողը եղավ միջնադարյան հայ մշակույթի ամենահայտնի դեմքերից մեկը՝ Մխիթար Գոշը: Նրա ստեղծած «Դատաստանագիրքը» այնքան կատարյալ էր, որ այն շուրջ 700 տարի օգտագործվեց ոչ միայն հայ իրակա-նության մեջ, այլև այլ երկրներում:

- Դարավոր ավանդույթներ ունեցող հայ ճարտարապետությունը վաղ միջնադարում նոր որակ էլ զարգացում ունեցավ:

 - Այսօր էլ Արցախի տարածքներում պահպանվում են.

- Միջնադարյան տասնյակ միաթռիչք եւ բազմաթռիչք կամուրջները ./Արաքսի վրա՝ միմյանցից 75 մ հեռավորության վրա գտնվող Խուրափերինի/, Արաքս, Թարթառ, Խաչեն, Յագարի, Յոջանց գետերի վրա կառուցված կամուրջները՝ քանդակագարդ որմնանկարներով:

-Գերեզմանատներում՝ գեղաքանդակ տապանաքարեր հավերժությունը խորհրդանշող եւ հոգեւոր թեմաներով ու երաժիշտների, նազմիկների, տարբեր կենդանիների քանդակներով:

1873թ. Հերման Աբիխը, տեսնելով այս խաչքարերը, գրել է. «տպավորություններից խեղճացած զգացումն ասես, գիտակցում է բառ-արտահայտչի պակասավորությունը»/:

Իսկ քանի-քանի խաչքարեր, եկեղաշենքեր, վանական համալիրներ, կամուրջներ այլ կառույցներ ու արժեքներ են շարդ ու փշուր արվել քոչվոր թրքախոս ցեղերի կողմից դարերի ընթացքում: Ցավոք, այսօր էլ շարունակվում է սպիտակ եղեռնը՝ Նախիջեւանում, Հյուսիսային Արցախում, Արեւմտյան Հայաստանում. ավերվում են, ինչ հայկական է:

Արցախահայ մշակույթի մի առանձին ճյուղ է կազմում գորգագործությունը: Արցախի վիշապագորգերի, օձագորգերի, արծվագորգերի բազմաթիվ օրինակներ այսօր էլ պահվում են աշխարհի շատ թանգարաններում: Նրանցից Արցախի Բանանց գյուղում գործած 1202 թվակիր հնագույն գորգը պահվում է Վիեննայում: Աշխույժ ու բեղմնավոր է եղել նաեւ թատերական արվեստը:

-20-րդ դարը նոր անակնկալներ բերեց արցախահայությանը:


Ցարական իշխանությունները հաճախ /1905-1906, 1917-20թթ/ Բաքվում, Նախիջեւանում, Շուշիում, Գանձակում, հայաբնակ այլ վայրերում ազգամիջյան խռովություններ էին գրգռում հայերի ու կովկասյան թաթարների միջեւ:

...1917թ հոկտեմբերին պետական հեղաշրջման հետեւանքով ռուսական կայսրության քաղաքական համակարգին փոխարինեց խորհրդային կարգը:

1918թ. մայիսի 27-ին «Մուսավաթ» կուսակցությունը Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգները հռչակեց պետություն Ադրբեջանի կազմում, նրանում ներառելով նաեւ Ռուսաստանի ու Պարսկաստանի հպատակության տակ գտնվող մի շարք տարածքներ: Այն կատարվեց Թուրքիայի միջամտությամբ՝ Կովկասում պանթուրքիզմի եւ պանիսլամիզմի դրոշակակիրը դառնալու նպատակով: Այս պետությունը, որը գեներալ Անտոն Դենիկինի բնորոշմամբ «արհեստածին» էր, հավակնություն ուներ նաեւ պատմական Հայաստանի մաս կազմող Ղարաբաղի եւ Չանգեզուրի նկատմամբ:

1917-ի դեկտեմբերին Շուշիում ստեղծվեց «Միջկուսակցական բյուրո» կառավարման մարմինը, որն ընդունելի էր եւ հայ բնակչության, եւ ազգային մյուս փոքրամասնությունների համար:

Բազադատունյաց տեղությունը Աշոտ Ա եւ Սմբատ թագավորների ժող (885-908թթ.)



1918թ. հուլիսին /22-26/ Շուշիում կայացած Ղարաբաղի հայու-
թյան առաջին համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց
անկախ վարչա-քաղաքական միավոր, ընտրեց ազգային խորհուրդ
եւ 7 հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն: Այն
պաշտպանելու համար, Ղարաբաղի հայությունը շտապ կազմակեր-
պեց աշխարհագոր, որը 1918թ. հոկտեմբերի 18-ին Վարանդայի
Մամա գյուղի մոտ գլխովին ջախջախեց երկրամաս ներխուժած
թուրքական զորամասին: Ցավոք, անհավասար էին ուժերը: Արյու-
նահեղ բախումների արդյունքում ավերվեցին տասնյակ հայկական
գյուղեր: Իսկ Շուշիի հայկական թաղամասը հրի մատնվեց:

1920թ. մայիսի 12-ին խորհրդային Ադրբեջան մտած ռուսական
11-րդ կարմիր բանակի աջակցությամբ խորհրդայնացվեց Ղարաբա-
ղը եւ մտցվեց Ադրբեջանի կազմ: Նորից ասպարեզ եկավ «վիճար-
կելի» տարածքների հարցը: Պահը շատ նպաստավոր էր Ադրբեջա-
նի համար: Այն խորհրդային էր եւ խորհրդային Ռուսաստանի բա-
րեկամը, իսկ Չայաստանը՝ ոչ:

Արցախի տարածքից անջատելով Ղարաբաղի 107 հայաբնակ
գյուղեր՝ մնացած Լեռնային մասում 1923 թ. ստեղծվեց Լեռնային
Ղարաբաղի ինքնավար մարզ Ադրբեջանի կազմում:

Արցախը նորից մնաց օտարի հպատակության տակ: Եվ այդ
օտարը խորհրդային իշխանության բոլոր տարիներին հետեւողա-
կանորեն իրականացնում էր մարզը հայաթափելու ստոր քաղաքա-
կանություն՝ կասեցնելով մարզի տնտեսական ու մշակութային զար-
գացումը, ինչի հետեւանքով վտանգավոր չափերի հասավ հայ
բնակչության արտագաղթը ԼՂԻՄ-ից: Իսկ, հակառակ դրան, հայկա-
կան բնակավայրերը արագորեն լցվում էր ադրբեջանցիներով: Եթե
հայ բնակչությունը ԼՂԻՄ-ում 1926 թ-ի 111.7 հազարից 1990-ակա-
նին հասավ ընդամենը՝ 123.1 հազարի, ապա ադրբեջանցիները 12.6
հազարից հասան 37.2 հազարի:

Մայր Չայրենիքին միանալու համար պայքարը տարբեր ձեւերով
/սամակներ, բողոքներ, ելույթներ, պատվիրակությունների այցելու-
թյուններ վերադաս մարմիններ եւ այլն/ շարունակվեց նաեւ Մեծ
հայրենականի /1941-1945 թ.թ./ ավարտից հետո:

1988թ. փետրվարի 20-ը դարձավ արցախյան նորոյա պայքարի
իրավական ելակետը: Արտահայտելով արցախահայության ցան-
կությունը, ԼՂԻՄ մարզխորհուրդը ընդունեց որոշում. ԼՂԻՄ-ը դուրս
բերել Ադրբեջանի կազմից եւ մտցնել Չայաստանի կազմը: Որոշման
պատճեններն ուղարկվեցին Մոսկվա, Բաքու եւ Երեւան:

Կրեմլը մերժեց: Ադրբեջանի ղեկավարությունը ոգեւորվեց կրեմ-

լի նման որոշումից:

1988թ. փետրվարի 21-ին Հայաստանում զանգվածային մեծ ալիք բարձրացավ արցախահայության շարժմանը սատարելու համար: Արցախի ազատագրական շարժման ղեկավարումն ստանձնեցին Ղարաբաղում՝ «Ղարաբաղ» կոմիտեն, իսկ Երեւանում՝ «Կռունկ»-ը:

Ադրբեջանում հիստերիան ահագնանում էր: Այն շուտով վերածեց բռնությունների: Թողտվության պայմաններում նորից հայերի ջարդ Բաքու, Սումգայիթ, Կիրովաբադ քաղաքներում, Ադրբեջանի ամբողջ տարածքում: Չոհեր, խոշտանգումներ, բռնաբարություններ... հրկիզումներ: Մի խոսքով թուրքին հատուկ վարքագիծ:

Ավելի քան 500.000 հայերի գաղթ: Բազմաթիվ միտինգներ ու ցույցեր տեղի ունեցան ԱՄՆ-ի, Եվրոպայի, աշխարհի գրեթե բոլոր հայաբնակ խոշոր քաղաքներում ու բնակավայրերում: Եւ այդ բոլորը, առանձնապես Մոսկվան «Չնկատեցին»... Քաղաքական գնահատական չտրվեց:

Ադրբեջանի արյունոտ ձեռքը հասավ Ղարաբաղ: Այստեղ ստեղծվեց բռնապետական դիկտատուրա, որը գլխավորում էր Բաքվից գործուղված Պոլյանիչկո-Սաֆնով հայատյաց ազգայնամոլ երկյակը:

1991թ. մայիս-հունիսին Ադրբեջանի հատուկ նշանակության զինված ջոկատները, Խորհրդային զինված ուժերի համագործակցությամբ «Օղակ» ռազմագործողություն իրականացրին, մարտական ուղղաթիռների, հրասայլերի, զրահամեքենաների ուղեկցությամբ տեղահանեցին Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի հայաբնակ բոլոր գյուղերի ողջ հայ բնակչությանը եւ անխնա ավերեցին բնակավայրերը:

Հայաթափության եւ հայաջնջման հաջորդ քայլը Լեռնային Ղարաբաղում էր: 1991թ. հունիսին հիմնահատակ կործանվեցին Մարտակերտի եւ Հադրութի 20-ից ավելի հայկական գյուղեր, սպանվեցին ու վիրավորվեցին հարյուրավոր կանայք, երեխաներ ու ծերեր: Շուրջ 700 հոգի կտտանքի ենթարկվեցին Ադրբեջանի բանտերում, հազարավորներ լքեցին սեփական բնօրրանները:

Արցախահայությունը, Ինքնապաշտպանության մղումով, հարկադրված զենքի դիմեց: Ստեղծվեցին հայ աշխարհագորայինների առաջին խմբերն ու ջոկատները, որոնք դիմակայում եւ հնարավոր դեպքերում արժանի հակահարված էին տալիս հակառակորդին, ցավոք՝ թանկագին կորուստներով:

Ժողովուրդը դարձավ ավելի հաստատակամ ու անդրդվելի:

ԽՍՀՄ օրենսդրության եւ միջազգային իրավունքի բոլոր նորմե-

րին համապատասխան, 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որն ընդունեց Հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակման մասին»:

1991թ. դեկտեմբերի 10-ին անցկացվեց համաժողովրդական հանրաքվե: Բնակչության 99,89 տոկոսը «այո» ասաց այդ հռչակագրին:

1991թ. վերջերին անցկացվեցին ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները: Ադրբեջանի ղեկավարությունը այս իրադարձությունները սրով ընդունեց եւ 1991թ. վերջերին զինված ագրեսիա սկսեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության դեմ:

Աշխարհագորայինների խմբերի ու ջոկատների հիմքի վրա կարճ ժամանակամիջոցում կազմավորվեց մարտունակ մի բանակ, որը երկրամասը մաքրեց ավազակախմբերի հենակետերից, 1992-ի մայիսի 9-ին ազատագրվեց Շուշին եւ բացվեց Ղարաբաղ-Հայաստան միացնող միջանցքը:

Ադրբեջանական կողմը նոր հարձակումներ նախաձեռնեց դրությունը իր օգտին վճռելու նպատակով: Սակայն իզուր հույսեր: Հարկադրված, 1994թ. մայիսին զինադադար խնդրեց: Չինադադարի պայմանագիր կնքվեց Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ: Ղարաբաղյան հակամարտությունը թեւակոխեց բանակցային փուլ:

Սակայն բանակցությունները, ցավոք, առ այսօր /2015 թ. ապրիլ/ դրական արդյունք չեն տվել ադրբեջանական կողմի ոչ կառուցողական քաղաքականության պատճառով: Գլխավոր արդյունք կարելի է համարել այն, որ չնայած իրավական առումով Արցախը ճանաչված չէ, այնուամենայնիվ փաստորեն ազատ, անկախ պետություն է, ու աներեր քայլերով առաջ է գնում դեպի իր բաղձալի նպատակը:

Մ Ա Ս Ի

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԵՔ ԲՆՈՒՅԹՆԵՐԸ

Այդ պատերազմը սանձազերծեց ֆաշիստական Գերմանիան՝ 1939 թվականի սեպտեմբերին, տեւեց 6 տարի եւ ավարտվեց 1945-ի սեպտեմբերին:

Երկու հանգամանքներ դրդեցին Գերմանիային ձեռնարկելու այդ պատերազմը:

- Նախ, որ 1930-ական թվականներին կապիտալիստական աշխարհում բռնկված ընդհանուր ճգնաժամից դուրս գալու ելքը կայսերապետությունները փնտրում էին պատերազմի ճանապարհին:

- Երկրորդ, Գերմանիան, որ պարտվել էր առաջին համաշխարհային պատերազմում, երկար ժամանակ չէր կարողանում հաշտվել իր այդ վիճակի հետ, որոշեց պատերազմով վերականգնել կորցրած հեղինակությունը:

Գերմանիայի եւ Իտալիայի ֆաշիստական պետությունները ռազմաքաղաքական դաշինքով միավորվելով ռազմամուլական ճապոնիայի հետ, այդ պահին դարձել էին հարվածային մի ուժ եւ նոր պատերազմի ակտիվ նախապատրաստություն էին ծավալել:

Այդ ագրեսիվ դաշինքի քաղաքականությունը վտանգ էր ստեղծում ոչ միայն Խորհրդային միության համար, այլեւ սպառնում էր նաեւ մյուս երկրների շահերին:

Չնայած դրան, Անգլիայի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի կառավարող շրջանները փորձում էին Գերմանիային եւ Ճապոնիային օգտագործել Խորհրդային Միության դեմ պայքարելու համար: Հենց այդ նպատակն էր հետապնդում ֆաշիստական ագրեսորների «խաղաղացման» քաղաքականությունը, որը Ամերիկայի Միացյալ Նահանգների աջակցությամբ վարում էին Անգլիայի եւ Ֆրանսիայի հետադիմական կառավարությունները:

Օգտվելով, հատկապես ԱՄՆ-ի եւ Անգլիայի թողտվությունից, Գերմանիան եւ Իտալիան, էլ ավելի լկտի էին գործում: 1935թ. սեպտեմբերին Իտալիան հարձակվեց Եթովպիայի վրա: 1938թ. մարտին Գերմանիան զավթեց Ավստրիան, եւ հայտարարեց, որ ինքը պատրաստ է այլ պետությունների հետ քննարկել ագրեսիայի հետագա

զարգացումները կանխելու միջոցառումներ:

Փաստորեն, արդեն, աշխարհը գտնվում էր նոր վերաբաժանման նախաշեմին:

Խորհրդային Միությունը վճռականապես դատապարտեց Գերմանիայի ագրեսիվ քաղաքականությունը:

Արեւմտյան երկրների կառավարող շրջաններն այդ կոչը թողեցին անպատասխան եւ Չեխոսլովակիան դարձավ ագրեսորի հերթական զոհը:

1938թ. Մյունխենյան գործարքը նախադրյալներ էր ստեղծում դեպի արեւելք ֆաշիստական Գերմանիայի՝ հետագա ագրեսիայի համար: Եվ ագրեսորների անպատիժ թողնելը գրգռեց ֆաշիստական Իտալիայի ախորժակը, որն էլ 1939թ. ապրիլին զավթեց Ալբանիան:

Մեկը մյուսի հետեւից օկուպացնելով Եվրոպական պետություններին ու ստրկացնելով նրանց ժողովուրդներին, 1940-ի վերջերին, Գերմանիայի զորքերն, արդեն մոտ էին ԽՍՀՄ սահմաններին:

Այս պատերազմն իր բնույթով ի սկզբանե նվաճողական էր, զավթողական, ագրեսիվ եւ համաշխարհային:

Այդ պատերազմին մասնակցեց վաթսուհինգ ավելի պետություն, դա այն ժամանակ կազմում էր աշխարհում եղած պետությունների ընդհանուր թվի կեսից ավելին: Ռազմի շինել հազավ աշխարհի շուրջ 110 միլիոն մարդ, ռազմաբեմ դարձավ 22 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք: Երկիր մոլորակի վրա այդ պատերազմում սպանվեց եւ վերքերից մահացավ 50 միլիոնից ավելի մարդ, վիրավոր եւ խեղանդամ դարձան 90 միլիոնից ավելի քաղաքացիներ: Այդ պատերազմի պատճառած նյութական վնասն անցավ 4 (չորս) տրիլիոն դոլլարը: Միայն ռազմական ծախսերը կազմեցին շուրջ մեկ տրիլիոն 900 միլիարդ դոլլար:

Այս բնութագրիչ տվյալներով էլ հաստատապես կարելի է պնդել, որ այդ պատերազմն իր *բնույթով համաշխարհային էր* եւ պատմության մեջ մտավ որպես *երկրորդ համաշխարհային նվաճողական պատերազմ անվանումով* (Առաջին աշխարհամարտը տեղի է ունեցել 1914-1918թթ.):

Երկրորդ համաշխարհային պատերազմում գլխավոր ռազմաճակատը խորհրդա-գերմանական ռազմաճակատն էր: Խորհրդային Միության մասնակցությունը նրանում դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմը նվաճողականից, ինչպիսին այն եղել էր սկզբնական շրջանում, հակաֆաշիստական, ազատագրական, արդարացի պատերազմի վերածելու վճռական գործոնը:

Դա ելնում է այն իրողությունից, որ այդ պատերազմը մեր երկրի

համար համաժողովրդական պատերազմ էր, որին մասնակցում էին խորհրդային բազմազգ պետության բոլոր ժողովուրդները: Նրանք արդարացի պայքար էին մղում, պաշտպանելով իրենց հայրենիքը, նրա պատիվն ու անկախությունը, իրավունքն ու նվաճումները: Դա ամբողջ ժողովրդի վեհ նպատակն ու ազատագրական բնույթն էր, որն էլ կանխորոշեց ժողովրդի եւ բանակի՝ պատմության մեջ աննախընթաց միասնությունը, նրանց տոկունությունը, հաղթելու մեծ կամքը եւ համընդհանուր հերոսությունը:

Խորհրդային պետությունը, պատերազմի առաջին շրջանում, միայնակ էր կռվում ֆաշիզմի դեմ: Որոշ ժամանակ անց, ավելի ստույգ, երբ գերմանական բանակը մահացու հարված ստացավ Ստալինգրադի ռազմաճակատում, մեծ կորուստներով ետ շարտվեց Մոսկվայի, Սմոլենսկի, Կիեւի եւ այլ ռազմաճակատներում եւ չքացավ գերմանական բանակի անպարտելիության մասին առասպելը, այն ժամանակ ԱՄՆ-ն եւ Անգլիան ԽՍՀՄ-ի հետ դաշնակցային պայմանագիր ստորագրեցին հիտլերյան ֆաշիզմի դեմ միասնական պայքարը շարունակելու համար: Իսկ, երբ մեր զորքերը ազատագրելով խորհրդային տարածքները, դուրս եկան երկրի պետական սահմանը եւ այնուհետեւ սկսվեց եվրոպական ժողովուրդների ազատագրումը ֆաշիստական օկուպացիայից, մեր զորքերին սկսեցին աջակցել նաեւ օկուպացիայից ազատագրվող տարածքների ազգային ազատագրական շարժման, ժողովրդական դեմոկրատական առաջավոր ուժերը, փոխվեց պատերազմի բնույթը եւ այն դարձավ *հակաֆաշիստական պատերազմ*: Սրանք են այդ պատերազմի երեք բնույթները:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՉՄԻ ԵՐԵՔ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ԽՍՀՄ Հայրենական Մեծ պատերազմը երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մասն էր, որը տևեց 1417 օր ու գիշեր, բաժանվում է երեք շրջանի.

Առաջին շրջանը, որն ընդգրկում է 1941թ. հունիսի 22-ից մինչև 1942-ի նոյեմբերի 18-ը, Խորհրդային բանակի ամենածանր՝ Նահանջի եւ մեծ կորուստների շրջանն էր: Այդ ժամանակաընթացքում Խորհրդային զորքերը կարողացան իրականացնել ռազմավարական պաշտպանություն, արյունահեղ համառ մարտերում ջախջախեցին թշնամու հարձակողական հզորությունը, կանգնեցրին Նրան եւ ժամանակ շահեցին հակահարձակման Նախապատրաստվելու համար:

Երկրորդ շրջանն ընդգրկում է 1942-ի նոյեմբերի 18-ից մինչև 1943-ի վերջը: Այս շրջանը նշանավորվեց հսկայական ռազմական տեխնիկա ունեցող հակառակորդի դեմ պայքարում արմատական բեկումով: Խորհրդային բանակն ամբողջությամբ իր ձեռքը վերցրեց Նախաձեռնությունը: Սկսվեց ֆաշիստական զավթիչների զանգվածային վտարումը Խորհրդային տարածքներից:

Երրորդ շրջան. 1943թ. հունվար-1945թ. մայիս: Այս շրջանի գլխավոր արդյունքն այն եղավ, որ գերմանաֆաշիստական զորքերը վտարվեցին ԽՍՀՄ-ի տարածքից, փլուզվեց ֆաշիստական պետությունների բլոկը, ազատագրվեցին Կենտրոնական եւ Հարավարեւելյան Եվրոպայի մի շարք երկրներ: Հիտլերյան Գերմանիան լիովին ջախջախվեց եւ ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը:

**ՀԵՏԱՂԱՐՁ ՀԱՅԱՑՔ 70-ԱՄՅԱ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ
ԿԱՄ
ՄԻ ՔԻՉ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՄԱՍԻՆ**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծ Հայրենականում տարած հաղթանակի տարելիցը առանձնահատուկ առիթ է, որպեսզի մեկ անգամ եւս հետադարձ հայացք ձգենք մեր անցյալին: Խոսքը Խորհրդային երկրի դեմ ֆաշիստական Գերմանիայի կողմից 1941 թվականին սանձազերծած անարդար եւ արյունալի պատերազմի մասին է, որը մեծ փորձություն եղավ հսկայածավալ երկրի՝ այն ժամանակներում ԽՍՀՄ անունն ունեցած մեր հայրենիքի, մեր սերնդի, մեր հայրերի, ավագ եղբայրների ու քույրերի, Խորհրդային ամբողջ ժողովրդի, նաեւ հայ ժողովրդի համար:

...Գերմանիան չէր կարողանում հաշտվել առաջին աշխարհամարտում (1914-1918թթ.) կրած պարտության հետ, ձգտում էր կորցրած հեղինակությունն ու հզորությունը վերականգնել: Եվ ոչ միայն այդ:

Աշխարհում, դեռեւս չճանաչված ոմն Ադոլֆ անուսով մեկը, ով այդ ժամանակ Գերմանիայի Նացիոնալ-սոցիալիստների պարագլուխն էր եւ, որպես ազգանուն իր համար ընտրել էր ապօրինի հոր՝ Հիտլերի անունը, հետագայում պետք էր ճանաչվեր որպես աշխարհի ամենադաժան եւ արյունարբու հանցագործը:

Դրա ապացույցներն ի հայտ եկան դեռեւս 1925-26թթ., երբ նա շարադրեց «Իմ պայքարը» ծրագրային աշխատությունը, որի առաջին եւ երկրորդ հատորները համեմատաբար լույս տեսան վերոնշյալ թվականներին: Ա.Հիտլերն այդ ստեղծագործության հիմքում դրեց այսպիսի մի գաղափար, թե իբր գերմանացին աշխարհի ամենազտարյուն, արիական ցեղն է եւ նա իրավունք ունի ու պետք է դառնա աշխարհի տիրակալը: Եվ համախմբելով Գերմանիայի Նացիոնալ-սոցիալիստների ուժերը՝ 1933թ. հունվարին Ռեյխստագի ընտրություններում մեծամասնություն կազմեցին: Ընտրություններից մեկ

շաբաթ անց Հիտլերը դարձավ Գերմանիայի կանցլերը: Ռեյխստագի շենքի հրկիզման մեջ մեղադրելով կոմունիստներին եւ այլ պատրվակներով մեղադրանքներ ներկայացնելով նաեւ մյուս քաղաքական ուժերին ու հոսանքներին, նացիոնալ-սոցիալիստները ամբողջ իշխանությունը Գերմանիայում վերցրին իրենց ձեռքը եւ երկրում վերացրին ժողովրդավարական բոլոր ինստիտուտները:

Անտեսելով Վերսալյան հայտնի պայմանագրի պահանջները՝ բանակի եւ սպառազինության քանակը սահմանափակելու մասին, Գերմանիան ձեռնամուխ եղավ երկրի ռազմականացման ծրագրի իրականացմանը: Հիտլերը լավատեղյակ լինելով պատերազմների պատմությանը (նա շատ ընթերցասեր էր եւ բանտում եղած ժամանակ ու ընդհանրապես, բազմաթիվ գրքեր էր կարդացել այդ մասին)՝ գերադասում էր արագ պատերազմները: Իր նպատակներն իրականացնելու համար, նա մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես տանկերի, ռազմական ինքնաթիռների եւ զրահատեխնիկայի արտադրությանը: Երկրի ռեսուրսների մեծ մասը հատկացնելով այդ նպատակին՝ նա անհամեմատ կարճ ժամանակամիջոցում բանակն ու, գրեթե ամբողջ ժողովուրդը մինչեւ ատամները զինեց ամենաանաչնակարգ ռազմական տեխնիկայով:

Եվ այդ ամբողջը կատարվում էր աշխարհի աչքի առաջ, հատկապես Եվրոպայի թողտվությամբ:

...Իսկ այդ ժամանակ Հեռավոր Արեւելքում մեր երկրին սպառնում էր ճապոնական պետությունը, որը դաշնակից էր Գերմանիային:

2. ԴԱԺԱՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿՆ

Խորհրդային իշխանությունները լավ էին հասկանում, որ պատերազմի վտանգը սրընթաց կերպով աճում էր: Երկրի արեւմտյան սահմանների ռազմական օկրուզներում կենտրոնացվեց 170 դիվիզիա /գրեթե 2,7 միլիոն զինվոր եւ հրամանատար, ամբողջ ռազմական տեխնիկայի կեսից ավելին: Սակայն դիվիզիաների անձնակազմերը դեռեւս լիովին չէին համալրվել: Չգացվում էր տրանսպորտի, կապի միջոցների պակաս: Շատ տանկային, մեքենայացված եւ ավիացիոն միավորումներ գտնվում էին վերակազմման եւ կազմավորման փուլում: Տանկերի եւ ինքնաթիռների նոր տեսակներն ամբողջի մեջ կազմում էին միայն 20 տոկոսը եւ նոր էին յուրացվում անձնակազմի կողմից:

Տեստության զարգացումը: Միջազգային իրադրության սրումը եւ իմպերիալիստական պետությունների կողմից պատերազմի

սպառնալիքը պայմանավորեցին մեր երկրի ամբողջ կյանքի վերակառուցման, նախ եւ առաջ՝ պաշտպանական արդյունաբերության աճի տեմպերը: Դրանում իր ավանդը ներդրեց խորհրդային գիտությունը, որը հնարավորություն ստեղծեց ինքնուրույն լուծելու գիտական եւ տեխնիկական հանգուցային հիմնահարցերը:

Ճանր արդյունաբերության կարելորագույն տեղամասերը գլխավորեցին նոր աճած խոշոր մասնագետներ, փորձառու տնտեսավարներ:

Արդյունաբերության մեջ տեղի ունեցան որակական փոփոխություններ: Սեւ մետալուրգիայի արդյունաբերության մեջ սկսեց ավելի շատ թողարկվել մեքենաշինության եւ պաշտպանական արդյունաբերության համար անհրաժեշտ հատուկ պողպատ:

Լուրջ ուշադրություն դարձվեց էներգետիկայի զարգացմանը:

Մեծ մասշտաբներով էին շարունակվում հետախուզված օգտակար հանածոների հանքավայրերի յուրացումը:

Երկրի ժողովրդական տնտեսության աճը եւ պաշտպանունակության բարձրացման խնդիրները պահանջում էին տրանսպորտային ցանցի արագ զարգացում:

Երկրի Արեւելքում արագացված տեմպերով էր կատարվում ժողովրդական տնտեսության այնպիսի ճյուղերի կրկնորդ գործարանների շինարարությունը, ինչպիսիք էին մեքենաշինությունը, նավթամշակումն ու քիմիան, որոնց արտադրանքը մինչ այդ ամբողջությամբ պատրաստվում էր երկրի կենտրոնական շրջաններում:

Խիստ կերպով աճեց երկրի արեւելյան շրջանների տնտեսության ագրարային սեկտորի նշանակությունը, ուր գտնվում էին կոլտնտեսությունների 30 եւ սովխոզների 36 տոկոսը:

Կուսակցությունը եւ Խորհրդային կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրին պետական ռեզերվների գոյացման եւ ռազմավարական նշանակության արտադրանքի ու հումքի պաշարները մոբիլիզացնելու վրա:

Արդյունաբերության եւ տրանսպորտի զարգացումը պահանջում էր գիտակից կադրերի նոր հոսք, ինչը հաջողությամբ լուծվեց արդեն պատերազմի նախօրյակին: Կյանք մտան փաբգործուսի դպրոցների առաջին շրջանավարտները: Երկիրն ստացավ շուրջ 440 հազար երիտասարդ բանվոր:

Երկրի պաշտպանական հզորությունն ամրապնդելու նպատակով որոշում ընդունվեց ութ ժամյա աշխատանքային օրվա, յոթ օրյա աշխատանքային շաբաթվա անցնելու եւ աշխատանքից բանվորների ու ծառայողների բացակայությունն արգելելու մասին:

Վերոնշյալ միջոցառումների ձեռնարկումը հնարավորություն տվեց երկրի տնտեսական կյանքը ռազմական ժամանակի ձեռով արագորեն վերակառուցելու համար:

Խորհրդային ժողովրդի բարոյաքաղաքական միասնությունը: Նախապատերազմյան դաժան տարիներին վառ կերպով դրսևորվեցին խորհրդային ժողովրդի քաղաքական գիտակցությունն ու հայրենասիրությունը:

Աճեց ու ամրապնդվեց ստախանովյան շարժումը: 1941 թ. հունվարի 1-ին այդ շարժմանը ներգրավվել էր երկրի բանվորների մեկ երրորդից ավելին: Երեսան եկան կոլեկտիվ աշխատանքի նորարարական ձեւերը, արտադրության առաջավորները չէին սահմանափակվում իրենց բրիգադների բարձր արդյունքներով, ձգտում էին ստախանովյան դարձնել ողջ ձեռնարկությունը:

Բանվոր դասակարգի ստեղծագործական ակտիվության զարգացումն իր կոնկրետ արտահայտությունը գտավ նաեւ ստախանովյան աշխատանքի այնպիսի ձեւերի առաջացման մեջ, ինչպիսիք էին առաջավոր բանվորներից եւ ինժեներատեխնիկական աշխատողներից կազմված մշտական բրիգադների ստեղծումը:

Ռացիոնալիզատորական եւ գյուտարարական զանգվածային շարժումը բազա ստեղծեց, որպեսզի բանվորներն անցնեն բազմահաստոցային սպասարկման եւ մասնագիտությունների համատեղման:

Լեռնահանքային արդյունաբերության մեջ աշխատանքի առաջընթաց մեթոդների, աշխատանքի կազմակերպման նոր ձեւերի նախաձեռնող հանդես եկան նոր ձեռնարկություններ ու արտադրություններ:

Երկրի երկաթուղային տրանսպորտում մասնագիտությունների համատեղման համար շարժումը կոչվեց այն ժամանակները ճանաչված նշանավոր մեքենավար Լուկինի անունով:

Գյուղատնտեսության մեջ լայն համբավ ստացավ հացահատիկային մշակաբույսերից բարձր բերք ստանալու մասին ակթայցի կոլտնտեսականների նախաձեռնությունը: Ֆաշիզմի դեմ գալիք մարտերին նախապատրաստվելու, խորհրդային մարդկանց ինտերնացիոնալիզմի եւ հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում կարեւոր դեր խաղացին մշակույթի գործիչները, գրողները, նկարիչները, կինոյի եւ թատրոնի աշխատողները:

Հայրենասիրական այս բոլոր նախաձեռնությունները, զանգվածների բարոյաքաղաքական գիտակցության վերելքը կուսակցության գործունեության արդյունքն էր:

ԽՍՀՄ պաշտպանունակության ամրապնդումը: ՀամԿ/Բ/Կ 1941թ. փետրվարին տեղի ունեցած Համամիութենական կոնֆերանսը միջոցառումներ ընդունեց արդյունաբերության, հատկապես պաշտպանական բոլոր ճյուղերի հետագա վերելքի մասին, որի իրականացումը հսկայական նշանակություն ունեցավ երկրի պաշտպանունակության ամրապնդման համար:

Պաշտպանական արդյունաբերությունը պատերազմի տարիներին դարձավ երկրի ռազմական տնտեսության ամուր հիմքը, որի համար զգալիորեն ավելացվեցին նրա պետական հատկացումները:

Պաշտպանական ճյուղերի առաջատար ձեռնարկություններում ստեղծվեցին փորձարարական արտադրամասեր, կոնստրուկտորական բյուրոներ և խոշորացված գիտահետազոտական կազմակերպություններ:

Ռազմական հարձակման հետեւանքով աճած վտանգն անհրաժեշտ դարձրեց զգալիորեն մեծացնել ռազմական ուժերի թվային կազմը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը 1939 թ. հունվարին հաստատեց զինվորական երդումի նոր տեքստը, զորակոչման տարիքը 21-ից իջեցվեց և դարձվեց 19-ը, իսկ միջնակարգ դպրոցները և նրան հավասարեցված ուսումնական հաստատություններն ավարտածների համար՝ 18 տարի:

Ռազմածովային նավատորմում և ավիացիայում ուժեղացվեց ուշադրությունը կուսակցական, քաղաքական գործի ակտիվացման ուղղությամբ: Այդ առումով ղեկավար մարմիններում իրականացվեցին կարգապահական, պատասխանատվության բարձրացման, խստապահանջության և այլ կարգի միջոցառումներ:

Միջազգային իրադրության սրումը: 1938-ի մարտին Գերմանիան գրավեց Ավստրիան, Չեխոսլովակիայի Սուդեթական մարզը՝ և Մյունխենյան գործարքի օգնությամբ 1938-ի սեպտեմբերին այնտեղ հաստատեց Ֆաշիստական ռեժիմ, այնուհետև լրիվ օկուպացրեց ամբողջ Չեխոսլովակիան:

Այդ ռազմաճակատներում Անգլիայի և Ֆրանսիայի անգործությունը Գերմանիայի դեմ, հիտլերականներին հնարավորություն տվեց անպատիժ կերպով շարունակելու ագրեսիան Արեւմտյան Եվրոպայում: 1940-ի ապրիլի սկզբին օկուպացրեց Դանիան: Սկսվեց ներխուժումը Ֆրանսիա: 1940-ի ապրիլ-հունիսին Գերմանիան իրեն ենթարկեց Սկանդինավյան երկրները: Ապրիլին ֆաշիստական զորքերը գրավեցին Բելգիան, Հոլանդիան և Լյուքսեմբուրգը: Հունիսին կապիտուլյացիայի ենթարկվեց Նորվեգիան: Իսկ Իտալիան, Հու-

նաստանը, Ռումիկիան, Հունգարիան եւ Ֆինլանդիան ահից սարսափած համագործակցում էին Հիտլերի հետ:

Հիտլերյան բարբարոսները, նվաճելով նոր երկրներ եւ ստրկացնելով Եվրոպայի ժողովուրդներին, սողեսող մոտենում էին Խորհրդային Միության սահմաններին:

1940 թվականի հունիսին ֆաշիստական Գերմանիան սկսեց մեր երկրի վրա ռազմական հարձակման մանրամասն պլանի մշակումը: Ագրեսիայի նախապատրաստումը խնամքով քողարկվում էր: Գործողության մեջ էր դրվել ապակողմնորոշումը: ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու պլանի վերջնական տարբերակը, որն ստացել էր «Բարբարոսա» պլան անվանումը, հաստատվեց 1940 թվականի հոկտեմբերի 18-ին: Այն հիմնվում էր «կայծակնային» պատերազմ՝ «բլիցկրիգ» վարելու վրա:

Հիտլերյան ռազմագետները ենթադրում էին պատերազմն ավարտել 1941թ. աշնան կողմերը: Նրանք պլանավորել էին հույս ունենալ պատերազմն ավարտել՝ ԽՍՀՄ արդյունաբերական եւ քաղաքական կարեւորագույն կենտրոնների գրավումով եւ նրա ամբողջ եվրոպական մասը Գերմանիային միացնելով: Հիտլերյան Գերմանիայի կառավարիչները համոզված էին, որ խորհրդային պետությունը բազմազգ լինելու հանգամանքով, անկասկած, կծագեն ազգամիջյան խռովություններ, ինչն էլ, հիմնական պատճառ կդառնար պատերազմն արագ ավարտել հաղթանակով:

Գերմանական ֆաշիզմի մարդատյաց, հանցագործ նպատակները ցայտուն դրսևորվեցին այն քաղաքական ծրագրում, որը պատերազմի նախօրյակին շարադրեց Հիտլերը: 1940թ. մարտին հանդես գալով երկրի գեներալիտետի առջեւ, նա հայտարարեց, «Բոլշեւիզմի ոչնչացման դատավճիռը սոցիալական հանցագործությունն է... Այս պատերազմը խիստ կտարբերվի Արեւմուտքում տեղի ունեցած պատերազմներից...»:^{*}

Գերմանական ֆաշիզմը խնդիր էր դրել ոչնչացնել աշխարհի առաջին սոցիալիստական երկիրը, որն իր կարծիքով գլխավոր խոչընդոտն է համաշխարհային տիրապետությունը նվաճելու հիտլերյան ծրագրի իրականացման ճանապարհին:

Խորհրդային ժողովրդի վրա կախվեց ֆիզիկական ոչնչացման վտանգը: Պատերազմի նախօրյակին առաջացած բարդ եւ լարված իրադրության մեջ Խորհրդային Միությունը վարում էր ակտիվ ար-

^{*} ԽՍՀՄ պատմություն, «Լույս» հրատարակչություն, թարգմանված հայերեն, 1989թ., X դասարանի դասագիրք, էջ 35:

տաքին քաղաքականություն, բարոյահոգեբանական աջակցություն էր ցույց տալիս բոլոր ժողովուրդներին՝ ազգային անկախության համար՝ ֆաշիստական ագրեսիայի դեմ նրանց պայքարում:

Խորհրդային կառավարությունը հետեւողականորեն նախազգուշացնում էր Գերմանիայի կառավարությանը՝ նրա այն գործողությունների համար, որ նա կիրառում էր ֆաշիստական ագրեսիայի սպառնալիքի տակ գտնվող երկրների նկատմամբ: 1940 թ. վերջին Խորհրդային կառավարությունը հանդես եկավ Բուլղարիան օկուպացնելու վտանգից պաշտպանելու հայտարարությամբ: 1941-ի հունվարին կառավարությունը նորից հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ Խորհրդային Միությունը Բալկանների արեւելյան մասի տերիտորիան համարում է անվտանգության գոտի եւ չի կարող չմասնակցել այդ շրջանի շուրջը տեղի ունեցող իրադարձություններին:

Մի խոսքով, Խորհրդային կառավարությունը իրականացնում էր կարեւոր միջոցառումներ երկրի սահմաններից լարվածությունը հեռացնելու համար: Խորհրդային դիվանագիտության հաջողությունն էր 1941թ. մարտին Խորհրդային Միության եւ Թուրքիայի միջեւ վերջնագրերի (նոտաների) փոխանակությունը, ըստ որի կողմերը պարտավորվում էին պահպանել փոխադարձ չեզոքություն:

1941-ի ապրիլին չեզոքության մասին պակտ կնքվեց նաեւ ԽՍՀՄ-ի եւ Ճապոնիայի միջեւ:

Խորհրդային իշխանությունները, զգալով մոտեցող պատերազմի վտանգը, հսկայական աշխատանք կատարեցին երկրի պաշտպանությունը նախապատրաստելու ուղղությամբ. երկրի արեւելյան մասում իրականացրին ռազմական տեխնիկայի, նրա տեսակների եւ զինամթերքի արտադրության նոր ձեռնարկությունների շինարարությունը, որոշակի հոգաձություն ցուցաբերվեց արդյունաբերության եւ գյուղատնտեսության արտադրության քանակի եւ որակի բարձրացմանը, ժողովրդի սոցիալական հարցերի հնարավորինս լուծման, նրա բարոյահոգեբանական վիճակի բարձրացման, բազմազգ պետության ազգերի համախմբման, հայրենիքի նկատմամբ նրանց սիրո, հավատարմության եւ նվիրվածության ոգով դաստիարակման հարցերին: Որոշակի դեր կատարեց 1939 թ. օգոստոսին Գերմանիայի հետ կնքած չհարձակման պայմանագիրը, որի շնորհիվ Գերմանիայի ներխուժումը խորհրդային սահմանները ձգձգվեց շուրջ երկու տարի եւ այդ ժամանակամիջոցում Խորհրդային կառավարությունը հասցրեց որոշակի քայլ կատարել երկրի պաշտպանունակության ամրապնդման ուղղությամբ:

Սակայն, բոլոր խնդիրները չէ, որ երկիրը կարողացավ լուծել: Իրենց ազդեցությունն ունեցան կարմիր բանակի հրամանատարության կազմում չհիմնավորված հետապնդումներն ու շարքից հանելը (ռեպրեսիաները), պատերազմի բնույթի մեջ փոփոխությունների թերագնահատումը՝ կախված ռազմական տեխնիկայի զարգացման հետ և գեների նոր տեսակները մշակելու ու արտադրության մեջ ներդնելու գործի ուշացումը, և այլ խնդիրներ:

Իսկ Գերմանական միլիտարիստական պետությունը, ուղքի տակ տալով, գրեթե, ամբողջ Եվրոպան, իր ենթակայության տակ վերցնելով նրա ամբողջ տնտեսական և ռազմական հզորությունը, ատամները սրած մոտենում էր ԽՍՀՄ սահմաններին:

1941 թվականի սկզբներին հիտլերյան զորքերն արդեն գտնվում էին խորհրդային պետության սահմանների անմիջական մոտակայքում: Չավթելով Լեհաստանը, հիտլերյան բանակներն այն դարձրին հենակայան Արեւմուտքից: Օկուպացնելով Նորվեգիան, այն դարձրին Յյուսիսային ուղղությամբ և Բալկանյան երկրները՝ Չարավային ուղղությամբ ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու ուղղություններ:

Գերմանիայի տրամադրության տակ էին նրա կողմից զավթած Եվրոպական երկրների, գրեթե ամբողջ արդյունաբերությունը, հումքը, պարենամթերքը և մարդկային ռեսուրսները, ինչը զգալիորեն մեծացրել էր նրա ռազմատնտեսական պոտենցիալը:

Հարձակման պահին հիտլերյան Գերմանիան և նրա արբանյակները՝ Ֆինլանդիան, Ռումինիան, Յունգարիան, ԽՍՀՄ սահմանի երկայնքով կենտրոնացրել էին 190 դիվիզիա (հինգ միլիոն զինվոր և սպա), 43 հազար տանկ, մոտ 5 հազար մարտական ինքնաթիռ, 47 հազարից ավելի հրանոթ և ականանետ: Դա ամենախոշոր ներխուժող բանակն էր համաշխարհային պատմության մեջ:

3. ՀԻՏԼԵՐՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՈՒԽՏԱԴՐՈՒԺ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԽՍՀՄ-Ի ՎՐԱ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒԺԵՐԻ ՍՈՒԲԼԻԻՉԱՑՈՒՄԸ ԹՇՆԱՍՈՒՆ ՀԱԿԱՅԱՐՎԱԾ ՏԱԼՈՒ ՀԱՍԱՐ

Ներխուժում: Չնայած, դեռևս 1939 թ. օգոստոսից հիտլերյան Գերմանիան չհարձակման եւ խաղաղ համագործակցության դաշինք ուներ ԽՍՀՄ-ի հետ, այնուամենայնիվ, դրժեց իր ուխտը եւ առանց պատերազմ հայտարարելու, 1941 թ. հունիսի 22-ին, առավոտյան ժամը 4-ին, նրա զորքերը, ստանալով հարձակման պայմանական ազդանշանը, հանկարծակի ներխուժեցին ԽՍՀՄ տարածքները՝ պետության Արեւմտյան ամբողջ սահմանով՝ Հյուսիսից մինչեւ Հարավ, միանգամից նետելով 158 մարտական դիվիզիա, մոտ 4000 տանկ, ավելի քան 5000 ռազմական ինքնաթիռ, 47000 հրանոթ ու ականանետ:

Հրետանային հզոր հարված հասցրին Խորհրդային պետության սահմանամերձ ամրություններին, իսկ մի քանի ընդհանուր հիտլերյան հորդաները, օդից ու ցամաքից հազարավոր տոննաներով մահացու բեռներ թափեցին օդանավակայանների, երկաթուղիների, ռազմածովային բազաների, կապի գծերի, ռազմական հանդերձանքի ու ռազմամթերքի պահեստների, քնած քաղաքների, ավանների, գյուղերի եւ այլ բնակավայրերի վրա:

Հիտլերականները հարձակումը վարում էին ռազմավարական երեք ուղղություններով՝ Լենինգրադի, Մոսկվայի եւ Կիևի: Այս ուղղություններում ֆաշիստական հրամանատարությունը կենտրոնացրել էր առավել մեծ քանակությամբ ուժեր եւ միջոցներ, այդ թվում՝ տանկային միավորումների հիմնական զանգվածը:

Հարձակման հանկարծակիությունը հիտլերյան բանակներին թույլ տվեց զգալի առավելություն ստանալ: Գլխավոր հարվածների ուղղություններում թշնամին ուներ ուժերի եռակի եւ նույնիսկ հնգակի գերազանցություն: Ռմբակոծիչների հոծ խմբերի հարձակումների եւ տանկային ճեղքումների շնորհիվ հակառակորդին հաջողվեց առաջ շարժվել դեպի խորհրդային տարածքների խորքը եւ կտրել կապը շտաբների ու զինվորական միավորումների միջեւ:

Բարենցի ծովից մինչեւ Սեւ ծով վիթխարի ճակատամարտ ծավալվեց:

Հայրենական Մեծ պատերազմը, որը սկսվեց 1941 թվականի հունիսի 22-ին, տևեց 1418 օր ու գիշեր, ավարտվեց այն 1945 թ., մայիսի 9-ին:

Այդ ժամանակահատվածը, ԽՍՀՄ կյանքում տեղի ունեցած իրադարձությունների առումով, պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի:

Համառոտակի ներկայացնենք այդ ժամանակաշրջաններում տեղի ունեցած առավել կարեւոր եւ գլխավոր իրադարձությունները, հատկապես՝ պատերազմի առումով:



ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ.

1941թ. հունիսի 22-ից մինչև 1942-ի նոյեմբերի 18-ը:

Այդ շրջանը մեր երկրի համար պատերազմի ամենածանր ժամանակն էր:

1. ԾԱՆՐ ՏԱՐԻՆԵՐ

Թշնամական հրոսակախմբերի առաջին հարվածներն իրենց վրա ընդունեցին երկրի արեւմտյան ցամաքային եւ ջրային ամբողջ սահմանի սահմանապահ զորամասերը: Նրանք հերոսության վառ օրինակ էին ցույց տալիս հակառակորդի դեմ կռվելով մինչև վերջին փամփուշտը, դրսևորելով անսահման նվիրվածություն հայրենիքին, ոգու ուժ, կորով, ինքնագոհություն եւ հերոսություն: Նրանցից շատերը, ովքեր իրենց վրա ընդունեցին թշնամու առաջին հարվածի ծանրությունը, ցավոք, գոհվեցին: Եվ, չնայած շատերի անուններն անհայտ են, այնուամենայնիվ, նրանց սխրագործությունները մնացին անմահ:

Խորհրդային զորքերի հարկադրական նահանջն ուղեկցվում էր համառ դիմադրությամբ եւ կատաղի մարտերով:

Այդ ընթացքում խորհրդային զորքերը, իրականացնելով ռազմավարական պաշտպանություն, արյունահեղ, համառ մարտերում ջլատեցին թշնամու հարձակողական հզորությունը, կանգնեցրին նրան եւ ժամանակ շահեցին նախապատրաստվելու՝ հակահարձակման անցնելու համար:

Բրեստի ամրոցի, Լենինգրադի, Կիեւի, Օդեսայի եւ Խորհրդային Անդրբեւեռի հերոսական պաշտպանությունը, հատկապես՝ Մոսկվայի ճակատամարտը, խափանեցին «Կայծակնային» պատերազմի հիտլերյան պլանը: Նշված քաղաքների, ինչպես նաեւ Վոլգոգրադի (Ստալինգրադ), Մինսկի, Տուլայի, Նովոռոսիյսկի, Կերչի, Մուրմանսկի, Սմոլենսկի պաշտպանները Չայրենական մեծ պատերազմի տարիներին, ցուցաբերելով զանգվածային հերոսություն ու արիություն, ինչի համար այդ քաղաքները եւ նրանց պաշտպաններն արժանացան հերոսի բարձր կոչման:

Խորհրդային զորքերը ոչ միայն պաշտպանվում եւ նահանջում էին, այլեւ հնարավոր դեպքերում հակահարձակման էին անցնում եւ կատաղի հարվածներ հասցնում թշնամուն:

Սակայն, ուժերն անհավասար էին: Գերմանիան զինված էր զենքի նորագույն տեսակներով ու սպառազինությամբ, Խորհրդայինը չունեի համարժեք զինտեխնիկա ու զինամթերք: Գերմանիան պատերազմ վարելու լուրջ փորձ ուներ, իսկ Խորհրդայինը՝ ոչ:

Չորսհավաք: Պատերազմի սկսման հենց առաջին օրը՝ հունիսի 22-ի ժամը 12-ին երկրի բոլոր ռադիոկայանները հաղորդեցին ժողովրդին ուղղված խորհրդային կառավարության դիմումը, որով կոչ էր արվում պաշտպանել սոցիալիստական հայրենիքը: Այդ նույն օրն էլ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը հայտարարեց զինապարտների (1905-18թթ. ծնվածների) զորահավաքը (տե՛ս ՅՍՀ, 10-րդ հատոր, էջ 542, երրորդ սյունակ, երկրորդ պարբերություն) եւ երկրի եվրոպական մասում մտցվեց ռազմական դրություն: Չինվորական օկրուգների հիման վրա ստեղծվեցին Յյուսիսային, Յյուսիսարեւմտյան, Արեւմտյան, Հարավարեւմտյան եւ Հարավային ռազմաճակատները: Խորհրդային Միության ծովային սահմաններն ապահովում էին Յյուսիսային, Կարմրադրոշ Բալթիական, Սեւծովյան, Խաղաղօվկիանոսյան նամատորմերը:

Հայրենիքի պաշտպանությունը դարձավ հրամայական պահանջ: 16-50 տարեկան յուրաքանչյուր այր պետք էր ուսաներ ռազմական գործը եւ զինվորագրվեր հայրենիքի պաշտպանությանը (ԽՍՀՄ կառավարության կոչը, 22.06.1941, Սասուն Գրիգորյան «Մուսաները չլռեցին», «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1989թ.): Ռազմապաշտպանական գործը ողջ երկրում հայրենասիրական բնույթ կրեց՝ ընդգրկելով կյանքի բոլոր բնագավառները: (Տե՛ս ՅՍՀ 10-րդ հատոր, էջ 542, առաջին սյունակ, առաջին պարբերություն)

«Ամեն ինչ հայրենիքի համար, ամեն ինչ ռազմաճակատի համար» կոչին զինվորագրվեցին խորհրդային երկրի բանվորն ու գյուղացին, գիտնականն ու մշակույթի գործիչը, կուսակցական, խորհրդային աշխատողները:

1941-ի հունիսի 24-ին կառավարության որոշմամբ ստեղծվեց Եվակուացման խորհուրդ, որի խնդիրն էր մշակել մարդկային կոնտիգենտի եւ արժեքավոր գույքի դուրս բերման ու տեղաբաշխման կարգը եւ իրականացնել այն:

Իսկ Հիտլերի հրամանն այսպիսին էր.-«Սպանիր ամեն մի ռուսի, ամեն մի խորհրդային քաղաքացու, կանգ չառնես, եթե քո առջեւ ծերունի է կամ կին, աղջիկ է կամ երեխա, սպանիր»... («Մուսաները չլռեցին», Ս.Գրիգորյան, «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1989թ., էջ 1):

ԽՄԿԿ կենտկոմը եւ ԽՍՀՄ կառավարությունը 1941 թվականի հունիսի 29-ի դիրեկտիվով ժողովրդին կոչ արեցին վճռական պայքարի ելնել ընդդեմ ագրեսորի: Նրանում առաջ էին քաշվում հետեւյալ հիմնական խնդիրները.

- պաշտպանել խորհրդային հողի յուրաքանչյուր թիզը,
- կազմակերպել բազմակողմանի օգնություն՝ գործող բանակին,
- երկրի ամբողջ կյանքը ենթարկել ռազմաճակատի շահերին,
- կարմիր բանակի զորամասերի հարկադրական նահանջի դեպքում ոչինչ չթողնել թշնամուն, արժեքավոր գույքը, որը հնարավոր չէ դուրս հանել, ոչնչացնել,
- օկուպացված տերիտորիաներում կազմակերպել պարտիզանական ջոկատներ, դիվերսիոն խմբեր, թշնամու համար ստեղծել անտանելի պայմաններ:

Կուսակցության եւ կառավարության կոչը՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար», դարձավ ամբողջ ժողովրդի մարտական նշանաբանը:

1941թ. հունիսի 30-ին ստեղծվեց Պաշտպանական պետական կոմիտե (ՊՊԿ), որը համարվեց ԽՍՀՄ արտակարգ գերագույն պետական մարմին, որը պատերազմի տարիներին իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը: ՊՊԿ-ի կազմում ներառվեցին ԽՄԿԿ քաղբյուրոյի, ԽՍՀՄ կառավարության անդամներ, ռազմաճակատային եւ ճակատամերձ միութենական հանրապետությունների, ռազմարդյունաբերական արտադրությունների եւ այլ մեծության ղեկավարներ:

Չինված պայքարի ռազմավարական ղեկավարությունը ՊՊԿ-ն իրականացնում էր Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանի միջոցով, որն, ինչպես եւ ՊՊԿ-ն, գլխավորում էր Ի. Վ. Ստալինը:

Պատերազմի սկզբից մեկ շաբաթվա ընթացքում գինկոմիսարիատները մոբիլիզացրին 5 միլիոնից ավելի մարդ: Հարյուր հազարավոր խորհրդային քաղաքացիներ դիմում էին՝ իրենց որպես կամավոր գործող բանակ ուղարկելու խնդրանքով: Նրանցից կազմում էին ժողովրդական աշխարհազորի ջոկատներ եւ աշխատանքային գումարտակներ: 1941-ի վերջերին կուսակցության անդամների երկու հինգերորդ մասն, արդեն գտնվում էր բանակում եւ ռազմաճակատներում:

Բոլոր հանրապետություններում պատերազմի առաջին օրերից ծավալվեց ռամաճակատների մարտական ռեզերվների ձեւավորումը: Բանակի միավորումները ինտերնացիոնալ էին, ձեւավորվել էին նաեւ ազգային միավորումներ, ինչպես, օրինակ՝ Հայկական 89-րդ Թամանյան եւ այլ դիվիզիաներ:

Կառավարությունը վճռական միջոցառումներ իրականացրեց ժողովրդական տնտեսությունը վերափոխելու եւ ռազմական շահերին ծառայեցնելու նպատակով: Նախապատրաստվեց ժողովրդատնտեսական ընդհանուր մոբիլիզացիոն պլան, որի գլխավոր խնդիրներից մեկը նախատեսում էր Պոլովժիեի, Ուրալի, Արեւմտյան Սիբիրի շրջանների, Ղազախստանի եւ Միջին Ասիայի զարգացումը: Նրանում հստակ ուշադրություն էր դարձվում տանկաշինությանը եւ ինքնաթիռաշինությանը, զենքի եւ զինամթերքի արտադրությանը, ինչը ռազմական ներդաշնակ տնտեսության ամուր հիմք ստեղծեց ռազմաճակատին սպասարկելու համար:

Այդ որոշման հիման վրա կազմակերպվեց երկրի Արեւմտյան մասի եւ հատկապես՝ Մոսկվայի ու Լենինգրադի ժողովրդատնտեսական կարելոր օբյեկտների, ուսումնական հաստատությունների եւ գիտական հիմնարկների ու այլ կարելոր արժեքների տեղափոխումը երկրի արեւելյան մաս:

Այդ բոլորի հետ միասին հիտլերականների գրաված տարածքներում՝ նրանց թիկունքում, արդեն, բուռն թափ էր ստանում պարտիզանական շարժումը: Ձեւավորված պարտիզանական խմբերն ու ջոկատները հարվածներ էին հասցնում թշնամական զորախմբերին, քանդում ռազմական կոմունիկացիաները, շարքից հանում կապի միջոցները, կամուրջները, կարելոր ճանապարհները, թիկունքում կազմակերպում դիվերսիոն գործընթացներ, խափանում պլանավորված ռազմական ծրագրեր եւ այլ կարգի կարելոր գործողություններ:

Խորհրդային ժողովուրդը արդարացի պայքար էր մղում պաշտպանելով իր Սոցիալիստական հայրենիքը, նրա պատիվն ու անկախությունը, սոցիալիզմի նվաճումները: Դա իսկական համաժողովրդական պատերազմ էր, որին մասնակցում էին խորհրդային բազմազգ պետության բոլոր ժողովուրդները: Նրա վեհ նպատակն ու ազատագրական բնույթը կանխորոշեցին ժողովրդի եւ բանակի՝ պատմության մեջ աննախընթաց միասնությունը, նրանց տոկունությունը, հաղթելու մեծ կամքը, համընդհանուր հերոսությունը:

Այդ իսկ հանգամանքով էլ Խորհրդային Միությանը հիտլերյան ֆաշիզմի պարտադրած պատերազմը պատմության մեջ մտավ որպես *Յայրենական մեծ պատերազմ*, որն էլ դարձավ *երկրորդ համաշխարհային պատերազմի բաղկացուցիչ մասը*:

Նրանում Խորհրդային Միության մասնակցությունը դարձավ երկրորդ համաշխարհային պատերազմը նվաճողականից, ինչպիսին այն եղել էր սկզբնական շրջանում, *հակաֆաշիստական, ազատագրական, արդարացի պատերազմի վերածելու գործոնը*:

Նրա գլխավոր ռազմաճակատը Խորհրդային Միության ռազմաճակատն էր, որը մեր երկրի՝ մինչ այդ տեսած բոլոր պատերազմներից ամենածանրն էր ու ամենադաժանը:

Ֆաշիզմի դեմ պայքարում վճռվում էր ոչ միայն մեր երկրի, այլև ամբողջ Եվրոպայի, ողջ աշխարհի բախտը: Խորհրդային ժողովրդի ուսերին էր ընկած ֆաշիստական բարբարոսներից պաշտպանելու համաշխարհային քաղաքակրթությունը եւ հասարակական առաջադիմությունն ամբողջովին: Այդ պատերազմում ԽՍՀՄ-ի հաջողություններից էր կախված ֆաշիզմի տիրապետության տակ գտնվող բոլոր երկրների ազգային վերածնունդը, անկախությունն ու ազատությունը: Այդ հանգամանքն էր, որ չանցած ոչ երկար ժամանակ, ստեղծվեց հակաֆաշիստական, միասնական ճակատ:

Կարմիր Բանակի պաշտպանական մարտերը 1941 թ. ամռանը եւ աշնանը ռազմավարական գլխավոր ուղղություններում.

Խորհրդային երկրի տարածության զգալի մասի գավթումը հիտլերյան ղեկավարությունը գնահատեց որպես վճռական հաջողություն, որը կօգներ նրան՝ շահել պատերազմը եւ գտնում էր, որ մնացել է հաղթահարել թուլացած Խորհրդային բանակի վերջին դիմադրությունը եւ հաղթանակն ապահովված է: Այդ պատճառով էլ նա որոշում ընդունեց շարունակել հարձակումը բոլոր *երեք հիմնական ուղղություններով՝ դեպի Մոսկվա, Լենինգրադ եւ Կիև:*

Մեր զորքերի հարկադրական նահանջի ծանր իրադրության մեջ կուսակցության կենտկոմի քաղբյուրոն եւ Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանը առաջ քաշեցին գլխավոր խնդիրը՝ կազմակերպել ռազմավարական պաշտպանություն, կանգնեցնել ֆաշիստական հորդաներին, առավելագույնս թուլացնել թշնամուն եւ պայմաններ նախապատրաստել հակահարձակման անցելու համար: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, արդեն 1941-ի հուլիսին թշնամին կորցրեց շուրջ 100 հազար զինվոր եւ

սպա, տանկերի սկզբնական քանակի կեսից ավելին եւ մոտ 130 ռազմական ինքնաթիռ:

Սակայն, թշնամին շարունակում էր իր հարձակողական արշավանքը: Հուլիսի 10-ին Նա տանկային երկու հարվածային խմբավորումներով սրընթաց հարձակման անցավ Էլնա եւ Դուխովչիկնա քաղաքներից՝ Սմոլենսկու ուղղությամբ եւ զարգացնելով սկզբնական արագությունը, ձգտեց տրոհել մեր արեւմտյան ռազմաճակատը ու գրավել Մոսկվան, կարծելով, թե դրանով կվճռվեր պատերազմի բախտը:

Իսկ Մոսկվա տանող ճանապարհին անցնում էր Սմոլենսկով: Սմոլենսկի ճակատամարտը, որը պատերազմի առաջին ամիսներին ամենախոշորն ու համառն էր, անցավ կարմիր բանակի համար ծանր պայմաններում: Թշնամին զորքերի, հրետանու եւ ինքնաթիռների կրկնակի գերազանցություն ուներ եւ գրեթե քառակի ավելի տանկեր:

Ճակատամարտի սկզբում թշնամուն հաջողվեց իրականացնել մի շարք խոր ճեղքումներ: Սակայն խորհրդային զորքերի դիմադրությունը շատ ավելի ուժեղ էր, քան ենթադրում էր թշնամին: Վիտեբսկու եւ Բոբրույսկու մոտ նրանք ոչ միայն պաշտպանվում, այլեւ զգալի պատասխան հարվածներ էին հասցնում հակառակորդին: Խորհրդային զորքերն անում էին ամեն ինչ թշնամու առաջխաղացումը կանգնեցնելու, նոր ռեսուրսներ նախապատրաստելու եւ կենտրոնացնելու համար:

Հուլիսի կեսերին թշնամուն հաջողվեց դուրս գալ Սմոլենսկի մոտերքը: Հուլիսի 15-ի երեկոյան ֆաշիստական զորքերը ներխուժեցին քաղաքի հարավային մասը: Մարտերը Սմոլենսկի համար շարունակվեցին գրեթե երկու շաբաթ:

Արեւմտյան ռազմաճակատի մեր զորամասերն ակտիվ գործողություններով զգալի վնաս հասցրին թշնամուն: Հուլիսի 30-ին հիտլերյան հրամանատարությունը հարկադրված էր հրամայել «Կենտրոն» բանակների խմբին՝ դադարեցնել հարձակումը եւ անցնել պաշտպանության, իսկ տեղ-տեղ էլ ետ նահանջել, ինչն առաջին դեպքն էր երկրորդ համաշխարհայինում՝ սկզբից ի վեր:

Լարված պայքարը շարունակվում էր ամբողջ ռազմաճակատում:

Սմոլենսկու ռազմաճակատի օրերին ծավալվեց Հարավ-արեւմտյան ռազմաճակատի՝ Կիեւի պաշտպանական օպերացիան: Թշնամին ենթադրում էր, որ Նա կկարողանա գրավել Կիեւը, ճանապարհ

կբացեր դեպի Յարավ եւ նպաստավոր պայմաններ կստեղծեր Մոսկվայի ուղղությամբ հարձակվելու համար: Խորհրդային զորքերի դիմադրությունը Նովոզորոդ-Վոլինսկու, Ժիտոմիրի, Բերդիչեւի մոտ հասցրած զգալի հարվածները հակառակորդին զրկեցին ընթացքից Կիեւ ներխուժելու հնարավորությունից:

Կիեւի պաշտպանության գործում բացառիկ դեր խաղաց Ուկրաինայի մայրաքաղաքի եւ նրա մարզի բնակչությունը: Կիեւը անառիկ մնաց թշնամու՝ արեւմուտքից հարձակվելու համար: Օգոստոսի կեսերին հիտլերյան հրամանատարությունը հարկադրված հրաժարվեց Կիեւի պաշտպանական բնագծերը գրոհելուց:

Մոսկվայի ուղղությամբ հարձակումը դադարեցնելով, հակառակորդը օգոստոսի վերջերին դեպի Յարավ նետեց մի հզոր տանկային խմբավորում: Ուժերի գերազանցությունը հակառակորդին հնարավորություն տվեց սեպտեմբերի կեսերին սեղմել Խորհրդային զորքերի չորս բանակների շրջապատման օղակը: Շրջապատման մեջ մարտերը շարունակվեցին մինչեւ սեպտեմբերի վերջերը:

Թշնամու օղակի ճեղքումն ուղեկցվեց մեծ կորուստներով: Չոհվեցին ռազմաճակատի եւ բանակային միավորումների շատ հրամանատարներ, քաղաշխատողներ, զինվորներ: Մեր բանակը կորցրեց մեծաքանակ ռազմական տեխնիկա: Խորհրդային զորքերի դրությունը հարավում խիստ վատացավ: Թշնամին զավթեց Կիեւը, բայց նրա երկամսյա հերոսական պաշտպանությունը կասեցրեց Մոսկվայի ռազմավարական ուղղության վրա հարձակումը:

Երկու ամսից ավելի շարունակվեց Օդեսայի Սեւծովյան նավատորմի կարեւոր բազայի լեգենդար պաշտպանությունը: Պատերազմի առաջին օրերին ֆաշիստական զորքերի արագ առաջխաղացումը հանգեցրեց նրան, որ Օդեսան մեկուսացվեց թշնամու խոր թիկունքում: Այն նվաճելու համար մարտի մեջ նետվեցին մի քանի ռումինական դիվիզիաներ, որոնք զգալիորեն գերազանցում էին մեր պաշտպանների ուժերը: Օգոստոսին Օդեսան հայտարարվեց պաշարողական դրության մեջ: Իրադրության փոփոխման կապակցությամբ, Ղրիմը զավթելու սպառնալիքի տակ, Գերագույն գլխավոր հրամանատարության զորակայանի հրամանով Օդեսայի պաշտպանները 1941 թվականի հոկտեմբերի 16-ին կազմակերպված թողեցին քաղաքը եւ պաշտպանների մի զգալի մասը տեղափոխվեց Սեւաստոպոլ:

Սեւաստոպոլի պաշտպանությունը Յայրենական մեծ պատերազ-

մի ամենահերոսական էջերից է: 1941 թ. հոկտեմբերի 30-ին Սեւաստոպոլի պաշտպանները եւ Սեւծովյան նավաստիները մեկը մյուսի ետեւից հետ էին մղում ֆաշիստական զորքերի բազմակի գերազանցող ուժերի կատաղի հարձակումները:

Չրկված լինելով թիկունքի հետ ցամաքային կապերից, կրելով ռազմամթերքի ու պարենի փոխադրման հսկայական դժվարություններ, Սեւաստոպոլի պաշտպանները անձնուրաց պայքարում էին թշնամու դեմ: Թշնամին բազմիցս փորձեց գրոհով տիրանալ քաղաքին, այն դաժանորեն ռմբակոծեց, բայց քաղաքը մնաց անսասան:

Սեւաստոպոլի պաշտպանական բնագծերում ոչնչացվեցին թշնամու այնքան զինվորներ ու սպաներ, որքան հիտլերյան բանակը կորցրել էր ռազմական թատերաբեմերում մինչեւ ԽՍՀՄ-ի վրա հարձակվելը:

...Լենինգրադը երբեք ցամաքից ամրություններ չի ունեցել: Լենինգրադի կուսակցական կազմակերպությունը կարճ ժամանակամիջոցում մոբիլիզացրեց հարյուր հազարավոր բնակիչների, որոնք զինվորների հետ միասին քաղաքը դարձրին անառիկ ամրոց: 1941-ի հուլիսի կեսերին գերմանական բանակի հարձակումը կասեցվեց Լենինգրադի մատույցներում: Նպատակին չհասավ նաեւ Հյուսիսից եկող Ֆիննական հարվածը: Լենինգրադի համար մեծ դեր խաղացին Մերձբալթիկայում տեղի ունեցող համառ մարտերը:

Քաղաքի պաշտպանության ամենածանր օրերը վրա հասան օգոստոսի վերջերին եւ սեպտեմբերի սկզբներին: Վերախմբավորվելով եւ զգալիորեն համալրելով իր ուժերը, ֆաշիստական բանակը վերսկսեց հարձակումը: Մեծ կորուստների գնով հակառակորդին հաջողվեց ճեղքել խորհրդային զորքերի պաշտպանությունը եւ 1941թ. սեպտեմբերի 8-ին ցամաքից շրջապատեց Լենինգրադը: Այդ պահից սկսվեց նրա 900-օրյա շրջափակումը (պաշարումը): Ի վիճակի չլինելով հաղթահարելու Լենինգրադի պաշտպանների դիմադրությունը, հիտլերականները հույսերը դրեցին քաղաքն ավիացիայով եւ հրետանիով բարբարոսաբար կործանելու վրա: 611 օր քաղաքը ենթարկվեց ուժգին հրետանային գնդակոծության եւ ռմբակոծության:

Շրջափակումը քաղաքի պաշտպաններին դրեց չափազանց ծանր դրության մեջ: Ամենածանր փորձությունը սովն էր: Բնակչությանը տրվող սնունդը, հիմնականում հացն էր: Այն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տրվում էր օրական մեկ անգամ. բանվորներին՝

250 գրամ, իսկ ծառայողներին եւ խնամարկվողներին՝ 125-ական գրամ: Շատ դեպքում այն տրվում էր ուշացումներով եւ ընդհատումներով:

Վրա հասած ձմեռային ցրտերն էլ ավելի սաստկացրին լենինգրադցիների տառապանքները: Վերջացան վառելիքի պաշարները, կանգնեցին էլեկտրակայանների տուրբինները, շարքից դուրս եկան ջեռուցումը, ջրմուղն ու կոյուղին:

Սովից, սննդախանգարումներից, գնդակոծություններից, ռմբահարություններից եւ ցրտից զոհվեց Լենինգրադի ավելի քան 600 հազար բնակիչ:

Պատերազմի առաջին ամիսներին կատաղի մարտեր ծավալվեցին նաեւ Խորհրդային Անդրբեւեռում: 1941 թվականի հունիսի 28-ին ֆաշիստները հարձակման անցան, փորձելով մեկ հարվածով զավթել Կոլա թերակղզին: Հունիսի առաջին կեսին Խորհրդային զորքերը եւ Հյուսիսային նավատորմի նավաստիները թշնամուն կանգնեցրին սահմանից 20-30 կմ-ի վրա եւ հակահարվածներով կայունացրին ռազմաճակատը: Ամբողջ պատերազմի ընթացքում թշնամուն այդպես էլ չհաջողվեց մտնել տրանսպորտային կարելուր կենտրոն համարվող Մուրմանսկ քաղաքը: Չնայած հակառակորդի կատաղի ռմբահարություններին, Մուրմանսկի առեւտրական նավահանգիստն անխափան գործեց ամբողջ պատերազմի ընթացքում:

Այսպիսով, հարձակման երեք գլխավոր ռազմավարական ուղղություններից եւ ոչ մեկում գերմանա-ֆաշիստական բանակը չկարողացավ հասնել իր առջեւ դրված խնդիրների լուծմանը: Իսկ այն հարածուն դիմադրությունը, որը ցուցաբերում էր Խորհրդային ժողովուրդը, նշանակում էր, որ ի չիք են դարձել արագ եւ դյուրին հաղթանակ ձեռք բերելու նրա հույսերը:

2. ՊԱՅՔԱՐ ԹՇՆԱՄՈՒ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Ժամանակավորապես օկուպացված տարածքներում ֆաշիստական Գերմանիան կենսագործում էր 1941 թ. մայիսին մշակված Արեւելյան Եվրոպայի ժողովուրդներին ստրկացնելու գլխավոր պլանի հիմնական դրույթները: Ֆաշիստական ղեկավարությունը ենթադրում էր՝ ոչնչացնել միլիոնավոր խորհրդային մարդկանց եւ գերմանացիներով բնակեցնել Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի եւ ՌեսՍԲԶ Եվրոպական մասի տարածքները, իսկ հետո դրանք մտցնել «Մեծ Գերմանիայի» կազմի մեջ:

Մարտական գործողությունների շրջաններում օկուպացիոն քաղաքականությունը Գերմանիան իրականացնում էր զինվորական հրամանատարության միջոցով, իսկ գործող բանակի թիկունքում մնացած տարածքներում ամբողջ իշխանությունը պատկանում էր հիտլերյան վարչակազմին, որի գործունեությունը կորոզինացվում էր Բեռլինում գտնվող հատուկ նախարարության կողմից: Տեղերում ստեղծվում էին «հնքնավարության» մարմիններ, որոնք ղեկավարվում էին բուրգոմիստրերի ու ավագների կողմից, որոնք մշտապես գտնվում էին զինվորական պարետների ու էսեսականների հսկողության տակ: Ահա, թե ում իշխանության տակ էին գտնվում օկուպացված տարածքներում մնացած խորհրդային մարդիկ: Իսկ քաղաքականությունը գալիս էր կենտրոնից:

Օկուպացված տարածքներում ամբողջ տնտեսական քաղաքականությունը թալանչիական էր: Բնակչության ամբողջ ունեցվածքն ու եկամուտը բռնազավթվում էր հիտլերականների կողմից: Օկուպանտների չարագործությունը բնակչության նկատմամբ, հատկապես երիտասարդության զանգվածային բռնագաղթն էր Գերմանիա՝ ռազմական արդյունաբերության մեջ եւ այլ արտադրություններում աշխատեցնելու համար:

Օկուպացիոն քաղաքականության մեջ գլխավորը խորհրդային մարդկանց ամեն մի դիմադրության ճնշումն էր: Ձգտելով հոգեպես ստրկացնել խորհրդային ժողովրդին, փակում էին ուսումնական եւ գիտական հաստատությունները, ոչնչացնում ճարտարապետական հուշարձաններն ու թանգարանները, փլատակների վերածում քաղաքներ ու բնակավայրեր: Օկուպացիոն քաղաքականության իրականացման հիմնական միջոցը չտեսնված զանգվածային տեռորն էր խաղաղ բնակչության դեմ: Չնչին զանցանքների համար գնդակահարում էին բնակիչներին, բնաջնջում բնակավայրեր: Գրավված ամբողջ տարածքները ծածկված էին ռազմական ճամբարների ցան-

ցով, որտեղ, զոհվում էին հարյուր հազարավոր մարդիկ: Միայն 1941-ի սեպտեմբերի վերջերին Կիելի հյուսիսային մասում գտնվող ձորակում գնդակահարեցին տասնյակ հազարավոր խորհրդային մարդկանց, Ղրիմի մի ավանի մոտ ոչնչացրին 7 հազար քաղաքացիներ, ամենուրեք զգվելի չարությամբ կենդանի թաղում էին մարդկանց, հրդեհում, ավերակում քաղաքներ, գյուղեր եւ այլ բնակավայրեր:

Ժամանակավորապես օկուպացված շրջաններում տանջահար արին եւ ոչնչացրին շուրջ 10 միլիոն խորհրդային քաղաքացիների, գրեթե 5 միլիոն մարդ աշխատանքի բշվեց Գերմանիա:

Ֆաշիստների գազանությունները սաստիկ զայրույթ ու ցասում էին առաջացնում խորհրդային մարդկանց մեջ: Հիտլերականները «ժողովրդական վրիժառուններ» էին անվանում թշնամու թիկունքում խիզախորեն գործող պարտիզաններին, որոնք, արդեն, 1941-ի վերջերին լուրջ ռազմական գործողություններ էին ծավալում Բելոռուսիայում, Ուկրաինայում եւ օկուպացված այլ վայրերում, թշնամու թիկունքում:

Բացառիկ դժվար պայմաններում թշնամու թիկունքում գործում էին կուսակցության 18 ընդհատակյա մարզկոմներ, 260-ից ավելի օկրուգկոմներ, շրջկոմներ եւ այլ ընդհատակյա կուսակցական մարմիններ, բազմաթիվ սկզբնական կազմակերպություններ ու խմբեր:

Հետզհետե ավելի էր ծավալվում ընդհատակայինների պայքարը: Նրանք միշտ թշնամու բանակում էին, այնտեղ, ուր նրանց կայազորներն էին, շտաբները, հակահետախուզության բաժինները, պատժիչ մարմինները: Նրանք արդյունավետ դիվերսիոն գործողություններ էին ծավալում կապի ոլորտներում, երկաթուղային կայարաններում:

Այդ ոլորտներում համարձակ գործողություններ էին իրականացնում Ղրիմի, Մերձբալթիկայի, Լենինգրադի, Սմոլենսկու, Խարկովի, Օռլովի, Կալինինի եւ այլ մարզերի պարտիզանները: Օկուպացված տարածքներում 1941 թ. արդեն գործում էին 2 հազարից ավելի պարտիզանական ջոկատներ, որոնք ընդգրկում էին 90 հազարից ավելի մարդ եւ զգալի թվով մարտական խմբեր, որոնք օկուպանտներին հարվածելու հզոր ուժ էին ներկայացնում:

Նրանք գործում էին «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» սկզբունքով: Հիտլերյան ներխուժումները լուրջ վնաս հասցրին Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մոլդովիայի, Մերձբալթիկայի, ժամանակավոր օկուպացիայի ենթարկված Ռուսաստանյան ֆեդերացիայի մի շարք մարզերի տնտեսությանը:

Օկուպացված այդ տարածքներում մինչեւ պատերազմն ար-

տադրվում էր չուզուհի գրեթե երեք քառորդը, պողպատի եւ սեւ մետաղների գլանվածքի կեսից ավելին, արդյունահանվում էր քարածխի երկու երրորդը, արտադրվում էր մարտական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքների մեծ մասը: Այդ պատճառով էլ կարմիր բանակին ռազմական տեխնիկայով, հանդերձանքով, պարենամթերքով մատակարարելու հիմնական ծանրությունն ընկած էր Ուրալի, Պովոլժիեի, երկրի արեւելյան շրջանների վրա: Դա հանգեցրեց Միջին Ասիայի, Անդրկովկասի հանրապետությունների եւ Ղազախստանի տնտեսության բուռն աճին: Այդ պատճառով էլ ռազմաարդյունաբերական պոտենցիալի հետագա մեծացումն ընթանում էր Եվակուացված ձեռնարկությունների հաշվին:

Դեպի երկրի խորքերը նյութական արժեքների տեղափոխումը կատարվում էր թշնամական գորքերի մոտեցման համընթաց, հաճախ ռմբակոծության եւ հրետանային կրակի տակ: Մոսկվայից եւ Մոսկվայի մարզից 1941-ի նոյեմբերի 30-ի մոտերքին դուրս բերվեցին գրեթե 500 արդյունաբերական ձեռնարկություն: Առաջին կես տարվա ընթացքում, այն շրջաններից, որոնց վտանգ էր սպառնում, տեղափոխեցին մեկուկես հազարից ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ: Բացի դրանից, Եվակուացվեցին շատ ուսումնական հաստատություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, գրադարաններ, թանգարաններ, թատրոններ: Երկրի արեւելք տեղափոխվեց 10 միլիոնից ավելի մարդ:

Բանակի նյութատեխնիկական մատակարարումը հսկայական չափով կախված էր արեւելք հասած ձեռնարկությունների եւ սարքավորումների արագ տեղաբաշխումից եւ գործարկումից:

Թիկունքում դրսևվորվող հերոսությունը չէր զիջում ռազմաճակատի հերոսությանը: Մարդիկ աշխատում էին ամբողջ օրը, հաճախ բաց երկնքի տակ, խստաշունչ սառնամանիքին: Արդեն 1941 թ. դեկտեմբերին երկրի արեւելյան մաս տեղափոխված պաշտպանական ձեռնարկությունների մի մասը սկսեց արտադրանք տալ:

Ռազմական տնտեսության աճի կարելուհաջող հիմնահարցը դարձավ աշխատանքային ռեսուրսների հարցը: Միլիոնավոր տղամարդիկ մեկնել էին ռազմաճակատ: Հաստոցների մոտ նրանց փոխարեն կանգնել էին կանայք, բարձր դասարանների աշակերտները, թոշակառուները:

Ժողովրդական տնտեսության մեջ աշխատող կանանց թիվը, մինչ պատերազմյան մակարդակի հետ համեմատած, ավելացավ գրեթե երկու անգամ:

Թիկունքի աշխատավորներն իրենց ամբողջ ուժերը տվեցին կու-

սակցության «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» կոչի կատարմանը:

Պատերազմի հենց սկզբում առաջ եկավ՝ «Աշխատել ոչ միայն իր, այլև ռազմաճակատ մեկնած ընկերոջ փոխարեն» շարժումը, որն ստացավ երկհարյուրականներ անվանումը: Մոսկվայի, Գորկու եւ երկրի այլ քաղաքների հազարավոր կոմերիտականներ դարձան նոր՝ երեքհարյուրականներ, հինգհարյուրականներ շարժման հեղինակներ, ամբողջ երկրով մեկ ծավալվեց կոմերիտական-երիտասարդական բրիգադների մրցություն՝ ռազմաճակատային բրիգադային կոչման արժանանալու համար: Նրանց նշանաբանն էր՝ «Աշխատանքում՝ ինչպես մարտում»:^{*}

Պատերազմը հսկայական վնաս հասցրեց նաեւ գյուղատնտեսությանը: Օկուպացված տարածքներում մինչ պատերազմը արտադրվում էր հողագործության եւ անասնաբուծության երկրի ամբողջ արտադրանքի կեսից ավելին եւ ապրում էր ԽՍՀՄ-ի բնակչության 45 տոկոսը: Պատերազմը խաղաղ աշխատանքից կտրեց գյուղական բնակչության ամենաորակյալ եւ աշխատունակ մասին: Բանակի կարիքների համար տրամադրվեցին մեծ թվով տրակտորներ, ավտոմեքենաներ, ձիեր: Գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու մթերումը զգալիորեն կրճատվեց: Երկրում քարտային համակարգ մտցվեց:

Մերձակատային շրջաններում հացահատիկի հունձը հաճախ կատարվում էր գնդակոծության եւ ռմբակոծության տակ: Այնուամենայնիվ, գյուղատնտեսության աշխատավորները անձնուրաց կերպով էին կատարում իրենց պարտքը հայրենիքի առջեւ:

Ռազմաճակատի եւ թիկունքի միասնությունը դրսևորվեց նաեւ գործող բանակի զորամասերի նկատմամբ հանրապետությունների վերցրած շեփոթյամբ, թիկունքից բազմաթիվ պատվիրակների ռազմաճակատ կատարած ուղեւորություններում, կարմիր բանակի

^{*} Կուսակցությունն ու կառավարությունն ամեն ինչ արեցին գյուղատնտեսության մեջ առաջացած դժվարությունները հաղթահարելու համար: Ցանքատարածություններն ու խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նախապատերազմյան ժամանակի համեմատությամբ նվազել էր ավելի քան մեկ երրորդով, իսկ գյուղատնտեսական համախառն արտադրանքը՝ կեսից ավելին: Որոշվեց ընդլայնել Պոլոտիեի, Ռուալի, Սիբիրի, Ղազախստանի եւ Միջին Ասիայի ցանքատարածությունները. ընդունվեց որոշում Ալթայի տրակտորի գործարանի շինարարությունն ավարտելու եւ Կրասնոյարսկում գապարոժյան «կոմունար» կոմբայնի գործարանի վերանորոգման մասին: Ռազմաճակատում տեղի ունեցած բեկումը թույլ տվեց լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման համար:

համար տաք հագուստ հայթայթելու, վիրավոր մարտիկներին եւ հրամանատարներին օգնելու գործում:

Հայրենասիրական կարեւոր նշանակություն ունեցած հասարակական լայն շարժման ձեւ ստացավ Էվակուացված ընտանիքների նկատմամբ հոգատարությունը: Առանձնակի ուշադրությամբ էին շրջապատված ծնողներին եւ հարազատներին կորցրած երեխաները:

Ռազմաճակատում հեղված արյամբ եւ թիկունքում կատարված հերոսական աշխատանքով առհավետ ամրապնդվեց ԽՍՀՄ ժողովուրդների սրբազան բարեկամությունը:

Ռազմական ժամանակն իր հետքը թողեց նաեւ խորհրդային դպրոցական կյանքի վրա: Բարձր դասարաններում մտցվեց պարտադիր ռազմական ուսուցում: Ֆաշիստների կողմից պաշարված քաղաքներում շատ դպրոցներ շարունակում էին աշխատել:

Հարյուր հազարավոր աշակերտներ իրենց աշխատանքով օգնում էին արդյունաբերական ձեռնարկություններին, գյուղատնտեսական աշխատանքներին:

Մեծ նվիրումով էին գործում գիտության, արվեստի, գրականության, մշակույթի, կինոֆիկացիայի ոլորտի գործիչները:

3. ՀԻՏԼԵՐՅԱՆ ՉՈՐՔԵՐԻ ԶԱԽՉԱԽՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՄՈՏ

Մայրաքաղաքի պաշտպանությունը: Մոլոլենսկու ճակատամարտից հետո կենտրոնական ռազմաճակատում հաստատված անդորրը անդորր էր փոթորկից առաջ: Հիտլերյան գլխավոր շտաբը մշակել էր Մոսկվայի վրա վճռական հարձակման անցնելու պլան, որն ստացավ «Թայֆուն» պայմանական անվանումը: Ենթադրվում էր, որ Ֆաշիստական բանակը սրընթաց հարվածով կճեղքի խորհրդային պաշտպանությունը և կգրավի մայրաքաղաք Մոսկվան: Այդ խնդիրը լուծելու համար թշնամին Մոսկվայի ուղղությամբ կենտրոնացրել էր հսկայական ուժեր՝ 1 միլիոն 800 հազար զինվոր և սպա, 1700 տանկ, 1390 ինքնաթիռ, 14 հազար հրանոթ և ականանետ: Լենինգրադի շրջափակումը և Կիելի գրավումը հետաձգելու հանգամանքով հիտլերական հրամանատարությանը թույլ տրվեց իր ուժերի մի մասը նետել Մոսկվայի ուղղության բնագծերի վրա:*

Պատերազմի հենց սկզբից Պաշտպանության պետական կոմիտեն և Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանը հատուկ ուշադրություն էին դարձնում Մոսկվայի պաշտպանությանը: Այդ նպատակով նախօրոք մոբիլիզացրին շինարարական կազմակերպություններին և ինժեներական զորքերին, բնակչությանը կոչ արեցին ամրապնդել մերձմոսկովյան պաշտպանական բնագծերը: Կառուցվեցին կրակակետեր ու բլինդաժներ, փորվեցին խրամատներ և հակատանկային փոսեր, գրեթե փակվեցին Մոսկվայի մատույցները: Այստեղ կենտրոնացվել էր 1 միլիոն 250 հազար մարդ, 7600 հրանոթ և ականանետ, 990 տանկ, 577 ինքնաթիռ: Ուժերի գերակշռությունը թշնամու կողմն էր, իսկ խորհրդային զորքերը այդ ժամանակ փաստորեն ռեզերվներ չունեին:

Ֆաշիստական բանակի հարձակումն սկսվեց 1941 թ. սեպտեմբերի 30-ին: Տանկային հզոր հարվածներով թշնամուն հաջողվեց ճեղքել մեր բանակի պաշտպանությունը և Բոյանսկի շրջանում շրջապատել խորհրդային բանակի մի մասը: Հոկտեմբերի 3-ին հարված հասցրին Վյազմայից արեւմուտք: Դրությունը դարձավ անչափ վտանգավոր: Թվում էր, թե ճանապարհը դեպի Մոսկվա բաց է թշնամու համար, բայց Բոյանսկի և Վյազմայի մոտ շրջապատման մեջ մարտնչող խորհրդային զորքերը համառ դիմադրությամբ իրենց վրա գամեցին թշնամու խոշոր ուժերը, կասեցնելով նրանց առաջ-

* «ԽՍՀՄ պատմություն», «Լույս» հրատարակչություն, թարգմանված հայերեն, 1989թ., X դասարանի դասագիրք, էջ 64:

խաղացումը: Թշնամին բոլոր ուղղություններում բախվեց դաժան դիմադրության, կրելով մարդկային ու մարտական տեխնիկայի մեծ կորուստներ: Նրա հարձակումը դանդաղեց: Մեր պաշտպաններն այդ մարտերում ցուցաբերեցին սխրանքի, խիզախության եւ հերոսության անձնուրաց օրինակներ:

Հոկտեմբերի երկրորդ կեսին թշնամին, հաղթահարելով Վյազմա-յի մոտ շրջապատված գորամասերի դիմադրությունը, նորից անցավ հարձակման, ճեղքեց պաշտպանական գիծը եւ զավթեց Կալինին, Մալոյարոսլավեց, Մոժայսկ, Վոլոկոլամսկ քաղաքները: Այդ ծանր օրերին հիմնական կարգախոսը դարձավ «Ամեն ինչ հարազատ Մոսկվայի պաշտպանության համար» կոչը: Հոկտեմբերի 20-ին մայրաքաղաքում եւ նրա արվարձաններում պաշարողական դրություն մտցվեց:

Մոսկվայի պաշտպանության համար ոտքի ելավ ամբողջ երկիրը: Ուրալից եւ Սիբիրից, Հեռավոր Արեւելքից եւ Միջին Ասիայից գալիս էին համալրումներով, սպառազինություններով եւ ռազմամթերքով լի գնացքներ: Կուսակցության կոչով ժողովրդական աշխարհագորի՝ 50 հազար մարտիկեր, մայրաքաղաքի աշխատավորներ, ոտքի ելան օգնելու ռազմաճակատին: Խորհրդային զորքերը ծանր մարտերով ետ էին մղում դեպի մայրաքաղաքի մատույցները նետվող հիտլերյան զավթիչների բուռն հարձակումները: Նոյեմբերի սկզբներին հաջողվեց թշնամու հարձակումները կասեցնել:

Երբ հոկտեմբերի 30-ին Տուլայի բախտը վճռված համարող հակառակորդի տանկերը փորձեցին մտնել քաղաք, նրանք արժանի հակահարված ստացան Տուլայի պաշտպաններից, ինչը Մոսկվայի պաշտպանությանը անգնահատելի ներդրում էր: Տուլան վեր էր ածվել ամրոցի, որը մինչեւ վերջ մնաց անառիկ եւ խափանվեց այն զավթելու թշնամու պլանը:

Մոսկվան պաշտպանվում էր նաեւ օդից: Մայրաքաղաքի ռազմաօդային պաշտպանությունը գործում էր հմտորեն եւ կազմակերպված: Միայն թշնամու առանձին ինքնաթիռների էր հաջողվում ճեղքել-հասնել քաղաք:

Չնայած թշնամին շատ մոտ էր Մոսկվային, այնուամենայնիվ, նոյեմբերի 6-ին քաղաքի մետրոյի «Մայակովսկի» կայարանի դահլիճում կայացվեց հանդիսավոր նիստ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 24-րդ տարեդարձի կապացությամբ:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 7-ին, Կարմիր հրապարակում տեղի ունեցավ զինվորական զորահանդես, որտեղից էլ զինվորական զորամասերը մեկնեցին ռազմաճակատ՝ պաշտպանելու Մոսկվան:

Հանդիսավոր նիստը եւ զորահանդեսը հսկայական քաղաքական եւ բարոյական նշանակություն ունեցան: Դրանք վկայում էին ոչ միայն Մոսկվան պաշտպանելու համար ամբողջ ժողովրդի վճռակա-նությունը, այլեւ հաղթանակի նկատմամբ նրա ուժի եւ վստահու-թյան արտահայտությունն էին:

Նոյեմբերի 15-18-ին սկսվեց հիտլերականների նոր հարձակումը Կիեւի եւ այլ ուղղություններով: Չավթեցին Կիեւ, Սոլնեչնոգորսկ, Կրյուկովո, Յախրովա, Խստրա քաղաքները: Մարտերը հատկապէս համառ էին Վոլոկոլամսկ քաղաքի եւ Դուբոսելովո կիսակայարանի մոտ:

Մոսկվան գտնվում էր հիտլերականներից 25-30 կմ հեռավորու-թյան վրա, այդուհանդերձ, նրանց չհաջողվեց առաջ շարժվել:

Այդ ժամանակ կարելուր նշանակություն ունեցան հարավային ուղղության վրա եւ Լենինգրադի մոտ ծավալված իրադարձու-թյունները:

Ֆաշիստական զորքերը զավթեցին Դոնբասի զգալի մասը, տիրե-ցին Դոնի Ռոստովին եւ ճեղքել-անցնելու վտանգ ստեղծեցին Կով-կասի ուղղությամբ: Բայց Հարավային ռազմաճակատի հակահար-ձակման շնորհիվ, հակառակորդը լուրջ կորուստներ ունեցավ եւ նո-յեմբերի 29-ին խորհրդային զորքերի կողմից ազատագրվեց Ռոստով քաղաքը:

Ռոստովի եւ Տիխվինի մոտ ծավալված գործողությունները պա-տերազմում կարմիր բանակի առաջին խոշոր հաջող հարձակողա-կան գործողություններից էին:

Վերը նշած ռազմական գործողությունները շեղեցին թշնամու ու-ժերին եւ թույլ չտվեցին նրան հզորացնելու Մոսկվայի վրա հարձակ-վող իր զորքերի խմբավորումը: Ուստի, մեր զորքերի համար նպաս-տավոր պայմաններ ստեղծվեց հակահարձակման անցնելու:

Հարձակումը եւ գերմանաֆաշիստական զորքերի ջախջախումը Մոսկվայի մոտ: Մղելով ծանր պաշտպանական մարտեր, խորհրդա-յին երկիրն ուժեր էր հավաքում թշնամուն վճռական հակահարված հասցնելու համար: Դեկտեմբերի սկզբներին փոխվել էր ուժերի հա-րաբերակցությունը: Փոքր առավելություն ուներ խորհրդային ավի-ացիան, չնայած հակառակորդը գերակշռություն ուներ զորքերի, հր-թիռների եւ տանկերի գծով:

1941-ի դեկտեմբերի 5-ին թշնամին Մոսկվայի վրա հարձակման մի հուսահատական փորձ եւս կատարեց, որը կասեցվեց մեր բանա-կի կողմից: Թշնամին դեռ չէր հասցրել անցնել պաշտպանության, խորհրդային զորքերը դեկտեմբերի 5-6-ին անցան հակահարձակ-

ման ամբողջ ռազմաճակատով՝ Կալինինից մինչև Ելեց: Հակահարձակմանը մասնակցեցին Արեւմտյան, Կալինինյան եւ Հարավ-Արեւմտյան ռազմաճակատների ուժերը: Դա կատարյալ անակնկալ էր հակառակորդի համար եւ չկարողացավ ետ մղել այն:

1942 թ. հունվարի սկզբներին խորհրդային բանակը ազատագրեց Կալինինը, Կալուզան եւ բազմաթիվ բնակավայրեր: Թշնամին Մոսկվայից ետ շարտվեց 100-250 կմ-ի վրա: Մայրաքաղաքին անմիջականորեն սպառնացող վտանգը մնաց ետեւում:

Մոսկվայի մոտ հաղթանակն ունեցավ պատմական նշանակություն: Այն հոգեբանական հսկայական ազդեցություն ունեցավ պատերազմի հետագա ամբողջ ընթացքի վրա: Հինգ ամսվա լախանջից եւ հյուժիչ պաշտպանական մարտերից հետո, մեր բանակն անցավ հարձակման, որի հարվածների տակ խուճապահար ետ փախան հիտլերյան «անպարտ» զորքերը:

Թշնամու այդ պարտությունը մեծ հարված հասցրեց նրա բարոյական վիճակին:

Պատերազմի ընթացքում Մոսկվայի տակ ֆաշիստական զավթիչների ջախջախումը դարձավ արմատական բեկման սկիզբը: Խորհրդային բանակը իսկեց ռազմավարական լախանջությունը խորհրդա-գերմանական ռազմաճակատի վճռական հատվածում: Հիտլերյան բանակը, որը հաղթականորեն քայլում էր Եվրոպայով, կրեց առաջին խոշոր պարտությունը: Մոսկվայի մոտ վերջնականապես փլուզվեց «Կայծակնային» պատերազմի ռազմավարությունը: Մոսկվայի վրա հարձակման ձախողումը ցնցեց ամբողջ ֆաշիստական բլոկը եւ կանխեց Գերմանիայի հետ Ճապոնիայի ու Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու վտանգը:

Մոսկվայի մոտ ձեռք բերված հաղթանակը ոգեւորեց խորհրդային մարդկանց եւ նոր սխրագործությունների մղեց:

1942 թվականի հունվարին, Մոսկվայի մոտ հակահարձակումը վերաճեց ամբողջ ռազմաճակատով մեկ ընդհանուր հարձակման:

Մոսկվայի մոտ հիտլերականների պարտությունն ունեցավ նաեւ միջազգային նշանակություն: Այն նպաստեց հակահիտլերյան կոալիցիայի սկսված կազմավորումն ավարտելու գործին: 1942 թ. հունվարի 1-ին 26 պետությունների ներկայացուցիչներ Վաշինգտոնում ստորագրեցին ագրեսորների դեմ համատեղ պայքարի մասին դեկլարացիա, որը մեծ դեր խաղաց ֆաշիստական բլոկի ջախջախման գործում: Սակայն, դաշնակիցները, դեռեւս լուրջ ռազմական գործողություններ չէին ձեռնարկում:

Ռազմական գործողությունները 1942թ. գարնանն ու աշնանը:

1942թ. գարնան մոտերքը հիտլերյան զորքերն ամրացան Նոր բնագծերում: Նրանք դեռեւս գտնվում էին Մոսկվայից 150 կմ հեռավորության վրա: Գերմանական ռազմական որոշ մասնագետները կարծիք հայտնեցին՝ զավթել Լենինգրադը եւ Նոր հարձակում ձեռնարկել Մոսկվայի վրա: Սակայն, Զիտլերյան ղեկավարությունը որոշեց հիմնական հարձակումը կատարել հարավի ուղղությամբ, Նպատակ ունենալով զավթել ռազմավարական հումքով հարուստ շրջանները: Կովկասի Նավթի զավթումը թշնամու համար կենսական, կարելի էր նշանակություն ուներ հարձակումը շարունակելու գործում: Հակառակորդն այստեղ երկու կարելի էր հարց էր լուծում. նախ, Նավթի հարցը, որի պահանջը շատ սուր կերպով էր զգում, եւ երկրորդ՝ դրդել Թուրքիային. պատերազմի մեջ մտցնել ԽՍՀՄ-ի դեմ: Այդ նպատակով Գերմանիան կարողացավ Արեւմուտքից Արեւելյան ռազմաճակատ նետել եւս 75 դիվիզիա, որը ամռան եւ աշնան կամպանիաների ժամանակ խորհրդային զորքերի համար լուրջ անհաջողությունների գլխավոր գործոններից մեկն էր:

Հաշվի չառնելով ռազմակայանի անդամների հեղինակավոր կարծիքները, Ստալինը որոշեց, որ գլխավոր իրադարձությունները Նորից կծավալվեն Մոսկվայի ուղղությամբ եւ այստեղ կենտրոնացրեց գլխավոր ուժերը, որն էլ բացասաբար ազդեց ռազմական գործողությունների հետագա ընթացքի վրա:

Ֆաշիստական զորքերի հարձակումն սկսվեց Ղրիմի ռազմաճակատում 1942-ի մայիսին: Մեր զորքերը լուրջ կորուստներ կրելով, հարկադրված եղան Ղրիմից Էվակուացվել Թամանյան թերակղզի: Դրանից հետո սկսվեց Սեւաստոպոլի Նոր գրոհը: Ուժերը չափազանց անհավասար էին եւ հուլիսի 4-ին, 250-օրյա հերոսական պաշտպանությունից հետո, խորհրդային զորքերը թողեցին Սեւաստոպոլ քաղաքը:

Դրությունն էլ ավելի անհաջող դասավորվեց Խարկովի շրջանում:

Հարավ-Արեւմտյան ռազմաճակատում մայիսի կեսերին մեր զորքերի կողմից ձեռնարկված հակահարձակումը չհաջողվեց: Մեր զորքերն ընկան շրջապատման մեջ, որից քիչ զորամասերի հաջողվեց դուրս գալ: Այս պարտությունը Նորից փոխեց իրադրությունը: Ռազմաճակատում նախաձեռնությունը Նորից անցավ թշնամու ձեռքը:

Շարունակելով հարձակումը, գերմանական զորքերը գրավեցին Դոնբասը, ապա տիրեցին Ռոստովին եւ որոշեցին հարձակումը շարունակել Կովկասի ու Ստալինգրադի ուղղություններում: Կարմիր բանակի առջեւ ծանր խնդիր ծառայեցավ՝ ինչ գնով էլ լինի, կանգնեցնել թշնամուն:

Ռազմաճակատում դրության խիստ սրումը, արդյունաբերական եւ գյուղատնտեսական հարուստ շրջաններից հարկադրական նահանջը բացասաբար ազդեց խորհրդային զորքերի մարտունակության վրա: Այդ պայմաններում պաշտպանության ժողովում 1942 թ. հունիսի 28-ին հրաման արձակեց, որով պահանջվում էր ուժեղացնել դիմադրությունը: Հրամանի՝ «Ոչ մի քայլ հետ» խիստ խոսքերը խորհրդային զինվորներին մոբիլիզացրին ագրեսորի դեմ էլ ավելի համառ պայքար մղելու համար:

Կովկասի համար ճակատամարտը սկսվեց 1942 թ. հունիսի վերջերին եւ շարունակվեց հինգ ամիս: Հյուսիսային Կովկասի զգալի մասի զավթումը դժվարացրել էր Անդրկովկասի կապը երկրի կենտրոնի հետ, ինչի պատճառով բարդացել էր մեր զորքերի մատակարարումը: Անդրկովկասը վեր էր ածվել իրեն պաշտպանող զորքերի հիմնական զինանոցի եւ պարենի բազայի: Կառուցվեցին պաշտպանական բնագծեր, կազմավորվեցին ազգային դիվիզիաներ եւ թշնամու առաջխաղացումը կասեցվեց Օրջոնիկիձեի մատույցներում, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռնանցքների մոտ եւ Սեւծովյան ափերին՝ Նովոռոսիյսկի մոտ:

Ստալինգրադի պաշտպանությունը: 1942 թ. ամառային հարձակման ժամանակ գերմանական հրամանատարությունն առանձնահատուկ նշանակություն էր տալիս Ստալինգրադի գրավմանը: Դեպի Վոլգա ելք ունենալը թույլ կտար կտրել կարեւոր տրանսպորտային երակը, որով հաց եւ նավթ էր հասցվում երկրի կենտրոնական շրջանները եւ կանխորոշել հաջողությունը Կովկասի համար մղվող ճակատամարտում: Ստալինգրադի մոտ դրությունը խիստ անսպասու էր դասավորվում խորհրդային զորքերի համար: Հարձակման անցած գերմանական 6-րդ բանակն ուներ կենդանի ուժի եւ սպառազինության ճնշող գերակշռություն: Ստալինգրադի մատույցներում հունիսի 17-ից մինչեւ օգոստոսի 7-ը՝ 22 օր խորհրդային զորքերը դիմակայում էին հակառակորդի հարձակմանը: Օգոստոսի 23-ին հակառակորդին հաջողվեց քաղաքի հյուսիսային մասում դուրս գալ Վոլգա: Դրությունը դարձավ տագնապալից: Ֆաշիստներն անընդհատ ռմբահարում էին քաղաքը: Հազարավոր շենքեր կործանվեցին, մի շարք շրջաններ ավերակների վերածվեցին, զոհվեցին շատ բնակիչներ: Օգոստոսի 25-ին Ստալինգրադում պաշարողական դրություն մտցվեց: Քաղաքը դարձավ ռազմաճակատ: Ձեռնարկված կտրուկ միջոցառումների շնորհիվ Վոլգայի երկայնքով հյուսիսից հարվածով գրավելու հիտլերականների փորձը հետ շարտվեց: Ֆաշիստներին կանգնեցրին Ստալինգրադի հյուսիս-

արեւմտյան ծայրամասում:

Թշնամու հրամանատարությունը սեպտեմբերի վերջին Ստալինգրադի վրա հարձակվող բանակների խմբում կենտրոնացրեց 80 դիվիզիա: Զաղաքում ծավալվեցին փողոցային դաժան մարտեր: Զաղաքի պաշտպանները բացառիկ տոկոսություն եւ զանգվածային հերոսություն էին ցուցաբերում:

Բազմիցս ձեռքից-ձեռք անցան Մամաեւ Կուզանը, տրակտորի գործարանի «Բարիգադի» եւ «Կրասնի օկտյաբր» գործարանների տարածքները, շատ տներ ու փողոցներ: Խորհրդային զինվորները կանգնած էին ի մահ: Նրանց նշանաբանն էր. «Վոլգայից այն կողմ մեզ համար հող չկա»: Առանձին տներ զավթելու համար հիտլերականները մարդկային այնքան կորուստներ էին ունենում, ինչքան չէին ունեցել եվրոպական որեւէ քաղաք գրավելու ժամանակ:

Նոյեմբերի սկզբներին Վոլգան սկսեց սառցակալել: Կապը աջ թեւի հետ խախտվեց: Զաղաքի պաշտպանների զինամթերքը, պարենը, դեղամիջոցները սպառվեցին: Այս պայմաններում հակառակորդը Նորից գրոհեց քաղաքը, սակայն այս հարձակմամբ եւս նպատակին չհասավ, չկարողացավ գրավել քաղաքը: Ստալինգրադի հերոսական պաշտպանությունը պայմաններ ստեղծեց մեր զորքերի համար՝ հետագայում հարձակման անցնելու: Խորհրդային զորքերը պատերազմի ամբողջ ճակատով վիժեցրին ֆաշիստական հրամանատարության պլանները: Այնուամենայնիվ, 1942 թ. նոյեմբերի երկրորդ կեսին խորհրդա-գերմանական ռազմաճակատում իրադրությունը դեռեւս մնում էր լարված:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ. 1942 թ. նոյեմբեր-1943 թ. վերջը:

Պատերազմի այդ ժամանակահատվածի գլխավոր արդյունքները՝ համառոտակի:

1. ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԵԿՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Այդ շրջանը նշանավորվեց հակառակորդի դեմ պայքարում արմատական բեկումով: Կարմիր բանակն ամբողջությամբ իր ձեռքը վերցրեց ռազմավարական նախաձեռնությունը: Սկսվեց ֆաշիստական զավթիչների զանգվածային վտարումը խորհրդային հողից:

Կուրսկի մոտ տարած հաղթանակը եւ դեպի Ղնեպր խորհրդային զորքերի ելքը արմատական բեկում մտցրին պատերազմի ընթացքի մեջ: Գերմանիան եւ նրա դաշնակիցները հարկադրված էին պաշտպանության անցնել ոչ միայն խորհրդա-գերմանական, այլ նաեւ երկրորդ համաշխարհային պատերազմի մյուս ռազմաճակատներում:

Չեռագա զարգացում ստացավ խորհրդային ռազմական արվեստը: Արժեքավոր փորձ ձեռք բերվեց ռազմաքաղաքական իրադրությունը ճիշտ գնահատելու, ռազմավարական նախաձեռնության գլխավոր հարվածների ուղղությունը որոշելու, ռազմաճակատների փոխգործողությունները կազմակերպելու, ռեզերվները ճիշտ օգտագործելու, հակառակորդի թիկունքում պարտիզանական շարժման հետ կանոնավոր զորքերի գործողությունները զուգակցելու, շրջապատման մեջ գտնվող խմբերի գործողությունները անցկացնելու, թշնամու ուժերը ջախջախելու եւ խոշոր ջրային արգելքները մարտով անցնելու գործերում:

Երկրի տնտեսական զարգացման գործում ձեռք բերված հաջողությունները դարձան պատերազմում արմատական բեկման նյութատեխնիկական հիմքը:

Համոզիչ կերպով դրսևորվեցին սոցիալիստական գաղափարախոսության առավելությունները, մեծացավ ատելությունը ֆաշիզմի հանդեպ:

Էլ ավելի ամրապնդվեց ԽՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամությունը:

Կարմիր բանակի հաղթանակներն ունեցան հսկայական միջազգային նշանակություն: Աճեց Խորհրդային Միության միջազգային հեղինակությունը: Դրա ակնառու վկայությունն էր երեք դաշնակից երկրների կառավարությունների ղեկավարների (Ստալին, Ռուզվելտ

եւ Չերչիլ) 1943 թ. Նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը Թեհրանում կայացած կոնֆերանսը, որտեղ քննարկվեցին երկրորդ ռազմաճակատի բացման, եվրոպական երկրների հետագա ճակատագրերի եւ այլ հիմնահարցեր:

Սակայն՝ մի քիչ հանգամանորեն:

Չարթանակ Ստալինգրադի մոտ: Չարթանակում ամբողջ ճակատով: Ստալինգրադի հերոսական պաշտպանությունը վիժեցրեց հիտլերականների՝ 1942 թ. ամառային-աշնանային կամպանիայի պլանը: Խորհրդային զորքերը ուժասպառ եւ արյունաքամ արեցին Վոլգայի ափին գտնվող քաղաքի՝ Ստալինգրադի համար գործող ֆաշիստների գլխավոր խմբավորմանը, ինչը բարենպաստ պայմաններ ստեղծեց մեր զորքերի համար՝ հակահարձակման անցնելու:

«Ուրան» պայմանական անվանումն ստացած խորհրդային զորքերի հարձակողական պլանի մշակումն սկսվել էր դեռեւս պաշտպանական օպերացիայի ընթացքում: Դրա մշակման գործում մեծ դեր խաղացին ռազմակայանի ներկայացուցիչներ եւ ռազմաճակատի հրամանատարներ:

Ըստ այդ պլանի ռազմաճակատի պլանգրամներից մեր զորքերը պետք է որ հարվածներով ջախջախեին հակառակորդի հարվածային խմբավորումների թեւերը պաշտպանող զորքերին եւ շարունակելով հարձակումը, նախատեսված ուղղություններով, շրջապատեին եւ ոչնչացնեին անմիջապես Ստալինգրադի մոտ գործող նրա գլխավոր ուժերը:

Խորհրդային զորքերի պայմանական հակահարվածն սկսվեց 1942 թ. Նոյեմբերի 19-ին Չարավ-արեւմտյան եւ Դոնի ռազմաճակատների ուղղություններում՝ հրետանային հզոր նախապատրաստությունից հետո: Նոյեմբերի 20-ին հարձակում սկսեցին նաեւ Ստալինգրադյան ռազմաճակատի զորքերը: Մարտերի 5-րդ օրը Չարավ-արեւմտյան եւ Ստալինգրադյան շարժական միավորումները հանդիպեցին Կալաչ-Սովետսկի շրջանում եւ ավարտեցին ընդհանուր թվով 330 հազար մարդուց բաղկացած, հակառակորդի խմբավորումների շրջապատումը: Նոյեմբերի վերջին խորհրդային զորքերը կազմեցին նաեւ ներքին շրջապատման օղակ՝ ավելի քան հինգ հարյուր կիլոմետր երկարությամբ: Ստեղծվեց հակառակորդի շրջապատման համատարած ռազմաճակատ:

Դեկտեմբերի 12-ին հիտլերյան հրամանատարությունը փորձ արեց Կոտելնիկովո ավանի շրջանից հարվածով ճեղքել շրջափակումը: Այդ նպատակով նույն շրջանում ստեղծվել էր տանկային մեքենայացված, եւ մի շարք այլ զորամասերից կազմված հզոր հար-

վածային գումարտակ: Խորհրդային բանակը կարողացավ կանգնեցնել թշնամուն, իսկ այնուհետև շրջափակել ֆաշիստական միավորումները: Կոտելնիկովյան օպերացիայի հետ, միաժամանակ, Ստալինգրադի Յուլիս-արեւմուտքում ծավալվեց խորհրդային զորքերի հարձակումը Միջին Դոնի վրա, որը ֆաշիստներին ստիպեց վերջնականորեն հրաժարվել շրջապատված խմբավորումն ազատելու մտքից:

Վիժեցվեց նաև շրջապատվածներին ավիացիայով օգնելու փորձը:

Ձգտելով խուսափել ավելորդ արյունահեղություններից, խորհրդային հրամանատարությունը հիտլերականներին առաջարկեց դադարեցնել անիմաստ դիմադրությունը և կապիտուլյացիայի ենթարկվել: Բայց այդ առաջարկությունը մերժվեց:

1942 թ. հունվարի 10-ին խորհրդային զորքերը հարձակման անցան, իսկ փետրվարի 2-ին խմբավորման ընդհանուր ղեկավարությունն իրականացնող գեներալ-ֆելդմարշալ Պատուլյուսը ստորագրեց կապիտուլյացիայի ակտը:

Վոլգայի ափին տեղի ունեցած ճակատամարտը դարձավ գերմանական ֆաշիզմի խոշորագույն ռազմաքաղաքական պարտությունը: Այն վճռական դեր խաղաց Յայրենական մեծ պատերազմում արմատական բեկում իրականացնելու գործում:

Ի դեպ, Ստալինգրադի մոտ տարած հաղթանակը ինչ-որ տեղ նշանակալից դեր ունեցավ Յայկական ԽՍՀ-ի հետագա ճակատագրում: Բանը նրանում էր, որ, եթե Գերմանիային հաջողվեր գրավել Ստալինգրադը, ապա ըստ երկուստեք պայմանավորվածության, հաջորդ օրն իսկ անմիջապես Թուրքիան մեծաքանակ զորախումբ կմտցներ Անդրկովկաս և նոր կայսրություն ստեղծելու իր դարավոր նկրտումներն իրականացնելու նպատակով կօկուպացներ ամբողջ Անդրկովկասը՝ իր ճանապարհից մաքրելով, ըստ իրենց՝ մշտապես խոչընդոտ հանդիսացող Յայաստան պետությունն ու հայ ժողովրդին: Ուրեմն, Ստալինգրադում խորհրդային բանակի տարած հաղթանակով կործանումից փրկվեց ոչ միայն Յայաստան պետությունն ու ժողովուրդը, այլև թուրքական պետությունը դուրս եկավ Գերմանիայի հետ դաշնության խմբից:

Ստալինգրադի մոտ կրած ջախջախիչ պարտությունը, որտեղ թշնամին կորցրեց Արեւմուտքում գտնվող իր բանակի մոտ 25 տոկոսը, հիտլերյան կայսրությանը ցնցեց մինչև հիմքերը, խիստ ջլատեց նրա բանակի և ժողովրդի բարոյական ոգին:

Այդ հաղթանակը էլ ավելի բարձրացրեց մեր բանակի դերն ու հե-

ղինակությունը որպես այն հեղինակավոր ուժի, որն ընդունակ է մարդկությանը փրկել ֆաշիզմից: Այն նպաստեց նաեւ հակահիտլերյան կռաւիցիայի ամրապնդմանը:

Վուգայի ափին տեղի ունեցած ճակատամարտը կանխորոշեց նաեւ Յյուսիսային Կովկասում ընթացող մարտերի ելքը: Կանխագալով, որ այստեղ եւս շրջապատվելու վտանգ կա, թշնամին ետ քաշեց իր զորքերը, ինչի հետեւանքով փետրվարին Յյուսիսային Կովկասի մեծ մասը մաքրվեց թշնամուց:

Խորհրդային զորքերի հարձակման մեջ առանձնահատուկ տեղ գրավեց Յյուսիս-արեւմտյան ռազմաճակատում 1943 թ. հունվարի 12-18-ին՝ Լենինգրադի՝ թշնամական շրջափակման օղակը ճեղքելու եւ քաղաքը երկրի հետ կապ ունենալու գործում:

Ընդհանուր հարձակման բաղկացուցիչ մաս դարձան կենտրոնական ուղղությամբ սկսված հարձակողական գործողությունները, որի շնորհիվ 1943 թ. փետրվար-մարտին վերջնականապես վերացվեց Մոսկվային սպառնացող վտանգը:

1942-1943 թթ. ձմեռային հարձակման շնորհիվ Խորհրդային զորքերը զգալի հաջողությունների հասան:

Ճակատամարտ Կուրսկի աղեղում: 1943-ի ձմեռային հարձակումներից հետո որոշ դադար եղավ: Հիտլերական հրամանատարությունը ցանկանում էր ռեւանշ վերցնել Ստալինգրադի համար: Այդ նպատակով թշնամին անցկացրեց տոտալ (ընդհանուր) զորահավաք: Բանակը թարմացրեց «Վագր» եւ «Հովագ» ծանր տեսակի տանկերով, «Ֆերդինանտ» ինքնագնաց հրանոթներով. նոր ինքնաթիռներով եւ այլ մարտական տեխնիկայով: Ճակատամարտի յուրաքանչյուր մեկ կիլոմետրի վրա թշնամու տանկերի թիվը հասնում էր 100-ի:

«Միջնաբերդ» պայմանական անվանուը ստացած, լայնամասշտաբ հարձակում ձեռնարկեց հակառակորդը Կուրսկի ուղղությամբ՝ նպատակ ունենալով շրջապատել այդ ուղղությամբ առաջ անցած Խորհրդային զորամասերին եւ տանկային ու այլ ուժերով ոչնչացնել մեր զորքերին: Խորհրդային հրամանատարությունը հետախուզելով իրադրությունը, նախօրոք այստեղ էր կենտրոնացրել թշնամու ուժերին գերակշիռ ուժեր, որոնք կարող էին ոչ միայն դիմակայել թշնամուն, այլեւ անցնել վճռական հակահարձակման:

Հարձակումն սկսվեց 1943 թ. հուլիսի 5-ին: Խորհրդային հրամանատարությունը, որին արդեն հայտնի էր այդ ժամկետը, հրետանային հզոր նախապատրաստություն տեսավ, որի շնորհիվ թշնամին կորուստներ ունեցավ, արդեն ելակետային դիրքերում: Ճակատամարտն անմիջապես վիթխարի թափ ընդունեց: Հերոսությունը

զանգվածային էր: Միայն 3-րդ կործանիչ բրիգադը մարտերի չորս օրվա ընթացքում հետ մղեց 20 հարձակում եւ ոչնչացրեց հակառակորդի 146 տանկ, մեծ թվով հետեւազոր, ինքնաթիռներ: Օդային մարտերին մասնակցեց նաեւ ֆրանսիական «Նորմանդիա» ավիոգունդը:

Հուլիսի 12-ին թշնամին կանգնեցվեց բոլոր ռազմաճակատներում: Մեր բանակը հակահարձակման անցավ: Այդ օրը Պրոխորովկայի շրջանում տեղի ունեցավ ամենախոշոր տանկային ճակատամարտը, որտեղ երկու կողմերից մասնակցում էին մոտ 1200 տանկ:

Խորհրդային բանակի հակահարձակումը հաջողությամբ էր զարգանում՝ ոչնչացնելով թշնամու պաշտպանական բնագծերը: 1943-ի օգոստոսի 5-ին խորհրդային զորքերն ազատագրեցին Օրյոլն ու Բելգորոդը:

Մեր զորքերի հարձակումը հաջողությամբ էր զարգանում Խարկովի ուղղությամբ: Ֆաշիստական հրամանատարությունը Խարկովը պահելու հուսահատ փորձեր էր անում, այնտեղ նետելով մի շարք տանկային կորպուսներ:

Վորոնեժի ռազմաճակատի զորքերը թշնամու հակահարվածները կասեցրին:

1943 թ. օգոստոսի 23-ին Խարկովը, որ պատերազմի տարիներին 4 անգամ ձեռքից ձեռք էր անցել, ազատագրվեց վերջնականապես եւ դրանով ավարտվեց Կուրսկի ճակատամարտի ուղղությամբ Խորհրդային բանակի սկսած հակահարձակումը:

Կուրսկի մոտ 50 օր տեւած մարտերի ժամանակ ֆաշիստական զորքերը կորցրին կես միլիոնից ավելի զինվոր ու սպա, հսկայական թվով տանկային եւ ռազմաօդային ուժեր:

Կուրսկի մոտ տարած հաղթանակն ամրապնդեց Մեծ հայրենականի եւ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արմատական բեկումը: Թշնամին չկարողացավ այնքան լրջորեն նախապատրաստված հակահարձակումը հաջող ավարտել: Մեծագույն կորուստներ կրելով, նա հետ նահանջեց: Իսկ Խորհրդային բանակը իր հաջողություններով ապացուցեց, որ, նույնիսկ, միայնակ, իր ուժերով կարող է այս պատերազմն ավարտել հաղթանակով:

Դնեպրի մարտանցումը: Կուրսկի մոտ տարած հաղթանակը բարենպաստ պայմաններ եւ իրական հնարավորություն ստեղծեց Ուկրաինայում սկսելու եւ թշնամուն խորհրդային հողից լիովին դուրս շարտելու համար: 1943-ի օգոստոսի վերջին խորհրդային զորքերը սլացան դեպի Դնեպր: Հիտլերականները փորձեցին կասեցնել կար-

միր բանակի հարձակումը: Սակայն, նրանց հաշիվները սխալ դուրս եկան:

Սեպտեմբերի 20-ից հետո, ազատագրելով Ձախափնյա Ուկրաինան եւ Դոնբասը, խորհրդային զորքերը դուրս եկան եւ ընթացքից միասնական հարձակողական պոռթկումով մի քանի հատվածամասերում միաժամանակ սկսեցին գետանցումը, հաղթահարեցին մի այնպիսի ջրային արգելք, ինչպիսին Դնեպրն էր: Դա նշանավոր սխրագործություն էր:

Չարգացնելով հարձակումը, կարմիր բանակն ազատագրեց երկրի հարավի արդյունաբերական խոշոր քաղաքներ Դնեպրոպետրովսկն ու Դնեպրոդերժինսկը: Ելքը դեպի Դնեպրի ստորին հոսանքը, մեր զորքերին թույլ տվեց հակառակորդին շրջափակել Դրիմում:

Դնեպրի հաջող մարտանցման համար մոտ 2500 զինվոր եւ սպա արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման:

Չոկտեմբեր ամսվա ընթացքում խորհրդային զորքերը դաժան մարտեր էին մղում Դնեպրի արեւմտյան ափի հենակետերը պահելու եւ ընդարձակելու համար: Հատկապես համառ մարտեր ծավալվեցին Կիեւի մատույցներում: 1943 թ. նոյեմբերի 6-ի գիշերը 1-ին Ուկրաինական զորքերը մտան Կիեւ:

Կիեւի ազատագրմանը մասնակցեց նաեւ 1-ին Չեխոսլովակական առանձին բրիգադը:

1943 թ. ամառային եւ աշնանային պատերազմաշրջանում տարած հաղթանակները օրինաչափ էին: Դրանք պայմաններ ստեղծեցին 1944թ. նոր ծավալուն հակահարձակման գործողությունների համար:

Համաժողովրդական պայքարի բոցը: Պատերազմում արմատական բեկում մտցնելու գործում կարմիր բանակին մեծ օգնություն ցույց տվեցին խորհրդային պարտիզանները: Պարտիզանական շարժման վերելքն ապահովելու համար, դեռեւս 1942 թ. մայիսին Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանին կից ստեղծվել էր Պարտիզանական շարժման ղեկավարման կենտրոնական շտաբ: Դրանից հետո ստեղծվել էին նաեւ պարտիզանական ջոկատների հանրապետական եւ մարզային շտաբներ, որոնք կապ ունենալով համապատասխան կենտրոնների հետ կազմակերպում էին նրանց ապահովումը սպառազինությամբ, զինամթերքով, պայթուցիկ նյութերով, պարենով, դեղորայքով եւ այլ անհրաժեշտ պարագաներով:

Պարտիզանական ջոկատների փոխգործողությունների կոորդինացումն ու կարմիր բանակի օպերացիաների հետ նրանց սերտ կա-

պը թշնամու թիկունքում, համաժողովրդական պայքարի բնորոշ առանձնահատկությունն էր: Ժամանակավորապես օկուպացված տերիտորիաներում ընդլայնվեց ընդհատակյա կուսակցական կազմակերպությունների գործունեությունը: Անձնուրաց էր գործում կոմերիտական ընդհատակը: Նրանց գործունեությունը միավորում էր ՀամԼԿԵՄ կենտկոմի հատուկ բաժինը:

1943 թ. վերջին պարտիզանական ջոկատներում կար 250 հազարից ավելի մարդ: Պարտիզանների գործունեության մասին պատկերացում կազմելու համար բազմաթիվ փաստերից նշենք միայն մեկի՝ Կրասնոդարի «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա մարտական խմբերի մասին: Նրանք ոչնչացնում էին ֆաշիստական զինվորներին եւ սպաներին, ազատում ռազմագերիներին, քայքայիչ գործողություններ կատարում ձեռնարկություններում: Պարտիզանների առանձին ջոկատներ եւ խմբեր միավորվում եւ կազմավորում էին մարզկոմներ, երկրկոմներ եւ ավելի արդյունավետ դարձնում իրենց պայքարը: 1943-ի ամռանը թշնամու թիկունքում, արդեն 200 հազար քառ. կմ-ից ավելի խորհրդային տարածքներ գտնվում էին նրանց լիակատար վերահսկողության տակ:

Պարտիզանները մեծ օգնություն էին ցույց տալիս նաեւ կարմիր բանակի զորամասերին՝ ճակատամարտի նախապատրաստության եւ ընթացքի ժամանակ, հետախուզում, հարձակումներ գործում թիկունքում՝ խափանելով նրանց գործողությունները, խորտակում էշելոններ, կամուրջներ եւ կայարանային կառույցներ:

Պարտիզանական պատերազմը բավականին թուլացրեց ֆաշիստական մեքենան:

Հայրենական մեծ պատերազմի փորձը ցույց տվեց պարտիզանական միավորումների եւ բանակի փոխհամաձայնեցված գործողությունների հսկայական նշանակությունը:

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԹԻԿՈՒՆՔԻ ԱՎԱՆԴԸ՝ ԹՇՆԱՍՈՒՆ ՋԱԽՋԱԽԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Ռազմաճակատի եւ թիկունքի միասնությունը: 1943 թ. մոտերքին ռազմական արտադրության ծավալն զգալիորեն ավելացավ, իսկ հրանոթների եւ տանկերի թողարկմամբ խորհրդային ինդուստրիան գերազանցեց հիտլերյան Գերմանիայի արդյունաբերությանը: Դա հնարավոր դարձավ բանվոր դասակարգի, գիտական եւ ինժեռ-տեխնիկական մտավորականության հերոսական աշխատանքի շնորհիվ:

ԽՍՀՄ-ի արտադրությանը բնորոշ առանձնահատկությունը թողարկվող արտադրանքի գերազանց որակն էր: Մարտական տեխնիկական որակով գերազանցում էին S-34 եւ ԿՎ տիպի տանկերն ու ինքնագնաց հրանոթները: Նշանավոր «Կատյուշաների» արտադրության աճը թույլ տվեց 1943 թ. կազմավորել գվարդիական ականանետների ամբողջ միավորումներ, ավելացվեցին ռազմական ինքնաթիռների արագությունը, թռիչքի հեռավորությունը եւ կրակային հզորությունը: Գնալով ավելի մեծ թվով զենքերի եւ ականանետների, ավտոմատների եւ կարաբինների նոր տեսակներ էր ստանում բանակը:

Արդյունաբերության զարգացումն արմատական փոփոխություն մտցրեց երկրի արեւելյան մասի ժողտնտեսության կառուցվածքում: Ձեռնարկություններն սկսեցին աշխատել համաչափ, կրճատվեցին պարապուրդները, ավելացան հումքի եւ նյութերի մատակարարումը, աճեց բանվորների եւ ծառայողների թիվը: Այն առավելապես աճեց Ուզբեկական, Ղազախական եւ Կիրգիզական ԽՍՀ-ներում:

Դժվար կացություն էր ստեղծվել գյուղատնտեսության բնագավառում: Ցանքատարածություններն ու խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվել էր մեկ երրորդով, իսկ գյուղատնտեսական համախառն արտադրանքը 1943 թ. զգալիորեն ցածր էր, նույնիսկ մինչպատերազմյան մակարդակի կեսից:

Կուսակցությունը եւ կառավարությունն ամեն ինչ արեցին գյուղատնտեսության մեջ առաջացած դժվարությունները հաղթահարելու համար: Որոշվեց ընդլայնել Պովոլժիեի, Ուրալի, Սիբիրի, Ղազախստանի եւ Միջին Ասիայի ցանքատարածությունները, ավարտին հասցնել Ալթայում կառուցվող տրակտորի գործարանի շինարարությունը եւ Կրասնոդարսկի «Կոմունար» կոմբայնի շինարարական աշխատանքները:

Ժողովրդական տնտեսության մեջ զբաղված կանանց բաժինը

մինչպատերազմյան մակարդակի համեմատությամբ աճեց գրեթե երկու անգամ: Արդյունաբերական եւ գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատում էին նաեւ բազմաթիվ դեռահաս պատանիներ ու աղջիկներ:

Կուսակցության կենտկոմը եւ կառավարությունը որոշում կայացրին վերականգնողական աշխատանքներ կատարել օկուպացիայից ազատագրված տարածքներում:

Մեծ նվիրումով եւ անձնուրաց էին աշխատում մեր երկրի գիտության, գրականության եւ արվեստի գործիչները: Գիտնականները աշխատում էին սպառազինության նոր, ավելի կատարելագործված նմուշների ստեղծման վրա, մշակում ռազմամթերքի եւ վառելանյութի նոր տեսակներ:

Ավիակոնստրուկտորները գործարանների աշխատողների հետ միասին կարողացան ռազմաճակատին մատակարարել հրաշալի մեքենաներ՝ կործանիչներ, գրոհայիններ, ռմբակոծիչներ: Աշխատանքներ էին տարվում հրթիռային ավիացիայի բնագավառում:

Խորհրդային ֆիզիկոսները մեծ աշխատանք էին կատարում նավերի եւ սուզանավերի ապամագնիսացման ուղղությամբ, մշակում հակաականային պաշտպանության հրահանգներ: Չէին ընդհատվում նաեւ տեսական հետազոտությունները: Հետազոտություններ ծավալվեցին նաեւ ուրանի տրոհման բնագավառում:

Գիտահետազոտական աշխատանքների զարգացման եւ գիտական կադրերի պատրաստման գործում մեծ ներդրում ունեցան ազգային շրջաններում նոր ստեղծված ազգային գիտության ակադեմիաները, այդ թվում նաեւ Հայկական եւ Ուզբեկական ԽՍՀ-ներում կուսակցության կենտկոմի եւ կառավարության 1943-1944 թթ. որոշումով նոր ստեղծված ակադեմիաները:

Դաժան փորձությունների տարիներին լուրջ ուշադրություն ցույց տրվեց նաեւ կրթության, առողջապահության, գրականության եւ արվեստի բնագավառներին:

Խորհրդային կինեմատոգրաֆիստները շարունակում էին ստեղծել փաստագրական կինոնկարներ՝ մարտերում խորհրդային բանակի եւ ժողովրդի հերոսական պայքարի մասին:

1943 թ. ստեղծվեց Խորհրդային Միության հիմնը:

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ. 1944 թ. հունվար-1945 թ. մայիսի 9-ը:
Այդ ժամանակահատվածի գլխավոր արդյունքները.

1. ՀԻՏԵՐՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԼՐԻՎ ԶԱՆՁԱՆՈՒՄԸ

Ամենագլխավոր արդյունքն այն էր, որ գերմանաֆաշիստական զորքերը վտարվեցին ԽՍՀՄ տարածքներից, փլուզվեց ֆաշիստական պետությունների բլոկը, ազատագրվեցին Կենտրոնական եւ Հարավ-արեւելյան Եվրոպայի մի շարք երկրներ: Հիտլերյան Գերմանիան լիովին ջախջախվեց եւ ստորագրվեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը:

Ֆաշիստական Գերմանիայի դեմ հաղթանակի ամուր հիմքը խորհրդային ռազմական տնտեսությունն էր: Երկրի արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունը բավարարեցին ռազմաճակատի եւ թիկունքի պահանջմունքները: Չանգվածային դարձավ թշնամու ռազմական տեխնիկան գերազանցող խորհրդային նորագույն տեխնիկայի թողարկումը:

Պատերազմի ավարտական փուլում վառ կերպով դրսևորվեց խորհրդային ռազմական արվեստի առավելությունը: Մարտական գործողությունները հաջողությամբ էին իրականացնում ցամաքի վրա, ծովում եւ օդում, ցուցադրվեց պատերազմը վարելու ստրատեգիական ղեկավարության բարձր մակարդակը:

Ֆաշիստական բլոկի ջախջախման գործում Խորհրդային Միության ավանդը բարձրացրեց մեր երկրի միջազգային հեղինակությունը, նրա դերը համաշխարհային կարելորագույն հիմնահարցեր լուծելու գործում:

Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի իրադրության մեջ 1945 թ. հուլիսի 17-ից մինչեւ օգոստոսի 2-ը Բեռլինի մոտ գտնվող Պոտսդամ քաղաքում տեղի ունեցած ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի պետությունների ղեկավարների նոր հանդիպման ժամանակ քննարկված հարցերի մեջ կենտրոնական տեղ էին զբաղում Գերմանիայի ապառազմականացման, գենացիֆիկացիայի (նացիզմը լիկվիդացնելու) եւ դեմոկրատացման հարցերը:

Պոտսդամի կոնֆերանսը որոշեց լեհ-գերմանական նոր սահմանի հարցը, հաստատեց 1943 թվին Զյունիգսբերգի (Կալինինգրադ) եւ Նրան հարող շրջանների հանձնումը Խորհրդային Միությանը: Գերմանական ռազմածովային եւ առետրական ամբողջ նավատորմը հավասարապես բաժանվեց ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Անգլիայի միջեւ, իսկ ստորջրյա նավատորմի մեծ մասը խորասուզվեց եւ որոշվեց պատե-

րազմի գլխավոր հանցագործներին հանձնել միջազգային զինվորական տրիբունալի դատին:

Պոտսդամի կոնֆերանսն ունեցավ միջազգային մեծ նշանակություն: Ընդունվեցին պատերազմի ազատագրական բնույթի, խաղաղության եւ ժողովուրդների անվտանգության ամրապնդման վերաբերյալ որոշումներ:

Կոնֆերանսը ցայտուն կերպով հաստատեց, որ տարբեր սոցիալ-տնտեսական կարգեր ունեցող պետությունների համատեղ ջանքերով կարելի է լուծել միջազգային ամենաբարդ հիմնահարցերը:

Իսկ այժմ՝ որոշ տվյալներ պատերազմի երրորդ շրջանի իրադարձությունների մասին:

2. ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՉԱԿԹԻՉՆԵՐԻ ՎՏԱՐՈՒՄԸ ԽՅՄ-Ի ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ

Խորհրդային զորքերի դիրքերը ընդհանուր հարձակման նախօրյակին: 1943 թ. վերջին ֆաշիստների կողմից օկուպացված տարածքների կեսից ավելին ազատագրված էր: Բայց դեռևս նրա ձեռքում էին Աջափնյա Ուկրաինան, Բելոռուսիայի զգալի մասը, Ղրիմը, Մոլդովան եւ ամբողջ Մերձբալթիկան:

Խորհրդային Գլխավոր հրամանատարությունը նախապատրաստել էր խորհրդային տարածքները ֆաշիստական զավթիչներից վերջնականապես վտարելու պլան: Այդ նպատակով զգալիորեն աճել էր Խորհրդային բանակի հզորությունը: 1944-ի սկզբին այն ուներ 6,3 միլիոն զինվոր եւ սպա, մոտ 5,3 հազար տանկ եւ ինքնագնաց հրանոթ, 10 հազարից ավելի ինքնաթիռ եւ ավելի քան 83,5 հազար հրանոթ ու ականատետ: Ռազմակայանն իր տրամադրության տակ ուներ նաեւ զանազան ռեզերվներ:

Չնայած ֆաշիստների ծանր պարտությանը, այնուամենայնիվ, նրա բանակը դեռևս բազմաքանակ էր, լավ զինված եւ բավականաչափ մարտունակ: Գերմանական բանակը 1944-ի սկզբին ուներ մոտ 5 միլիոն զինվոր եւ սպա, 54 հազարից ավելի հրանոթ եւ ականատետ, 5,5 հազար տանկ եւ ինքնագնաց հրանոթ, 3 հազարից ավելի ինքնաթիռ:

Խորհրդա-գերմանական ռազմաճակատը, դեռևս մնում էր երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր ռազմաճակատը, որն իր վրա էր գամել թշնամու զորքերի երկու երրորդը:

1943 թ. դեկտեմբերին խորհրդային ռազմակայանը բազմակողմանիորեն վերլուծելով երկրի ռազմաքաղաքական դրությունը, որոշեց լայն հարձակում ձեռնարկել ամբողջ ռազմաճակատով՝ Բալթիկ ծովից մինչեւ Սեւ ծով, կամպանիայի հիմքում դնելով տարբեր ուղղություններով հետեւողական հարձակման գաղափարը:

Ֆաշիստական հրամանատարությունը ձգտում էր ամբողջ ռազմաճակատում ստեղծել խոր շարանցված (էշելոնացված) ռազմավարական պաշտպանություն եւ պատերազմը մղել դիրքային պայքարի հունը:

Խորհրդային զորքերի հաղթանակը Լենինգրադի մոտ: 1943 թ. հունվարին Լենինգրադի շրջափակման ճեղքումը զգալիորեն բարելավեց նրա պաշտպանների եւ բնակչության դրությունը, սակայն դեռևս չվերացրեց սպառնալիքը քաղաքի նկատմամբ: Հիտլերականները Լենինգրադի մոտ ստեղծել էին հզոր պաշտպանական

բնագծեր: Դրանով նրանք փորձում էին ուժեղացնել օկուպացված Մերձբալթիկայի պաշտպանությունը եւ փակել Արեւմտյան Պրուսիա տանող ճանապարհը:

Հարձակումը Լենինգրադյան ռազմաճակատում սկսվեց 1944 թ. հունվարի 14-ին ավիացիայի եւ Բալթյան նավատորմի նավերի աջակցությամբ՝ հրետանային հզոր նախապատրաստությունից հետո: Մեր բանակի երկու հարվածային խմբավորումներ շարժվում էին իրար ընդառաջ: Միաժամանակ հարձակման անցան նաեւ Վոլխովյան ռազմաճակատի զորքերը, նրանց օգնում էին պարտիզանները:

Մեկ շաբաթվա ընթացքում փշրվեց թշնամու կատաղի դիմադրությունը: Շրջապատումից վախենալով՝ հիտլերականները սկսեցին հախուռն նահանջել: Կարճ ժամանակում խորհրդային զորքերն ազատագրեցին Գատչինան, Պուշկինը, Պետրոդվորեցը, Կրասնոյե Սելոն, Նովգորոդը, Լուգանսկը եւ այլ քաղաքներ, առաջ գնալով 220-280 կմ:

1944 թ. հունվարի 27-ին ավարտվեց 900 օր ու գիշեր տևած Լենինգրադի հերոսական պաշտպանությունը:

Աջափնյա Ուկրաինայի եւ Ղրիմի ազատագրումը: Այն օրերին, երբ մեր ժողովուրդը տոնում էր Լենինգրադի մոտ տարած հաղթանակը, խորհրդա-գերմանական ռազմաճակատի մյուս թեւում լայնորեն մարտեր էին ծավալվում Աջափնյա Ուկրաինայի ազատագրության համար: Դեպի հարավ հարձակումն սկսվել էր դեռեւս 1943 թ. դեկտեմբերի վերջին, Դնեպրի գետանցման շնորհիվ ստեղծված հեռակայաններից: Այն ծավալվեց հսկայական տարածության վրա՝ Պոլեսիայից մինչեւ Սեւ ծով, եւ իրականացվեց Ուկրաինական չորս ռազմաճակատների ուժերով:

Հիտլերականները հսկայական նշանակություն էին տալիս Աջափնյա Ուկրաինայի պահպանմանը՝ հույս փայփայելով վերականգնել պաշտպանությունը Դնեպրի երկայնքով, որպեսզի խոչընդոտի մեր զորքերի հետագա առաջխաղացումը: Դրա համար էլ լուրջ դիմադրություն ցույց տվեց, կառչելով Կիեւից հարավ 80 կմ հեռավորության վրա գտնվող Դնեպրի Կորսուն-Շելչենկոյի ելուստից՝ Աջափնյա Ուկրաինան ետ գրավելու համար: Սակայն դա արդեն անիրագործելի պլան էր: Ուկրաինական 2-րդ ռազմաճակատի զորքերը 1944-ի հունվարի 28-ին սեղմեցին օղակը (շրջապատման մեջ էին ընկել թշնամու տասը դիվիզիաները՝ մոտ 80 հազար զինվոր եւ սպա): Երբ հակառակորդը մերժեց անձնատուր լինելու վերջնագիրը, խորհրդային զորքերը փետրվարի 17-ին ավարտեցին այդ խմբա-

վորման ջախջախումը:

Աջափնյա Ուկրաինայի ազատագրումն ավարտվեց 1944 թ. մարտ-ապրիլին:

Ապրիլի սկզբներին բանակի եւ նավատորմի մարտիկների սրընթաց հարձակումով ազատագրվեց Օդեսան:

Մեր զորքերի հարձակումը ծավալվում էր գարնանային անձրեւային դժվարին եւ ճանապարհային անանցանելիության պայմաններում, այնուամենայնիվ նրանք առաջ էին գնում՝ ազատագրելով խորհրդային նորանոր տարածքներ:

1944 թ. մարտի 26-ը դարձավ պատմական օր՝ խորհրդային զորքերը այդ օրը դուրս եկան ԽՍՀՄ պետական սահման:

Ուշագրավ է, որ ազատագրված սահմանին պաշտպան կանգնեց 1941 թ. հունիսի 22-ին առաջին մարտն այստեղ ընդունած սահմանապահների գունդը:

Ազատագրելով Աջափնյա Ուկրաինան՝ Կարմիր բանակը ձեռնամուխ եղավ թշնամական խմբավորումների ոչնչացմանը Ղրիմում: Հակառակորդի՝ անառիկ թվացող պաշտպանությանը խորհրդային զորքերը ջախջախիչ հարված հասցրին ապրիլի 8-ին, ազատագրեցին Կերչը եւ Սիմֆերոպոլը: Ինչպես որ ամեն տեղ, այստեղ եւս ակտիվ էին գործում պարտիզանները: Ղրիմի պարտիզանները կործանումից փրկեցին Յալթան, Ղրիմի հարավային ափի պալատները, Նիկիտյան բուսաբանական այգին: Հնգօրյա գրոհից հետո, մայիսի 9-ին ազատագրվեց Սեւաստոպոլը:

Ղրիմի լիակատար ազատագրումն ավարտվեց մայիսի 12-ին:

1944 թ. ամառային հարձակումը: Տարեվերջին հաջողությամբ վարելով հարձակողական գործողությունները՝ ռազմակայանն ակտիվորեն մշակում էր ամառային հարձակողական պլանները: Պլանավորվեց հետեւողականորեն մի քանի հզոր հարվածներ իրականացնել ռազմաճակատի տարբեր հատվածներում: Դրանցից գլխավորը Բելոռուսիայի ուղղությամբ հարձակումն էր, որի նպատակն էր ջախջախել թշնամու գլխավոր ուժերը եւ մեր հայրենիքը լիովին ազատագրել ֆաշիստներից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այստեղով էր Գերմանիա տանող ամենակարճ ճանապարհը:

Բելոռուսիայի հարձակման ռազմավարական պլանը, որը կրում էր «Բագրատիոն» պայմանական անվանումը, կազմվեց բանակի գլխավոր շտաբում, քննարկվեց եւ հաստատվեց մայիսի վերջերին՝ ռազմակայանի կողմից:

Հիտլերյան ղեկավարությունն ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր այս ուղղության վրա՝ ամառային հարձակողական պա-

տերազմ վարելու համար: Այդ նպատակով այս ուղղությամբ ևս 250-270 կմ երկարությամբ գրավել էր խոր շարանցված պաշտպանություն:

Խորհրդային ռազմականի պլանը գործողության մեջ դրվեց 1944թ. հունիսի 23-ին: Այդ պլանի իրականացմանը նպաստեց մեր զորքերի ձեռնադուրս դիրքը եւ պարտիզանական խոշոր ջոկատների ու միավորումների առկայությունը թշնամու թիկունքում: Այստեղ ստեղծվել էր ուժերի եւ տեխնիկայի՝ պատմությանը ոչ հայտնի կենտրոնացում:

Հարձակումը ձեռնարկվեց անտառային եւ ճահճային բարդ պայմաններում: Առաջին վեց օրվա ընթացքում Վիտեբսկու եւ Բոբրույսկու մոտ շրջապատեցին եւ շախչախեցին հակառակորդի խոշոր խմբավորումներին:

Մինչեւ հուլիսի 3-ը Մինսկից արեւելք փակվեց շրջապատման եւս մի օղակ, որի մեջ մնացին հակառակորդի 100 հազար զինվոր եւ սպա: Նույն օրն էլ ազատագրվեց մայրաքաղաք Մինսկը: Այս օպերացիայի երկրորդ փուլի ընթացքում հարձակվող ռազմաճակատի զորքերը 1100 կմ երկարությամբ գոտում առաջ շարժվեցին դեպի արեւմուտք՝ մինչեւ 600 կմ: Դա նախադրյալներ ստեղծեց Արեւելյան Պրուսիայում, Լվով-Սանդոմիրի ուղղությամբ հետագա հարձակման եւ Վարշավա-Բեռլին ուղղությամբ հարված հասցնելու համար:

Խորհրդային զորքերի հարձակումը հաջողությամբ ծավալվեց եւ Բալթիկայից մինչեւ Կարպատներ ձգվող գիծը վերածվեց ընդհանուր հարձակման գոտու:

Հաղթահարելով թշնամու դիմադրությունը՝ մեր զորքերը հուլիսի երկրորդ կեսին դուրս եկան Վիսլայի գիծը, իսկ 1944 թ. օգոստոսի 17-ին մտան Արեւելյան Պրուսիան:

Բելոռուսիայում հարձակման թեժ պահին Կարմիր բանակն իրականացրեց եւս հարձակողական մի գործողություն, որի ընթացքում ավարտվեց Ուկրաինայի ազատագրումը: Հուլիսի վերջերին ազատագրվեց Լվովը եւ այլ բնակավայրեր, իսկ հոկտեմբերի վերջերին՝ ամբողջ Անդրկարպատյան Ուկրաինան:

Յասկո-Քիշնեյան օպերացիան սկսվեց օգոստոսի 20-ին: Օգոստոսի 24-ին ազատագրվեց Մոլդավիայի մայրաքաղաք Քիշինեւը: Այնուհետեւ սեղմեցին ֆաշիստական բանակների «Հարավային Ուկրաինա» խմբի շրջապատման օղակը եւ օգոստոսի վերջին ամբողջովին ազատագրվեց Խորհրդային Մոլդավիան:

Խորհրդային Մերձբալթիկայի ազատագրումը: Մերձբալթյան հանրապետությունները թշնամու կողմից օկուպացված վերջին տա-

րածքներն էին: Հիտլերյան ղեկավարությունը ամեն ինչ արել է անուժ էր այն պահելու համար, քանի-որ այնտեղով անմիջական կապ ուներ Գերմանիայի հետ՝ ռազմաճակատին պարեն, հումք, ռազմական տեխնիկա եւ ռազմամթերք մատակարարելու համար եւ հատկապես հևարավորություն էր ընձեռում ռազմածովային նավատորմի օգտագործման համար: Մերձբալթիկայի ազատագրման համար մարտական գործողություններն սկսվել էին դեռևս Բելոռուսական օպերացիայի ընթացքում:

Չնայած թշնամու կատաղի դիմադրությանը, հուլիսի սկզբներին խորհրդային զորքերը գրոհով մտան Լիտվա, ազատագրեցին մայրաքաղաք Վիլնյուսը, ապա շարունակելով գրոհը, մտան Լատվիա եւ Էստոնիա: Այստեղ համառ դիմադրություն էր ցույց տալիս հակառակորդը: Մի ամբողջ ամիս համառ մարտեր տեղի ունեցան Ռիգայի եւ Տալլինի ուղղությամբ: Ռուսների, ուկրաինացիների եւ բելոռուսների հետ միասին ուս-ուսի տված այստեղ մարտնչում էին նաև եւ մերձբալթյան հանրապետությունների ազգային կազմավորումները:

Խորհրդա-գերմանական ճակատի հյուսիսային թեւում մարտական գործողություններն ավարտվեցին 1944 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ Անդրբեւեռի վրա Կարելական ռազմաճակատի զորքերի հարձակումով՝ Մուրմանսկ քաղաքը եւ գրեթե ամբողջ այդ տարածքների ազատագրումով:

1944 թ. հարձակողական գործողությունները Հայրենական պատերազմի նշանակալից իրադարձություններն էին: Այդ գործողությունների ընթացքում Կարմիր բանակը մեր երկիրը ամբողջությամբ ազատագրեց գերմանաֆաշիստական օկուպացիայից:

3. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՉԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային ժողովրդի միջազգային պարտքը: Ամբողջ աշխարհը հուզմունքով էր հետեւում երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր՝ խորհրդա-գերմանական ճակատի իրադարձություններին: Ֆաշիզմի կողմից ստրկացված Եվրոպայի ժողովուրդները հենց կարմիր բանակի եւ խորհրդային ժողովրդի մեջ տեսան այն ուժը, որն ընդունակ էր խորտակելու հիտլերյան ռազմական մեքենան եւ իրենց ազատագրելու գերմանական օկուպանտներից:

Խորհրդա-գերմանական ռազմաճակատում ջախջախվեց 607 թշնամական դիվիզիա, որը գրեթե երեք ու կես անգամ ավելի էր, քան համաշխարհային պատերազմի մյուս բոլոր ճակատամարտերում՝ միասին վերցրած: Կարմիր բանակի հաղթանակները ռեալ պայմաններ ստեղծեցին հիտլերականների կողմից օկուպացված Եվրոպայի երկրների եւ նրանց ժողովուրդների ազատագրման գործում: Այդ երկրների՝ Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Յարավսլավիայի, Ֆրանսիայի եւ այլ երկրների քաղաքացիներից ստեղծվեցին եւ զինվեցին ազգային զորախմբեր՝ 550 հազար մարդու ընդգրկումով, որոնք զգալի ներդրում ունեցան համընդհանուր թշնամուն մինչեւ վերջ ջախջախելու գործում: Այդ երկրներում ծագեց եւ հզորացավ դիմադրության շարժումը, որին հսկայական օգնություն էին ցուցաբերում խորհրդային հանրապետությունները եւ այդ երկրներում վերաբազավորված խորհրդային պարտիզանները:

Յարավսլավիայի եւ կենտրոնական Եվրոպայի երկրների ազատագրումը:

1944 թ. օգոստոսի 23-ին ռումին ժողովուրդը երկրի կուսակցության ղեկավարությամբ, խորհրդային բանակի օգնությամբ զինված ապստամբության միջոցով տապալեց ֆաշիստական դիկտատուրան եւ երկրում ստեղծեց ժողովրդավարական պետություն, կապերը խզեց Գերմանիայի հետ եւ պատերազմ հայտարարեց նրան:

Բուլղարիան դեռեւս օգնում էր Գերմանիային: 1944 թ. սեպտեմբերի 8-ին խորհրդային Միությունը պատերազմ հայտարարեց Բուլղարիային եւ օգնեց երկրում գործող Բանվորական կուսակցությանը՝ տապալել գործող վարչակարգը եւ սեպտեմբերի 16-ին ստեղծել դեմոկրատական իշխանություն:

Սեպտեմբերին կարմիր բանակը հասավ Յարավսլավիայի արեւելյան սահմանները: Մոսկվայում կայացած բանակցությունների արդյունքով Յարավսլավական կողմի համաձայնությամբ խորհրդային զորքերը հոկտեմբերի 23-ին մտան Յարավսլավիա, ազա-

տագրեցին մայրաքաղաք Բելգրադը եւ այստեղ էլ ստեղծեցին դեմոկրատական կարգեր:

Խորհրդային զորքերի հաջողություններով ոգևորված վերելք ունեցավ ազգային ազատագրական շարժումը Չեխոսլովակիայում: Խորհրդային զորքերի օգնությամբ չեխոսլովակյան, ինչպես ապստամբական, այնպես էլ նոր ստեղծված զինուժերը հոկտեմբերին ազատագրեցին Չեխոսլովակիան եւ երկրում ստեղծեցին պետական նոր կարգեր:

1944 թ. սեպտեմբերի վերջերին ֆաշիստական Գերմանիայի միակ դաշնակիցը Եվրոպայում մնում էր Յունգարիան, որը փակում էր դեպի Ավստրիա եւ Գերմանիայի հարավը տանող ճանապարհը: Յունգարիան Գերմանիային մատակարարում էր նավթ եւ պարենամթերք: Գերմանիան ամեն ինչ անում էր Յունգարիան պահելու համար:

Մտնելով Յունգարիա, խորհրդային զորքերը հանդիպեցին կատաղի դիմադրության: Յունգարիայի ազատագրվեցին Յունգարիայի որոշ տարածքներ: Մայրաքաղաք Բուդապեշտը գրավելու համար մեր ուժերը բավարար չէին: Ահեղ մարտերից հետո միայն, մեր զորքերին հաջողվեց շրջապատել Բուդապեշտը եւ անձնատուր լինելու վերջնագիր ուղարկել նրան: Վերջնագիրը ոչ միայն չընդունվեց, այլև գնդակահարվեցին մեր բանազնացները: Յունգարիայի ազգային ժամանակավոր կառավարությունը խզեց կապերը Գերմանիայի հետ՝ պատերազմ հայտարարելով նրան: Դրանից հետո միայն համատեղ ուժերով 1945-ի փետրվարին ազատագրվեց Բուդապեշտը, իսկ արդեն ապրիլի սկզբներին՝ ամբողջ Յունգարիան:

Մարտի կեսերին սկսվեց հարձակումը Վիեննայի վրա: Խորհրդային հրամանատարությունը քաղաքի բնակիչներին դիմեց կոչով՝ ընդգծելով, որ Կարմիր բանակը կռվում է հիտլերյան ֆաշիզմի դեմ եւ ոչ թե ավստրիական ժողովրդի դեմ: Ավստրիական ժողովուրդը ջերմորեն ողջունեց այդ կոչը եւ օգնեց իրենց ազատարարներին:

Լեհաստանի ազատագրության համար վճռական մարտեր ծավալվեցին Վիսլա-Օդերյան օպերացիայի ընթացքում (1945 թ. հունվարի 12-փետրվարի 3): Հարձակումը պլանավորված էր հունվարի 20-ին: Սակայն արեւմտյան ռազմաճակատում՝ Արդեններում ծանր վիճակ էր ստեղծվել դաշնակիցների (Ամերիկա, Անգլիա) համար: Ընդառաջելով նրանց խնդրանքին՝ մեր զորքերը հարձակման անցան ոչ թե հունվարի 20-ին, այլ փետրվարի 12-ին եւ դաշնակիցների զորքերը փրկվեցին ջախջախումից:

Խորհրդային զորքերը հունվարի 17-ին լեհական գորքի գորամա-

սերի հետ ազատագրեցին Լեհաստանի մայրաքաղաք Վարշավան: Մարտի վերջին նրանք դուրս եկան Բալթիկ ծովի ափը՝ Օդեր եւ Նայսե գետերի մոտ: Խորհրդային զորքերը կանգնած էին Բեռլինից 50-60 կմ-ի վրա:

Պրահայի ուղղությամբ մեր բանակը սրընթաց գրոհ ձեռնարկեց բնակչության խնդրանքով եւ օգնության ձեռք մեկնելով ապստամբ ուժերին՝ մայիսի 9-ի լուսաբացին մտան Պրահա: Նրա բնակչությունն ուրախությամբ ողջունեց իր ազատարարներին:

Այսպիսով՝ Կարմիր բանակը ազատություն եւ խաղաղություն բերեց Եվրոպայի ժողովուրդներին: Հանուն դրա, մեկ միլիոնից ավելի խորհրդային զինվորներ հանգչում են լեհական հողում, 140 հազարից ավելի՝ Ղուկարիայում, Նույնքան էլ՝ Չեխոսլովակիայում, 100 հազար՝ Գերմանիայում, 68 հազար՝ Ռումինիայում, 26 հազար՝ Ավստրիայում եւ 8 հազար՝ Հարավսլավիայում:

Ֆաշիստական Գերմանիայի ջախջախումը եւ նրա կապիտուլյացիան: Չնայած ջախջախիչ պարտությանն ու Ֆաշիստական բլոկի կործանմանը, հիտլերյան Գերմանիան դեռեւս շարունակում էր մնալ ուժեղ հակառակորդ: Բեռլինի ուղղության վրա գտնվող նրա բանակում կային մեկ միլիոնից ավելի զինվոր եւ սպա, 10 հազ. ավելի հրանոթ եւ ականանետ, 3,5 հազար ինքնաթիռ, 1,5 հազար տանկ եւ գրոհային հրանոթ: Բեռլինի կայազորն ուժեղացված էր հատուկ գործառնաւորով եւ ոստիկաններով: Բեռլինի շուրջը կային հզոր ամրացված գոտիներ, մեծ թվով կրակային բնագծեր եւ ականադաշտեր: Հիտլերականներն անցկացրին համընդհանուր (տոտալ) զորահավաք, մարտական գործողության մեջ դրեցին գենք բռնելու ընդունակ ողջ բնակչությանը, այդ թվում՝ 13-14 տարեկան դեռահասներին: Նահանջը պատժվում էր զնդակահարությամբ: Գերմանական զորքերն ու բնակչությունը ահաբեկված էին այն հանգամանքով եւ կեղծ տեղեկատվությամբ, թե՛ պարտվելու դեպքում, իբրեւ ռուսները անխնա կկոտորեն բոլոր գերմանացիներին:

Գերմանիայի ղեկավարությունը չէր հրաժարվում հաշտության պայմանագիր կնքել հակահիտլերյան կոալիցիայի դաշնակից պետությունների հետ: Նա հույս էր փայփայում, թե իրեն կհաջողվի, գոնե, գժտություն մտցնել նրանց միջեւ:

Լուրջ բնույթ ստացավ այն հարցը, թե դաշնակից պետություններից որը առաջինը պետք է մտնի Բեռլին: Նկատի առնելք այն հանգամանքը, որ գերմանական որոշ ուժեր արդեն գաղտնի բանակցություններ էին վարում ԱՄՆ-ի եւ Անգլիայի հետ: Խորհրդային զորքերը այդ պահին գտնվում էին Բեռլինից 60 կմ հեռավորության վրա,

իսկ Անգլո-ամերիկյան զորքերը՝ 100 կմ-ի վրա: Սակայն, խորհրդային զորքերը պետք է հաղթահարեին հակառակորդի մեծ ուժերի կատաղի դիմադրությունը, իսկ դաշնակից կոալիցիային՝ թույլ դիմադրությունը:

Բեռլինի ուղղությամբ մեր ռազմականսն առանձնացրեց Բելոռուսիայի 1-ին, 2-րդ եւ Ուկրաինայի 1-ին ռազմաճակատների զորքերը խորհրդային Նշանավոր զորապետներ Ժուկովի, Ռոկոսսովսկու եւ Կոնեւի գլխավորությամբ, որոնց օգնում էին Լեհական զորքի 2 բաժնակներ:

Հարձակումն սկսվեց 1945 թ. ապրիլի 16-ի առավոտյան ժամը 5-ին: Հրետանին եւ ռազմակոծիչները թշնամու վրա խորտակիչ հարվածներ էին տեղում: Երբ խորհրդային հետետազորն ու տանկերը հարձակման անցան, միաժամանակ բռնկվեցին 140 լուսարձակներ, կուրացնելով հակառակորդին:

Հակառակորդը դիմադրում էր դաժանորեն՝ պաշտպանելու համար յուրաքանչյուր բնագիծ, յուրաքանչյուր բնակավայր:

Ապրիլի 21-ին Կարմիր բանակի հարվածային զորամասերը ներխուժեցին Բեռլինի ծայրամասերը եւ մարտեր սկսեցին բուն քաղաքում: Ապրիլի 25-ին խորհրդային երեք զորաբանակները միացան Արեւմտյան Բեռլինում եւ շարժվելով դեպի Արեւմուտք, Նույն օրը Տորգաու քաղաքի մոտ՝ Էլբա գետի վրա տեղի ունեցավ Նշանավոր հանդիպումը ամերիկյան բանակի հետ: Բեռլինը շրջապատման մեջ էր: Բեռլինի կենտրոն մտնելու խորհրդային զորքերի ամեն մի փորձ հանդիպում էր հակառակորդի համառ եւ կատաղի դիմադրությանը: Դաժան մարտեր էին մղվում ամեն մի շենքի, շենքի հարկի եւ փողոցի համար:

Ապրիլի 29-ին խորհրդային զինվորները մոտեցան ռայխստագին: Նրա գրոհումը տեւեց երկու օր: Մայիսի լույս 1-ի գիշերը ռայխստագի վրա ծածանվեց հաղթանակի դրոշմը, որը գմբեթին ամրացրել էին հետախույզներ ռուս Եզորովը եւ վրացի Զանթարիան: Հաջորդ օրը Բեռլինի կայազորը անձնատուր եղավ:

1945 թ. մայիսի 8-ին Բեռլինի Կարլսհորստ արվարձանում ստորագրվեցին Ֆաշիստական Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը:

Ի Նշանավորումն այդ հաղթանակի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը հրամանագիր ընդունեց մայիսի 9-ը Հաղթանակի տոն հայտարարելու մասին:

1945 թ. հունիսի 24-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցավ զորահանդես: Այդ զորահանդեսում հանդիսավոր երթով

անցան ռազմաճակատների եւ նավատորմերի համահավաք գնդեր:

Իհարկե, դժվար էր ու ծանր հաղթանակի ճանապարհը: Բոլորին չէ, որ հաջողվեց ապրել մինչ այդ օրը: Շատերն ընկան մարտադաշտում, զոհվեցին ֆաշիստական տանջարաններում եւ համակենտրոնացման ճամբարներում, մահացան սովից: Բայց նրանց համար, ովքեր ապրեցին եւ հաղթեցին, այդ արեւալամ մայիսյան օրը՝ 9-ը, դարձավ ամենաբերկրալիցն ու երջանիկը կյանքում:

Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի օրը մարդկության հիշողության մեջ կմնա որպես պատմության ամենանշանավոր ամսաթիվը, որպես բանականության, մարդասիրության եւ արդարության հաղթանակ:

Եվրոպայի երախտապարտ ժողովուրդները արժանի հուշարձաններ եւ կոթողներ են կանգնեցրել աշխարհի դարչնագույն ժանտախտից՝ ֆաշիզմից, իրենց ազատարարների հիշատակին եւ հարգանքով ու սրբությամբ են հարգում նրանց:

Այդ օրը աշխարհի մարդիկ հիշում են բոլոր նրանց, ովքեր չհասան այդ օրվան, նրանց, ովքեր ռազմաճակատում, եւ թիկունքում իրենց աշխատանքով դարբնեցին այդ հաղթանակը:

Մեծ հայրենականի դաժան բոցերում մարտական փառավոր ուղի անցավ նաեւ հայ մարտիկը: Արյան, ավերի, ազատության ու հայրենիքի պաշտպանության այդ դառն օրերին հայ ժողովուրդը ոչ միայն ռազմադաշտ էր ուղարկում իր հազարավոր որդիներին (600 հազարից ավելի մարդ Չայաստանից եւ յուրաքանչյուր երրորդը Ղարաբաղից), այլեւ նամակներով նրանց կոչում էր սխրանքի ու հերոսության: Նրանք կռվում էին հայկական ազգային հինգ դիվիզիաներում եւ ինտերնացիոնալ տարբեր զինվորական ստորաբաժանումներում: Եռակի շքանշանակիր 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան, որի շարքերում թշնամու դեմ մարտնչում էին նաեւ Ղարաբաղի մեր հայրենակիցները, կովկասյան լեռներից թշնամու դեմ մարտնչելով հասավ մինչեւ Բեռլին:

Չայ գինվորը իրեն փառքով պսակեց այդ պատերազմում: Անձնվեր արիության եւ քաջարի սխրանքի համար երկու հոգի արժանացան Խորհրդային Միության մարշալի եւ երեք հոգի՝ տարբեր զորատեսակների գլխավոր մարշալի զինվորական կոչման: Ավելի քան 65 հոգի արժանացան տարբեր աստիճանի գեներալի կոչման, 1000-ից ավելի՝ սպայական այլ աստիճանների կոչումների, 106 հայորդիներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, 66302 հոգի

պարզեւատրվեց ԽՍՀՄ եւ արտասահմանյան երկրների շքանշաններով ու մեդալներով:

«Չայ մարտիկները աշխարհի առաջ բարձրացրին հայ ժողովրդի պատիվն ու անունը եւ մեր հնադարյան պատմագրությունը վսեմացրին նորանոր պանծալի դրվագներով»,- մեծանուն վարպետ՝ Ա. Խսահակյանի խոսքն է այդ կապակցությամբ:*

Ցավոք, նաեւ մեծ գոհեր եղան: Մեծ Չայրենականում խոշտանգվեցին, սպանվեցին ու գնդակահարվեցին տարբեր տարիքի, տարբեր սեռի, ազգային ու կրոնական տարբեր պատկանելիության խորհրդային շուրջ 27 միլիոն քաղաքացի, այդ թվում նաեւ Չայաստանի եւ Արցախի հարյուր հազարավոր հայ երախտավորներ:

Երկրորդ աշխարհամարտը, դեռեւս դրանով չավարտվեց:

ԱՄՆ-ն եւ Անգլիան պատերազմի մեջ էին ռազմամուլական ճապոնիայի դեմ: Խորհրդային Միությունը դաշնակցային պարտավորություններից ելնելով՝ այնտեղ տեղափոխեց խորհրդային զորամիավորումներ, որոնք վճռորոշ դեր ունեցան ճապոնական պետության պարտության գործում: Խորհրդային զորքերը ուժգին հարված հասցնելով անուն հանած ճապոնական ընտիր «Քվանտունյան» բանակին՝ ստիպեցին ճապոնիայի ղեկավարությանը 1945-ի սեպտեմբերին ստորագրել լրիվ կապիտուլիացիայի ակտը:

Այդ ակտով էլ ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը:

...Թվում էր, թե մեծ հաղթանակից հետո, եթե ոչ մշտապես, ապա, գոնե երկարատեւ խաղաղություն պետք է լիներ ամբողջ աշխարհում եւ մեզ համար եւս: Սակայն, մեզ բաժին հասած խաղաղությունը խաթարվեց հայատյաց դրկից «Ադրբեջան» ապօրինածնունդ պետության կողմից: Պատմական արդարության վերականգնման նպատակով Արցախի ժողովրդի արդարացի եւ օրինական պահանջին ազերիները պատասխանեցին տանկերով, ռազմական ինքնաթիռներով, հրանոթներով, արկերով ու հրթիռներով: Արցախի ամբողջ ժողովուրդը՝ փոքրից մեծ, բռունցք դարձած ոտքի ելավ իր ազատությունն ու լինելիությունը պաշտպանելու համար: Նրան օգ-

* «Մուսաները չլեցին», Ա.Գրիգորյան, «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1989, էջ 4:

նության եկավ ամբողջ հայ ժողովուրդը՝ Հայաստանում եւ Սփյուռքում: Ահեղ մարտեր եղան: Բազում զոհեր եւ կորուստներ նաեւ:

Կամավորական խմբերը, նրանց փոխարինած ջոկատներն էին նրանք, որ կենաց եւ մահու մարտեր մղելով թշնամու դեմ, հենց մարտերի ընթացքում համախմբվեցին եւ կազմավորեցին Արցախի Պաշտպանության բանակը եւ բանակը Հայոց: Եվ, որ՝ այդ բանակները լռեցնելով Ստեփանակերտ քաղաքի շուրջը տեղակայված թշնամական կրակակետերը, ազատագրեց մեր հինավուրց քաղաքամայր անառիկ Շուշին:

Շուշիի ազատագրումը ռազմական արվեստի եւ սխրանքի փայլուն օրինակ եղավ եւ շրջադարձային պահ՝ Արցախյան գոյամարտում:

Այնուհետեւ, Հայոց Սպարապետ Վազգեն Սարգսյանի կոչով կամավորագրված մահապարտների ուժերով եւ օգնությամբ հուժկու հարվածներ հասցնելով թշնամուն, ազատագրեց հինավուրց Արցախի եւս մի շարք տարածքներ, ինչն էլ վճռորոշ դեր կատարեց պատերազմի հետագա ընթացքի վրա՝ պարտադրելով հակառակորդին գինադար խնդրել:

Խորհրդային եւ արտասահմանյան բազմաթիվ բարձրակարգ ռազմական փորձագետներին նույնիսկ մեծ զարմանք են պատճառում, թե ինչպե՞ս կարող էր, որ հակառակորդն ունենալով նման նպաստավոր դիրք, մարդկային եւ զենքի ու սպառազինության հզոր ռեսուրսներ, կարող էր պարտվել:

Հաղթեց Արցախի նորաստեղծ բանակը՝ ամբողջ հայ ժողովրդի անմիջական զորակցությամբ: Եվ այսօր մեր ամբողջ ժողովրդի արժանապատվությունն ու հպարտությունը հանդիսացող այդ բանակը տարածաշրջանում ամենամարտունակն ու ամենահզորը ճանաչված բանակը աշխարհում մեր ժողովրդին հաղթողի պատվին արժանացրած բանակն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Խորհրդային միության Հայրենական Մեծ պատերազմի պատմություն» վեցհատորյակ ԽՍՀ Միության Պաշտպանության նախարարության ռազմական հրատարակչություն, Մոսկվա (1962-197թթ.)
2. «ԽՍՀՄ պատմություն», դասագիրք միջնակարգ դպրոցի տասներորդ դասարանի համար հայերեն լեզվով, Երեւան, «Լույս» հրատարակչություն, 1989թ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՍԵՐԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՍԱՐՏԸ

Արդար է ասված, որ հաջող ապագա կառուցելու համար, պետք է մեկ-մեկ ետ նայել՝ անցյալ դրական փորձն անհրաժեշտության պարագայում օգտագործելու եւ նաեւ անցյալի սխալներն ու բացթողումները հետագայում չկրկնելու համար:

Հիրավի, ամեն մի պատերազմ, այդ թվում՝ նաեւ 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակն ունի իր ուրույն դասերը, որոնք որոշակի դրական դեր ունեցան Արցախի գոյամարտում:

Ապագա սերունդներին մի բան թողնելու ձգտումից դրդված՝ փորձ արեցի անդրադարձ կատարել անցյալին եւ իմ կարելույն չափ ապագա սերունդներին թողնել ԽՍՀՄ Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի որոշ դաս-գործոնների մասին՝ զուգահեռներ անցկացնելով արցախյան գոյամարտի պարագային:

Ահա այդ գործոն-դասերից մի քանիսը.

Նախ, առանձնակի հպարտությամբ ու գոհունակությամբ արձանագրենք, որ արցախահայությունը, ճիշտ գնահատելով իրավիճակը, խելամտորեն օգտագործելով անցյալի դրական փորձն ու դասերը, կարողացավ ջախջախիչ հարված հասցնել ապօրինի ծնված «Ադրբեջան» անվամբ հորջորջված պետությանը ոչ հեռու անցյալում Ղարաբաղի դեմ սանձազերծած անարդար, արյունալի պատերազմում եւ ոչ միայն կործանումից փրկեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, այլ նաեւ ազատագրեց Ադրբեջանի տիրապետության տակ գտնված հայկական Արցախ աշխարհի հայաբնակ որոշ տարածքներ:

- Առանց վարանելու պնդում եմ, որ եւ Հայրենական Մեծ պատերազմում, եւ Արցախյան գոյամարտում տարած հաղթանակներում հայրենիքի նկատմամբ ժողովրդի ունեցած անսահման սիրո ու անմնացորդ նվիրումի գործոնն էր:

Մեծ հայրենականում թշնամու դեմ կռվում էին ԽՍՀՄ բազմազգ պետության բոլոր ազգերի միլիոնավոր կամավորներ, որոնց թվում հարյուր հազարավոր հայազգի նվիրյալներ՝ Հայաստանից եւ Արցախ-Ղարաբաղից, ովքեր ցուցաբերում էին զանգվածային հերոսություն:

Արցախի պատերազմում ամբողջ ժողովուրդն էր մարտնչում իր հողի վրա գոյատևելու համար: Այստեղ թիկունք չկար: Ասել է թե՛ ամբողջ Արցախն էր ռազմաճակատ:

Արցախի պարագայում հայրենասիրության եւ հարազատ հողին անմնացորդ նվիրումի վառ օրինակ հանդիսացավ Շուշիի շրջանի Քարին տակ գյուղի բնակիչների՝ այդ օրերին կայացրած համաժողովի պարտադիր մի որոշում, որտեղ կարդում ենք. «Նրանք, ովքեր մեր այս սուրբ պայքարի ընթացքում կթողնեն հարազատ գյուղը, կամ այլ վայրեր կտեղափոխեն իրենց փոքրահասակ երեխաներին, ընդհուպ՝ նորածինները, նրանք բոլորը կդիտվեն որպես հայրենիքի դավաճաններ՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով», ինչը վարակիչ օրինակ եղավ ողջ արցախահայության համար:

Այս առիթով իմ մի տեսակետն ու ցանկությունն եմ հայտնում. վաղուց, արդեն անհրաժեշտություն է ունենալ «Արցախի պաշտպան» պատվանշանի որեւէ տեսակ եւ Լեռնային Ղարաբաղի գոյամարտի ժամանակահատվածում եղած ամբողջ բնակչությանը, սկսած նորածիններից, արժանացնել այդ պատվոնշանին: Նրանք արժանի են դրան:

Հայրենասիրության վառ օրինակ եղավ նաեւ նախադեպը չունեցող մահապարտների ջոկատի կազմավորումը սպարապետ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ, անդամները, որի անձնագրահության գիտակցումով մարտի նետվեցին՝ Արցախ աշխարհի լինելիությունը պաշտպանելու, թշնամու կողմից բռնազավթած տարածքներն ազատագրելու եւ իրենց քույրերին, եղբայրներին ու հարազատներին մահից փրկելու համար: Մահապարտների այդ քայլը հայրենիքի հանդեպ անսահման սիրո եւ նվիրումի վառ օրինակ եղավ:

- Երկրի ամբողջ ժողովրդի համախմբվածության ու միասնության դեպքում, միայն հնարավոր կլինի լուծել ցանկացած խրթին հարց, այդ թվում՝ նաեւ պատերազմի պարագայում:

Հայրենական պատերազմում ընդհանուր հայրենիքի ազատագրման եւ պաշտպանության համար կողք-կողքի կռվում էին բոլոր հանրապետությունների ու մյուս վարչամիավորումների ազգերի եւ ազգությունների մարտիկները, կռվում էին համախմբված եւ միասնաբար:

Արցախյան գոյամարտում՝ ավելի քան փայլատակեց Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի հայության համախմբվածության ու միասնության ոգին, ինչն արտահայտվում էր հայազգի բազմաթիվ հայրենասերների՝ մարտերին անմիջական մասնակցությամբ, նյութական օգնությամբ, ինչն էլ բարոյա-հոգեբանական եւ ոգեւորիչ դեր խաղաց արցախահայության տարած հաղթանակում:

Ուրեմն, փաստենք, որ եւ Հայրենական պատերազմում, եւ Ար-

ցախյան գոյամարտում տարած հաղթանակներում կարելոր եւ որոշակի դեր խաղացին ժողովրդի համախմբվածությունն ու միասնությունը:

- Բարդ, սակայն շատ կարելոր հարցեր լուծելու համար, այդ թվում նաեւ պատերազմում հաղթելու համար, ոչ պակաս կարելոր դեր ունի աներեր հավատը սեփական ուժի եւ հաղթանակի նկատմամբ:

Յիշենք. մինչ Խորհրդային Միության դեմ պատերազմ սկսելը, Գերմանիան բռնազավթել էր եվրոպական պետությունների զգալի մասը, որոշ պետություններ իրենց հետագա ճակատագրից սարսփած՝ պատրաստակամություն էին հայտնել համագործակցել Գերմանիային՝ Խորհրդային դեմ պատերազմում:

Գերմանիան մեծ ուժերով 1941-ի հունիսի 21-ին հարձակվելով Խորհրդային Միության վրա՝ որոշել էր այդ պատերազմն ավարտել չափազանց կարճ ժամանակամիջոցում: Նրան հաջողվեց պատերազմի առաջին շրջանում (հունիս 1941- նոյեմբեր 1941թթ.) բռնազավթել այն ժամանակները Խորհրդային պետության մաս կազմած Ուկրաինան, Բելոռուսիան, Մոլդավիան, Մերձբալթյան հանրապետությունները (Լատվիա, Լիտվա, Եստոնիա): Արդեն ահեղ մարտեր էին ընթանում Մոսկվայի մատույցներում: Չավթված էր Յուսիսային Կովկասը: Պաշարման մեջ էր Լենինգրադը: Գերմանական զորքերը շրջանցելով՝ հասել էին Ռուսաստանի դաշնության խորքերը, մինչեւ Վոլգոգրադ (Ստալինգրադ) քաղաքը, նպատակ ունենալով թիկունքից հարվածել, գրավել Մոսկվան ու դրանով ավարտել պատերազմը Խորհրդային Միության դեմ: Ամենուրեք մահ ու կենաց մարտեր էին մղվում: Եվ, չնայած այդ ամենին, Խորհրդային ժողովրդին չլքեց հավատը սեփական ուժի եւ հաղթանակի նկատմամբ եւ նրան տարավ հաղթանակի:

Լեռնային Ղարաբաղի պարագայում հակառակորդը մարդկային, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի եւ հումքային ռեսուրսներով բազմապատիկ անգամ գերազանցում էր Ղարաբաղին, այնուամենայնիվ, հաղթեց արցախահայությունը: Հաղթեց իր համառությամբ, հաղթանակի եւ սեփական ուժի նկատմամբ ունեցած մեծ հավատով, իր հզոր ու անկոտրուն կամքով եւ հայրենիքի նկատմամբ ունեցած անսահման սիրով ու անմնացորդ նվիրումով:

Հարկ է եւ տեղին ապագա սերունդներին հիշեցնենք, որ անցյալներում, երկար ժամանակ հայը, եթե ոչ ամեն անգամ, ապա հաճախ, առանձնապես ազգի ճակատագրական լուրջ պահերին, առանձնապես հայրենիքի վտանգի պահերին, ցավոք, իր հույսը դրել էր ուրիշ-

ների վրա, իսկ այդ ուրիշները շատ դեպքերում լքել եւ մեն-մենակ են թողել թշնամուն դեմ-հանդիման, նրա երախում, ինչը, ցավոք, շատ դեպքերում ավարտվել է անցանկալի պարտությամբ ու մեծ կորուստներով:

Ուրեմն, մշտապես հիշենք, որ մենք ուժեղ ենք եւ կարող ենք հաղթանակներ ունենալ, եթե հավատ ունենանք հաղթանակի եւ սեփական ուժի նկատմամբ:

- «Ամեն ինչ հաղթանակի համար», «Չանուն հայրենիքի, հանուն հաղթանակի»,- այսպիսին էին կոչ-կարգախոսները Մեծ Հայրենականում:

«Մահ կամ ազատություն», «Ամեն ինչ Արցախը կործանումից փրկելու համար»,- այսպիսին էր արցախցու երդում-կարգախոսը Արցախի գոյամարտում:

Մեծ Հայրենականում, ռազմաճակատում կռվողներին օգնում էր թիկունքի ամբողջ ժողովուրդը՝ զինատեսակներով, զինամթերքով, վառելիքով, կենցաղային ու անհրաժեշտ այլ պարագաներով: Արդյունաբերության բնագավառում հաստոցի մոտ անքուն գիշերներ էին լուսացնում պատանին, դպրոցականը, կանայք ու տարեց տղամարդիկ: Սննդով, պարենով, հագուստով ու այլ անհրաժեշտ պարագաներով ռազմաճակատին օգնելու համար կռիվ էին տալիս գյուղի աշխատավորները՝ երեխաները, պատանիները, կանայք, ծերերը, բոլորը, ով թեկուզ փոքր ուժ, կարողություն ուներ որեւէ բանով օգտակար լինել պատերազմը արագ եւ հաղթանակով ավարտելու համար:

Արցախի պարագայում ամբողջ ժողովուրդն էր ռազմաճակատային, թիկունք չկար, բոլորը միասնաբար էին լուծում եւ թիկունքի, եւ ռազմաճակատի խնդիրները: Աստժո ամեն մի օրը միասին էին՝ եւ մարտի, եւ դադարի պահերին: Գիշեր, թե ցերեկ, կռվողները փոքրերին, ծերերին ու կանանց օգնում էին տնտեսական եւ կենցաղային առաջնահերթ հարցերում եւ անհապաղ մարտադաշտ էին մեկնում պահանջված պարագայում:

- Ուրեմն, արձանագրենք, որ երկու դեպքում էլ՝ եւ Մեծ հայրենականում, եւ արցախյան գոյամարտում հաղթանակի գործում լրջագույն դեր ու նշանակություն ունեցավ թիկունքի եւ ռազմաճակատի միասնությունը:

- Պատերազմում հաղթելու համար, հիրավի, լուրջ գործոն է նաեւ հակառակորդի թիկունքում կատարվող քայքայիչ գործունեությունը:

Մեծ Հայրենականում թշնամու թիկունքում կազմավորվեցին հայրենասեր կամավորների խմբեր ու ջոկատներ (պարտիզանական

խմբեր), որոնք ամենուրեք խարխլում էին թշնամու թիկունքը. պայթեցնում էին կամուրջներ, երկաթգծեր, զինտեխնիկայի ու զինամթերքի պահեստներ, ռազմավարական նշանակության կառույցներ, խափանում էին թիկունքի օգնությունը ռազմաճակատին եւ հնարավոր պահերին հարձակողական գործողություններ իրականացնում թշնամու դեմ:

Արցախի պարագայում թշնամու թիկունքում գործում էին թող, որ ոչ մեծաքանակ, «Եղնիկներ»-ի եւ հայրենասեր կամավորների այլ խմբեր, որոնք կատարում էին թշնամու ուշադրությունը շեղող գործողությունները, որոնք էլ նպաստում էին ռազմաճակատում հաջող իրականացնել մարտական գործողություններ:

- Անցյալի փորձը վկայում է, որ երկրի համար ստեղծված արտակարգ իրավիճակներում, առանձնապես պատերազմների ժամանակ, արդարացված է երկրի տնտեսական, ռազմաքաղաքական, սոցիալական ամբողջ գործառույթի կենտրոնացումը մեկ մարմնի մեջ, որպեսզի ավելի հեշտ եւ արագ ուղղվի այն ամենապահանջված ուղղություններին: Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին օրերին կազմավորված ԽՍՀՄ ՊՊԿ-ն, որը գլխավորում էր Ի.Վ. Ստալինը, որոշակի լուրջ դեր ունեցավ ռեսուրսների մոբիլիզացման եւ այն պահանջված բնագավառներին ուղղելու համար:

Արցախի պարագայում եւս անցյալի օրինակով կազմավորվեց նման մարմին, որի ձեւավորման գործում որոշակի դեր ունեցավ Հայրենական պատերազմի մասնակիցների մի խումբ՝ Յ.Ս. Օհանջանյան (Կոմկուսի Ստեփանակերտի քաղ/շրջկոմի առաջին քարտուղար), Ա.Խ. Արզումանյան («Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի գլխավոր խմբագիր), Յ.Սաֆարյան (կուսմարզկոմի բաժնի վարիչի տեղակալ) եւ տողերիս հեղինակը՝ Ս.Ե. Բարսեղյան (ուսուցիչների որակավորման եւ կատարելագործման ԼՂ ինստիտուտի տնօրեն): Սույն խումբը ԼՂՀ կառավարության ղեկավար Ռ.Ս.Քոչարյանին մի շարք այլ հարցերի շարքում առաջարկեց նաեւ անցյալի փորձից ելնելով՝ ստեղծել որեւէ մարմին՝ առաջնահերթ կարեւոր հարցերը արագ եւ արդյունավետ լուծելու նպատակով:

Ռ.Քոչարյանը խնդրեց՝ գրավոր առաջարկություն ներկայացնել կառավարություն:

Համընկերներս՝ «Դե, Էնա ասացինք էլի», ասելով հեռացան: Հարկադրված բոլորի անունից, գրեցի մեր առաջարկությունները, ստորագրեցի բոլորի փոխարեն եւ հանձնեցի կառավարության ղեկավարին:

Ի դեպ՝ այդ կապակցությամբ, անմիջապես հոգվածով նաեւ հան-

դես եկա «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթում, որտեղ այլ հարցերի հետ միասին, հիմնավորեցի նաեւ մեր սույն առաջարկության կարելությունը:

Ոչ երկար ուշացումով, լուծվեց սույն հարցը՝ ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն՝ Ռ.Ս.Քոչարյանի գլխավորությամբ, որն էլ իր որոշակի դերն ունեցավ Արցախի գոյամարտի ժամանակ ավելի արագ եւ արդյունավետ լուծելու պաշտպանական, տնտեսական, սոցիալական եւ այլ բնույթի կարելու հարցերը:

Եվ, վերջապես, վերը նշածս բոլոր գործոնների առկայության պարագայում նույնիսկ, փաստենք ու վերահաստատենք, որ բոլոր պատերազմներում էլ հաղթելու ամենագլխավոր ու որոշիչ գործոնը բարձր կազմակերպվածությամբ ու կարգապահությամբ, ժամանակակից ռազմատեխնիկայով ու զինհանդերձանքով զինված, մարտական արվեստին խորապես տիրապետող եւ այն կիրառելու կարողություն ունեցող հայրենիքին անմնացորդ նվիրված մարտունակ բանակ ունենալու գործոնն է:

Ֆաշիստական Գերմանիան մինչ Խորհրդային Միության վրա հարձակվելն, արդեն ուներ մեծաքանակ բանակ՝ զինված հարձակողական բարձրակարգ Նորաստեղծ ռազմական տեխնիկայով (տանկեր, ռազմական օդուժ, հրետանի, ականանետ ու նռնականետ, զինամթերք), ուներ մարտը վարելու մեծ փորձ եւ՝ ռազմավարական կարելու նշանակության հենակետեր ԽՍՀՄ Արեւմտյան սահմանի ողջ երկարությամբ:

Մինչդեռ, Խորհրդայինն ունենալով մեծաքանակ բանակ, մարդկային եւ հումքային մեծ ռեսուրսներ, այնուամենայնիվ պատրաստ չէր այդ պատերազմին, քանզի, դեռեւս չէր հասցրել գործողության մեջ դնել: Այդ պահին Խորհրդայինը չուներ անհրաժեշտ քանակով եւ որակով ռազմատեխնիկա ու ռազմամթերք, չուներ մարտը վարելու փորձ, եւ ամենակարելուրը՝ բարձրորակ հրամանատարական ղեկավար կադրեր: Բանը նրանում էր, որ այդ պատերազմին նախորդած տարիներին երկրի այդ ժամանակների ղեկավար Ի.Վ. Ստալինի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ անհիմն պատճառաբանություններով, գրեթե լիովին գլխատվել էր Կարմիր բանակի բարձրակարգ նշանավոր հրամանատարական ղեկավար անձնակազմը:

Մի խոսքով, գրեթե բոլոր առումներով Խորհրդայինը չափազանց գիջում էր իր հակառակորդին: Այդ պատճառով էլ պատերազմի առաջին շրջանում Խորհրդային բանակը մեծ կորուստներով ետ նահանջեց՝ թշնամուն թողնելով երկրի գրեթե ամբողջ Եվրոպական մասը: Եվ միայն պատերազմի երկրորդ շրջանում Խորհրդայինը կարո-

ղացավ որոշակի կայունություն ստեղծել ռազմաճակատում՝ հետագայում հարձակողական գործողություններ իրականացնելու համար:

Այլ եր վիճակը Արցախի պարագայում:

Արցախի դեմ պատերազմող Ադրբեջանն ուներ մեծաքանակ բանակ՝ զինված խորհրդայինից զավթած նույն խորհրդայինի զինատեսակներով: Արցախի դեմ նրա բանակում կռվում էին նաեւ թուրքական, ադվանական, չեչենական եւ մահմեդական այլ երկրներից հավաքագրած մեծաքանակ վարձկաններ ու ռազմական փորձառու մասնագետներ:

Արցախը չունեւ եւ չէր էլ կարող ունենալ ոչ բանակ, ոչ զենք, ոչ զինամթերք: Իսկ պատերազմ վարելու փորձի մասին բոլորովին խոսք լինել չի կարող: Այս պարագայում գործողության մեջ մտավ հայի կազմակերպչական տաղանդը, խելամտությունն ու հնարամտելու կարողությունը: Մինչեւ իսկական զինատեսակներ ձեռք բերելը, հայ խելամիտ ու հնարամիտ վարպետները կարողացան պատրաստել ինքնաշեն զինատեսակներ (հրացան, ինքնաձիգ, նետաձիգ, հրանոթ, ականանետ, նույնիսկ «Գրադ» զինատեսակ): Դրանցով էին կարողանում պաշտպանական մարտեր մղել թշնամու դեմ: Ի դեպ՝ ինքնաշեն զինատեսակների որոշ նմուշներ այսօր էլ պահպանվում եւ ցուցադրվում են Ստեփանակերտ քաղաքում գործող «Արցախի զինված ազատամարտիկների» եւ «Արցախի անհայտ կորած ազատամարտիկների» թանգարաններում:

Ստեփանակերտ քաղաքում, այն ժամանակները գյուղտեխնիկա արտադրելու նպատակով կառուցման ընթացքի մեջ գտնված ձեռնարկությունը, մեր խելամիտ մասնագետների ու վարպետների ուժերով սեղմ ժամկետում վերափոխվեց եւ դարձավ հակառակորդից խլած տանկերի ու այլ զինատեսակների նորոգման արտադրամաս:

Կարճ ժամանակամիջոցում ընթացս կազմավորվեցին կամավորների խմբեր ու ջոկատներ, որոնք հերոսաբար մարտնչում էին հակառակորդի դեմ՝ կռվի ճակատում եւ թիկունքում: Պաշտպանական կատաղի մարտեր մղելով՝ այդ խմբերի ու ջոկատների միավորմամբ էլ անհամեմատ սեղմ ժամկետում կազմավորվեց Արցախի պաշտպանության բանակը, որն իր ուժգին հարվածներով հակառակորդին ստիպեց զինադադարի ձեռք մեկնել մեր այդ բանակին: Բանակ, որն իր հաղթանակներով ու ձեռքբերումներով միջազգային հանրության կողմից ճանաչվեց, որպես տարածաշրջանի ամենամարտունակ բանակներից մեկը եւ դարձավ մեր ժողովրդի արժանապատվությունը:

ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄ ՄԵՐ ԱՅՂ ԽՈՍՔԻ

Փորձեմ ընդհանրացնել իմ այս խոսքը դաս-գործոնների մասին.

Արցախյան գոյամարտում հաղթեց անցյալի փորձ-դասերը լավ յուրացրած եւ խելամտորեն ու հմտորեն այն գործողության մեջ դրած արցախահայ ժողովուրդը: Հաղթեց, քանզի արդար էր եւ պահանջված նրա պայքարը: Տոկաց եւ հաղթեց: Ցավոք, անդառնալի եւ անուրանալի մեծ կորուստներով:

Գիտակցենք եւ մխիթարված զգանք սակայն, որ մեծ հաղթանակներն առանց կորուստների չեն լինում:

Փորձենք համայն հայությանը իրազեկել նաեւ Արցախի գոյապահպանման եւ անկախության համար պայքարում, ազերիների կողմից պարտադրած դաժան պատերազմում արցախահայության տարած հաղթանակի դերի ու նշանակության մասին:

Նախ, արձանագրենք, որ այս հաղթանակը հայ ժողովրդի՝ վերջին մի քանի հարյուր տարիների պատմության մեջ առաջին, հիրավի՝ դարակազմիկ նշանակության երեւոյթը եղավ, ինչն էլ ոսկետառ էջերով մտավ հայ ժողովրդի նորագույն պատմագրություն:

Որ այն արցախահայության համառ, հզոր եւ անկոտրուն կամքի, հայրենիքի նկատմամբ անսահման սիրո, անմնացորդ նվիրումի եւ նաեւ՝ համայն հայության համախմբման, միավորման ու միասնության հզոր ոգու հաղթանակն էր:

Այն ոգու, որ դարեր շարունակ մեր նենգ ու ստոր թշնամիները, առանձնապես մեզ հարեւան թուրքերն ու թուրքամասնները փորձել են կոխկրտել, ճզմել, խեղդել, սակայն, դա նրանց չի հաջողվել:

Չի հաջողվել, քանզի հայ մայրը, որ դարեր շարունակ մշտապես հոգացել եւ երազել է իր զավակին տեսնել ողջ եւ առողջ, ապահով, անվտանգ, այնուամենայնիվ, հայրենիքի վտանգի պահին նա՝ հենց ինքն է հորդորել իր միակ զավակին, օրհնել նրան իր մայրական սիրով եւ զենքով ուղարկել պաշտպանելու հողը հայրենի:

Եվ գնացել են նրանք հայրենի հողը պաշտպանելու: Գնացել են, ցավոք, շատերը տուն չեն դարձել:

Տուն չեն դարձել, որպեսզի ԱՐՑԱԽԱԿԱՆ հող-հայրենին մնա հայկական:

Եվ նրանց նվիրումի, արիության, անձնազոհության, նրանց կյանքի ու արյան գնով հող-հայրենին մնացել է հայկական, որպեսզի ԴԱՌՆԱ

- հայ զինվորի խիզախության ու սխրանքի վկան,
- հայ հրամանատարի ռազմական տաղանդի փայլատակումը,

- ապագա սերունդների հիշողության ու երախտիքի առհավատջան,

- համայն հայության երեք թեւերի համախմբման, միավորման եւ միասնության խորհրդանիշ,

- եւ, որպէսզի համայն հայության հայրենիք Յայաստան պետությունն իր Արեւելաց կողմում ունենա մի հզոր պաշտպանական ամբողջ, որպիսին Արցախ աշխարհն է իր քաջ, համառ եւ անկոտորուն արցախահայությամբ:

Իսկ, իբրեւ գնահատական այս հաղթանակի դերի ու նշանակության մասին, կարդանք հայ մեծանուն բանաստեղծուհի, Յայոց Մեծ Տիկին Սիլվա Կապուտիկյանի պատասխանը «Ազատ Արցախ» հանրապետական թերթի թղթակցի հարցի պատասխանը.

Յարց. - Դուք վերջերս հաճախ եք գալիս Արցախ: Կուզենայի՞նք իմանալ՝ ինչ դրդապատճառներ կան դրա համար:

- «Մենք գալիս են Ղարաբաղ՝ որպէս սրբատեղի, աղոթատեղի, գալիս ենք այստեղ երդվելու, մաքրվելու, գալիս ենք օրհնելու Ձեր՝ Ղարաբաղցիներիդ անցած ճանապարհը, նորոգելու մեր հավատը եւ, վերջապէս, խոնարհվելու այն շիրիմների առաջ, որոնք շատացել են այս վերջին տարիներին, գալիս ենք խոնարհվելու այն մայրերի առաջ, որոնք այդ վիթխարի վշտի բեռն են կրում, ծուկը իջնելու այն զավակների շիրիմների առաջ, ովքեր բարձր պահեցին հայի՝ մեր պատիվը եւ ցույց տվեցին, որ հայը, եթէ հարկ լինի, կարող է եւ անշուշտ, իր արյամբ, իր կյանքի գնով կպաշտպանի իր արժանապատվությունը»:

Յիրավի, ավելի ընդհանրացնող խոսք դժվար է ասել:

Յիշենք, որ սա Ղարաբաղի եւ Ղարաբաղցու մասին է ասված:

Որպէս լրացում այդ գնահատականի

Եկեք մշտապէս հիշենք,

- որ ճակատագրի հեզնանքով թէ այլ հանգամանքներով մեր հարեւանները նենգ ու ստոր, հայատյաց Թուրքիան է ու Ադրբեջանը, եւ հայը պետք է մշտապէս զգոն լինի,

- որ թուրքը իր ստոր նպատակներին հասնելու համար մշտապէս ջարդուփշուր է արել իր ճանապարհի բոլոր խոչընդոտները ու այսօր էլ շարունակում է իր այդ ռազմավարությունը:

- Յավատանք ու մշտապէս հիշենք, որ բոլորիս համախմբվածությամբ ու ջանքերի միավորումով միայն կարող ենք հասնել մեծ հաղթանակի,

- որ այս խառն ու խրթին աշխարհում մշտապէս գոյատեւելու համար հայը պետք է հավատա իր ուժին, հոգեբանորէն հաղթող զգա

իրեն եւ ինչ որ տեղ բիրտ լինի ու կարողանա հաղթահարել իր ճանապարհի բոլոր խոչընդոտները, որտեղ եւ ինչպիսին էլ լինեն նրանք,

- հիշենք նաեւ, որ միայն 20-րդ դարի վերջերին կարողացանք խոչընդոտել, կենաց եւ մահու պայքարում շարդուփշուր անել, ծնկի բերել եւ հաղթելու արժանի դաս տալ ազերի թուրքերին, որով վճռվեց Արցախը հայկական մնալու հարցը,

- նաեւ չմոռանանք, որ ամեն մի հաղթանակ կամ մեծ ձեռքբերում մի բան արժե, եթե այն պաշտպանվում, զարգացվում եւ հասցվում է իր հաղթական ավարտին: Իհարկե, չենք կարող ժխտել, որ այդ ճանապարհին, դեռեւս առկա են մեծ եւ տարաբնույթ դժվարություններ: Չէ որ կյանքն ինքնին պայքար է նշանակում: Ու պայքարել չի նշանակում պայքարել սոսկ թշնամու դեմ, նաեւ պայքար է դժվարությունների դեմ: Իսկ հայը կամք ունի եւ հարատեւելու համար պարտավոր է եւ պետք է շարունակի իր պայքարը:

**ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՄԵՐ ՆՇԱՆԱԿՈՐ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ
ՆՐԱՆՔ ԱՆՄԱՅ ԵՆ**

ԱՊՀ երկրների ղեկավարների՝ Զիշինեւ քաղաքում, 2009 թ. վերջերին կայացած հանդիպումների ժամանակ, Մեծ հաղթանակի հոբելյանական 65-ամյակը՝ 2010 թվականը, հայտարարվեց հաղթանակի տարի: Ուրեմն՝ առանձնակի առիթ էր, ազգովի, մեկ անգամ եւս, հիշենք բոլոր նրանց, ովքեր քայլել են այդ պատերազմի թո՛ւ ու բո՛հով եւ իրենց արժանի ներդրումն ունեցել այդ հաղթանակում:

Այս հանգամանքն էլ առիթ հանդիսացավ, որպէսզի ես ձեռնամուխ լինեմ սույն գրքի ստեղծմանը:

**ԱՆՄԱՅՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ՝
«ՈՉ-ՈՔ ՉԻ ՍՈՈԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՍՈՈԱՑՎԵԼ»**

Այդ նրանց մասին է ասված, ովքեր, համարձակ նայելով մահվան աչքերին, առանց վարանելու նետվում էին մարտի՝ հանուն հայրենիքի ազատագրության ու պաշտպանության:

Հայրենիքի համար զոհողությունը ռազմի դաշտում, թե աշխատանքային ճակատում, մահ չէ, այլ անմահություն: Մեծ հայրենակալնում եւ Արցախյան գոյամարտում հայ ժողովրդի զանգվածային հերոսությունն է այդ՝ իր լինելիության ու հարատեւության համար, որով հնագույն մեր հերոսական պատմագրությունը հարստացրեց վսեմ նոր դրվագներով:

...Չնայած դեռեւս 1939 թվականից գոյություն ունեւ ԽՍՀՄ-ի հետ խաղաղ համագործակցության դաշինք, այնուամենայնիվ Գերմանիան դրժեց իր ուխտը եւ 1941թ. հունիսի 22-ին, առանց պատերազմ հայտարարելու, Խորհրդային Միության դեմ միանգամից դուրս բերեց 158 մարտական դիվիզիա, մոտ 4000 տանկ, ավելի քան 5000 ռազմական ինքնաթիռ, 47000 հրանոթ եւ ականանետ: Ահից սարսափած խորհրդային զինվորի դեմ կռվում էին նաեւ Գերմանիայի հետ դաշնակցած իտալական, հունգարական, ռումինական եւ ֆիննական զորքերը:

Մինչ այդ, Գերմանիան, որի կանցլերն այդ ժամանակ Ադոլֆ Հիտլերն էր, գավթել էր Ավստրիան, Չեխոսլովակիայի սուղետական մարզը, իսկ հետո նաեւ ամբողջ Չեխոսլովակիան եւ այնտեղ հաստատել ֆաշիստական ռեժիմ, 1939 թվականից պատերազմի մեջ էր Ֆրանսիայի ու Լեհաստանի դեմ, 1940-ի հունիսից իրեն էր ենթարկել

Բելգիան, Յուլանդիան եւ Նորվեգիան:

Պատերազմի բռնկումից մեկ շաբաթ չանցած (30.06.1941թ.) Խորհրդային Միությունում ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե՝ Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ, որն էլ անմիջապես կենտրոնացրեց երկրի պետական, քաղաքական, տնտեսական ամբողջ համակարգի կառավարումը, որպեսզի հնարավոր ու հեշտ լինի ուժերը ուղղել այն բնագավառներին, որտեղ պահանջվում էր ամենամեծ անհրաժեշտությունը:

Հայրենիքի պաշտպանությունը դարձավ հրամայական պահանջ բազմազգ պետության համար. 16-ից մինչեւ 50 տարեկան յուրաքանչյուր այր պետք էր ուսաներ ռազմական գործը եւ զինվորագրվեր հայրենի հողի ու ժողովրդի պաշտպանությանը:

Ռազմապաշտպանական գործը, ինչպես ողջ երկրում, այնպես էլ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում զանգվածային, քաղաքական եւ հայրենասիրական բնույթ կրեց՝ ընդգրկելով կյանքի եւ աշխատանքի բոլոր ոլորտները: «Ամեն ինչ հայրենիքի համար» կոչին զինվորագրվեցին բանվորն ու գյուղացին, գիտնականն ու մշակույթի գործիչը, կուսակցական, Խորհրդային աշխատողները: Արյան, ավերի, ազատության ու հայրենիքի պաշտպանության այդ դառն օրերին երկրի ամբողջ ժողովուրդը, այդ թվում նաեւ հայ ժողովուրդը ռազմադաշտ ուղարկեց իր հազարավոր որդիներին (600 հազար՝ Հայաստանից եւ ավելի քան 50 հազար՝ Արցախից): Եվ ոչ միայն ուղարկեց, այլեւ նամակներով սխրանքի եւ հեղոսության էր կոչում նրանց:

Հայ ժողովուրդը ԽՍՀՄ մյուս ազգերի ու ժողովուրդների հետ միասին, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, մարտական փառավոր ուղի անցավ 1941-1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում՝ բարձր պահելով իր փառքն ու պատիվը:

Այդ արյունալի կռվում փառավոր ուղի է անցել Հայաստանի, Ղարաբաղի (նաեւ՝ Հս. Արցախի), Խորհրդային տարիներին ԽՍՀՄ կազմում Ադրբեջանական ԽՍՀ անունով հորջորջված հանրապետության տարածքում (հայաբնակ քաղաքներում, ավաններում, գյուղերում) եւ ընդհանուր առմամբ՝ այլ վայրերում բնակվող հայությունը: Միայն Արցախում եւ Ադրբեջանում բնակվող հայությունը աշխարհին տվել է 45-ից ավելի նշանավոր զինվորականներ՝ Խորհրդային Միության մարշալներ, ռազմածովային ուժերի ծովակալ եւ դեր-ծովակալներ, Խորհրդային Միության հեղոսներ, գեներալներ, գնդապետներ, փոխգնդապետներ եւ այլ աստիճանի սպաներ, «Փառքի»

շքանշանի երեք աստիճանների ասպետներ, որոնք ներկայացնում էին բանակի բոլոր զորատեսակները:

Չորավարների, հերոսների նման համաստեղությունը կարող էր մեծ պատիվ ու հպարտություն բերել շատ ավելի խոշոր պետության, քան մեծ աշխարհից հեռու, նրա մի անկյունում ծվարած 120-130 հազար բնակիչ ունեցող դե-ֆակտո մի պետություն-երկրամաս, ինչպիսին Արցախն է:

Ձեզ եմ ներկայացնում Լեռնային Ղարաբաղի (նաեւ՝ Յս. Արցախի) ու Ադրբեջանական ԽՍՀ-ի (նախկին) հայաբնակ բնակավայրերի մեզ արդեն հայտնի հայ նշանավոր զորավարներին, Խորհրդային Միության հերոսներին, «Փառքի» շքանշանի երեք աստիճանների ասպետներին եւ ճանաչված բարձրաստիճան հրամանատարներին ու սպաներին: Ակնկալում ենք, որ այն կօգնի ներկա եւ ապագա սերունդներին՝ ճանաչել տալու եւ նրանց օրինակով հայրենիքին նվիրվածության ու արիության ոգով դաստիարակելու գործում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ ԵՎ ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ

Իվան (Յովհաննես) Զրիստափորի ԲԱՂՂԱՄՅԱՆ

Խորհրդային Միության եւ համայն հայոց մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս, ծնվ.՝ Յս. Արցախի Չարդախլու գյուղում
Յովհաննես Ստեփանի ԻՍԱԿՈՎ

Խորհրդային Միության եւ համայն հայոց ծովակալ, Խորհրդային Միության հերոս, ծնվ.՝ Յյուս. Արցախի Գետաշեն գյուղում՝ գետաշենցու ընտանիքում

Արմենակ Արտեմի ԽԱՆՓԵՐՅԱՆՑ (Խուդյակով)

ԽՍՀՄ ավիացիայի մարշալ, ծնվ.՝ ԼՂՀ Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում

Համազասպ Խաչատուրի ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

ԽՍՀՄ զրահատանկային զորքերի մարշալ, Խորհրդային Միության հերոս, ծնվ.՝ Յս. Արցախի Չարդախլու գյուղում

Սերգեյ Զրիստափորի ԱԳԱՆՈՎ (Օհանյան)

ԽՍՀՄ ինժեներական զորքերի մարշալ, արմատներով՝ արցախցի
Միքայել Արտեմի ՊԱՐՄԵՂՈՎ

Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-գնդապետ, ծնվ.՝ ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշաղիշեն գյուղում

Նելսոն Գեւորգի ՍՏԵՓԱՆՅԱՆ

Խորհրդային Միության կրկնակի հերոս՝ ծնվ. ԼՂՀ Շուշի քաղաքում

Աշոտ Զումշուդի Գասպարյան	(ԼՂ Հաղորդի շրջան, գ. Դուդուկչի)
Սուրեն Գրիգորի Պետրոսյան	(ԼՂ Ստեփ. շրջան, գ. Ռեւ)
Անդրանիկ Աբրահամի Ղազարյան	(ք. Բաքու)
Արամ Հովակիմի Սաֆարյան	(ԼՂ Մարտունու շրջան, գ. Հաղորտի)
Երեմ Իվանի Դանիելյանց	(ԼՂ Ստեփ. շրջան, գ. Արանգամին)
Իվան Կոստանդինի Շահումյան	(ԼՂ Մարտունու շրջ., գ. Պառավաթումբ)
Սուրեն Հակոբի Գասպարյան	(ԼՂ Ստեփ. շրջան, գ. Ն.Ղլիժբար)
Արմեն Թեւանի Հայրիյան	(ԼՂ Հաղորդի շրջան, գ. Տող)
Թեմիկ Ավանեսի Ավթանդիլյան	(ԼՂ ք. Մարտակերտ)
Գեւորգ Թամրազի Հակոբյանց	(ԼՂ Ստեփ. շրջան, գ. Արանգամին)
Ռուբեն Զրիստափորի Բաղիրյան	(ԼՂ ք. Շուշի)
Իսահակ Մարկոսի Մանասյան	(ԼՂ Մարտունու շրջան, գ. Խերխան)
Գրիգոր Միքայելի Հայրապետյան	(ԼՂ Մարտակերտի շրջան, գ. Մեներելսկ)
Գրիգոր Կարապետի Բաղյան	(գ. Խաչակապ)
Գրիգոր Շահումի Կալուստով	(ք. Բաքու)
Հրանտ Արսենի Ավագյան	(ք. Բաքու)
Վաղինակ Սեմյոնի Չաքարյան	(Խանլարի շրջան, գ. Մարտունիշեն)
Գարեգին Շեկոյի Բալայան	(Շահումյանի շրջան, գ. Գյուլիստան)
Էդուարդ Մելիքի Այանյան	(Խանլարի շրջան, գ. Գետաշեն)
Անդրանիկ Ալեքսանդրի Մանուկյան	(ք. Բաքու)
Խաչատուր Բեգլարի Մելիքյան	(գ. Չազիկ, Դաշքեսան)
Վլադիմիր Հակոբի Յավրումով	(ք. Բաքու)
Ղազարոս Ավետիսի Ավագյան	(Խանլարի շրջան, գ. Գետաշեն)
Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյան	(ք. Բաքու)
Արսեն Արամի Տեր-Օգանով	(ք. Բաքու)
Գարուշ Սերգեյի Կոստանդինով	(ք. Բաքու)
Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյան	(Շամախու շրջան, գ. Մադրասա)
Ռաֆայել Իվանի Գաբրիելյան	(ք. Բաքու)
Կոնստանտին Ալեքսանդրի Նազարյան	(Կիսլավոդսկ քաղ. արմատ. Բաքու)
Ռադիոն Իվանի Մինասով	(Զիտայի մ. Աշկենայի շրջ., գ. Ալտան)
Վալենտին Սողոմոնի Իգրայիլյան	(ԼՂ Ստեփ. շրջ., Կարմիր գյուղ)
Վալենտին Հովսեփի Սուրաբեկով	(ք. Աստրախան)

ՓԱՌՔԻ ՇՔԱՆՇԱՆԻ ԵՐԵՔ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԱՍՊԵՏՆԵՐ

Վաղարշակ Կարոյի Հայրապետյան	(ԼՂ Ստեփ. շրջ., գ. Ղարաբուլախ)
Շահեն Հովհաննեսի Սարգսյան	(ԼՂ Ստեփ. շրջ., գ. Հարավ)
Աշոտ Գալուստի Մելքումյան	(ԼՂ Մարտակերտի շրջ., գ. Վանք)
Գեորգի Ավագի Իսրայելյան	(ԼՂ Ստեփ. շրջ., գ. Ն.Սգնեք)
Հովսեփ Սահակի Հովսեփյան	(ԼՂ Մարտունու շրջ., գ. Թաղավարդ)
Իսահակ Պողոսի Ղարախանյան	(Հս. Արցախ, գ. Գետաշեն)
Մեխակ Չաքարի Ճատրյան	(Հս. Արցախ, Շամխորի շրջան)

Համառոտ տեղեկություններ նրանց անցած մարտական ուղու մասին: Էջը բացում ենք Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս, նշանավոր զորավար Իվան (ՅՈՎՅԱՆՆԵՍ) ԶՐԻՍՏԱՖՈՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆՈՎ:

**ԻՎԱՆ (ՅՈՎՅԱՆՆԵՍ)
ԶՐԻՍՏԱՖՈՐԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ**



**ԽՍՀՄ զերագույն Խորհրդի նախագահության
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի մարշալներին և գեներալներին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում գերազույն գլխավոր հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ:

1. Բանակի գեներալ **Իվան Զրիստավորի Բաղրամյանին**

**ԽՍՀՄ զերագույն Խորհրդի նախագահության նախագահ՝
Ս. ԿԱԼԻՆԻՆ**

**ԽՍՀՄ զերագույն Խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ, 20 հուլիսի 1944թ.:

Խորհրդային զորավարների պայծառ համաստեղության մեջ իր յուրահատուկ տեղն է գրավում հայ ժողովրդի տաղանդավոր զավակ Խորհրդային Միության կրկնակի հերոս, համազորային մարշալ Իվան (Յովհաննես) Զրիստափորի (Խաչատուրի) Բաղրամյանը:

Իվան Բաղրամյանը ծնվել է 1897 թվականի դեկտեմբերի 2-ին Ելիզավետպոլ (Գանձակ) նահանգի Չարդախլու գյուղում, երկաթուղային բանվորի ընտանիքում: Նրա հայրը 40 տարի բանվորություն է արել Ելիզավետպոլի երկաթուղային կայարանում:

Նախնական կրթությունը ստացել է երկաթուղու երկդասյա ուսումնարանում: 1912 թվականին հաջողությամբ ավարտելով այն՝ նա ուսումը շարունակում է Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանում: Սակայն, տնտեսական ծանր պայմանները հնարավորություն չեն տալիս նրան շարունակելու ուսումը եւ 17 տարեկան հասակում զինվորագրվում է Ռուսաստանի ցարական բանակին՝ որպես էքսպեդիցիոն կորպուսի Կովկասյան 2-րդ սահմանային գնդի շարքային զինվոր: Այստեղ էլ սկսվում է նրա զինվորական ծառայությունը: Էքսպեդիցիոն կորպուսը, որը թուրքական զորքերի դեմ համառ մարտեր մղելով Իրանի վրայով շարժվում էր դեպի Բաղդադ, բազում փորձությունների է ենթարկվում: Բնական դժվարին պայմաններում, այս հոգնեցուցիչ արշավանքի եւ մարտերի ընթացքում Բաղրամյանը իր մարտական մկրտությունն է ստանում՝ իրեն դրսեւորելով որպես քաջ եւ դիմացկուն զինվոր, կոփված մարտիկ:

1916-ի ամռանը, Բաղրամյանը որպես երիտասարդ ընդունակ զինվոր, գործուղվում է Թիֆլիսի ենթասպաների դպրոցը՝ սովորելու:

1917-ի հունիսին՝ ավարտելով այն, կրտսեր հրամանատարի աստիճանով նորից մեկնում է ռազմաճակատ եւ նշանակվում Ուրմիա լճի շրջանում գտնվող երրորդ գնդի հրաձգային դասակի հրամանատար:

1917-ի Փետրվարյան օրերին հեղափոխական ուսանողության շարքերում, նա կարմիր ժապավենը կրծքին մասնակցում է ցույցերին՝ համակրանք տաժելով բոլշեւիկների սկատմամբ: Ավարտելով դպրոցը՝ կրտսեր սպայի կոչումով ծառայության է անցնում Զայկական 3-րդ հրաձգային գնդում: Շուտով նա դասակի հրամանատարի պաշտոնով Իրանում, Ուրմիա լճի կողմերում ակտիվ մասնակցություն է ունենում բանակի ներսում տեղի ունեցող խմորումներին: Այստեղ էլ նա նշանակվում է նախ վաշտի, ապա՝ գումարտակի հե-

ղափոխական կոմիտեի անդամ: 1918-ի մայիսին իր հեծյալ զորամիավորումով ակտիվ մասնակցություն է ունենում Սարդարապատում Թուրքիայի զորքերի ջախջախման նշանավոր ճակատամարտին: Այստեղ էլ նա նշանակվում է Հայկական 1-ին հեծյալ գնդում Եսկադրոնի հրամանատար:

Իվան Բաղրամյանը կարծես ի ծնե զինվորական էր: Նա երեւելի հեծելակ էր, խիստ կարգապահ ռազմիկ ու հիանալի կազմակերպիչ: Ռազմական գործողությունների ժամանակ աչքի էր ընկնում իր ուժեղ կամքով, խիզախությամբ, հրամանատարական բարձր ձիրքով: Անձնական հարաբերություններով լինելով պարզ ու համեստ, բնավորությամբ շիտակ, նա գրավում էր բոլորի համակրանքը:

Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Հայկական 1-ին հեծյալ գունդը, որի հրամանատարի օգնականն էր Ի. Բաղրամյանը, մտցվեց Խորհրդային 11-րդ բանակի կազմը, որտեղից էլ սկսվեց նրա հետագա մարտական ուղին Խորհրդային ամբողջ տարիներին: 1921-ին Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը Բաղրամյանին՝ որպես փորձված հրամանատար, նշանակում է Հայաստանի նորակազմ ռազմական ժողկոմում՝ պատասխանատու աշխատանքի:

1923-ին նա նշանակվում է Հայկական դիվիզիայի հեծելագնդի հրամանատար: 1924-ին ավարտելով Լենինգրադի հեծելագորային հրամկազմի կատարելագործման միամյա դասընթացները՝ վերադառնում է իր նախկին պաշտոնին, ուր նա ծառայում է մինչև 1931 թվականը՝ կատարելով մի շարք կարեւոր հանձնարարություններ՝ ուղղված հարյուրավոր նոր սպաների ուսումնառության, դաստիարակության ու մարտական արվեստին տիրապետելու գործին:

1931-ին Բաղրամյանը Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ուսանող էր: 1934-ին ավարտելով այն՝ շտաբի պետ է նշանակվում Մ. Ֆ. Բլինովի անվան 5-րդ հեծյալ դիվիզիայում: 1936-ից նա շարունակում է ուսումը Կարմիր բանակի գլխավոր շտաբի ակադեմիայում: Երկու տարի նույն ակադեմիայում նա դասախոսական աշխատանք է կատարում՝ խորհրդային բանակի համար սպայական նոր կարգեր պատրաստելու գործում: 1940-ի կեսերից նա Կիեւի ռազմական օկրուգի բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետն էր, իսկ 1941-ի սկզբից՝ Կիեւի ռազմական հատուկ օկրուգի շտաբի պետի տեղակալը եւ օպերատիվ վարչության պետը:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից Հարավարեւմտյան ռազմաճակատի զորքերը ծանր եւ արյունահեղ մարտեր էին մղում թշնամու դեմ, հատկապես Կիեւի համար մղված մար-

տերում: Այստեղ նորովի դրսևորվեցին օպերատիվ վարչության պետ Ի. Բաղրամյանի մեծ արիությունն ու ռազմական գործի բարձր ունակությունները: Ղեկավարվելով Բաղրամյանի մշակած օպերատիվ պլանով՝ մեր զորքերի կողմից գերմանացիները տասնյակ հազարավոր զոհեր կրելով, հարկադրված եղան մասամբ դադարեցնել հարձակումները: Բարձր գնահատելով այս մարտում ցուցաբերած անձնական խիզախությունն ու ռազմական հմտությունը՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհրդի 1941թ. օգոստոսի 12-ի որոշմամբ Ի. Բաղրամյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Բաղրամյանի ղեկավարած օպերատիվ վարչության մշակած պլանով ջախջախիչ հարված ստանալով Ռոստովի ազատագրման եւ Մոսկվայի Չարավ-արեւմտյան ուղղությունում՝ թշնամին ետ շարտվեց: Ազատագրելով Ելեց քաղաքը եւ շուրջ 400 այլ բնակավայր՝ այդ ուժերը Էական աջակցություն ցույց տվեցին մեր զորքերին, որոնք մարտնչում էին Մոսկվայի Չարավ-արեւմտյան ուղղությամբ: Չաշվի առնելով այդ եւ Ռոստովի ազատագրման գործողության նախապատրաստմանն ու իրականացմանը եռանդուն ու ակտիվ մասնակցությունը, Ի. Բաղրամյանը դասվեց տակտիկական արվեստի խորհրդային լավագույն վարպետների շարքը: Նրան շնորհվեց գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում եւ նշանակվեց Չարավ-արեւմտյան ուղղությամբ գործող զորքերի շտաբի պետ, 1942-ի հուլիսից՝ Արեւմտյան ռազմաճակատի 16-րդ բանակի հրամանատար, որն էլ նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հաջողությամբ ետ մղեց թշնամու 400-500-անոց տանկային զորամիավորման գրոհը, որը ձգտում էր մեր զորքերին շրջանցել Չարավից:

1943-ի փետրվար-մարտ ամիսներին 16-րդ բանակը, ցուցաբերած ակտիվ ռազմական գործողությունների համար, վերակազմվեց 11-րդ գվարդիական բանակի, եւ Ի. Բաղրամյանը նշանակվեց նրա հրամանատարը: Այդ ժամանակ թշնամին խոշոր ուժեր էր կենտրոնացրել Կուրսկ-Օրյոլ-Բոյանսկ ուղղություններում. հազարավոր կործանիչներ, խոյընթաց, ռմբակոծիչ ինքնաթիռներ, ինքնագնաց հրետանի, ամեն տեսակի եւ համակարգի ականանետներ: Այստեղ էին կենտրոնացվել գերմանական տեխնիկայի բոլոր նորույթները՝ «Ֆերդինանտներ», «Չովագներ», «Վագրեր» եւ այլն: Սկսվեց ահեղ մարտը, որը տևեց 12 օր: Բաղրամյանի գլխավորած 11-րդ գվարդիական բանակը ջախջախիչ հարված հասցրեց թշնամուն՝ առաջ անցնելով 160-180 կիլոմետր, հասան Օրյոլ-Բոյանսկ երկաթուղու կայարան, դրանով իսկ կասեցրին թշնամու հետագա դիմադրությունը:

Բրյանսկը գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրելուց հետո, գեներալ-գնդապետ Բաղրամյանի գլխավորած 11-րդ գվարդիական բանակը փոխադրվեց Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատ: Չանցած չորս ամիս, 1943-ի նոյեմբերի 17-ին ԽՍՀՄ ժողովմխորհուրդը Ի.Բաղրամյանին շնորհեց բանակի գեներալի բարձր կոչում, առաջին անգամ, իսկ Պաշտպանության պետական կոմիտեն նույն օրը նշանակեց նրան Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի գորքերի հրամանատար:

...Մերձբալթյան 1-ին եւ 2-րդ ռազմաճակատների միջեւ ստեղծվել էր լարված վիճակ: Բանը նրանում էր, որ այդ ժամանակ հակառակորդը ճեղքել էր Մերձբալթյան երկու ռազմաճակատների պաշտպանական գիծը, ինչի հետեւանքով, գրեթե, խափանվել էր հաղորդակցության միակ կապը երկու ռազմաճակատների միջեւ՝ Նեելի կոչված պարանոցը հակառակորդի կողմից անընդհատ կրակի տակ էր պահվում: Սույն դժվարագույն խնդրի լուծումը հանձնարարված էր Ի. Բաղրամյանին: Իվան Զրիստափորովիչը մանրակրկիտ նախապատրաստեց այն եւ ինքն էլ հաջողությամբ իրականացրեց ռազմական գործողությունը (օպերացիան): Կատարեց այն, ինչպես կատարել էր Օրյոլի ճակատամարտում՝ արժանանալով կուսակցության կենտկոմի եւ ժողովմխորհրդի բարձր գնահատանքին: Խորհրդային տեղեկատվության բյուրոն այդ մասին տարածեց ներքոհիշյալ հաղորդագրությունը. «Օրերս Մերձբալթյան ռազմաճակատի գորքերը, բանակի գեներալ Ի. Բաղրամյանի հրամանատարությամբ, հարձակման անցան Նեելից հարավ գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ եւ մոտ 80 կիլոմետր ճակատի երկարությամբ ու մոտ 30 կիլոմետր խորությամբ ճեղքեցին հակառակորդի խիստ ամրացված պաշտպանական գոտին... հինգ օրվա լարված մարտերի ընթացքում մեր զորքերն ազատագրեցին ավելի քան 500 բնակավայր... Մարտերում ջախջախեցին հակառակորդի 87-րդ, 129-րդ եւ 211-րդ հետեւակային դիվիզիաները, 20-րդ տանկային դիվիզիան եւ մի քանի պահակային զորամասեր»:

1944 թվականի ամառային կամպանիայի ժամանակ Խորհրդային բանակը ահեղ մարտերով մաքրեց Բելոռուսական, Լատվիական, Լիտվական, Էստոնական Կարելա-Ֆիննական հանրապետությունների եւ Լենինգրադի մարզի հողատարածքները: Չնայած տեղանքի չափազանց աննպաստ պայմաններին (համատարած անանցանելի ճահիճներ ու ջրային մեծ արգելքներ, թշնամու ուժեղացրած ինժեներական կառուցվածքների ճյուղավորված հզոր համակարգ, փշալարային արգելափակոցներ, դօտեր ու դգօտներ, հսկայական

քանակությամբ կրակակետեր), այնուամենայնիվ ռազմաճակատի մյուս զորավարների հետ միասին համառ հարձակողական մարտեր էին մղում նաեւ Բաղրամյանի ղեկավարած զորամիավորումները: Ռազմաճակատի հրամանատար Ի. Բաղրամյանին ուղղված Գերագույն հրամանատարության 1944թ. հունիսի 24-ի հրամանում կարդում ենք. «Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի զորքերը, անցնելով հարձակման, հրետանու եւ ավիացիայի կենտրոնացված հարվածների աջակցությամբ 35 կմ հատվածում ճեղքեցին գերմանացիների Վիտեբսկի ամրացված շրջանի ուժեղ եւ խոր էշելոնացված պաշտպանությունը Վիտեբսկ քաղաքից Յյուսիս-Արեւմուտք եւ հարձակողական մարտերի երկու օրվա ընթացքում առաջ շարժվեցին 20-40 կմ խորությամբ, ճեղքումը ընդլայնելով մոտ 80 կմ ճակատով, 35կմ հատվածով հասան Արեւմտյան Դվինա գետին: Իսկ Խորհինֆորմբյուրոն նույն հուլիսի 24-ի իր օպերատիվ ամփոփագրում հաղորդեց, որ սեղմելով շրջափակման օղակը, բանակի գեներալներ Ի. Բաղրամյանի եւ Չերնյախովսկու զորքերը հունիսի 26-ին ազատագրեցին բելառուսական խոշոր մարզային կենտրոն, ռազմավարական կարեւոր հանգույց Վիտեբսկ քաղաքը եւ 700 այլ բնակավայրեր:

Այս հաղթանակի առթիվ Գերագույն հրամանատարության 1944-ի հունիսի 26-ի հրամանով նշվում է բանակի գեներալներ Բաղրամյանի եւ Չերնյախովսկու զորքերի ձեռք բերած փայլուն հաղթանակը եւ շնորհակալություն հայտնվում Վիտեբսկի ազատագրմանը մասնակցած զորքերին՝ շնորհելով այն «Վիտեբսկյան» անունը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն այս զորամիավորումների 134 ռազմիկների շնորհեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Բանակի գեներալ Բաղրամյանի մշակած պլանով խորտակվեց նաեւ Պոլոցկ քաղաքի թշնամական հզոր պլացդարմը եւ ազատագրվեց 300 այլ բնակավայրեր: Ռազմաճակատի զորքերը հուլիսին գրոհով գրավեցին Պոլոցկ քաղաքն ու կարեւոր երկաթուղային հանգույցը՝ Դվինսկի ուղղությամբ, դրանով իսկ փակելով թշնամու պաշտպանության հզոր ամրացված շրջանը, ինչի համար հրամանատարն ու զորամասերը արժանացան Գերագույն հրամանատարության շնորհակալությանը եւ մարտին մասնակցած զորամասերը վերանվանվեցին «Պոլոցկյան»:

Հաղթանակները հաջորդում էին մեկը մյուսին: Բաղրամյանի ղեկավարած ռազմաճակատի զորքերը՝ գրավելով 4 քաղաք, մեկ երկաթուղային հանգույց, ավելի քան 700 բնակավայր, սրընթաց առաջ անցնելով շուրջ 500 կմ, խորությամբ, մոտենում էին հիտլերյան Գերմանիայի սահմաններին:

Միայն մեկ օրում Մերձբալթյան 1-ին, Բելոռուսական 1-ին, 2-րդ եւ 3-րդ ռազմաճակատների մարտական գործողությունների շնորհիվ հակառակորդը կորցրեց վեց կարելոր բատալիոն: Օտարերկրյա մամուլը հուլիսի 27-ը համարեց հիտլերյան բանակի ամենասեւ օրը, իսկ խորհրդային ժողովուրդը մեկ անգամ եւս ցնծաց խորհրդային Միության մարշալներ Վասիլեւսկուն, Կոնեւին, Ռոկոսովսկուն, բանակի գեներալներ Բաղրամյանին, Չերնյախովսկուն եւ Երեմենկոյին խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու առիթով:

Յաղթարշավը շարունակվում էր. Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի զորքերը տանկային միավորումների եւ հետեւակի համատեղ գործողությամբ ամբողջովին կտրեցին հիտլերականների բոլոր ուղիները եւ հուլիսին գրավեցին Արեւելյան Պրուսիան: Չարգացնելով առաջխաղացումը՝ ազատագրեցին մի շարք քաղաքներ ու բազմաթիվ բնակավայրեր, դուրս եկան Բալթիկ ծովը:

1944-ի հոկտեմբերին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը, կատարելով իրենց հրամանատարի տակտիկական պլանը, ճեղքեցին ռազմաճակատը եւ թշնամու Մերձբալթյան 30 դիվիզիայից բաղկացած ամբողջ խմբավորումը կտրեցին Գերմանիայից ու հնարավորություն չտվին նրան մասնակցելու Գերմանիայի հիմնական տերիտորիայի համար մղված ճակատամարտին: Ֆաշիստական Գերմանիայի անձնատրությունից (կապիտուլյացիա) հետո միայն, այդ դիվիզիաները ստիպված եղան ամբողջովին գերի հանձնվել:

Մարշալ Ա. Վ. Վասիլեւսկու եւ բանակի գեներալ Ի. Զ. Բաղրամյանի զորքերը 1945-ի մարտ-ապրիլ ամիսներին բացառիկ խնամքով նախապատրաստվեցին Զյոնիսբերգ (Կալինինգրադ) ամրոց-քաղաքի գրոհը: Այստեղ Բաղրամյանը նշանակվեց Չեկլանոյան խմբավորման խորհրդային զորքերի հրամանատար, որի առաջադրանքով կազմված մակետի օգնությամբ պատրաստվեցին եւ գրոհով գրավեցին Զյոնիսբերգը՝ գերելով 93 հազար զինվոր ու սպա եւ մեծաքանակ ռազմավար, որտեղ էլ Բաղրամյանը երկրորդ անգամ պարգեւատրվեց Սուվորովի առաջին աստիճանի շքանշանով: Յետագայում, ընդհուպ մինչեւ ֆաշիստական Գերմանիայի անձնատրության (կապիտուլյացիայի) օրը, մարշալ Վասիլեւսկու եւ Բաղրամյանի զորքերը, տեղանքի ծանր պայմաններում, ավարտեցին թշնամու Զյոնիսբերգի Չեկլանոյան խմբավորման մնացորդների ջախջախումն ու գերումը:

1945-ի մայիսին Բաղրամյանը նշանակվում է Մերձբալթյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատար եւ ինը տարի անփոփոխ մնում նրա հրամանատարը: Այդ տարիներին նա ընտրվում է Լատ-

վիայի կուսակցության կենտկոմի անդամ, ԽՍՀՄ եւ Լատվիայի Գերագույն խորհուրդների պատգամավոր, երկու անգամ պարգևատրվում է Լենինի շքանշանով:

1954թ. նրան տեղափոխում են Մոսկվա եւ նշանակում ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ: 1956-1958թթ. նրան տեսնում ենք Գլխավոր շտաբի բարձրագույն ռազմական ակադեմիայի պետի պաշտոնում: 1958-ից նորից պաշտպանության նախարարի տեղակալ էր:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը իր 1955թ. մարտի 11-ի հրամանագրով բանակի գեներալ Իվան Զրիստափորի Բաղրամյանին շնորհեց Խորհրդային Միության մարշալի կոչում:

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության XX համագումարը Ի.Զ. Բաղրամյանին ընտրեց ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի անդամության թեկնածու, իսկ XXII համագումարը՝ Կենտկոմի անդամ: 1962թ. մարտին Խորհրդային Չայաստանի աշխատավորները միահամուռ Ի.Զ. Բաղրամյանին ընտրեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության եւ Չամայն հայոց մարշալ Իվան Զրիստափորի Բաղրամյանի փառապանծ կյանքը խոշոր ռազմագետի, արիության եւ հայրենիքի նկատմամբ անսահման նվիրվածության վառ օրինակ է, ինչը գնահատվել է Խորհրդային Միության եւ արտասահմանյան մի շարք երկրների բազմաթիվ շքանշաններով ու մարտական մեդալներով եւ որ նրա անցած փառավոր ուղին դաստիարակության մեծ օրինակ է մեր ներկա եւ ապագա սերունդների համար եւ նաեւ ոգեշնչման հզոր աղբյուր:

Նա մահացել է 1982-ի սեպտեմբերի 9-ին, աճյունասափորը ամփոփված է Մոսկվայի Կրեմլի պատի մեջ:



**ՀՈՎՅԱՆՆԵՍ
ՍՏԵՓԱՆԻ ԻՍԱԿՈՎ**



**ԽՍՀՄ զերագույն հորհրդի նախագահության
Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը**

*Կարմիր բանակի մարշալներին, ծովակալներին եւ գեներալներին
Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում գերագույն գլխավոր հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

1. Ծովակալ **Հովհաննես Ստեփանի Իսակովին**

**ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ**

**ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ, 20 մայիսի 1955թ.:

ԻՍԱԿՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԻ

Հովհաննես Ստեփանի Իսակովը աշխատանքային եւ մարտական փառավոր ուղի է անցել. միջմանկց մինչեւ Խորհրդային Միության նավատորմի ծովակալ՝ մարշալական տարբերանշանով, շարքային ծովայինից մինչեւ ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի նախարարի առաջին տեղակալ, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր:

Հս. Արցախի Գետաշեն գյուղացի Ստեփան Տեր-Իսահակյանը՝ Հովհաննեսի հայրը, որ մասնակցել էր 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, ընտանիքով բնակություն էր հաստատել Կարսի շրջանի Հաջիքենդ գյուղում: Այստեղ էլ, 1894թ. օգոստոսի 22-ին ծնվել է Հովհաննեսը: Տնտեսական ծանր հոգսերի պատճառով Ստեփանի ընտանիքը տեղափոխվում է Բաքու քաղաքը, որտեղ էլ մահանում է Ստեփանը: Ընտանիքը հարկադրված տեղափոխվում է Թիֆլիս: Այդ տեղափոխումների ժամանակ անհայտ հանգամանքներում անհետանում է ութ տարեկան Հովհաննես Տեր-Իսահակյանի ծննդյան վկայականը: Թիֆլիսում նոր ծննդյան վկայական է ստանում Իվան Իսակով անուն-ազգանունով:

Իսակովը նախնական կրթությունն սկսել է Թիֆլիսի ռեալական դպրոցում: Նա մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի տեխնիկական եւ հակում՝ դեպի ճանապարհորդությունն ու ծովը: Չարմանալի ընդունակություններ է ցուցաբերում նա ուսման մեջ: Դասընկերները վկայում էին, որ մեկ տարվա ընթացքում նա ավարտում է 5-րդ եւ 6-րդ դասարանները եւ փոխադրվում յոթերորդ դասարան:

1913 թվականին՝ ավարտելով Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, նա մեկնում է Պետերբուրգ՝ բարձրագույն կրթություն ստանալու: Զաղաքի ընտրությունը պատահական չէր. նա ուզում էր մոտ լինել ծովին, նավատորմին: Պետերբուրգում իր ապրուստը հայթայթելու նպատակով բանվորություն էր անում ինստիտուտի գարաժում:

Ուսումը շարունակելու նպատակով նա դիմում է ներկայացնում ծովային ուսումնարան: Ընդունող հանձնաժողովը պատասխանում է՝ «Խնդիրը մերժել»:

Երկրորդ կարգի կապիտանը կարդում է հանձնաժողովի որոշումը.

- Իվան Ստեփանովիչ Իսակով. Ձեր դիմումը մերժված է: Լավ կանեք հետեւակային որեւէ դպրոց ընդունվել, կամ դառնաք արհեստավոր: Դա ավելի հարմար է ազնվականական դասին չպատկանող

աղքատ մարդկանց համար: Ըստ որում նավատորմում հայ սպա չի եղել եւ չի լինելու:

- Դուք իրավացի չեք, պարոն սպա: Նավատորմում հայ սպա եղել է եւ կլինի: Հիշեցեք հայ ադմիրալ Լազար Սերեբրյակովին, պրոֆեսոր Գարսեւին, որոնք երկար տարիներ անձնվիրաբար ծառայել են Սեւ ծովի նավատորմում,- պատասխանում է Իսակովը ցարական պաշտոնյային:

Նա որոշեց հասնել իր նպատակին եւ ընդունվեց հասարակ մարդկանց զավակների ուսումնարանում՝ նախ որպէս յունկեր, իսկ երեք ամիս հետո՝ իբրեւ ուսանող: Ուսման մեջ ցուցաբերած հաջողությունների համար ստացած պարգէները չհանգստացրին նրան: Նա համառորեն ձգտում էր ընդլայնել եւ խորացնել ռազմական գիտելիքները: Այդ ժամանակ հովհաննեսը կապ էր պաշտպանում տեխնոլոգիական ինստիտուտի հեղափոխական ուսանողության հետ եւ մասնակցում քաղաքական, փիլիսոփայության, էսթետիկայի եւ գրականության հարցերի շուրջ վեճերին:

...Այդ օրերին դեպի Արեւելք՝ Վլադիվոստոկ մեկնող մի նավում ուսանողների շարքում էր նաեւ Իսակովը:

Այնտեղ, հեռավոր Արեւելքում, ծովայիններն ստացան ծովային առաջին մկրտությունը: Իսակովը ծառայեց «Օրյոլ» հաժանավի վրա, անցավ Օխոտի ծովի փոթորիկներով, նավարկեց Ճապոնական ծովում, Խաղաղ օվկիանոսում, եղավ Չինաստանում, Կորեայում ու Ճապոնիայում: Նա ծառայեց նաեւ Ամուրի նավատորմի ղի՝ «Շտորմ»-ի, Սիբիրյան նավատորմի ղի «Սունգուայ» եւ «Սերդիտի» ականակիրների վրա: Երիտասարդ ենթասպան ծառայությունը կատարում էր անձնվիրաբար:

1917 թվականի սկզբներին, ավարտական քննությունների ժամանակ, Իսակովն արդեն ավագ ենթասպա էր: Դպրոցն ավարտելով, նա ստանում է սպայական միջմանի կոչում եւ ծառայության նշանակվում Բալթյան նավատորմի Եսկադրային մարտական ականակիրներից մեկի՝ «Իզյասլավլ»-ի վրա, որն էլ Իսակովի կյանքում մեծ տեղ է գրավում: Այդ ռազմանավի վրա նա ստացավ առաջին մարտական մկրտությունը՝ մասնակցելով Ռիգայի ծովածոցի համար մղված մարտերին: Այստեղ էլ Բալթիական ծովայինները ողջունում են հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը ու անցնում հեղափոխական ապստամբների կողմը:

Իրադրությունը ծանր էր: Հակառակորդը նեղում էր: Ֆիննական ծոցը սառել էր՝ փակելով Կրոնշտադտի եւ Պետրոգրադի ճանապարհը: Ստեղծված դժվար պայմաններում, հեղափոխական կոմիտեն

ձեռներեց ու խիզախ Իսակովին ընտրում է նավապետի պաշտոնակատար: Նա արդարացրեց կոմիտեի վստահությունը՝ ջախջախումից փրկելով ավելի քան 211 մարտական նավ եւ այն հասցրեց Պետերբուրգ: Այդ արշավանքը, որը կոչվում էր «Սառցե արշավանք», տեղի ունեցավ 1917-ի մարտ-ապրիլ ամիսներին, երբ Կրոնշտադտ մտան վերջին նավերը:

«Սառցե արշավանքին» մասնակցելը Իսակովի կյանքի ամենավառ էջերից մեկն էր: Երիտասարդ միջմանը դարձավ խորհրդային նավատորմի նավապետ:

«Տրանսբալթ» խոշոր փոխադրանավին առաջադրանք տրվեց. արագ ականապատել Ֆիննական ծոցը: Երիտասարդ Իսակովը նշանակվեց այդ նավի հրամանատարի օգնական: Կարելոր մարտական առաջադրանքը կատարելուց հետո նա մասնակցեց ցանցավորման եւ արգելափակման դասընթացներին, ինչն էլ ավարտելուց՝ նշանակվեց «Կորչիկ» պահականավի հրամանատար:

1919թ. օգոստոսին անգլիական ինտերվենտները որոշել էին օդային եւ ծովային հարված հասցնել հեղափոխական Բալթյան նավատորմին: Ահեղ մարտեր տեղի ունեցան: Իսակովի «Կորչիկ» ականակրի եւ մյուս նավերի կենտրոնացված կրակով ոչնչացվեցին անգլիական կատերները եւ ետ մղվեց թշնամու հարձակումը:

1920թ. Կովկասում ծանր վիճակ էր ստեղծվել: Նորաստեղծ խորհրդային իշխանության գոյությունն այստեղ վտանգի տակ էր:

Յուդենիչի ջախջախումից հետո, 1920թ. Իսակովը նշանակվում է Վոլգա-Կասպյան նավատորմի «Դեյատելնի» էսկադրային ականակրի հրամանատար: Նրան առաջադրանք է տրվում՝ ականապատել Վոլգայի գետաբերանը եւ մյուս գորամիավորումների հետ միասին վերականգնել Բաքվի կոմունան: Ուժերն անհավասար էին, մարտերը՝ համառ: Բաքվի պրոլետարիատը, հեղափոխական ուժերի օգնությամբ, հաղթանակով դուրս եկավ Անտանտայի ու գերմանաթուրքական զավթիչների, ինչպես նաեւ ներքին հակահեղափոխական ուժերի դեմ եւ 1920-ի ապրիլի 28-ին Բաքվում կրկին հաստատվեց խորհրդային կարգեր:

Անգլիացիները, թուրքերի օժանդակությամբ, նոր հարձակում ձեռնարկեցին Բաքվի «Սեւ ոսկին» զավթելու եւ դրանով իսկ խորհրդային իշխանությանը զրկելով նրանից: Այս մարտերում էլ փայլատակեցին Իսակովի ղեկավարած նավատորմի ուժերը եւ հաղթանակով դուրս եկան:

Այնուհետեւ Իսակովի ծառայությունը շարունակվում է Բալթիկ ծովի, ապա Սեւծովյան նավատորմիղներում, Նիկոլաեի «ժելեզնա-

յա» Եսկադրային նոր ականակրի վրա, տարբեր պաշտոններ վարելով, ընդհուպ, մինչեւ ԲԳԿԲ շտաբ: Այդ շրջանում կատարած նրա աշխատանքը բնութագրվում է հետեւյալ կերպ. «...Յրամանատարներից ամենաերիտասարդն է, բայց միանգամայն արժանի է իր դիրքին, չափազանց եռանդուն է ու ընդունակ, բացառիկ շնորհքի տեր, օպերատիվ աշխատող է: Տեսական լավ պատրաստություն եւ նշանակալից փորձ ունի... Արագ կողմնորոշվում է ստեղծված իրարարության մեջ: Առանձնապես հմուտ է հարվածային առաջադրանքներ կատարելիս...»:

1928-ին Իսակովն ավարտում է Լենինգրադի ռազմածովային ակադեմիային կից բարձրագույն դասընթացները, 1932-ից ռազմածովային ակադեմիայում դասախոսական աշխատանք է կատարում, այնուհետեւ՝ Բալթյան ռազմածովային նավատորմի շտաբի պետն էր:

Իսակովը 1933-1935թթ. աշխատում էր Բալթյան կարմրադրոշ նավատորմի շտաբի պետ: Ռազմածովային ամենօրյա ուսուցման եւ մանևերների ընթացքում նա կիրառում էր տեսական գիտելիքները, փորձուսուցմամբ հարստացնում այն:

1937թ. հունիսին նշանակվում է Բալթյան կարմրադրոշ նավատորմի հրամանատար: Նրան շնորհվում է երկրորդ կարգի ֆլագմանի կոչում:

1937թ. դեկտեմբերին բալթիկցիները Իսակովին ընտրում են առաջին գումարման ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1938-ի հունվարին նշանակվում է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժող. կոմիսարի տեղակալ եւ համատեղությամբ ղեկավարում էր Լենինգրադի ռազմածովային ակադեմիան:

Այդ օրերին ստեղծվեց ռազմածովային նավատորմի ժողկոմատում կոլեգիալ ղեկավարության օրգան՝ Գլխավոր ռազմական խորհուրդը եւ Յ.Ս.Իսակովը հաստատվեց նրա անդամ:

ԽՄԿԿ-ին նա անդամագրվեց 1939 թվականին:

1940-ին նրան շնորհվում է ծովակալի կոչում:

«Պրավդա» թերթը 1940թ. հունիսի 5-ի իր առաջնորդող հոդվածում, որը նվիրված էր Կարմիր բանակի եւ ռազմածովային նավատորմի մի խումբ նշանավոր գործիչների գինվորական բարձրագույն կոչումներ շնորհելուն, գրել էր. «Ծովակալ Իսակովը, որը զուգակցում է իր մեջ հմուտ հրամանատարի եւ ականավոր տեսաբանի հատկությունները, հիանալի է վարում նաեւ ռազմածովային նավատորմի ժողովրդական կոմիսարի տեղակալի բարձր պաշտոնը»:

Յայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից Իսակովը նշա-

նակվում է Հյուսիս-արեւմտյան ուղղությամբ գործող զորքերի հրամանատարի տեղակալ եւ ռազմական խորհրդի անդամ: Խորհրդային նավատորմի լրիվ շրջապատման եւ օդակի մեջ սեղմելու հիտլերականների փորձերը տապալվեցին: Բալթյան նավատորմը ճեղքեց-անցավ թշնամու կրակային գիծը եւ, պահպանելով կենդանի ու կրակային մարտունակության ամբողջ հզորությունը, մտավ Լենինգրադի ու Կրոնշտադտի հրետանային պաշտպանության համակարգը:

Ծովակալ Իսակովը իր մեծ փորձը միաձուլեց այդ գործողությունների եւ Լենինգրադ քաղաքի պաշտպանության ընդհանուր պլանին:

1941 թվականի հոկտեմբերի 20-ին Իսակովը Մոսկվայում նոր պաշտոն ստանձնեց: 1942-ի գարնանը Գերմանա-Ֆաշիստական զորքերի հրամանատարությունը վճռական հարվածի համար ընտրեց նոր ուղղություն՝ Ստալինգրադն ու Կովկասը: Չավթելով Կուբանը՝ հիտլերականները ձգտում էին գրավել Գրոզնու նավթային շրջանները եւ կովկասյան նախալեռները, հետագայում Բաքու եւ Անդրկովկաս խցկվելու համար: Նույն թվականի գարնանը հրամանատարությունը Իսակովին ուղարկում է այդ վճռական տեղամասը:

Այստեղ նա ղեկավարում է շտաբների աշխատանքները, որոնք ապահովում էին Սեւաստոպոլի մարտավարական ամբողջ համակարգը:

Իսակովը միաժամանակ ղեկավարում էր Ազովի ռազմական նավատորմի զործունեությունը եւ իրագործում Կովկասյան ռազմաճակատի գործառնների ու նավատորմի փոխգործողությունները:

Ահեղ վտանգի օրերին ադմիրալ Իսակովի նավատորմայինները հերոսական սիրագործություններ կատարեցին Թաման թերակղզու ափերին, Նովոռոսիյսկի մոտ եւ Կովկասյան լեռնաշղթայում:

1942 թվականի հոկտեմբերի 6-ին Գոյտխ լեռնանցքում թշնամու դեմ մղված մարտում թշնամու մեքակոծությունից ոտքից ծանր վիրավորվում է Իսակովը եւ տեղափոխվում Սոչիի ծովային հոսպիտալը: Մարտական ընկերները բոլոր ռազմաճակատներից շտապ լուր էին ուղարկում հերոսին: Լենինգրադյան եւ Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարությունները իրենց նամակներում գրում էին. «Հոգով եւ անկեղծ սրտով շուտափույթ ապաքինում ենք ցանկանում: Ձեր առողջությանը կհետեւենք ամեն ժամ: Ամուր սեղմում ենք Ձեր ձեռքը: Անկասկած դուք կապաքինվենք: Ձեր արյան դիմաց մենք հազարապատիկ վրեժ կլուծենք»:

Թբիլիսիում յոթ ամիս բուժվելուց հետո, 1943-ի մայիսին Իսակովը հենակներով վերադառնում է Մոսկվա եւ նորից անցնում ռազմա-

ծովային ուժերի ժողովուհարի առաջին տեղակալի իր պարտականությունների կատարմանը: Նա աշխատում էր նույնիսկ հոսպիտալում եղած ժամանակ: Ուսումնասիրում էր ռազմածովային նավատորմի գործողությունները, տարբեր ռազմաճակատների մարտական գործողությունները, զեկույցները, փաստաթղթերը, օպերատիվ տեղեկագրերը, նաեւ անհրաժեշտ նյութեր հավաքում հետագա իր գիտական աշխատությունների համար:

Եվ դեռեւս չկազդուրված 1943-44 թթ. նա գրում է «Ռազմածովային նավատորմը Յայրենական մեծ պատերազմում» արդիական մեծ նշանակություն ունեցող մեծածավալ աշխատությունը, որը տպագրվել է թարգմանվել է միութենական եւ արտասահմանյան մի շարք լեզուներով:

1946-50 թթ. նա դարձյալ ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարության շտաբի պետն էր եւ կոմիսարի առաջին տեղակալը:

1955թ. մայիսի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Իսակովին շնորհվեց Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում՝ նրան հանձնելով «Մարշալական աստղ» տարբերանշանը: 1958թ. դոկտոր-պրոֆեսոր Իսակովը ընտրվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1959թ.-ից՝ Լենինյան մրցանակաբաշխության կոմիտեի անդամ, 1965թ. մայիսին շնորհվում է նրան Խորհրդային Միության հերոսի կոչում:

Իսակովը հեղինակն է համաշխարհային կոմպլեքսային ատլաս հանդիսացող մեծածավալ երեք հատորանոց «Ծովային ատլաս» աշխատության: Նրա գրչին են պատկանում ռազմածովային գիտական մտքի զարգացմանը նվիրված 70-ից ավելի գիտական աշխատություններ:

Խորհրդային կառավարությունը բարձր է գնահատել նրա ծառայությունները հայրենիքի հանդեպ եւ նրա կուրծքը զարդարել Լենինի հինգ, Կարմիր դրոշի երեք, Ուշակովի առաջին աստիճանի երկու, Յայրենական պատերազմի առաջին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով եւ Խորհրդային ու արտասահմանյան մի շարք երկրների շքանշաններով եւ մեդալներով:

...Դեռեւս պատանեկան հասակից Իսակովը երազում էր տեսնել Յայաստանը: Եվ այդ երազանքը իրականություն դարձավ միայն 1953-ի հոկտեմբերին: Նրան շատ դուր եկան ամեն ինչ Երեւանում՝ հրապարակը, մատենադարանը, տուփակերտ, բազմահարկ շենքերը, ճարտարապետական այլ կառույցներ: Մատենադարանում հու-

գիչ հանդիպում տեղի ունեցավ Ա. Իսահակյանի, Ս. Սարյանի, Դ. Դեմիրճյանի հետ: Հանդիպման ժամանակ Ա. Իսահակյանն ասաց.

«Մեր գեղեցիկ Երեւանն ու նրա ոսկե աշունը Ձեզ բերին Հայաստան: Մենք միշտ հպարտացել ենք ռուս զորավարներով եւ կրկնակի ուրախ ենք, երբ այդ դյուցազունների շարքում տեսնում ենք նաեւ հայ ժողովրդի հերոս զավակ ծովակալին՝ Հովհաննես Ստեփանի Իսակովին»:

Հովհաննես (Իվան) Ստեփանի Իսակովը մահացել է հոկտեմբերի 11-ին, 1967թ. Մոսկվա քաղաքում եւ թաղված է Նովոդեւիչի գերեզմանատանը:



**ԱՐՄԵՆԱԿ ԱՐՏԵՄԻ
ԽԱՆՓԵՐՅԱՆՑ
(ԽՈՒՂՅԱԿՈՎ Ս. Ա.)**



... 1916 թվականի ամառային մի օր, ավարտելով հայկական ծխական դպրոցը, ծնողներից զրկված, 14 տարեկան Արմենակ Արտեմի Խանփերյանցը հեռանում է հայրենի Արցախի Մեծ Թաղեր գյուղից: Ճանապարհը նրան տանում է Միջին Ասիայի Մերվ քաղաքը՝ մորեղբոր մոտ: Սակայն՝ չգտնելով նրան եւ չունենալով ինքնությունը հաստատող որեւէ փաստաթուղթ, Արմենակը մնում է անապաստան, անելանելի վիճակում: Երկար դեգերումների ժամանակ, պատահաբար նա գտնում է ոմն Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովի կրթության մասին ատեստատը: Օգտագործելով այդ ատեստատը՝ նրա հիման վրա էլ հետագայում կրում է այդ անուն ազգանունը: Այստեղից ճակատագիրը նրան բերում է Բաքու քաղաքը՝ Մանթաշեի Բալախանիի նավթահանքերը, ուր աշխատում է որոշ ժամանակ: Ըստ էության, այստեղից էլ սկսվում է նրա մարտական ուղին. Բաքվի պրոլետարիատի շարքերում մասնակցում է հակահեղափոխության դեմ կռիվներին՝ պաշտպան կանգնելով Բաքվի կոմունային: Վերջինիս անկումից հետո, հեղափոխական «ժելեզնի օտրյադ»-ի շարքերում նա հասնում է Աստարիան եւ միանում Կարմիր բանակին: Խուդյակով-Խանփերյանցը այդ օրվանից էլ իր կյանքը մշտապես կապում է Կարմիր բանակի հետ: Անցնելով քաղաքացիական կռիվների բովով՝ 1919թ. նա ակտիվ մասնակցություն է ու-

նենում Ցարիցինի համար մղված մարտերին: Քաղաքացիական կռիվների ավարտումով Խուդյակով-Խանփերյանցի համար սկսվում է ուսման, ռազմական արվեստին տիրապետելու լարված ժամանակաշրջան:

Արցախցի պատանու ռազմական ընդունակություններն արժանանում են զինվորական պետերի ուշադրությանը եւ 1923թ. նրան ուղարկում են Թիֆլիս՝ հեծելազորային ռազմական դպրոց:

Դպրոցն ավարտելուց հետո նրան գործուղում են Ուկրաինայի Իզյասլավ քաղաքը, հեծյալ գնդի դասակներից մեկի հրամանատար, հետո Եսկադրոնի պետ, գնդի դպրոցի պետ, այնուհետեւ զորամասի շտաբի պետ: Նրա ռազմական ծառայությունը այստեղ տեւում է երկար՝ մինչեւ 1931-ի կեսերը:

1931-1936 թվականներին Ս. Խուդյակովը Մոսկվայի Ժուկովսկու անվան ռազմաօդային ուժերի ակադեմիայի ունկնդիր էր: Ակադեմիան ավարտելուց հետո նա պատասխանատու աշխատանքի է նշանակվում Մինսկի ռազմական օկրուգի ռազմաօդային ուժերի շտաբում: Այստեղ բարձրացվում է նրա զինվորական կոչումը փոխգնդապետից՝ գնդապետ եւ նշանակվում օկրուգի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, իսկ հետո՝ հրամանատար:

Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, որի ընթացքում ամբողջ փայլով երեւան է գալիս հայ ժողովրդի պանծալի զավակի գորավարական տաղանդը: Գերագույն գլխավոր հրամանատարությունը, նկատի ունենալով նրա կազմակերպչական ընդունակություններն ու ռազմական տաղանդը, Հայրենական մեծ պատերազմի հենց առաջին օրերից նրան գեներալ-մայորի կոչումով նշանակում է Արեւմտյան ռազմաճակատի օդային ուժերի շտաբի պետ:

1943-ի փետրվարից նա գեներալ-լեյտենանտի զինվորական կոչումով Արեւմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի առաջին բանակի, ապա ռազմաճակատի օդային ուժերի հրամանատարն էր:

Խորհրդային կառավարությունը բարձր գնահատելով Սերգեյ Խուդյակով-Խանփերյանցի անսպառ եռանդը եւ զորավարական փորձն ու հմտությունը, 1943-ի գարնանը նրան նշանակում է Խորհրդային Միության բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, շնորհելով գեներալ-գնդապետի կոչում, իսկ մեկ տարի անց, 1944-ի օգոստոսին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով շնորհվում է ավիացիայի մարշալի զինվորական բարձր կոչում:

Ռազմամոլական ճապոնիայի դեմ մղված կռիվների ժամանակ, 1945-ի օգոստոսից Ս. Խուդյակովը Հեռավորարեւելյան ռազմաճա-

կատի 12-րդ օդային բաժնակի հրամանատարն էր: Այստեղ էլ մարտերում, հատկապես ճապոնական Զվանտունյան ճանաչված բաժնակի ջախջախման գործում ցուցաբերած մարտական արվեստի եւ ռազմական տաղանդի համար, նրա ղեկավարած բաժնակը արժանանում է Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալությանը:

Ռազմաօդային գործի մեծ գիտակ, տաղանդավոր զորավար, ավիացիայի մարշալ Ս. Խուդյակովը մեծ ճանաչում ուներ նաեւ Խորհրդային երկրի սահմաններից դուրս: Նա 1945թ. փետրվարին երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարների Յալթայի կոնֆերանսում, Խորհրդային Միության ղեկավարի ռազմական գծով խորհրդականն էր:

Նույն 1945-ի փետրվարին ԱՄՆ նախագահ Ֆ. Ռուզվելտը Խորհրդային Գերագույն հրամանատարությանը հղած հուշագրում խնդրում է մարշալ Խուդյակովին հանձնարարել ԱՄՆ-ի ռազմավարական ավիացիայի՝ Պլոեշտի մոտ կատարած ռմբակոծությունների արդյունքների ստուգումը: Խորհրդային կառավարությունը համաձայնվում է, որ նշված ստուգումը կկատարի Խուդյակովը:

Ժողովրդի մեծ թշնամի, մարդակուլ Բերիան, որ շարունակ հետապնդում էր ոչնչացնում էր խորհրդային նշանավոր մարդկանց, այս անգամ էլ, 1945-ի դեկտեմբերին զրպարտչական մեղադրանք է ներկայացնում Խուդյակովին եւ անհիմն ձերբակալում նրան: Չորս տարի տեւում է հետաքննությունը: Ի վերջո, դատարանը արդարացնում է Խուդյակովին եւ վերականգնում նրա բոլոր իրավունքներն ու կոչումները: Սակայն նրան շարունակ հետապնդող Բերիան իմանալով այդ մասին, խարդախությամբ իր ձեռքն է գցում արդարացնող այդ փաստաթղթերը եւ... Արմենակ Արտեմի Խանփետրյանց-Խուդյակովը ծաղկուն հասակում, ընդամենը 49 տարեկանում զոհ է գնում հրեշի խարդավանքներին:

Ս.Ա. Խուդյակովի անունը ոսկե տառերով է գրված հայրենիքի գինված ուժերի դյուցազնագրքում: Ականավոր զորավարին եւ հայրենիքի մեծ նվիրյալին երկար ժամանակ կհիշեն հայ ժողովուրդն ու գինված ուժերը:





**ՀԱՄԱՉԱՍՊ ԽԱՉԱՏՈՒՐԻ
ԲԱԲԱԶԱՆՅԱՆ**

**ԽՍՀՄ զերագույն հորհրդի նախագահության
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին հորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում գե-
րագույն գլխավոր հրամանատարության մարտական առաջադ-
րանքները օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբե-
րած խիզախության ու հերոսության համար, շնորհել հորհրդային
Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե
աստղ» մեդալ:

Գնդապետ **Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին**

**ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ**

**ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ, 20 ապրիլի, 1944թ.:

ՀԱՄԱՉԱՍՊ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Հյուսիսային Արցախի Չարդախլու գյուղը 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայտնի դարձավ իր անվեհեր զավակների սիրանքներով: Այնտեղ է իր մանկությունն անցկացրել ԽՍՀՄ զրահատանկային ուժերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը:

Մ. Խ. Բաբաջանյանը ծնվել է 1906 թվականին, չքավոր գյուղացու ընտանիքում: Ավարտելով գյուղի միջնակարգը՝ նա 1925-ին մեկնում է Երեւան՝ ուսումը շարունակելու Մյասնիկյանի անվան ռազմական դպրոցում: Դպրոցի հրամանատարությունը մերժում է նրան փոքրահասակ եւ վտիտ լինելու պատճառով: ՀԼԿԵՄ Երեւանի քաղկոմի միջամտությամբ նրան պայմանականորեն ընդունում են դպրոցի հետեւակային բաժինը: Փորձնական մի հրաձգության ժամանակ Բաբաջանյանը բարձր արդյունքների է հասնում: Եվ դրանից հետո միայն՝ դպրոցի պետի հրամանով, պայմանական կուրսից նրան տեղափոխում են իսկական կուրսանտների շարքը: Մեկ տարի անց նա ուսումը շարունակում էր Թիֆլիսի ռազմական, հետեւակային դպրոցում եւ, որն էլ այն ավարտում է գերազանց գնահատականներով:

Նորավարտ սպան, նախ հայկական, ապա ռուսական զորամասերում դասակի, վաշտի, ապա գումարտակի հրամանատար էր: 1928 թվականին Բաբաջանյանը ընդունվում է Կոմկուսի շարքերը: Նրան ուսման են ուղարկում Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա: Ավարտելուց, 1937-ին նա նշանակվում է կորպուսի շտաբի օպերատիվ բաժնի պետ: Մասնակցում է ֆինների դեմ մղված մարտերին մոտո-մեխ գումարտակի հրամանատարի պաշտոնում, որտեղ էլ նա վիրավորվում է:

...Բաբաջանյանը Հայրենական մեծ պատերազմի մեջ մտավ Սմոլենսկում՝ 1941-ի աշնանը՝ պատերազմի թեժ պահին որպես գնդի հրամանատար: Մարտի մեջ մտնելով՝ գնդին հաջողվեց գերմանական զավթիչներին ետ մղել Ելնյա քաղաքից:

...Գեներալ Գուդերիանի տանկային բանակը նպատակ ուներ գրավել Բոյանսկը, Օրյոլ եւ Տուլա քաղաքները եւ բաց անել Մոսկվայի դռները գերմանական զորքերի առաջ: Բաբաջանյանի գունդը մեկ դիվիզիայի հետ տեղավորվեց Բոյանսկի ռազմաճակատի ձախ թելում, Գլուխով քաղաքի մոտակայքում: Նա հրաման ստացավ անցնել հարձակման: Սակայն, պարզվեց, որ գերմանացիները արա-

գաշարժ գորքերով արդեն անցել են հարձակման եւ թելից շրջափակման մեջ են առել Բաբաջանյանի զորամասերը: Դրությունը շատ ծանր էր՝ ետեւում ճահիճն էր, ձախ կողմում՝ ճահճոտ ավերով գետը: Բաբաջանյանը հրամայեց զորքին, պաշտպանական դիրքեր գրավել: Թշնամին Բաբաջանյանի գնդի վրա նետեց տեխնիկայի բոլոր տեսակները՝ օդուժ, տանկ, հրետանի, ականանետ: Սեղմվում էր օղակը: Դրությունը դառնում էր օրհասական: Լուր ստացվեց, որ թշնամին մտել է Ռիլսկ քաղաքը եւ շրջանցել Բաբաջանյանի գումարտակները: Երբ այդ պահին հարցրին Բաբաջանյանին, թե ինչ որոշում է կայացրել, նա պատասխանեց.

- Չեմ հեռանա, կկռվեմ մինչեւ վերջ:

Գերմանացիների ճնշման տակ գունդը մղվեց դեպի ճահիճը: Ծանր էր դրությունը: Գիշեր-ցերեկ ճահճի մեջ էին զինվորները, չնորացող հագուստով, հաճախ մինչեւ գոտկատեղը ջրի մեջ: Ուտելիքի պաշարը սպառվում էր: Բաբաջանյանի առողջությունը վատացել էր, սակայն նա պահպանում էր մտքի պայծառությունը: Ուղիղ նշանառությամբ խփում էին թշնամու թնդանոթները, հռնդում էին տանկերը, ինքնաթիռների անիվները, գրեթե դիպչում էին կարմիրբանակայինների կռնակին, մինչդեռ կարմիրբանակայինները՝ ունեին միայն գնդացիներ, հրացաններ ու ձեռքի նռնակներ: Դիվիզիային թույլ էր տրվել գետով անցկացնել իր ամբողջ տեխնիկան, եւ ամրապնդվել պաշտպանության նոր բնագծում: Բաբաջանյանը ետ քաշվելու հրաման տվեց: Մարդկանց հաջողվեց իրենց հետ տանել ամբողջ գույքը եւ վիրավորներին:

Համազասպ Բաբաջանյանը այդ մարտերից հետո նշանակվեց տանկային բրիգադի հրամանատար: Նրա բրիգադը 1943-ի հունիսին մարտի մեջ մտավ Կուրսկի մոտ: Այստեղ Բելգորոդ-Կուրսկ ուղղությամբ թշնամին կենտրոնացրել էր զրահապատ մեծ ուժեր. մոտ տասնինը դիվիզիա եւ օդուժի մի շարք գնդեր, մեծ քանակությամբ «Ֆերդինանտներ», «Հովազներ», «Վագրեր»:

Բաբաջանյանի տանկային բրիգադը Կուրսկից կատաղի մարտերով անցավ Վոլինո-Պոդոլսկի բարձունքները: Նա մարտեր էր մղում Կազատին քաղաքի եւ հանգուցային կայարանի համար: Կազատին քաղաքին մոտենալիս, նա հրամայեց վառել բոլոր մեքենաների, ինչպես նաեւ տանկերի, զրահապատների, թնդանոթների, ծանր ականանետների, քարշող բեռնատար ավտոների լույսերը...

Նրա տանկիստները այդ օրը ազատագրեցին Կազատին քաղաքը:

Այնուհետեւ համարձակ ռեյդ կատարելով՝ 1944-ի մարտին տանկիստներն անցան հարավային Բուզ գետը եւ սեպվեցին Պրոսկուրո-

վի գերմանական պաշտպանության մեջ: Ծանր մարտերից հետո Բաբաջանյանի բրիգադը ճեղքեց հակառակորդի պաշտպանությունը եւ սլացավ առաջ: Այդ օրը նա անցավ քառասունհինգ կիլոմետր: Երկրորդ օրը բրիգադը մտավ Չեռնով քաղաքը:

Հարձակողական այս մարտերում Բաբաջանյանը ցուցաբերեց զորք եւ մարտեր վարելու մեծ վարպետություն: Նրա գլխավորած գվարդիական տանկային զորամասը անցավ մարտական փառահեղ ուղի: Կազատին, Բերդիչեւ, Տեռնուպոլ, Պրոսկուրով եւ Չեռնով քաղաքների մոտ ջախջախիչ հարվածներ հասցրեց գերմանացիներին: Միայն 1944 թվականի մարտ ամսին երկու-երեք օրվա ընթացքում նրա զորամասը հարյուր կիլոմետր առաջ գնաց եւ ազատագրեց 45 բնակավայր: Բաբաջանյանի զորամասի հատվածում գերմանացիները թողեցին երկու հարյուրից ավելի մարտական մեքենաներ: Կազատին երկաթուղային հանգույցի համար մղված մարտերում Բաբաջանյանի տանկային զորամասը շրջապատեց թշնամու 70-րդ մոտոդիվիզիան եւ ոչնչացրեց նրա երկու գունդը: Այս մարտերում հակառակորդը տվեց հազարից ավելի սպանված, իսկ մնացած ստորաբաժանումների անձնակազմը լիովին գերի հանձնվեց:

Մարտի 21-ից մինչեւ ապրիլի 1-ը Ուկրաինական 1-ին ռազմաճակատում, Ստանիսլավ քաղաքի ուղղությամբ եւս գնդապետ Բաբաջանյանը ցուցաբերեց արիություն եւ հերոսություն: Նա այդպիսի տասնյակ ռեյդեր է կատարել Ուկրաինայի եւ Բելոռուսիայի ազատագրման համար մղված կռիվներում: Այդ մարտերի ընթացքում բրիգադը ազատագրել է վաթսուն բնակավայր, այդ թվում՝ յոթ խոշոր բնակավայր:

Բաբաջանյանը հայտնի էր որպես խիզախ ու համարձակ ռեյդերի նշանավոր կազմակերպիչ: Նա տանկային բրիգադով բազմիցս ճեղքել է թշնամու կողմից խիստ պաշտպանված տարբեր հատվածներ, մտել նրա թիկունքը:

Ռազմաճակատում նման ռեյդերը անվանել են «Բաբաջանյանական ռեյդ»:

Ուկրաինական 1-ին տանկային բանակի հրամանատար Կատուկովի, Նույն բանակի ռազմական խորհրդի անդամ Պոպելի եւ զրահատանկային զորքերի հրամանատար Նովիկովի ստորագրած բնութագրում գրված է.

...«1944թ. մարտի 21-ից մինչեւ ապրիլի 1-ը Ուկրաինական 1-ին ռազմաճակատի Ստանիսլավի ուղղությամբ բրիգադի հարձակողական մարտերի ժամանակ ընկեր Բաբաջանյանը հանդես բերեց արիություն եւ հերոսություն՝ գերմանական զավթիչների դեմ մղվող

պայքարում: Ինքն առաջինը անցավ հետախուզելու ծանծաղուտը եւ կատարեց գետանց: Գերմանական զավթիչների դեմ մղած պայքարում ցուցաբերած արիության եւ հերոսության, ինչպես նաեւ մարտերում խելացիորեն զորամասերը ղեկավարելու եւ մարտերում անձնական սխրանքների համար, ընկեր Բաբաջանյանը արժանի է Խորհրդային Միության հերոսի կոչման»:

Գերմանական զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած արիության եւ հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը 1944թ. ապրիլի 26-ի հրամանագրով գնդապետ Յամազասպ Բաբաջանյանին շնորհեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Գնդապետ Բաբաջանյանը այն սպաներից էր, որոնցից առաջինը հասավ ԽՍՀՄ-ի եւ Լեհաստանի պետական սահմանագլխին:

Բարձր հրամանատարությունը, նկատի ունենալով գնդապետ Բաբաջանյանի ռազմական փորձն ու հմտությունը, նրան 1944 թվականի օգոստոսին նշանակեց տանկային դիվիզիայի հրամանատար:

Նրա դիվիզիան 1944-ի օգոստոսի 18-ին եւ 19-ին կատաղի մարտերի մեջ մտավ Սանդոմիրի շրջանում: Երկրորդ օրվա վերջին Բաբաջանյանը ծանր վիրավորվեց կրծքից: Բժիշկների կարծիքով նրան ամեն վայրկյան մահ էր սպասում: Սակայն նա այդ ծանր վիճակում, նույնիսկ, շարունակում էր հետեւել ու ընթացք տալ դիվիզիայի հարձակողական գործողություններին:

Տասնինը օր հետո Բաբաջանյանն իր տանկային զորամասով մասնակցում էր լեհական Լոձ, Կուտնո, Տոմաշով, Վլոցլավեկ, Կոլոբաղաքների ազատագրմանը:

Լեհաստանը մաքրվեց հիտլերականներից:

Այո, զուր չէ, որ արագությունը դարձել է տանկային հարձակման աստվածը: Բաբաջանյանի տանկերը հազիվ էին հասել Օդերին, հազիվ էին տանկիստները կարողացել շունչ քաշել, երբ սկսվեց նոր հարձակումը: Բաբաջանյանը նոր առաջադրանք ստացավ: Նրա միավորումը դիմեց դեպի հյուսիս՝ օժանդակելու մարշալ Ռոկոսսովսկու հարձակվող զորքերին: Երեք անգամ տանկերը սրընթաց հարված հասցրին Կոլբերգին ու Գդինյային, երեք անգամ նրանք ճանապարհ բացեցին դեպի ծով, երեք անգամ հասան Բալթիկ ծովի ափը, Վիսլայից մինչեւ Գդինյա Բաբաջանյանը մարտերով անցավ 1500 կիլոմետր, որը ռազմական վարպետության եւ մարդկային տոկոսության ու երկաթյա նպատակասլացության ռեկորդ էր:

Բաբաջանյանն առաջանում էր դեպի Տրեպտով՝ Բեռլինի արվարձանը: Գիշերը հսկայական հրացուլք էր կանգնած Բեռլինի վրա, ցե-

րեկը սեւ ծուխը ծածկում էր գարնանային երկինքը: Բաբաջանյանի տանկիստները գնում էին գերմանական մայրաքաղաքի ավերակների միջով: Այստեղ էլ՝ 1945թ. մայիսի 2-ին տանկային աշտարակների հրաձիգները վերջին արկերն էին արձակում ռախստագի վրա:

1945 թվականի հուլիսի 11-ին Բաբաջանյանին շնորհվեց տանկային զորքերի գեներալ-մայորի զինվորական կոչում:

Գերմանիայի անձնատրոսությունից (կապիտուլացիա) հետո գեներալ-մայոր Բաբաջանյանը տարիներ շարունակ ղեկավարում էր Գերմանիայում գտնվող խորհրդային զորքերի տանկային խմբավորումը:

1948 թվականին ավարտելով Վորոշիլովի անվան գերագույն ակադեմիան՝ նա նշանակվում է տանկային մեծ միավորման շտաբի պետ, իսկ երկու տարի հետո՝ նույն տանկային բանակի հրամանատար: Նա ութ տարի ղեկավարեց այդ բանակը:

1953 թ. Բաբաջանյանին շնորհվում է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում: Այնուհետև լեգենդար զորավարին երկար ժամանակ տեսնում ենք Մերձկարպատյան զինվորական օկրուգի զորքերի հրամանատարի առաջին տեղակալի պաշտոնում:

1956 թվականին Յ. Բաբաջանյանին շնորհվեց գեներալ-գնդապետի կոչում: 1957-1967թթ. նա եղել է Օդեսայի զինվորական օկրուգի զորքերի հրամանատարը, 1967-1969թթ.՝ զրահատանկային զորքերի ակադեմիայի պետ, 1969թ.-ից՝ ԽՍՀՄ տանկային զորքերի պետ, իսկ 1975-ի ապրիլի 29-ին նրան շնորհվեց զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում:

Ճանաչված զորավարը 1950 թվականին ընտրվել է Ռուսաստանի ֆեդերացիայի, 1954-ին՝ Յայաստանի, իսկ 1962-ին՝ Մոլդավիայի Գերագույն խորհուրդների պատգամավոր:

Չրահատանկային զորքերի գլխավոր մարշալ և Խորհրդային Միության հերոս Յամագասպ Խաչատուրի Բաբաջանյանի կուրծքը մարտական ծառայությունների համար զարդարվել են Լենինի երկու, Կարմիր դրոշի չորս, Սովորովի 1-ին և 2-րդ աստիճանների, Կուտուզովի առաջին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով լեհական և արտասահմանյան այլ երկրների բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

Մեծատաղանդ զորավարը իր մահկանացուն կնքել է 1977թ. դեկտեմբերի 1-ին Մոսկվա քաղաքում: Նրա դիակը թաղված է Մոսկվայի Նովոդեվիչի գերեզմանատանը:



**ՍԵՐՁԵՅ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ
ԱԳԱՆՈՎ (ՕՅԱՆՅԱՆ)**

*Ճարտարագործական գործերի
մարշալ*

Իմանանք եւ ճանաչենք, որ, Խորհրդային Միության նշանավոր գործարարների համաստեղության մեջ Սերգեյ Քրիստափորի Ագանով-Օհանյան անուն-ազգանունով եւս մեկ հայազգի գորապետ, ճարտարագետ, մանկավարժ, տաղանդավոր կազմակերպիչ, վերջապես՝ ճարտարագիտական գործերի մարշալ ունենք, որն իր ամբողջ կյանքը նվիրաբերել է մեծ հայրենիքին:

Սերգեյ Քրիստափորի Ագանով-Օհանյանը ծնվել է 1917թ. հուլիսի 4-ին, Աստրախան քաղաքում, ծառայողի ընտանիքում: Հավաստի տեղեկությունները վկայում են, որ Սերգեյի հորական կողմի արմատները՝ Օհանյանները Արցախ աշխարհից են: Այդ մասին վկայում է Ռուսաստանի Դաշնության ռազմագիտական ակադեմիայի ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր Ա. Ե. Սարգսյանի ստացած գրավոր պատասխանը մարշալից: Նա գրում է. «Իմ հայրը հայ էր, բայց ես Նրա մասին շատ քիչ բան գիտեմ: Գիտեմ միայն, որ նա վերաբնակվել էր Աստրախան քաղաքում՝ Բաքվի կողմերից: Մայրս ազգությամբ ռուս է, հորիցս բաժանվել է, երբ ես չորս տարեկան էի, իսկ հայրս ամուսնացել է ազգությամբ ռուս մի կնոջ հետ: Դրանից հետո հայրս տեղափոխվել է Գրոզնի քաղաքը եւ այնտեղ էլ մահացել: Հայաստանում եղել էմ մի քանի անգամ՝ կարճ ժամանակով, հիմնականում՝ ծառայողական գործուղումներով»:

Աշխատանքային գործունեությունը Սերգեյը սկսել է 1935թ. Կույբիշեւի անվան Մոսկովյան էլեկտրակոմբինատում՝ նախ որպես փականագործ, ապա՝ բրիգադավար, միաժամանակ ուսում առել Մոսկովայի պետական համալսարանին առընթեր բանֆակի երեկոյան բաժանմունքում: 1938-ին ընդունվել է 1940-ին հաջողությամբ ավարտել է Մոսկովյան ռազմաճարտարագիտական ուսումնարանը եւ գործուղվել Լենինգրադյան զինվորական օկրուգ՝ 257-րդ առանձին սակրավորական դասակի հրամանատարի պաշտոնին: Այստեղ էլ մասնակցելով խորհրդա-ֆիննական պատերազմին՝ մարտական իր առաջին մկրտությունն է ստացել:

Չայրենական մեծ պատերազմի տարիներին անցել է մարտական փառավոր ուղի՝ վաշտի հրամանատարից հասնելով Կարմիր բանակի ճարտարագործական զորքերի շտաբի օպերատիվ բաժնի պետի պաշտոնին:

Պատերազմի ավարտից հետո, նա իր ծառայությունը շարունակել է ճարտարագործական զորքերի շտաբում: 1947 թվականից շարունակել է ուսումը Մոսկովայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի հեռակա բաժնում եւ ավարտել այն ոսկե մեդալով:

1952թ. ընդունվել է Գերագույն շտաբի Կ. Ե. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան եւ ավարտել փայլուն գնահատականներով՝ ստանալով բարձրագույն ռազմատեսական պատրաստություն: Չորքերում հինգ տարվա գործնական աշխատանքից հետո, ճարտարագործական զորքերի գեներալ-մայոր Ս. Ագանովը նշանակվել է ավագ դասախոս, այնուհետեւ՝ Գերագույն շտաբի ռազմական ակադեմիայի ռազմաճարտարագիտական ամբիոնի պետի տեղակալ: Ունենալով մարտական եւ աշխատանքային հարուստ փորձ՝ նա ամբիոնում աշխատելու առաջին իսկ օրերից ակտիվորեն ներգրավվել է ուսումնական եւ գիտական աշխատանքներում՝ դրսեւորելով արտասովոր ընդունակություններ, ուսումնական ծրագրերի առավել բարդ թեմաները մշակելու եւ ունկնդիրներին ուսուցանելու գործում: Նրա վարած պարապմունքները միշտ արժանացել են ակադեմիայի հրամանատարության եւ ունկնդիրների բարձր գնահատականին:

1964-ի նոյեմբերին Ս. Ագանով-Օհանյանը հաջողությամբ պաշտպանել է ռազմագիտության գծով թեկնածուական ատենախոսությունը: 1966-ին նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: Դասախոսական աշխատանքին զուգահեռ նա պատրաստել է հրատարակել է ռազմագիտական 15 աշխատություն եւ հատուկ թեմայով մեկ մենագրություն:

1967-ի հունվարին Ս. Ազանովը՝ որպես բազմակողմանիորեն պատրաստված ռազմական ճարտարագետ, նշանակվում է Գերմանիայում տեղաբաշխված Խորհրդային զորքերի ճարտարագործական զորքերի պետ, 1970թ. հունվարին՝ ԽՍՀՄ պաշտպանության Նախարարության ճարտարագործական զորքերի պետի տեղակալ:

1974-ի ապրիլին ճարտարագործական զորքերի գեներալ-լեյտենանտ Ազանովը նշանակվում է Կուլբիշեւի անվան ռազմաճարտարագիտական ակադեմիայի պետ: Այս պաշտոնում եղած ժամանակ նա մեծ ուշադրություն էր հատկացնում, հատկապես, ակադեմիայում ուսումնադաստիարակչական եւ գիտահետազոտական աշխատանքի կատարելագործմանը՝ իր փորձը շռայլորեն փոխանցելով ունկնդիրներին եւ պրոֆեսորական կազմին:

1975թ. մարտից Ս.Ք.Ազանովը 12 տարի գլխավորել է պաշտպանության Նախարարության ճարտարագործական զորքերը: Նրա ղեկավարությամբ հաջողությամբ լուծվել են ճարտարագործական զորքերի կազմակերպական կառուցվածքի հետագա զարգացման, նրանց տեխնիկական զինման մի շարք հարցեր, մշակվել են զորքերի հարձակողական եւ պաշտպանական գործողությունների ճարտարագիտական ապահովման առավել արդյունավետ եղանակներ: Սերգեյ Քրիստափորիչը մեծ ներդրում է ունեցել ճարտարագործական սպառազինության Նոր միջոցների մշակման եւ զորքերում արդեն եղածների արդիականացման գործում, ինչի համար արժանացել է Պետական մրցանակի:

Ս.Ք.Ազանովն ակտիվ մասնակցություն է ունեցել զորքերի եւ շտաբների օպերատիվ պատրաստման առավել կարելուր միջոցառումների պլանավորմանն ու անցկացմանը: Բարձր մակարդակով ղեկավարել է մարտեր եւ օպերացիաների ճարտարագործական ապահովման Նոր սկզբունքների մշակման գործընթացներ, որոնք նվիրված են հրամանատարաշտաբային զորավարություններին:

1980թ. մայիսին Նրան շնորհվել է ճարտարագործական զորքերի մարշալի կոչում:

1986թ. ապրիլին Ս.Ք.Ազանովը, լինելով Պետական հանձնաժողովի անդամ, անձամբ է ղեկավարել Չեռնոբիլի ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարի հետեւանքների վերացման աշխատանքներում ներգրավված ճարտարագործական զորամասերը:

1987թ. մարտից Ս.Ք.Ազանովն աշխատել է ԽՍՀՄ պաշտպանության Նախարարության գերագույն տեսուչների խմբի ռազմական տեսուչ-խորհրդատու:

Բոլոր նրանք, ովքեր աշխատել կամ առնչվել են Ս.Ք.Ազանովի

հետ, նրան ճանաչում էին իր հարցախույզ խելքով, ամենաբարդ հարցերում գլխավորն արագ գտնելու կարողությամբ, ընդունվող որոշումների խոր հիմնավորմամբ: Ճանաչում էին նրան որպես մեծ ռազմական ճարտարագետի, որն ուներ բարձր ռազմատեսական գիտելիքներ և մեծ գործնական փորձ, որպես մարդկանց նկատմամբ նրբազգաց, հոգատար և ուշադիր մարդու: Սերգեյ Զրիստափորի Ազանով-Օհանյանն իր մահկանացուն կնքեց 79 տարեկան հասակում՝ 1996 թվականի փետրվարի 1-ին, ծանր և երկարատև հիվանդությունից հետո:





**ՄԻԽԱՅԻԼ ԱՐՏԵՄԻ
ՊԱՐՍԵՂՈՎ**
հրետանու գեներալ-գնդապետ

**ԽՍՀՄ զերագույն հորհրդի նախագահության
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին հորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում գե-
րագույն գլխավոր հրամանատարության մարտական առաջադ-
րանքները օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբե-
րած խիզախության ու հերոսության համար, շնորհել հորհրդային
Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե
աստղ» մեդալ:

109. Կոմդիվ **Միխայիլ Արտեմի Պարսեղովին**

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 20 մարտի, 1940թ.:

հղեմն գեներալ-գնդապետ, Խորհրդային Միության հերոս Միխայիլ Պարսեղովի՝ Խորհրդային զինված ուժերը եւ հայ ժողովուրդը վառ հիշողություն եւ պահպանում նրա նկատմամբ՝ որպէս ականավոր զորահրամանատարի, մարտական մեծ ուղի անցած եւ հայրենիքի մեծ նվիրյալի:

Ծնվել է նա 1899 թվականի հուլիսի 15-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մուշադիշեն (հետագայում Կոլխոզաշեն) գյուղում: Տասնամյա պատանին, կարիքից դրոճած հեռանում է հայրենի օջախից: Երկար դեգերումներից հետո նա հայտնվում է Միջին Ասիայի Աշխաբադ քաղաքում եւ հանապազօրյա հոգսերը հոգալու համար այստեղ երկար ժամանակ ծանր բանվորական աշխատանք էր կատարում բամբակագտիչ գործարաններում եւ փայտեղենի պահեստներում:

Վրա եւ հասնում 1917-ի հեղափոխության տարիները: Մեծ դառնություններ ճաշակած պատանին 1918 թվականին կամավորագրվում է Միջին Ասիայի բասմաչների, Կասպիայում բուն դրած անգլիական զորքերի դեմ մարտերին եւ ակտիվ մասնակցություն ունենում Բուխարայի Էմիրի բանդայի ջախջախմանը: Քաղաքացիական կռիվներում նա դասակի, ապա մարտկոցի հրամանատար էր: 1918-ին ընդունված լինելով բուլշեիկյան կուսակցության շարքերում՝ 1922-ին նրան ուսման եւ ուղարկում Տաշքենտի ռազմական հրետանային ուսումնարանը, որն էլ գերազանց գնահատականներով ավարտելով՝ նշանակվում է Լենինգրադի գնդերից մեկում դասակի, ապա մարտկոցի հրամանատար:

1927-1930թթ. Պարսեղովը Կազան եւ հետո Պենզա քաղաքներում հրետանային գնդերից մեկում գումարտակի, իսկ քիչ ժամանակ անց, արդեն գնդի հրամանատար էր:

1932-36թթ. նա փայլուն գնահատականներով ավարտում է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան եւ Խորհրդային Միության Չինված ուժերում ճանաչվելով որպէս հրետանային գործի տաղանդավոր մասնագետներից մեկը՝ նրան նշանակում են Լենինգրադի ռազմական օկրուգի հրետանու հրամանատար:

1939-1940թթ. Միխայիլ Պարսեղովը սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում 7-րդ բանակի հրետանու հրամանատարն էր: Նրա գլխավորած հրետանու զորամասերը այդ մարտերում իրենց հուժկու հարվածներով մեծ դեր խաղացին մարտի ելքի վճռման համար: Այն տարիներին հրատարակվող «Խիզախներ» ժողովածուի համարներից մեկում կարդում ենք. «...Հրանոթները շարժվեցին: Կոմիզ

Պարսեղովի ներկայությունից խրախուսված, հրետանավորները տասնապատկեցին իրենց ջանքերը եւ շուտով հրաձգային դիվիզիան ստացավ հրետանու հզոր օգնությունը: Այս մարտում հաղթեցին կոմդիվի համառությունն ու հաստատակամությունը: Ոչ ճահիճները, ոչ անտառը եւ ոչ էլ գրանիտե ժայռ-ամրությունները չէին կարող կասեցնել մեր հրետանուն: «Մաններիեյմի գիծը» ճեղքված էր...»:

ԽՍՀՄ Չերագույն խորհրդի նախագահությունը բարձր գնահատելով կոմդիվ Միխայիլ Պարսեղովի՝ մարտը ղեկավարելու հմտությունն ու անձնական խիզախությունն, իր 1940թ. մարտի 21-ի հրամանագրով նրան շնորհեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Իսկ Ժողկոմխորհուրդի կողմից նրան շնորհվեց հրետանու գեներալ-լեյտենանտի զինվորական աստիճան:

Միխայիլ Պարսեղով զորավարի կազմակերպչական ընդունակությունները, մարտը վարելու ունակությունները եւ մարտավարական հզոր սխրանքն ավելի ուժեղ դրսևորվեցին, հատկապես, Հայրենական մեծ պատերազմի մարտերում: Պատերազմի հենց առաջին օրերից Միխայիլ Պարսեղովը Հարավ-արեւելյան, ապա Հարավ-արեւմտյան ուղղության ռազմաճակատների հրետանու հրամանատարն էր:

1942թ. սկզբին Բոյանսկի ռազմաճակատի եւ Կուրսկի ուղղությամբ մարտնչող 40-րդ բանակի հրամանատարն էր:

Հաշվի առնելով Արեւելքից ճապոնիայի վտանգը՝ Պարսեղովը նշանակվում է Հեռավոր-արեւելյան 2-րդ ռազմաճակատի հրամանատար (Սախալինում): Երեք տարվա ընթացքում նա այստեղ վիթխարի աշխատանք է կատարում Խորհրդային բանակի հրետանային զորամիավորումների եւ հրետանավորների մարտունակությունը բարձրացնելու գործում: Եվ երբ սկսվեց պատերազմը ճապոնիայի դեմ, գեներալ-լեյտենանտ Մ. Պարսեղովի գլխավորած ռազմաճակատի հրետանավորները պատվով լուծեցին իրենց առջեւ դրված մարտական դժվար խնդիրը, ինչի համար էլ Չերագույն գլխավոր հրամանատարի 1945թ. օգոստոսի 23-ի հրամանով ճապոնական ռազմամուլների եւ Մանջուրիայում ու Կորեայում մղված կռիվներում ավելի աչքի ընկած զորահրամանատարների շարքերում նշեց նաեւ մեր հայրենակցի անունը:

Այդ մարտերում ցուցաբերած մարտական աչքի ընկած ծառայությունների համար Խորհրդային կառավարությունը գեներալ Պարսեղովի կրծքին, Լենինի երեք, Կարմիր դրոշի չորս շքանշանների եւ մարտական բազմաթիվ մեդալների շարքում, ավելացրեց նաեւ Սովորովի առաջին աստիճանի շքանշանը՝ շնորհելով նրան հրետանու

գեներալ-գնդապետի կոչում*:

Հայրենական պատերազմի հաղթանակից հետո՝ Պարսեղովը ավարտում է Խորհրդային բանակի Ռազմական բարձրագույն ակադեմիային կից ակադեմիական դասընթացը եւ նշանակվում Հյուսիսային զինվորական օկրուգի հրետանու հրամանատար:

Վերջին տասը տարիներին նա հանդիսանում էր Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու հրամանատարը: Այստեղ էլ նա ռազմական իր հարուստ գիտելիքները, ուժն ու անսպառ եռանդը նվիրաբերեց հրետանու եւ հրթիռային զորքերի ռազմական ուսուցմանն ու մարտական պատրաստականության գործին:

Այստեղ էլ՝ կարճատեւ, սակայն ծանր հիվանդությունից հետո նա 1964-ի ապրիլի 27-ին կնքում է իր մահկանացուն եւ նրա դին ամփոփվում է Լենինգրադյան Բոգոսլավսկի գերեզմանատանը:



* «Խորհրդային Միության հայ գործիչները», Արմո Մալխասյան, Հայկական ԽՍՀ պետական հրատարակչություն, Երեւան, 1963, էջ 236:



**ՆԵԼՍՈՆ ԳԵՎՈՐԳԻ
ՍՏԵՓԱՆՅԱՆ**

**ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Ռազմածովային նավատորմի պետկազմին խորհրդային Միության
հերոսի կոչում շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն
կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար, շնորհել խորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ռուկե աստղ» մեդալ:

14. Կապիտան **Նելսոն Գեորգի Ստեփանյանին:**

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 23 հոկտեմբերի 1942թ.:

ՄԵՐ ԱՆՎԵՅԵՐ ԳՐՈՋԱՅԻՆԸ

Նելսոն Գելորգի Ստեփանյանը ծնվել է 1913 թվականին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Մեկուկես տարեկան էր նա, երբ նրանց ընտանիքը տեղափոխվեց քաղաք Երեւան եւ մշտական բնակություն հաստատեց այնտեղ:

Երեւանում ավարտում է Մաքսիմ Գորկու անվան յոթնամյա դպրոցը: Պիոներ Նելսոնը դեռեւս դպրոցական տարիներից հրապուրվում էր կապույտ երկնքով, պատրաստում էր ինքնաթիռի մոդելներ, երկար-երկար մտովի սավառնում ու դառնում նրա սիրահարը: Այդ սերն էլ հետագայում նրան տարավ իր նախասիրած ճանապարհով: 1927 թվականին նրան ուղարկում են Բաքու քաղաքը՝ Օրջոնիկիձեի անվան Անդրկովկասյան հետեւակային դպրոցում սովորելու: Բայց, հետեւակը նրա տարերքը չէր եւ չէր կարողանում հաշտվել իր այդ վիճակի հետ: Նրա երազանքն օդաչու դառնալն էր: Եվ, ահա 1932 թվականին իրականանում է Նելսոնի իղձը: Լինելով Լեռնինյան կոմերիտմիության անդամ, ԼԿԵՄ կազմակերպության միջնորդությամբ, Ադրբեջանի Կ(բ)Կ կենտկոմը նրան ուղարկում է Բատայսկ քաղաքում գործող քաղաքացիական օդաչուների դպրոցը, որն էլ գերազանց գնահատականներով ավարտելուց, նրան թողնում են դպրոցում՝ որպես օդաչու-հրահանգիչ: Մինչեւ 1938 թվականը նա իրեն նվիրում է քաղաքացիական ավիացիային՝ որպես հրահանգիչ-օդաչու: Նա ակտիվ մասնակցություն է ունենում օդաչուական կադրեր պատրաստելու գործում՝ միաժամանակ անձամբ կատարելով հազարավոր կիլոմետրի թռիչքներ Խորհրդային Միության կապույտ տարածքներում:

1938 թվականին Նելսոն Ստեփանյանը Միներալնիե Վոդիի բարձր թռիչքային դասընթացներում էր, որտեղ էլ նա որպես գերազանց սավառնորդ հռչակվեց:

Ահա այդպիսին էր Նելսոն Ստեփանյանի անցած ուղին, երբ պայթեց Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը: Պատերազմի հենց երկրորդ օրը՝ հունիսի 23-ին կամավորագրվում է գործող բանակին եւ տեղափոխվում Եյսկ քաղաքը: Այդ մասին հարազատներին գրած իր մի նամակում գրում է.

- «...Իմ տեղը հայրենիքի պաշտպանների առաջին շարքերում է... Զանի դեռ բաբախում է սիրտս, իմ սրբազան պարտքն եմ համարում՝ մինչեւ արյանս վերջին կաթիլը պաշտպանել իմ սիրելի հայրենիքը, մեր հրաշալի խորհրդային ժողովուրդը, մեր ծաղկած քաղաք-

ներն ու գյուղերը» («Գիրք հերոսների մասին», Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երեւան, 1964, էջ 135): Եվ Նելսոնը պատվով կատարեց իր խոսքը: Մարտնչեց ևս մինչեւ կյանքի վերջին պահը եւ դարձավ լայն ժողովրդականություն վայելող սիրելի հերոսներից մեկը:

Եյսկում ռազմական ինքնաթիռների վրա մի քանի օր վարժություններ կատարելուց հետո, գործուղվում է Լենինգրադի ռազմաճակատ եւ Կարմրադրոշ Բալթիական ռազմածովային նավատորմում նշանակվում որպես գրոհային ավիացիայի օդաչու: Այդ ժամանակից սկսած մինչեւ 1944-ի դեկտեմբերը Նելսոնը ակտիվորեն մասնակցում է Լենինգրադի, Մերձբալթիկայի, Օդեսայի, Սեվաստոպոլի, եւ Կովկասի հերոսական պաշտպանության ու ազատագրական ճակատամարտերին: Ինչպես անհատորեն, այնպես էլ իր ղեկավարած գրոհային ավիացիայի ստորաբաժանումներով, ևս անընդհատ ռմբագրոհային հարվածներ է հասցնում թշնամուն՝ ծովում, օդում եւ ցամաքի վրա:

Նելսոնը թշնամու հետ առաջին անգամ դեմ առ դեմ հանդիպում է Հարավարեւմտյան ռազմաճակատում: Մեր հայրենիքի համար արտակարգ ծանր՝ 1941 թվականի ամռան օրերն էին... Մինչեւ ատամները գինված ֆաշիստական հրոսակները՝ ավերելով ու հրի մատնելով Խորհրդային Ուկրաինայի շեն քաղաքներն ու գյուղերը, բնաջնջելով ժողովրդին, սեւ ամպի նման շարժվում էին դեպի Դնեպր: Մահվան օղակի մեջ էին առել Օդեսան, որի պաշտպանները անօրինակ հերոսությամբ դիմադրում էին թշնամու գերազանցող ուժերի ճնշմանը:

Եվ ահա այդ օրերին Օդեսայի պարզ երկնականարի վրա երեւում է կարմրադրոշ բալթիական նավատորմից օգնության ուղարկված ԻԼ-2 գրոհային օդանավերի Եսկադրիլիան, որի աջ թեւում թռչում էր կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանը: Թշնամին գենիթային հրանոթներից մրրկային կրակի տակ է առնում նրանց: Նելսոնը, առանց շփոթվելու, ճեղքելով չորս կողմից պայթող արկերի ամպուրը, կայծակի արագությամբ խոյանում է ցած՝ թշնամու դիրքերի վրա եւ ընկերների հետ միասին հիտլերականների գլխին թափում ամբողջ մահաբեր բեռը:

Գրոհայինները վայրասլաց մի քանի թռիչքներով, գնդացրային շեշտակի կրակահերթերով «խուզում» են նաեւ դեպի Օդեսա շարժվող թշնամու հեծելազորը: Նելսոնը այստեղ ոչնչացնում է ավելի քան 50 ֆաշիստական զինվոր ու սպա եւ մեկ գեներալ: Այնուհետեւ նրանք մարտական թռիչքներ են կատարում Նիկոլաեւի, Կախովկա-

յի, Չապորոժեի, Պոլտավայի շրջաններում, ոչնչացնում թշնամու 900-ից ավելի զինվոր ու սպա, որից 200-ը՝ Նելսոնը:

...1941-ի սեպտեմբերին Նելսոնը ոտքից ծանր վիրավորվում եւ ընկնում է թշնամու կողմից գրավված մի տարածք: Ուկրաինական պարտիզանները գտնում եւ օգնում են նրան՝ անցնելու ռազմաճակատի գիծը եւ հասնելու Խարկովի հոսպիտալը: Այստեղ կարճատեւ բուժում ստանալուց հետո, նա վերադառնում է Կարմրադրոշ Բալթիական նավատորմը: Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակամիջոցում օդակի 2-3 ինքնաթիռներից բաղկացած խմբերով, քսան հաջող թռիչք է կատարում նա, ոչնչացնելով թշնամու տեխնիկան եւ կենդանի ուժը, ինչի համար էլ 1941-ի նոյեմբերի 24-ին պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով, որը ապագա հերոսի առաջին մարտական շքանշանն էր: Դեկտեմբերին Նելսոնի եւ նրա խմբի մարտական թռիչքների հաշիվը եռապատկվում է:

- «Նելսոնի տարերքը ծովային մարտերն էին: Ես տեսնում էի, թե ինչպես Լենինգրադի մատույցներում եւ Ֆիննական ծովածոցում շրջափակման մեջ գտնվող գերմանական նավերն ու նավաքարավանները, որոնք այդ օրերին ուժեղացնում էին սպառազինության ու զորքերի տեղափոխումները, հանգիստ ու փրկություն չունեին Նելսոնի ու նրա խմբի արկերից ու ռումբերից», - այսպես է Նելսոնի մասին գրում Խորհրդային Միության ծովակալ Յ. Իսակովը:

Այդ մարտերում ցուցաբերած արիության համար 1942-ի հունիսի 9-ին Ն. Ստեփանյանը պարգևատրվում է Լենինի, 12 օր անց՝ Կարմիր դրոշի երկրորդ շքանշաններով, իսկ հոկտեմբերի 23-ին հրապարակվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը, որով Նելսոն Ստեփանյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում: Ն. Ստեփանյանը ոգեւորված լինելով այդ կոչումից, իրեն ավելի է պարտավորված զգում: Այդ մասին են վկայում նրա հետագա հերոսական գործողությունները: Մինչեւ 1944-ի օգոստոսի այն չարամիտ 18-ի օրը, Նելսոնը անձամբ կատարել է 239 մարտական թռիչք, ջրասույզ անելով տարբեր տիպի 13 նավ, ոչնչացնելով նաեւ 80 տանկ, 600 ավտոմեքենա, 140 դաշտային եւ գեներալային հրանոթ, 130 գնդացրային կետ, 40 երկաթուղային վագոն, մեկ շոգեքարշ, 4 գետանցուղի, 27 տարբեր տիպի ինքնաթիռներ, մինչեւ 5000 ֆաշիստական զինվոր ու սպա: Ռազմական օբյեկտներում առաջ էր բերել ավելի քան 150 պայթյուն եւ հրդեհ: Իսկ նրա ղեկավարած Կարմրադրոշ «Ֆեոդոսյան» ավիոգունդը, որը 1944-ի ապրիլի 12-ից կատարել էր 1454 մարտական թռիչք, ոչնչացրել է 53 տարբեր տիպի մարտական նավ եւ ավելի քան 4000 ֆաշիստական

զինվոր ու սպա:

Կարմրադրոշ Բալթյան Նավատորմի ռազմաօդային ուժերի 11-րդ գրոհային ավիացիոն դիվիզիայի հրամանատարությունը 1944-ի օգոստոսի 20-ին Կարմրադրոշ 47-րդ գրոհային ավիացիայի հրամանատար Նելսոն Ստեփանյանին ներկայացնում է Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման: Սակայն, Բալթյան Նավատորմի մրրկահավ կոչումին արժանացած Նելսոնը չապրեց մինչև Գերագույն Խորհրդի հրամանագրի հրապարակումը: Նա վերջին անգամ թռիչք կատարեց 1944-ի դեկտեմբերի 14-ին: Մառախլապատ այդ օրը, նա առաջադրանք ստանալով, իր մի խումբ օդաչուներով թռավ դեպի Լիբավայի ծովախորշը: Այստեղ կուտակված էին հիտլերական բանակի 30 դիվիզիաների տրանսպորտային եւ ռազմական Նավերը: Հիտլերյան բանակի հրամանատարությունը փորձում էր Մերձբալթիական առաջին ռազմաճակատի մեր զորքերի կողմից մահվան օղակի մեջ առած իր Նավերը փախցնել: Հիտլերականները մեր գրոհիչների դեմ դուրս էին բերել շուրջ 80 կործանիչներ եւ մրրկալի կրակ բացել բոլոր Նավերից ու առափնյա զենիթային հրանոթներից: Նելսոնը գլխավորում էր առաջատար գրոհիչների խումբը: Թշնամին իր կրակի ամբողջ հարվածը կենտրոնացնում է խմբի դեմ: Մարտը թույլ առ թույլ կատարի բնույթ է ընդունում: Հակառակորդի կործանիչներով շրջապատված Նելսոնը չի նահանջում, շարունակ գրոհելով ճանապարհ է հարթում իր գրոհայինների համար: Ահա նա ցած է գցում թշնամու մեկ կործանիչ, սակայն նույն պահին զենիթային արկի ուղիղ հարվածից պայթում է նրա մեքենայի բենզինի բաքը: Կրակի ու ծխի մեջ կորած, նա իր բոցավառված ինքնաթիռով մխրճվում է թշնամու Նավախմբի մեջ, իր ինքնաթիռի պայթյունով նոր վնասներ հասցնելով հակառակորդի Նավերին եւ ապա սուզվում Բալթիկ ծովի ջրերում: Եվ, չնայած մեծ զոհերի գնով, այնուամենայնիվ մեր գրոհայինները հասնում են իրենց նպատակին. այն, ինչին ձգտում էր ֆաշիստական կողմը, իհարկե, չհաջողվեց:

Կարճ կյանք ունեցավ Նելսոն Ստեփանյանը՝ ընդամենը 31 տարի: Սակայն այդ «Կարճ»-ը այնպիսի հզոր բովանդակություն ունեցավ, որ հավասարագոր է անմահության:

- «Պարզ ու համեստ, բոլորի կողմից սիրված, բոլորի ու յուրաքանչյուրիս համար հայր, ուսուցիչ, բարեկամ, հրամանատար էր Նելսոնը: Նրա մահը ցնցեց մեզ՝ զինակիցներին: Այդ չարաբաստիկ օրը, երբ Նելսոն Գեւորգովիչը չվերադարձավ մարտից, մենք բոլորս լալիս էինք անընդհատ...», - այդպես էին Նելսոնի ծնողներին ուղարկած իրենց նամակում գրել նրա զինակիցներ՝ Խորհրդային Միու-

թյան հերոսներ Ֆոկինը, Լազարեւը, Կլիմովը, Սկաւելը, Պոպովը, Ուդալցովը եւ ուրիշներ:

1945-ի մայիսի 6-ին ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Նելսոն Ստեփանյանին հետմահու շնորհվում է Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում: Այդ հրամանագրում ասված է. «Պերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար, որն իրավունք է տալիս ստանալու Խորհրդային Միության հերոսի կոչում, Խորհրդային Միության հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Պելոբգի Ստեփանյանին պարգևատրել «Ոսկե աստղ» երկրորդ մեդալով եւ նրա բրոնզե կիսանդրին կանգնեցնել պատվանդանի վրա պարգևատրվածի ծննդավայրում»:

Նելսոնի բրոնզե հուշարձան-կիսանդրիներ են կանգնեցվել Երեւան եւ Շուշի քաղաքներում, նրա անունով են կոչվել փողոցներ, ուսումնական հաստատություններ: Նրա մասին բազմաթիվ պոեմներ, պատմվածքներ, բանաստեղծություններ են գրել գրողները եւ շարունակվում են գրվել նաեւ այսօր: Այս օրերին նրա հուշարձան-կոթողն է տեղադրվել Ստեփանակերտ քաղաքում՝ հերոսի անունը կրող զբոսայգում: Այսպես ժողովուրդը հավերժացնում է իր արժանավոր զավակի՝ Նելսոն Ստեփանյանի անունն ու պայծառ հիշատակը:



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ



**ԱՇՈՏ ԶՈՒՄՇՈՒՐԻ
ԳԱՍՊԱՐՅԱՆ**

**ԽՍՀՄ ՓԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Հեռավոր ավիացիայի սպայական կազմին խորհրդային
Միության հերոսի կոչում շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

Մայրը **Աշոտ Զումշուրի Կասպարովին:**

**ԽՍՀՄ Փերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Ս. ԿԱԼԻՆԻՆ
ԽՍՀՄ Փերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ, 5 նոյեմբերի 1944թ.:

ԱՆԿԵՅԵՐ ՕՂԱԶՈՒ ԵՎ ՊԱՐՏԻՉԱՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑԸ

Խոսքը հարենիքի հանդեպ իր պարտքը պատվով կատարած ծննդով դարաբաղցի, Խորհրդային բանակի հեռավոր գործողության օդաչու-պարտիզան Աշոտ Ջումշուդի Գասպարյան-Կասպարովի մասին է: Մեր հայրենակիցը գործող բանակում է եղել Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում: Նրա անունը հայտնի էր ոչ միայն իր զորամասում, այլև շատ ավելի հեռու զորամասերում եւ բազմաթիվ պարտիզանական ջոկատներում:

Աշոտ Ջումշուդի Կասպարովը ծնվել է 1909 թվականին Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Դուդուկչի գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Թերի միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում: Տնտեսական հոգսերից հարկադրված, իր հանապազօրյա կարիքները հոգալու նպատակով, նա միաժամանակ բատրակություն է արել տեղի հարուստների մոտ: 1926 թվականից աշխատանք է փնտրել Բաքու քաղաքում եւ մինչեւ 1931 թվականը սեւագործ բանվորի աշխատանք կատարել տարբեր տեղեր:

1931 թվականին Աշոտը զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության՝ Խորհրդային բանակի շարքերում: Չինվորական սկզբնական ուսումնառությունը նա ստանում է Բաքվի Օրջոնիկիձեի անվան հետեւակային դպրոցում, որտեղ էլ 1932 թվականին ընդունվում է Կոմունիստական կուսակցության շարքերը: Այստեղից էլ նրան ուսման են ուղարկում Օրենբուրգի օդաչուական դպրոցը, որն էլ ավարտում է 1935 թվականին: Այնուհետեւ, Խարկովում, ապա Լենինգրադի մարզում նա կատարելագործվում եւ թռիչքային վարպետություն է ձեռք բերում՝ խորանալով հատկապես շտուրմանի մասնագիտության մեջ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից Աշոտ Կասպարովը հայտնվում է ահեղ եւ փոթորկալից մարտերի մեջ: Հաջողությամբ իրականացնում էր զորամասի հրամանատարությունից ստացած հանձնարարությունները: Նա իր ինքնաթիռով ռմբակոծում ու ջախջախում էր հակառակորդի կենդանի ուժն ու ռազմական տեխնիկան, գետնանցումները եւ խանգարում նրա առաջխաղացմանը: Աննահանջ մասնակցություն է ունեցել Կալինինի, Վոլոգդայի, Լենինգրադի, Բելոռուսական առաջին, երկրորդ եւ երրորդ, Արեւմտյան ուղղության մի շարք այլ ռազմաճակատների մարտական գործողություններին: Բազմաթիվ հերոսական սխրագործություններ են

գրանցված անվախ բազեի մարտական տարեգրության մեջ: Առանձնապես ակնառու էին նրա հեռավոր գործողության թռիչքները:

Ահա որոշ դրվագներ մեր քաջարի օդաչուի մարտական կյանքից:

Պատերազմի առաջին ամիսներն էին: Կապիտան Աշոտ Կասպարովը 7-րդ ավիգնդում ինքնաթիռի շտուրման էր: Ինքնաթիռի անձնակազմն առաջադրանք է ստանում մրբակոծել եւ ոչնչացնել հակառակորդի առաջ շարժվող տանկերի մի խումբ: Չնայած հիտլերականների հրետանային ուժեղ կրակին, ինքնաթիռը դուրս է գալիս նպատակակետի վրա եւ թափում առաջին ռումբերը: Թշնամու արկերը պայթում էին ինքնաթիռի մոտ եւ լուսավորում նրան: Այնուամենայնիվ ինքնաթիռը կարողանում է վեց անգամ հայտնվել տանկային շարասյան վրա եւ թափել ռումբերի ամբողջ բեռը: Խնդրի հաջող կատարման մասին են վկայում ուժեղ պայթյուններն ու հրդեհները:

Մի այլ անգամ ինքնաթիռի անձնակազմին առաջադրանք է տրվում մրբահարել Բոլխով քաղաքից դեպի Օրյոլ շարժվող գերմանական մոտոշարասյունը: Օդերեւութաբանական աննպաստ պայմանները եւ թշնամու զենիթային հրետանու ուժեղ դիմադրությունը չկարողացան խանգարել ինքնաթիռին՝ հասնելու նպատակակետին: Նետած ռումբերի պայթյունները հակառակորդի մոտոշարասյան մեջ առաջացրին մեծ հրդեհ, որը երկար ժամանակ երեւում էր բավական հեռվից եւ ուղեցույց ծառայում մեր մյուս ինքնաթիռներին՝ թշնամուն հարվածելու համար:

Կասպարովը առաջնակարգ շտուրման լինելուց բացի, նաեւ կատարելապես տիրապետում էր լուսանկարելու գործին: Եվ այդ հանգամանքը շատ էր օգնում նրան, որպեսզի թռիչքների ժամանակ նկարահանի հակառակորդի կենդանի ուժի ու ռազմական տեխնիկայի կուտակումներն ու տեղաշարժերը, որպեսզի հաջորդ թռիչքների ժամանակ ունենան կատարյալ տեղեկություն առաջադրանքը արագ եւ ամբողջական կատարելու համար: Այս տեսակետից նրա ղեկավարած ինքնաթիռը մի քանի տասնյակ թռիչք կատարելով հակառակորդի ստրատեգիական կետերը մրբակոծելու հանձնարարությամբ, միաժամանակ լուսանկարելով մի շարք օբյեկտներ, որոնք էլ հետագայում դարձան Աշոտի խմբի մրբահարության թիրախը: Նույնատիպ առաջադրանքով Աշոտ Կասպարովի ինքնաթիռը մի շարք թռիչքներ է կատարել Լվով քաղաքի երկաթուղային հանգույցի ուղղությամբ: Դուրս գալով կայարանի վրա, Կասպարովը նկատեց կայարանում կանգնած հինգ երկաթուղային էշելոն եւ սկսեց նկարահանել: Մինչեւ առաջին ռումբերի ընկնելը հիտլերականները կենդա-

նության ոչ մի նշան ցույց չէին տալիս: Առաջին ռումբերի պայթյունից հետո միայն սկսեցին գործել հակառակորդի լուսարձակները եւ գննիթային հրետանին: Չնայած ինքնաթիռի մոտ արկերի պայթյուններին եւ ուժեղ լուսավորվածությանը, անձնակազմը արհամարհելով մահվան սպառնալիքը, շարունակում էր կատարել առաջադրանքը: Ինքնաթիռը կրակի ու լույսի գոտուց դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ բոլոր ռումբերն արդեն նետված էին նպատակակետի վրա: Յետագա լուսանկարները հաստատեցին, որ առաջադրանքը կատարված է գերազանց: Ինչպես հետագայում պարզեց հետախուզությունը, այնտեղ պայթեցվել էր ռազմամթերքի խոշոր պահեստ: Մի ուրիշ անգամ՝ Օրյոլում մի գիշեր Կասպարովը հաջողությամբ լուսանկարել էր մեր ինքնաթիռների մի քանի հարյուր թռիչքների մբակոծության արդյունքները: Այսպիսի մարտական առաջադրանքների անթերի կատարման համար էլ Կասպարովը արժանացել է մարտական Կարմիր դրոշի շքանշանի:

Սկզբում իր ղեկավարած ինքնաթիռի, իսկ 1942 թվականի հուլիսից սկսած, օդակի շտուրման Կասպարովը հաջողությամբ մբակոծել է Ֆաշիստական զորքի անցումները Ղնեպր գետի վրա: Նա մեծ հաջողությամբ մբակոծեց Նաեւ թշնամու տեխնիկայի ու զորքերի կուտակումները Վյազմա, Օրյոլ, Սմոլենսկ, Բրյանսկ, Վիտեբսկ, Գոմել, Մինսկ եւ մի շարք քաղաքների երկաթուղային հանգույցներում եւ այլ կարեւոր հենակետերում:

Արդեն 1943-ի ապրիլից Կասպարովը Եսկադրիլիայի շտուրման էր:

«Կասպարովի մարտական թռիչքները,- գրել է գնդի հրամանատարությունը,-աչքի են ընկնում մեծ արդյունավետությամբ ու ճշգրտությամբ, որի մասին վկայում են հրկիզված տանկերի կույտերը, էշելոնները, հազարավոր հիտլերականների դիակները, պայթեցված կամուրջները եւ այրվող ինքնաթիռների վառ ջահերը» («Գիրք հերոսների մասին», Չայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երեւան, 1964, էջ 150):

Յեռավոր գործողության 31-րդ Կրասնոսելսկյան կարմրադրոշ ավիագնդի գվարդիական Եսկադրիլիաներից մեկը, որի շտուրմանն էր 1944 թվականի երկրորդ կեսից սկսած՝ մայրո Կասպարովը, բազմիցս մբակոծել է թշնամու կարեւոր ռազմավարական մի շարք հանգույցներ, ռազմական ուժի կուտակումներ, եւ արդյունաբերական կենտրոններ՝ հենց թշնամու տերիտորիայում: Եսկադրիլիան այդպիսի թռիչքներ կատարել է Նաեւ դեպի Յելսինկի, Կոտկա, Տիլգիտ, Ինստերբուրգ քաղաքները՝ Նյութական եւ տեխնիկական մեծ

վնաս պատճառելով հակառակորդին: Միայն Բելիսի ռմբակոծությանը Կասպարովը մասնակցել է 16 անգամ:

Մայրո Կասպարովը ճանաչված էր ոչ միայն գնդում: Նրան գիտեին Ուկրաինայում եւ Բելոռուսիայում պայքարող բազմաթիվ պարտիզաններ եւ պարտիզանական խմբեր, ինչպես նաեւ այն ժամանակները ամբողջ միությունում ճանաչված Կովպակի, Վերշիգորայի, Կոզլովի, Սաբուրովի եւ մյուսների հրամանատարությամբ գործող ջոկատները, որոնց մոտ նա թռիչքներ էր կատարում՝ ռազմամթերք մատակարարելու եւ այլ օգնություն ցույց տալու համար: 1942-ի փետրվարյան մի գիշեր նրա ինքնաթիռը վտանգավոր վայրեջք է կատարում Զերվոնոյե լճի (Բելոռուսական Մոզիր քաղաքի մոտ) սամույցի վրա եւ տեղափոխում պարտիզանների կողմից գերի վերցրած գերմանական երկու գեներալ: Մոտ ութ տասնյակ թռիչքների ընթացքում, որից 28 անգամ իջել է պարտիզանների կողմից բացված վայրեջքի հրապարակներում, շտուրման Կասպարովի ինքնաթիռը ժողովրդական վրիժառուններին է հասցրել ավելի քան 90 տոննա ռազմամթերք եւ այլ անհրաժեշտ նյութեր, թշնամու խոր թիկունքից փոխադրել է 120 վիրավոր պարտիզան եւ երեխա, փրկելով նրանցից շատերի կյանքը, ինչպես նաեւ այնտեղ է իջեցրել պարտիզանական շարժման ղեկավարների:

Շտուրման, իրավամբ՝ նաեւ պարտիզան, Կասպարովին Մինսկի առաջին պարտիզանական բրիգադայի հրամանատարությունը գրանցել է պատվավոր պարտիզանների ցուցակում, իսկ պարտիզանական շարժման Ուկրաինական շտաբը նրան պարգևատրել է Հայրենական պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի մեդալով:

Հայրենական պատերազմի ընթացքում Աշոտ Կասպարովի անձնական հաշվում գրանցվել է ավելի քան 300, հիմնականում՝ գիշերային, մարտական թռիչք, որը կազմում է 2650 ժամ: Նա թշնամու վրա նետել է 256 տոննա մահաբեր ռումբ՝ ոչնչացնելով բազմաթիվ հիտլերականների եւ հսկայական ռազմական տեխնիկա:

Բարձր գնահատելով Եսկադրիլիայի շտուրման, մայրո Աշոտ Կասպարովի մարտական ծառայությունները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1944թ. նոյեմբերի 5-ի հրամանագրով նրան շնորհում է Խորհրդային Միության հերոսի կոչում: Գվարդիայի մայրո Կասպարովը պարգևատրվել է Լենինի, Կարմիր աստղի, Կարմիր դրոշի երկու, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով, Հերոսի «Ոսկե աստղ» եւ մի շարք այլ մեդալներով ու կառավարական պարգևներով:

Կասպարովի հետ միասին մարտերում աչքի են ընկել Նաեւ Լրա ինքնաթիռի անձնակազմի մյուս անդամները. ինքնաթիռի հրամանատար Նեդրեզովը, օդաչու Վ. Մ. Լոպուխովը, բորտմեխանիկ Ի. Կ. Սամիշեւը, ռադիստ Դ. Ի. Տիմոշկինը, հրածիգ Ա. Գ. Մեշկովը, որոնք Նույնպես արժանացել են կառավարական բարձրագույն պարգեւների:

Հայրենիքի համար իր պարտքը պատվով կատարած կոմունիստ Կասպարովը պատերազմի ավարտից հետո, զորացրվելով բանակից, վերադառնում է հայրենի գյուղ, որտեղ երկար տարիներ աշխատում է որպես կոլտնտեսության վարչության նախագահ: Տարբեր ժամանակներ նա կատարել է նաեւ շրջանային մասշտաբի ղեկավար աշխատանքներ: Մի բան ակնհայտ է՝ որտեղ էլ աշխատել կամ գործել է նա՝ ամեն ինչ կատարել է հայրենիքի, ժողովրդի հանդեպ անմնացորդ նվիրումով, սիրով եւ համարձակությամբ: Եվ որ այդ ամբողջը վառ օրինակ է մեր ներկա եւ ապագա սերունդների համար:





**ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ
ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ԽՍՀՄ զերագույն հորհրդի նախագահության
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին հորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատամարտում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել հորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

5. Գվարդիայի ավագ լեյտենանտ **Սուրեն Գրիգորի Պետրոսյանին**
ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 24 ապրիլի 1944թ.:

ՅԵՐՈՍ ԶԵՆ ԾՆՎՈՒՄ, ՅԵՐՈՍ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԳՎԱՐՈՒԿԱՅԻ ԱՎԱԳ ԼԵՅՈՒՆԱՆՈՒ

Այս բառերը ես առաջին անգամ լսեցի նրանից: 1946-ի վերջերին պետք է որ եղած լիներ, երբ Մեծ Հայրենականը ավարտվել էր եւ հորհրդային Միության հերոս տարբերանշող «Ոսկե աստղ» մեդալով եւ մի շարք շքանշաններով ու այլ մեդալներով կուրծքը զարդարած մեր հերոսը կարճ ժամկետով այցի էր եկել հայրենի գյուղ՝ հարազատներին, բարեկամներին, պարզապես՝ համագյուղացիներին: Եվ այդ կարճ ժամանակամիջոցում էլ մեր հերոսը հնարավոր գտավ մի քանի հանդիպումներ ունենալ հայրենի, նաեւ հարեւան Սարդարաշեն, Սեյդիշեն, Ղշլաղ եւ մյուս գյուղերում, հատկապես երիտասարդների ու դպրոցականների հետ: Եվ այդ հանդիպումներից մեկում, որին ներկա էի անձամբ, մասնակիցներից մեկի այն հարցին, թե՞ ինչպես կարելի է հերոս դառնալ, նա պատասխանեց. «Յերոս չեն ծնվում, հերոս դառնում են: Դրա համար ամենագլխավորը՝ պետք է կատարելապես, ամբողջ խորությամբ եւ մանրամասներով տիրապետես ու ամբողջ էությամբ նվիրված լինես այն գործին, որը հանձնարարված է քեզ: Պետք է հավատաս քո ուժին, լինես կամային, համարձակ, աննկուն, անվախ, անձնվեր, կարողանաս արհամարհել մահը: Հունան Ավետիսյանի հերոսությունը՝ Ձեզ օրինակ: Նա արհամարհեց մահը, իր մարմնով փակեց թշնամու՝ բարձունքում գտնվող ամրության կրակակետը, որը հնարավորություն ընձեռեց, որպեսզի մեր մարտիկները գրավեն պաշտպանական նշանակություն ունեցող կարեւոր մի դիրք՝ հետագայում մեր գործերի առաջընթացն ապահովելու համար»:

Այսօր, 65-ամյա բարձունքից իմ կողմից հիշեցնեմ Սպարապետ Վ. Սարգսյանի գլխավորությամբ մահապարտների այն ջոկատի անձնվեր նվիրումը, որը շրջադարձային եղավ արցախյան գոյամարտում մեր հաղթանակի համար՝ հարկադրելով մեր հակառակորդին՝ զինադադար խնդրելու:

«Հայ ժողովրդի հավատարիմ զավակը քաջ, անձնուրաց եւ անվախ է մարտերում: Նա միշտ պատրաստ էր եւ կարողանում էր անձնական օրինակով մարտիկներին հերոսական սխրագործությունների տանել իր հետեւից», - գրել է 5-րդ գվարդիական օդադեսանտային բրիգադայի հրամանատարությունը Վոլգոգրադի հերոսական ճակատամարտի եւ Դնեպրի գետանցման կռիվների ակտիվ մասնակից, գվարդիայի կապիտան Սուրեն Պետրոսյանի մասին:

Սուրեն Պետրոսյանը ծնվել է 1916թ. ԼՂ Ստեփանակերտի շրջանի Ռել գյուղում, աշխատավոր գյուղացի Գրիգորի ընտանիքում: Նա տարրական կրթությունը ստացել է հայրենի գյուղում եւ հասցրել ավարտել հարեւան՝ Բաղարա գյուղի միջնակարգ դպրոցը: 1939թ. Սուրենը մեկնում է Խորհրդային բանակ՝ պարտադիր զինվորական ծառայության: Գրեթե լրացել էր նրա ծառայության ժամկետը: Սուրենը պատրաստվում էր վերադառնալ հայրենի գյուղ եւ իրականացնել երազած իր ցանկությունը: Սակայն, Մեծ Հայրենական խափանեց նրա երազանքի իրականացումը: Պատերազմի հենց առաջին օրերից նա մասնակցեց Կամենեց-Պոդոլսկ քաղաքի եւ այլ շրջաններում ընթացող կատաղի մարտերին: Իր անվախությամբ եւ համարձակությամբ աչքի ընկած մեր հայրենակիցն արժանացավ հրամանատարության ուշադրությանը եւ նրան ուղարկեցին օդային դեսանտի ռազմական դպրոց: 1942 թվականին ավարտելով դպրոցը՝ լեյտենանտի կոչումով վերադարձավ ռազմաճակատ եւ նշանակվեց գվարդիական վաշտի հրամանատար:

Նույն թվականի աշնանը կատաղի մարտեր էին ընթանում Վոլգայի ափի, լեգենդար Վոլգոգրադ քաղաքի համար: Թշնամին կանգ չառնելով նույնիսկ մեծ զոհերի առաջ, ձգտում էր ինչ գնով էլ լինի, գրավել այն, համոզված լինելով, որ այստեղ է վճռվում Մեծ պատերազմի ելքը:

Պետրոսյանի ղեկավարած վաշտը այդ ժամանակ «Ն» գնդի մյուս ստորաբաժանումների հետ միասին առաջադրանք ստացավ ռազմաճակատի հատվածներից մեկում անցնել Վոլգայի աջ ափը եւ հենակետ գրավել մեր զորքերի գետանցման համար: Գիշերը իր խմբով Պետրոսյանը հայտնվում է թշնամու խրամատների առաջ եւ կատաղի մարտի մտնում նրա դեմ: Մեր զորամասերին հաջողվում է անցում կատարել Վոլգայի աջ ափը եւ այնտեղից էլ թշնամուն ետ են շարտում 15 կմ: Այդ մարտերում Պետրոսյանը իրեն ցուցաբերում է որպես հմուտ հրամանատար եւ քաջ մարտիկ: Հրամանատարության առաջադրանքներն օրինակիորեն կատարելու համար նա պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով եւ այստեղ էլ ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը:

Այս մարտում Սուրենը ծանր վիրավորվում է: Ապաքինվելուց հետո նորից վերադառնում է մարտի դաշտ: Նրա հրամանատարական հմտությունը եւ մարտական ընդունակությունները, հատկապես դրսևորվում են Դնեպրի անցման համար մղած մարտերում: Այդ մեծ ջրային արգելքը հաղթահարելու համար 1943 թ. սեպտեմբեր-նոյեմբերին Կարմիր բանակը հերոսական մարտեր ծավալեց, որոնք

ավարտվեցին փայլուն հաղթանակով: Այդ ժամանակ արդեն ավագ լեյտենանտ Ս. Պետրոսյանը ղեկավարում էր 5-րդ գվարդիական օդադեսանտային բրիգադայի 3-րդ գումարտակը, որը բրիգադայի մյուս գումարտակների հետ միասին դեսանտ իջավ Դնեպրի աջ ափին՝ Չերկասսկ քաղաքի շրջանում: Նրա հիմնական խնդիրն էր՝ թիկունքից մեր զորամասերի համար պարտիզանների համագործակցությամբ, հարվածել թշնամուն եւ հեշտացնել Դնեպրի անցումը:

1943թ. սեպտեմբերի 24-28-ը Պետրոսյանի հրամանատարությամբ մի խումբ դեսանտայիններ ոչնչացնում են հինգ ավտոմեքենա՝ թշնամու հետեւակով եւ երեք գնդացրային հաշվարկ: Հոկտեմբերի 3-ին Պոտոկ գյուղում նրա մարտիկները մասնակցում են հակառակորդի գումարտակի շտաբի ջախջախման գործողությանը: Հաջորդ օրը Պետրոսյանի դեսանտայինները, ավելի քան հինգ ժամ տեւած մարտի ընթացքում, ոչնչացնում են 90 հիտլերական եւ գրավում մեծ քանակությամբ ռազմավար: Սակայն, խումբը հայտնվում է թշնամու շրջապատման մեջ: Եվ միայն հրամանատարի հմուտ ղեկավարության ու ճկունության շնորհիվ մարտիկները հաջողությամբ ճեղքում են օղակը եւ դուրս գալիս շրջապատումից:

Հոկտեմբերի 24-ին Չերկասսիի անտառում դեսանտայինները մասնակցում են թշնամու վեց գրոհները ետ մղելու գործողություններին, որի ժամանակ Պետրոսյանն անձամբ ոչնչացնում է 10 հիտլերական:

Մի հիշարժան դեպք եւս փորձված դեսանտային Սուրեն Պետրոսյանի մարտական կյանքից. Սուրենի գլխավորած գումարտակն առաջադրանք է ստանում. ճեղքել Սվիդովսկ գյուղի շրջանում հակառակորդի ուժեղ պաշտպանությունը եւ գրավել Ելիզավետովկա ամրացված գյուղը, որը կարեւոր նշանակություն ուներ մեր զորքերի հետագա առաջընթացի համար: Սուրենի գումարտակը նոյեմբերի 13-ին մասնակցում է գործողություններին: Գյուղի գրավումը իր վրա է բեւեռում թշնամու ուշադրությունը, որն այստեղ է տեղափոխում իր ուժերի մի զգալի մասը: Դա զորամասերին հնարավորություն է տալիս առանց կորստի տվյալ հատվածում անցնելու Դնեպրի աջ ափը: Այդ մարտերում գումարտակը ոչնչացնում է մոտ 80 հիտլերական, հինգ ավտոմեքենա եւ գրավում պարենամթերքի երկու պահեստ:

Դնեպրի անցման համար մղած ճակատամարտի ամբողջ ընթացքում, հայտնվելով մեկ այստեղ, մեկ այնտեղ, Պետրոսյանի դեսանտայինները թշնամու թիկունքում քայքայում էին նրա կոմունիկա-

ցիաները, շեղում հակառակորդի ուշադրությունը եւ օգնում խորհրդային զորամասերին՝ անցնելու Ղնեպրը:

Այս մարտերում ցուցաբերած քաջության ու խիզախության համար հրամանատարությունը գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Սուրեն Պետրոսյանին ներկայացնում է խորհրդային Միության հերոսի կոչման, որը նրան շնորհվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944թ. ապրիլի 24-ի հրամանագրով: Խորհրդային Միության հերոսի «Ոսկե աստղ» մեդալից եւ Լենինի շքանշանից առաջ նա պարգևատրված էր Կարմիր դրոշի երկու, Յայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով եւ մի շարք այլ մեդալներով:

1944-1945թթ. 5-րդ օդադեսանտային բրիգադան, որտեղ Պետրոսյանը գումարտակի հրամանատարն էր, կատարում էր հատկապես թիկունքային ծառայություն:

1946-ին Պետրոսյանը զորացրվում է բանակից եւ վերադառնում Երեւան: Մինչեւ 1948 թվականը նա պատասխանատու աշխատանք էր կատարել ՀԿ(Բ)Կ Երեւանի Կիեյան շրջանային կոմիտեում:

Խորհրդային Միության հերոս, փոխգնդապետ Սուրեն Պետրոսյանը երկար տարիներ աշխատել է Հայկական ԽՍՀ հասարակական կարգի պահպանության նախարարությունում եւ այլ մարմիններում:

Ծառայության մեջ եւ թե աշխատանքում համարձակությունը, անվախությունը, ազնվությունն ու նվիրվածությունն են եղել Ս. Պետրոսյանի անձնական վարքագծի չափանիշները, ինչը կարող է օրինակ ծառայել ապագա սերունդների համար:



**ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲՐԱՅԱՄԻ
ՂԱԶԱՐՅԱՆ**



**ԽՍՅՄ ՓԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Կիւնից հյուսիս՝ Ղնեպրը հաջողությամբ գետանցելու, Ղնեպր գե-
տի արեւմտյան ափին հենակետը կայուն ամրացնելու եւ այդ ժամա-
նակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել
Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան
եւ «Ոսկե աստղ» մեդալ.

63. Գեներալ-մայոր **Անդրանիկ Աբրահամի Ղազարյանին:**

ԽՍՅՄ Փերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՅՄ Փերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 16 հոկտեմբերի 1944թ.:

**ՈՐԲՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԳԵՆԵՐԱԼ ԵՎ ԴԻՎԻԶԻԱՅԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ԿԱՄ
ԱՆՄԱՅՈՐԴ ՆՎԻՐՈՄՈՎ**

Նրա ամբողջ գիտակցական կյանքը կապված էր Խորհրդային Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության հետ: Չինվորական ծառայության 40 տարիների ընթացքում Անդրանիկ Ղազարյանը շարքային մարտիկից հասավ գեներալի կոչման եւ դիվիզիայի հրամանատարի պաշտոնին: Նա տասնյոթ տարի շարունակ աշխատել է Հայկական դիվիզիայում դասակի, վաշտի, գումարտակի հրամանատար, գնդի շտաբի պետ, գնդի հրամանատար եւ երկար ժամանակ պատասխանատու պաշտոններ է վարել նույն դիվիզիայի շտաբում իբրեւ չորրորդ բաժնի պետ եւ ապա Երեւանի Պետական համալսարանի ռազմական ամբիոնի վարիչ:

Անդրանիկ Ղազարյանը ծնվել է 1904 թվականին Շուշի քաղաքից Բաքու տեղափոխված դերձակ Աբրահամի ընտանիքում: Վաղ հասակից նա զրկվել էր ծնողներից: Նրան խնամել եւ դաստիարակել են բարեկամները: Տարրական կրթությունն ստացել է Բաքվում: Տնտեսական ծանր պայմանների հարկադրանքով, նա թողել է դպրոցը եւ 1920թ. տեղափոխվել Երեւան: Կարմիր Բանակի հայկական միավորումներից մեկում աշխատել է իբրեւ ցրիչ: Սովորել եւ ավարտել է Երեւանի Մյասնիկյանի անվան եւ ապա Թիֆլիսի ռազմական դպրոցները:

Հայրենական պատերազմի առաջին օրերին նա արդեն գնդի հրամանատար էր, եւ պատերազմի սկզբից մինչեւ նրա հաղթական ավարտը, զորային տարբեր միավորումների գլուխն անցած, մարտնչել է գերմանա-ֆաշիստական եւ ճապոնական զավթիչների դեմ՝ մասնակցելով բազմաթիվ ճակատամարտերի:

Հիշենք նրանցից մի քանիսը.

1941 թ. սեպտեմբերին 220-րդ հրաձգային դիվիզիայի 988-րդ գունդը, որի հրամանատարն էր փոխգնդապետ Ա. Ղազարյանը, Ղնեպրոպետրովսկի մարզի Նովո-Մոսկովսկ քաղաքի շրջանում ավելի քան տասն օր ծանր եւ ահեղ մարտեր էր մղում թշնամու հետեւակի եւ տանկերի մի խմբավորման դեմ՝ կաշկանդելով նրանց առաջխաղացումը: Այստեղ նա ծանր վիրավորվում է: Երկար է տեւում բուժումը: Ապաքինվելով, 1942թ. մայիսից նա նորից մար-

տում էր. նշանակվում է 134-րդ բրիգադայի, ապա նրա հիմքի վրա կազմավորված 74-րդ դիվիզիայի հրամանատար: Ա. Ղազարյանի հրամանատարությամբ դիվիզիան Բրյանսկի ռազմաճակատում հաջողությամբ կասեցնում է թշնամու հարձակումը՝ պատճառելով նրան կենդանի ուժի եւ տեխնիկայի մեծ կորուստներ:

ԽՍՀՄ կառավարության 1943թ. փետրվարի 22-ի որոշմամբ գն-դապետ Ա. Ղազարյանին շնորհվում է գեներալ-մայորի զինվորական կոչում:

Մարդկային եւ տեխնիկայի խոշոր ուժեր կենտրոնացնելով Կուրսկ-Բելգորոդ աղեղում, թշնամին 1943-ի հուլիսի սկզբին անցավ հարձակման: 74-րդ դիվիզիան դիրքեր էր գրավել Օրյոլից հարավ՝ Մալոարխանգելսկ քաղաքի մոտ՝ երկու կիլոմետրանոց հատվածում: Ահեղ մարտեր տեղի ունեցան: Միայն երկու օրվա ընթացքում Ղազարյանի դիվիզիան 13 անգամ հակազորոհեց հակառակորդի վրա: Թշնամուն հաջողվեց առաջ խցկվել ընդամենը մեկ կմ: Ետ մղելով հիտլերյան մեծաքանակ հետեւակի եւ 150 տանկի գրոհները՝ դիվիզիան վերականգնեց իր դիրքերը՝ մեծ կորուստներ պատճառելով թշնամուն:

Կուրսկի ճակատամարտում հիտլերյան զորքերի ջախջախմանը հաջորդեց Խորհրդային բանակի արագ առաջխաղացումը դեպի արեւմուտք: Ավելի քան 300 կմ մարտական երթից հետո, սեպտեմբերին դիվիզիան հասավ Դեսնա գետին՝ Կորոպ քաղաքից հարավ եւ անմիջապես սկսեց գետանցումը: Դիվիզիայի գնդերից մեկն արդեն անցել էր գետը եւ լուսադեմին դիմել գրոհի: Գերմանացիները նկատելով այդ՝ սկսեցին դիմադրել: Մի քանի օր շարունակ կատաղի մարտեր էին գնում գրաված հենակետը պաշտպանելու եւ ընդլայնելու համար: Մարտի 3-րդ օրը հակառակորդի գերակշռող ուժերը, տանկերի օգնությամբ սկսեցին նեղել դիվիզիայի զորամասերին եւ նրանց հարկադրեցին ետ քաշվել: Մինչեւ գետը մնում էր ընդամենը 500 մետր: Այս փոքրիկ հողակտորի վրա դիվիզիայի խիզախ մարտիկները 5-6 օր, կատաղի մարտերով, քաջաբար պաշտպանեցին հենակետը եւ ետ շարտեցին հակառակորդին:

«Դեսնայի անցումը եւ մարտերը հենակետում մեծ փորձ եղան դիվիզիայի համար: Այդ ընթացքում դիվիզիայի զորամասերը ցույց տվեցին քաջություն եւ խիզախություն՝ ջրային արգելքն անցնելու կարողություն», - գրել է կորպուսի հրամանատարությունը Անդրա-նիկ Ղազարյանի պարգևաթերթիկում:

Նախքան Դնեպրն անցնելը բանակի ռազմական խորհուրդը գոր-րամասերին կոչ էր անում «Անցնել գետերը այնպիսի արագությամբ

ու հմտությամբ, ինչպես անում էին Ղազարյանի եւ Գուձի փառապանծ մարտիկները»:

Դնեպրի վրա հիտլերյան հրամանատարությունը մեծ հույսեր էր դրել: Խորհրդային բանակի հարվածների տակ նահանջող հիտլերյան զորքերը փորձում էին կանգ առնել եւ ամրանալ գետի աջ ափին: Սակայն ոչինչ չէր կարող կանգնեցնել մեր զորքերի հաղթական առաջընթացը: 74-րդ դիվիզիան առաջիններից էր, որ 1943-ի սեպտեմբերի վերջերին Կիելից հյուսիս եւ Չերնիգովից Արեւմուտք գտնվող հատվածում, թշնամու կրակի տակ, սկսեց անցնել Դնեպրը, որի լայնությունն այստեղ հասնում էր 600 մետրի: Անցման համար օգտագործվում էին Դեսնան հաղթահարելու ժամանակ արդեն հայտնի միջոցները եւ պարտիզանների կողմից տրամադրված միակ ձկնորսական նավակը, որը նրանք թաքցրել էին հիտլերականներից: Ոմանք գետն անցնում էին նույնիսկ լողալով: Առաջին գիշերը գետն անցան մի քանի հարյուր խիզախ մարտիկներ, որոնք մարտի նետվեցին թշնամու դեմ պարտիզանների կողմից գրավված Կոմարին քաղաքի մոտ, ընդամենը 300 x 400մ տարածության վրա: Այդ փոքրիկ հողակտորի վրա երկու օր ու գիշեր գեներալ-մայոր Ղազարյանի դիվիզիայի քաջերը կենաց եւ մահու մարտ էին մղում թշնամու՝ մի քանի անգամ գերազանցող ուժերի դեմ, մինչեւ օգնության եկան գետն անցած հիմնական զորամասերը: Այդ զորամասերի հետ միասին 74-րդ դիվիզիան մի քանի օր շարունակ արյունահեղ մարտեր էր մղում Դնեպրի եւ Պրիպյատի միջեւ եւ քայլ առ քայլ խորացնում հենակետը: Դնեպրի համար մղած մարտերը ավարտվեցին մեր հաղթանակով: Որից հետո դրան հետեւեց նաեւ աջափնյա Ուկրաինայի եւ Բելոռուսիայի ազատագրումը:

Դնեպրն անցնելու, նրա աջ ափին ամուր հենակետ գրավելու եւ այդ ժամանակ ցուցաբերած հրամանատարական հմտության ու խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943 թվականի հոկտեմբերի 16-ի հրամանագրով 74-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Յերեսի կոչման արժանացան նաեւ դիվիզիայի 33 մարտիկներ եւ հրամանատարներ: Դիվիզիայի ողջ անձնակազմը մեծ ցնծությամբ ընդունեց բարձրագույն պարգևը:

Այնուհետեւ դիվիզիան պարտիզանների օգնությամբ անցավ Պրիպյատ գետի աջ ափը: Չերնոբիլ քաղաքի շրջանում (Կիելի մարզ) ընթացող մարտերում դիվիզիայի հրամանատար Անդրանիկ Ղազարյանը երկրորդ անգամ ծանր վիրավորվեց եւ ստացավ կոնտու-

գիա: Այնուհանդերձ, դիվիզիան առաջ շարժվելով շուտով մասնակցեց Խորհրդային Ուկրաինայի մայրաքաղաք Կիևի ազատագրմանը:

Ապաքինվելուց հետո, 1944 թվականին գեներալ-մայոր Ա. Ղազարյանը ուղարկվում է Բելոռուսական երրորդ ռազմաճակատ, որտեղ գլխավորում է 215-րդ հրաձգային դիվիզիան: Դիվիզիան մասնակցում է Բելոռուսական և Լիտվական ԽՍ հանրապետությունների ազատագրմանը: Գերագույն գլխավոր հրամանատարության հրամաններում 215-րդ դիվիզիային շնորհակալություն է հայտնվել Բերեզինա գետը և ջրային այլ արգելքներ հաղթահարելու, Վիտեբսկ, Բորիսով, Մինսկ, Վիլնյուս, Կաունաս և բազմաթիվ այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրմանը ակտիվորեն մասնակցելու համար:

Խորհրդային Միության հերոս Ա. Ղազարյանի ղեկավարած դիվիզիան առաջիններից մեկը հասավ Արեւելյան Պրուսիա: Այստեղ նա աչքի ընկավ Ինստերբուրգ, Յայլսբերգ, Ֆրիդլանդ, Զյոնիգսբերգ և այլ քաղաքների գրավման մարտերում, ինչպես նաև թշնամու երկարատև խոր էշելոնացված ամրությունները ջախջախելու գործում:

Այնուհետև, 215-րդ դիվիզիան, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանի հրամանատարությամբ, փառքով պսակեց իր դրոշները ճապոնական Նվաճողական բանակների ջախջախման և չինական հողի ազատագրման մարտերում: Հեռավոր Արեւելյան առաջին ռազմաճակատի զորքերի կազմում դիվիզիան անցավ Ասուրի գետը, մասնակցեց Մանջուրիայում ճապոնացիների կողմից վաղուց կառուցված խոր էշելոնացված ամրությունները հաղթահարելու գործողություններին, ինչպես նաև չինական Յոբեյ, Մուլին, Մուդանցզյան, Դունխուա, Գիրին և այլ քաղաքների ու բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանը:

Խորհրդային կառավարությունը բարձր է գնահատել Անդրանիկ Ղազարյանի ծառայությունները Հայրենիքի հանդեպ: Նրա կուրծքը զարդարել են Խորհրդային Միության հերոսի «Ոսկե աստղ» մեդալը, Լենինի՝ երկու, Սուվորովի երկրորդ աստիճանի՝ երեք, Կարմիր դրոշի՝ հինգ, չինական Յուն Գույ (Վզի ժապավենով) շքանշանները և բազմաթիվ մեդալներ:

Հայրենական պատերազմի ավարտից հետո գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը ծառայել է տարբեր ռազմական օկրուգներում, ղեկավարել է առանձին միավորումներ: Անդրանիկ Ղազարյանի ամբողջ կյանքը և հայրենիքի հանդեպ ծառայությունը անձնվիրության պայծառ օրինակ է սերունդների համար:



**ԱՐԱՄ ՀՈՎԱԿԻՄԻ
ՍԱՖԱՐՅԱՆ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՐԻՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

Գվարդիայի լեյտենանտ **Արամ Հովակիմի Սաֆարյանին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945թ.:

ԱՐԱՄ ՀՈՎԱԿԻՄԻ ՍԱՖԱՐՅԱՆ

Խորհրդային բանակի շատ ռազմիկներ Հայրենական պատերազմի տարիներին իրենց կյանքը գոհեցին ֆաշիզմի դեմ մղած պայքարում: Դրանցից մեկն էր հայ ժողովրդի արժանավոր զավակ, գվարդիայի լեյտենանտ Արամ Հովակիմի Սաֆարյանը (Արամ Ավակիմովիչ Սաֆարով): 1944 թվականի աշնանը Հարավսլավիայում մղած անհավասար մարտում քաջաբար ընկան նրա ղեկավարած գնդացրային վաշտի բոլոր մարտիկները, այդ թվում նաեւ ինքը:

Ա. Սաֆարյանը ծնվել է 1913 թվականին, Լեռնային Ղարաբաղի Հաղորտի (Քենդիսուրդ) գյուղում: Երկու տարեկան էր նա, երբ հայրը զորակոչվեց ցարական բանակի շարքերը եւ գոհվեց առաջին համաշխարհային պատերազմում:

1916 թվականին Արամն իր մոր եւ եղբոր հետ տեղափոխվում է Բաքու քաղաքը: Նա սովորում է Բաքվի Ձերժինսկու (հետագայում Նարիմանովի) շրջանի թիվ 177 դպրոցում: 1930 թվականին Սաֆարյանն աշխատանքի է անցնում Բաքվի Բուդյոննու անվան գործարանում, ուր 1940թ. նա ընդունվում է ԽՄԿԿ շարքերը:

1941-ի հունիսին Սաֆարյանը զորակոչվում է Խորհրդային բանակի շարքերը: Դեռեւս, ռազմական ուսուցումը չավարտած, նա հայտնվում է ռազմաճակատում:

Հայրենական մեծ պատերազմի սկզբից մինչեւ իր հերոսական մահը Սաֆարյանն անընդհատ գտնվել է գործող բանակի շարքերում եւ մասնակցել ֆաշիստների դեմ մղած մարտերին՝ Յյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Ռումինիայում, Հարավսլավիայում:

1944 թվականի հոկտեմբերի սկզբներին Ուկրաինական երրորդ ռազմաճակատի Սուվորովի շքանշանակիր կարմրադրոշ Բերիսլավյան 109-րդ հրաձգային գվարդիական դիվիզիայի 309-րդ գնդի առաջին գումարտակը, որի կազմում էր գտնվում նաեւ Սաֆարյանի հրամանատարությամբ գործող գնդացրային վաշտը, համառ մարտեր էր մղում Դանուբն անցնելու եւ նրա արեւմտյան ափին հեռակետ գրավելու համար: Հոկտեմբերի 7-ին գվարդիայի ավագ լեյտենանտ Արամ Սաֆարյանն առաջադրանք է ստանում՝ իր վաշտով առաջինն անցնել Դանուբի աջ ափը, Հարավսլավիայի Ռիտոպեկ գյուղի շրջանում գրավել արեւելքից դեպի Բելգրադ տանող խճուղին եւ ամեն կերպ պահել այն: Գվարդիայի լեյտենանտ Սաֆարյանը հմտորեն կազմակերպում է վաշտի գետանցումը, դուրս գալիս խճուղին եւ

դիրքավորվում նրա եզրերին: Այդ պահին խճուղով անընդհատ դեպի Բելգրադ էին ընթանում գերմանական զինվորներով ու ռազմամթերքով բեռնված ավտոմեքենաներ, հրետանի ու տանկեր: Վաշտը, տեղ հասնելու պահից մտնում է կատաղի մարտի մեջ: Սաֆարյանի ստորաբաժանման քաջարի մարտիկները ոչնչացնում են հակառակորդի զինվորներով բեռնված չորս ավտոմեքենա, երկու մոտոցիկլ եւ երկու տանկ: Սակայն թշնամու ուժերն անընդհատ աճում էին: Վաշտը ծանր դրության մեջ է ընկնում: Գնալով դառնում է ավելի ու ավելի դժվար: Սակայն, չնայած դրան, Սաֆարյանի խիզախ մարտիկները տեղ չեն տալիս եւ շարունակում են համառորեն մարտնչել: Ավելի քան չորս ժամ շարունակվում է մարտը: Վերջանում էին փամփուռներն ու նռնակները: Մարտիկներից շատերը վիրավորվել էին: Վաշտն այդ ժամանակ բավականին հեռու էր գտնվում խորհրդային մյուս ստորաբաժանումներից եւ չէր կարող նրանցից օգնություն ստանալ: Սաֆարյանը գիտակցում էր այդ, այնուամենայնիվ, աննկուն կերպով շարունակում է անհավասար մարտը թշնամու տասնապատիկ գերակշիռ ուժերի դեմ:

Այդպես անցնում է նաեւ գիշերը...

Յուրաքանչյուրի 8-ին, առավոտյան ժամը 7-ին, գերմանացիները Սաֆարյանի վաշտի դեմ են հանում Բելգրադից բերած լրացուցիչ երկու գումարտակ: Սկսվում է թշնամու գրոհը: Վաշտը ընկնում է շրջապատման մեջ: Գազազած հիտլերականներն աստիճանաբար սեղմում են օղակը հերոս գվարդիականների շուրջը: Իրադրությունը դառնում է բացառիկ ծանր, սպառվում են նույնիսկ վերջին փամփուռները: Այդ պահին հնչում է հրամանատար Սաֆարյանի խրոխտ ու մարտական ձայնը. նա իր գվարդիականներին հրամայում է դիմել ձեռնամարտի:

Սկսվում է խորհրդային դյուցազունների հանդուգն պայքարը ֆաշիստական զինվորների դեմ: Այդ ձեռնամարտում անձնական հերոսության օրինակ է տալիս անձամբ կոմունիստ Արամ Սաֆարյանը եւ մինչեւ վերջ կատարում իրենց պարտքը հայրենիքի հանդեպ՝ ոչ մի քայլ չնահանջելով դիրքերից, իր մարտական բոլոր ընկերների հետ միասին, հերոսաբար զոհվում մարտում:

Ցուցաբերած անձնական քաջության եւ հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով գվարդիայի լեյտենանտ Արամ Յուրաքանչյուրի Սաֆարյանին հետմահու շնորհվեց խորհրդային Միության հերոսի կոչում:

**ԵՐԵՄ ԻՎԱՆԻ
ԴԱՆԻԵԼՅԱՆՑ**



**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՅՈՒԹՅԱՆ
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի-
րեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

8. Գվարդիայի ավագ սերժանտ **Երեմ Իվանի Դանիելյանցին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 15 հունվարի 1944թ.:

ԵՐԵՄ ԻՎԱՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆՑ

1 943 թվականը Հայրենական պատերազմի արմատական բեկման տարին էր: Այն սկսվեց Վոլգոգրադի մոտ խորհրդային բանակի կողմից թշնամու մեծաքանակ ուժերի ջախջախումով, որից հետո Խորհրդային բանակը հարձակման նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը եւ այն մինչեւ վերջնական հաղթանակը պահեց իր ձեռքում: Խորհրդային բանակի հաղթարշավի մեջ փայլուն էջ է կազմում Դնեպրի պատմական գետանցումը, որի հերոսներից մեկն է գվարդիայի ավագ սերժանտ Երեմ Իվանի (Յովհաննեսի) Դանիելյանը:

Երեմ Դանիելյանը ծնվել է 1901 թվականին Ելիզավետպոլի նահանգի Շուշի գավառի Արանզամին գյուղում: Հայրենի գյուղում Երեմն ստանում է տարրական կրթություն: Այնուհետեւ, շատ հայ ընտանիքների հետ միասին, Դանիելյանցների ընտանիքը նույնպես բռնում է պանդխտության ուղին: Երկար թափառումներից հետո, 1915 թվականին նրանց ընտանիքը բնակություն է հաստատում Թերեքի նահանգի Միներալնիե Վոդիի Նիկոլաեւյան շրջանում: Այստեղ Երեմը հորից սովորում է քարտաշություն եւ կարճ ժամանակից հետո դառնում որակյալ վարպետ:

1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Երեմն աշխատում է որպես քարտաշ-որմնադիր: 1922-1924 թվականներին նա ծառայում է Խորհրդային նորաստեղծ բանակի շարքերում:

Հետո Դանիելյանցների ընտանիքը վերջնականապես հաստատվում է Պյատիգորսկ քաղաքում: Երեմն աշխատանքի է անցնում նախ Պյատիգորսկում, ապա՝ Նալչիկում եւ նորից՝ վերադառնում Պյատիգորսկ: Ամենուր, որտեղ էլ աշխատել է նա՝ արտադրության առաջավոր է եղել:

Հայրենական պատերազմի առաջին օրերից Երեմը մեկնում է ռազմաճակատ:

...1943-ի սեպտեմբերին կատաղի մարտեր էին ընթանում ուկրաինական հինավուրց գետի՝ Դնեպրի անցման համար: Մյուս զորամասերի թվում, Դնեպրն անցնելու հրաման է ստանում նաեւ 60-րդ Չերնիգովյան հեծելազորային գունդը, որի կազմում, 4-րդ էսկադրոնի հաստոցավոր գնդացրի հաշվարկի հրամանատար էր կոմունիստական կուսակցության անդամության թեկնածու Երեմ Դանիելյանը:

Սեպտեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, ականանետային եւ գնդաց-

րային ուժեղ կրակի տակ գվարդիայի սերժանտ Դանիելյանցն իր գնդացրային հաշվարկով առաջինն է անցնում Դնեպրը: Դուրս գալով գետի աջ ափը՝ նա հաստոցավոր գնդացրով կատաղի կրակ է բացում թաքնված հակառակորդի վրա: Վերջինս, կրելով մեծ կորուստներ, ետ է քաշվում: Դանիելյանցի գնդացրային հաշվարկը, գրավելով մի փոքրիկ հենակետ, ապահովում է գնդի մյուս ստորաբաժանումների բարեհաջող գետանցումը: Ապա զարգացնելով առաջխաղացումը եւ հետապնդելով թշնամուն Վյալե եւ Գալկի գյուղակների շրջանում՝ Դանիելյանցը անձամբ ոչնչացնում է թշնամու գնդացրային երկու կրակակետ եւ 28 զինվոր ու սպա:

Գվարդիայի ավագ սերժանտ Երեմ Դանիելյանցը հերոսաբար զոհվում է 1943 թվականի հոկտեմբերի 28-ին Պոլեսայեի մարզում մղված համառ մարտերում:

Մարտական գործողությունների ընթացքում հանդես բերած բացառիկ քաջության եւ հերոսության համար գվարդիայի ավագ սերժանտ Երեմ Զովհաննեսի Դանիելյանցին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թվականի հունվարի 15-ի հրամանագրով հետմահու շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:





**ԻՎԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆԻ
ՇԱՀՈՒՄՅԱՆ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՐԻՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Դնեպրը հաջող գետանցելու, Դնեպրի արեւմտյան ափին ամուր
հենակետ ստեղծելու գործում հրամանատարության մարտական
առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ
ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել
խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան
եւ «Ոսկե աստղ» մեդալ.

174. Սերժանտ **Իվան Կոստանդինի Շահումյանին:**

**ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ**

**ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա.ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ, 30 հոկտեմբերի 1943թ.:

հ վան (Յովհաննես) Կոստանդինի Շահումյանը ծնվել է 1913 թվականին այժմյան Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Պառավաթումբ գյուղում: Նրա հայրը այդ տարիներին թողնում է գյուղը, մեկնում Տաշքենդ, ուր երկար տարիներ աշխատում է իբրև քարտաշ: Յ. Շահումյանն այստեղ ընդունվում է գյուղատնտեսական տեխնիկում: 1930 թվականին ավարտելով այն, մեկնում է Տաշիկան ԽՍՀ եւ մեքենատրակտորային կայաններից մեկում աշխատում որպես ագրոտեխնիկ: 1934 թվականին նա գործուղվում է մերձարեւադարձային կուլտուրաների Սուխումիի ինստիտուտ՝ ուսանելու, իսկ 1935 թվականին փոխադրվում է Մոսկվա՝ Տիմիրյազեւի անվան գյուղատնտեսական ակադեմիա, որն էլ ավարտում է 1941 թվականին:

Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Մոսկվայում կազմակերպվում են աշխարհագրային հատուկ դիվիզիաներ: Յ. Շահումյանը անմիջապես ներգրավվում է այդ դիվիզիաների կազմում ընդգրկված գնդերից մեկում, որն արդեն 1941-ի սեպտեմբերից գործում էր Սմոլենսկից հարավ-արեւելք՝ Ելենյայի մոտ, ուր կատաղի մարտեր էին տեղի ունենում թշնամու զորքերի հետ: Այնուհետեւ, այդ դիվիզիան մասնակցում է Վոլոկոլամսկի համար մղած մարտերին: Այստեղ Յ. Շահումյանը վիրավորվում է: Նրան փոխադրում են հոսպիտալ՝ բուժման:

Ապաքինվելուց հետո Յ. Շահումյանը նշանակում է ստանում միջինասիական 69-րդ դիվիզիայում, որը նոր էր ձեւավորվում: Դիվիզիան, ուր Յ. Շահումյանը ծառայում էր իբրև հրաձգային դասակի հրամանատար, մարտերի մեջ է մտնում Տուլայի տակ:

Այնուհետեւ դիվիզիան մասնակցում է Կուրսկի շրջանում մղված կատաղի մարտերին եւ ազատագրում Դմիտրիեւ-Լգովսկիի շրջանը:

Չիմլիշա բնակավայրի ազատագրման համար Յ. Շահումյանը մարտական առաջադրանք է ստանում՝ իր ստորաբաժանումով անցնել թշնամու թիկունքը եւ խուճապ ստեղծել: Նրա ստորաբաժանման մարտիկները, անցնելով դժվարին ճանապարհներով, հասնում են մինչեւ անտառ: Առավոտյան ժամը 5-ին սկսում են հարձակումը: Թշնամին հանկարծակիի գալով, խուճապի է մատնվում: Երկու ժամ տեւող համառ ձեռնամարտերից հետո՝ դիվիզիայի ստորաբաժանումներն ազատագրում են Չիմլիշա խոշոր բնակավայրը:

69-րդ եւ 31-րդ գվարդիական դիվիզիաները հմտորեն անցնում են Դեսնա գետը եւ 1943-ի օգոստոսին գետանցնում են Սոժը եւ մոտե-

նում Դնեպրին, որի աջ ափին թշնամին պաշտպանական ամուր գծեր էր ստեղծել:

Յ. Շահումյանի ջերմ հայրենասիրությունը եւ հերոսությունը ցայտուն կերպով դրսևորվում են Դնեպրի անցման օրերին, երբ թշնամին յուրաքանչյուր թիզ հողից կառչելով, գեւքի բոլոր տեսակներից կրակ էր բացում մեր զորամիավորումների վրա: Այդ ծանր պայմաններում մեր դեսանտային ստորաբաժանումների առաջ խնդիր էր դրված՝ ինչ գնով էլ լինի՝ անցնել Դնեպրի աջ ափը:

Սեւակի կարմրադրոշ 69-րդ հրաձգային դիվիզիայի 120-րդ գնդի քիմիական պաշտպանության ջոկի հրամանատար Յոզիանես Շահումյանը 1943 թվականի հոկտեմբերի 15-ին Գոմելի մարզի Լոելի շրջանում Դնեպր գետն անցնելու համար կազմված դեսանտային խմբում էր: Նա թշնամու հրանոթային ուժեղ կրակի տակ առաջիններից մեկն է անցնում աջ ափը եւ ստեղծելով ծխաքողարկում, համարձակ առաջ է շարժվում թշնամու վրա եւ մյուս ստորաբաժանումների հետ միասին ապահովում առաջխաղացումը: Ծխի ծածկույթն անցնելուց հետո, պաշտպանական գծում նրա ջոկը գրավում է իր տեղը եւ թշնամու ձեռնարկած երկու հակազրոհի ժամանակ ոչնչացնում գերմանական մի քանի տասնյակ զինվորի: Ուժեղ սվինամարտից հետո գերմանացիները նահանջում են՝ թողնելով մեծ քանակությամբ զոհեր եւ ռազմական տեխնիկա: Այդ սվինամարտում Յ.Շահումյանը ոչնչացնում է թշնամու 11 զինվոր:

Դնեպրի ափին մեր ստորաբաժանումներից մեկի ձախ թելում վտանգավոր վիճակ էր ստեղծվել: Այդ վտանգը կանխելու նպատակով Շահումյանը 17 հոգուց բաղկացած մի խմբով յոթ անգամ գրոհի է դիմում: Գրոհող խումբը Շահումյանի ղեկավարությամբ, մինչեւ լուսաբաց, հերոսաբար կռվում է: Այդ խմբից 15 հոգի զոհվում են: Գնդացրի վերջին ժապավենը եւ մի քանի նռնակներ էին մնացել, երբ հերոսաբար կռվող զույգին՝ գնդի հրամանատարի հրամանով օգնության հասան մյուս ստորաբաժանման մարտիկները: Շահումյանը կրակելով գնդացրի վերջին ժապավենը՝ վիրավորվում է. նրան փոխադրում են հոսպիտալ՝ բուժման: Երեք ամիս չանցած, նա կրկին վերադառնում է իր զորամասը եւ մասնակցում Ռումինիայի ազատագրման մարտերին: Այդ մարտերում նա ծանր կոնտուզիա է ստանում եւ ուղարկվում բուժման:

Դնեպրի անցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը իր 1943 թվականի հոկտեմբերի 30-ի հրամանագրով Խորհրդային Միության հերոսի

կոչում շնորհեց ավագ սերժանտ Իվան (Յովհաննես) Կոստանդինի Շահումյանին:

Պատերազմի հետագա տարիներին Յ.Շահումյանը մասնակցում է ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախմանը եւ մարտերի ընթացքում աճելով, դառնում է հմուտ հրամանատար: Նախքան գորացրվելը Յ.Շահումյանը արդեն փոխգնդապետի կոչում ուներ եւ ծառայում էր Գերմանիայում՝ սովետական օկուպացիոն զորքերի շարքերում:

Հայրենական պատերազմից հետո, 1945 թվականին Յ.Շահումյանը ընդունվում է Մոսկվայի Տիմիրյազեւի անվան գյուղատնտեսական ակադեմիայի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո նշանակվում է Մոսկվայի բանջարեղենի փորձնական կայանի տնօրեն, ապա բանջարեղենի տնտեսության գիտահետազոտական ինստիտուտում:

Մահացել է 1964թ. Մոսկվա քաղաքում:





**ՍՈՒՐԵՆ ՅԱԿՈԲԻ
ԿԱՍՊԱՐՈՎ**

**ԽՍՀՄ զԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի հրետանու սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի-
րեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

Սուրեն Յակոբի Կասպարովին

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 18 նոյեմբերի 1944թ.:

Սուրեն Յակոբի Կասպարովը (Գասպարյանը) ծնվել է 1924թ. օգոստոսի 15-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ստեփանակերտի շրջանի Ղլիժբաղ գյուղում, գյուղացու ընտանիքում: Նրա հայրը 1936 թվականին տեղափոխվում է Տաշքենդ եւ երկար տարիներ աշխատում որպես դարբին: 1940 թվականին Ս. Գասպարյանը ավարտում է 7-րդ դասարանը եւ հենց այդ տարին էլ նա աշխատանքի է անցնում Տաշքենդի կարի ֆաբրիկայում:

1943 թվականի հունվարի 5-ին Ս. Գասպարյանը զորակոչվում է Խորհրդային բանակի շարքերը: Սերժանտ Գասպարյանը մասնակցում է Ուկրաինական երրորդ եւ Բելոռուսական առաջին ռազմաճակատներում մղված հերոսական մարտերին:

82-րդ հակատանկային գվարդիական դիվիզիոնի 86-րդ հատուկ կործանիչ ջոկի հրանոթի նշանառու, սերժանտ Սուրեն Գասպարյանի պարգևատրվում, որը վավերացվել է 8-րդ գվարդիական բանակի հրամանատար՝ գեներալ-գնդապետ, իսկ հետագայում Խորհրդային Միության մարշալ Վ.Չույկովի կողմից, գրված է, որ 1944 թվականի օգոստոսի 20-ին թիվ 146,8 բարձունքի շրջանում թշնամին ձգտում էր արգելակել Խորհրդային մարտիկների առաջխաղացումը դեպի Արեւմուտք: Այդ նպատակով ֆաշիստները նախաձեռնել էին հակահարձակում՝ գործողության մեջ դնելով 40 ծանր ու միջին քաշի տանկ եւ հետեւակ: Հարձակվող տանկերից 19-ը գրոհում էր հրանոթի նշանառու Գասպարյանի կրակակետի ուղղությամբ: Գասպարյանը, առանց վարանելու մտավ անհավասար մարտի մեջ եւ առաջին համազարկով հրկիզեց թշնամու տանկը:

Առաջին հաջողությունը սերժանտին հավատ ներշնչեց էլ ավելի խիզախորեն շարունակելու կրակը մյուս տանկերի դեմ: Չնայած թշնամու մրրկային կրակին, Գասպարյանը իրար հետեւից հրկիզեց գերմանական «Վագր» տիպի եւս չորս տանկ: Մնացած տանկերը ետ նահանջեցին եւ ձախողվեց թշնամու հարձակումը: Այնուամենայնիվ, թշնամու տանկերից մեկին հաջողվեց մի քանի կրակոցով ոչնչացնել մեր հրանոթը: Եվ այստեղ էլ ծանր վիրավորվեց Գասպարյանը: Նույնիսկ վիրավոր վիճակում Գասպարյանը չթողեց մարտադաշտը: Եվ միայն հրամանատարի կարգադրությունից հետո, նրան տեղափոխեցին թիկունք:

Ստորաբաժանման հրամանատար մայոր Ռեպինը եւ քաղզոյվ նրա տեղակալ Կավերինը, 1944 թվականի օգոստոսի 25-ին, հատուկ նամակ են գրում Սուրեն Գասպարյանի հորը: Նրանում ասված է.

«Հարգելի Յակոբ Գասպարյան.

Այն ստորաբաժանման հրամանատարությունը, ուր ծառայում է Ձեր որդի Սուրեն Գասպարյանը, շնորհակալություն է հայտնում Ձեզ, որ դուք մեր հայրենիքի համար դաստիարակել եք հերոս զավակ: Օգոստոսյան թեժ կռվի ժամանակ գերմանացիները ձգտում էին պահել գրաված դիրքերը: Դրա համար նրանք մեկը մյուսի հետեւից տանկային գրոհ էին կազմակերպում: Այդ ժամանակ գերմանական 19 տանկերը ցանկանում էին խցկվել մեր հետեւակի շարքերը: Մերոնք սպասում էին թշնամու տանկերի հարձակմանը: Ձեր տղայի հրանոթի անձնակազմը, ուշադիր հետեւելով գերմանական տանկերի շարժմանը, թողեց, որ նրանք մոտենան: Մնացել էր չնչին տարածություն գերմանական տանկի եւ իրենց հրանոթի միջեւ, երբ Ս.Գասպարյանը, որպես հրանոթի նշանառու, առաջին դիպուկ հարվածով այրեց գերմանական տանկը եւ այնուհետեւ իրար հետեւից խփեց չորս ծանր տիպի տանկ, որից հետո հակառակորդի մնացած տանկերը հետ նահանջեցին:

Թշնամու տանկային գրոհը հետ մղվեց, եւ Ձեր որդի Սուրեն Գասպարյանը այդ մարտում հաղթող դուրս եկավ:»:

Գասպարյանն իր անօրինակ սխրագործությամբ ոգեշնչեց գրահահարներին եւ հարձակվող հետեւակի մարտիկներին, որոնք առաջ շարժվելով՝ ապահովեցին Վիսլա գետի ձախ ափում հենակետի գրավումը եւ ապա նրա ընդարձակումը:

Հաշվի առնելով այդ մարտերում Սուրեն Հակոբի Գասպարյանի ցուցաբերած խիզախությունը, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը 1944 թվականի նոյեմբերի 18-ի հրամանագրով գվարդիայի սերժանտ Սուրեն Հակոբի Գասպարյանին շնորհեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

1951 թվականին Ս.Գասպարյանը մեկնում է Օդեսա՝ հրետանային դպրոցում սովորելու: 1952 թվականին ավարտելով այն՝ նա ծառայում է Ուկրաինայում՝ Խորհրդային բանակի զորամասերից մեկում, մինչեւ 1956 թվականի սեպտեմբերը:

1956 թվականի վերջերին Ս.Գասպարյանը զորացրվում է Խորհրդային բանակի շարքերից, վերադառնում Տաշքենդ եւ աշխատանքի անցնում Լենինի անվան կարի արտելում՝ որպես վարպետ, ուր աշխատում է մինչեւ իր կյանքի վերջը:



**ԱՐՄԵՆ ԹԵՎԱՆԻ
ՀԱՅՐՅԱՆ**



**ԽՍՀՄ զԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻՆԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի ռազմաօդային սպայական կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության եւ հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

1. Կապիտան **Արմեն Թեւանի Հայրյանին:**

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 13 ապրիլի 1944թ.:

Արմեն Թեւոսի Յայրյանը սովետական խիզախ օդաչուներից է: Նա ծնվել է 1910 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Կարյազինոյի շրջանի Տող գյուղում՝ չքավոր գյուղացու ընտանիքում:

1924 թվականին Արմենը տեղափոխվում է Սամարղանդ, որտեղ սովորում է ավարտում է հայկական դպրոցի 4-րդ դասարանը: Այնուհետև նա որպես փականագործի աշակերտ, ընդունվում է Սամարղանդի գործարաններից մեկում, միաժամանակ ուսումը շարունակում բանֆակում: 1931 թվականին Արմենը մեկնում է Խորհրդային բանակ, սովորում է Տաշքենդի օդաչուական դպրոցում, որտեղ էլ նա մտնում է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության շարքերը:

Օդաչուական դպրոցն ավարտելուց հետո Յայրյանը՝ որպես մեխանիկ, չորս տարի աշխատում է ավիագործամասում: 1938 թվականին նա գործուղվում է սովորելու Էնգելսի անվան ռազմաօդաչուական դպրոցում, որն ավարտելուց հետո որպես օդաչու, ծառայում է Կիրովաբադի 160-րդ պահեստային ավիացիոն գնդում:

Յայրենական պատերազմի հենց առաջին օրերին Յայրյանը գտնվում էր գործող բանակում եւ մասնակցում Տիրասպոլ քաղաքի պաշտպանական մարտերին՝ կատարելով 40 մարտական թռիչք:

1941 թվականի նոյեմբերին, Կրեմենչուկ քաղաքի մատույցներում, օդաչուներ Յայրյանը եւ Խինվալեյին հակառակորդի զենիթային հրետանու ուժեղ կրակի պայմաններում կարողանում են մահացու բեռը թափել օկուպանտների բենզինե ցիստեռների վրա, որոնք պայթելով՝ առաջացնում են մեծ ծավալի հրդեհներ: Ապա գնդացրային կրակով նրանք խուճապի են մատնում թշնամու զինվորներին եւ ոչնչացնում մոտավորապես 200 հիտլերական: Նույն թվականի սեպտեմբերի 10-ին Չերնովի հրամանատարությամբ գործող ավիաչոկատի կազմում Յայրյանը եւ Խիտալիշվիլին հարձակվում են Պոլտավա քաղաքի օդանավակայանի վրա, խուզող թռիչքով ոչնչացնում թշնամու 14 ինքնաթիռ, որոնք նախապատրաստվում էին թռիչքի: Կռիվներից մեկում Եսկադրիլիայի հրամանատար Նովիկովը, օդաչուներ Յայրյանը, Գոնչարովը, Ուսակովը, Խիտալիշվիլին եւ Խինվալեյին օդ են բարձրանում՝ Կրեմենչուկից դեպի արեւելք տանող ճանապարհով անցնող Գուդերիանի տանկային շարասյունը ռմբակոծելու առաջադրանքով: Յայրյանը եւ իր ընկերները, նկատելով թշնամու շարասյունը, 500 մետր բարձրությունից հաջող եւ սրընթաց թռիչքով շարքից հանում են 11 տանկ: Հրամանատարության

առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար, Հայրենիքը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով:

Արմեն Հայրենիքի նոր սխրագործություններն արժանանում են հրամանատարության ուշադրությանը: Այսպես, 1942 թվականի հունվարին, ինքնաթիռների օդակը, որի կազմում էր Հայրենիքը, Սերբերյանիյե Պրուդի շրջանում գրոհում է թշնամու մոտո-մեքենայացված զորքերի վրա եւ անվրեպ մրբակոծությամբ ոչնչացնում 20 ավտոմեքենա, 400 զինվոր ու սպա:

Մորդվեսի շրջանում թշնամու զորքերի կուտակումը մրբակոծելու առաջադրանքով օդ է բարձրանում ավագ լեյտենանտ Հայրենիքի ինքնաթիռը: Նպատակակետին մոտենալիս, նա հանդիպում է հակառակորդի 13 կործանիչների: Տեղի է ունենում անհավասար մարտ: Հայրենիքի ինքնաթիռը լուրջ վնասվածք է ստանում, բայց օդաչուն հմտությամբ անցնելով ռազմաճակատի գիծը՝ հաջողությամբ վայրէջք է կատարում մեր տերիտորիայում: Առաջադրանքը գերազանց կատարելու համար Հայրենիքի ինքնաթիռի անձնակազմը 51-րդ բանակի հրամանատարության կողմից արժանանում է շնորհակալության:

1942 թվականի հունիսի 26-ին Հայրենիքի ղեկավարած ինքնաթիռների վեցյակը երեք սրընթաց հարձակում է գործում Բրյանսկ քաղաքի օդանավակայանի վրա, որի ժամանակ ոչնչացնում են թշնամու 44 ինքնաթիռ, շատ զինվորներ ու սպաներ: 1942 թվականի օգոստոսին, երբ թշնամու գերակշիռ ուժերն առաջ էին շարժվում մեր տերիտորիայում, Եսկադրիլիայի հրամանատար Հայրենիքը առաջադրանք է ստանում հինգ ինքնաթիռներով կասեցնել հակառակորդի զորքերի անցումը Դոն գետով: Թշնամու գեներալին հրետանու կատարողի գնդակոծման պայմաններում, Արմենի Եսկադրիլիան խափանում է թշնամու գետանցումը:

1942 թվականի ամռանը ֆաշիստական զորքերն անցնելով հարձակման՝ ճեղքում են խորհրդային զորքերի պաշտպանությունը Կուրսկ-Վորոնեժի ուղղությամբ: Այստեղ հանդիպելով խորհրդային բանակի համառ դիմադրությանը՝ նրանք թեքվում են դեպի հարավ՝ գլխավոր հարվածը ուղղելով Վոլգոգրադի վրա: Կատարողի եւ համառ մարտերից հետո հիտլերյան զորքերն անցնում են Դոնը եւ դուրս գալիս Վոլգայի շրջանը: Սկսվում է Վոլգոգրադի հռչակավոր ճակատամարտը: Վոլգոգրադը պաշտպանող ռազմա-օդային ուժերի կազմում էր գտնվում նաեւ Հայրենիքի ղեկավարած Եսկադրիլիան: Այստեղ նա կատարում է մարտական 17 թռիչք, ոչնչացնում թշնամու զգալի քանակությամբ կենդանի ուժ եւ տեխնիկա, որի համար Հայրենիքը

յանը երկրորդ անգամ պարզեւատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

Վոլգոգրադում սովետական բանակի կողմից ձեռք բերված պատմական հաղթանակից հետո, Արմեն Յայրյանը գտնվելով Յարավային ռազմաճակատի 5-րդ հարվածային բանակի կազմում, մասնակցում է թշնամու Նահանջող զորամասերի հետապնդմանը:

Եսկադրիլիայի հրամանատար Յայրյանն ակտիվ կերպով մասնակցում է Նաեւ հակառակորդի Տագանռոգյան խմբավորումը ոչնչացնելու եւ Դոնբասի ազատագրման համար մղված մարտերին: Նա անձամբ կատարում է 105 թռիչք եւ պաշտպանում մեր զորքերի հարձակումը, ոչնչացնում Նահանջող հիտլերյան զորքերին: Այդ սխրանքների համար ԽՍՀՄ Չերագույն խորհրդի Նախագահության 1944 թվականի ապրիլի 13-ի հրամանագրով նա արժանանում է Խորհրդային Միության հերոսի կոչման:

Օդային մարտերի հմուտ վարպետը Յարավային ռազմաճակատից շուտով տեղափոխվում է Մերձբալթիկա՝ որպէս 954-րդ գրոհիչ ավիագնդի հրամանատարի տեղակալ: Այստեղ նա ակտիվորեն մասնակցում է թշնամու զորքերի մնացորդների լիկվիդացման գործողություններին:

Յայրենական պատերազմի ռազմաճակատներում Յայրյանի հրամանատարությամբ գործող Եսկադրիլիան կատարել է մարտական 2600 թռիչք, որոնց ընթացքում ոչնչացվել են թշնամու 18 տանկ, 250 ավտոմեքենա՝ կենդանի ուժով ու բեռով, զենիթային հրետանու 6 մարտկոց, ավելի քան 300 մարդ: Մարտերում ձեռք բերած փայլուն հաղթանակների համար նրա կուրծքը զարդարված է Լենինի, Կարմիր աստղի, Ալեքսանդր Նեւսկու եւ մի շարք այլ շքանշաններով ու մեդալներով: Նա բազմիցս արժանացել է հրամանատարության շնորհակալությանը:

Յայրենական մեծ պատերազմն ավարտվելուց հետո Խորհրդային Միության հերոս Յայրյանը շարունակում է ծառայությունը ռազմա-օդային ուժերի նավատորմում՝ որպէս գրոհիչ ավիագնդի հրամանատարի տեղակալ:

1946 թվականին Արմեն Յայրյանը գործուղվում է ԽՍՀՄ ռազմա-օդային ուժերի բարձրագույն հրամանատարական, տակտիկական դասընթացները, որը ավարտում է 1948 թվականին եւ ստանում մայրի կոչում: 1951 թվականից մայրը Յայրյանը զորացրվում է Խորհրդային բանակի շարքերից եւ տեղափոխվում Տաշքենդ քաղաք:

**ԹԵՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆ**



**ԽՍՀՄ ՔԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի-
րեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

3. Ավագ լեյտենանտ **Թեմիկ Հովհաննեսի Ավթանդիլյանին:**

ԽՍՀՄ Քերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Քերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945թ.:

Յազիվ էր բոլորել խորհրդային Միության հերոս Թեմիկ Ավթան-
դիլյանի կյանքի քսաներկու գարունը, երբ նա զոհվեց
խորհրդային ժողովրդի ազատության եւ անկախության համար մղ-
վող Յայրենական մեծ պատերազմում:

Թեմիկը ծնվել է 1923 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտա-
կերտի շրջանի Մարտակերտ գյուղում, հովվի ընտանիքում: Նա սո-
վորել է նախ՝ տարրական, ապա՝ միջնակարգ դպրոցներում: Ըն-
դունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը:

Կոմերիտական Թեմիկն իններորդ դասարանի աշակերտ էր, երբ
հիտլերյան Փաշիստները ներխուժեցին մեր երկիրը: 1942 թվակա-
նին խորհրդային զինված ուժերը Կովկասում մահու եւ կենաց կռիվ
էին մղում մինչեւ ատամները զինված թշնամու դեմ: Թեմիկ Ավթան-
դիլյանն այդ ժամանակ կամավոր մեկնում է բանակ՝ համալրելու
Յայրենիքի պաշտպանների շարքերը: Նա ընդունվում է ավարտում
է Բաքվի հետեւակային ուսումնարանը՝ ստանալով լեյտենանտի կո-
չում, որից հետո 89-րդ հայկական դիվիզիայում նշանակվում է
հրաձգային դասակի հրամանատար:

1942 թվականի օգոստոսի սկզբին 89-րդ հայկական հրաձգային
դիվիզիան մեկնում է Կովկասյան ռազմաճակատ: Այստեղ յուրա-
քանչյուր թիզ հողի համար արյունահեղ մարտեր էին մղվում: 1943
թվականի հունվարին 89-րդ հայկական դիվիզիան Կովկասյան ռազ-
մաճակատի զորքերի հետ միասին հարձակման անցնելով, ազա-
տագրում է Մալգոբեկը եւ հետապնդելով թշնամուն, 1943 թվականի
սեպտեմբերին համառ կռիվներ է մղում Նովոռոսիյսկի մատույցնե-
րում: Այդ հարձակողական մարտերի ժամանակ Թեմիկը ցուցաբե-
րում է խիզախություն եւ ռազմական գործին տիրապետելու հմտու-
թյուն: Նովոռոսիյսկի ազատագրման մարտերի ժամանակ վնաս-
վում է խորհրդային մի ինքնաթիռ եւ ընկնում ծովը: Նկատելով այդ՝
Ավթանդիլյանը իսկույն նետվում է ջուրը եւ արագորեն լողալով,
փրկում է օդաչուի կյանքը: 1943 թվականին Ավթանդիլյանը ընդուն-
վում է ԽՄԿԿ շարքերը:

Ժելտոբրյուխ գյուղի մոտ գտնվող մի բարձունք թշնամին դարձ-
րել էր դիմադրության ուժեղ հենակետ: Այն պաշտպանում էր հակա-
ռակորդի 50 հոգուց բաղկացած կայազորը: Բարձունքի գրավումը
հանձնարարվում է Ավթանդիլյանի դասակին: Առաջնորդելով դասա-
կին՝ նա առաջինն է նետվում մարտի, ճեղքում թշնամու պաշտպա-
նության գիծը եւ մտնում խրամատների դասավորության մեջ: Դա-

սակը ոչնչացնում է թշնամու բոլոր կրակակետերը եւ գրավում է բարձունքը: Այդ մարտում Ավթանդիլյանը վիրավորվում է, բայց չի թողնում մարտադաշտը: Մարտական առաջադրանքի հաջող կատարման շնորհիվ ապահովվում է զորամասի առաջխաղացումը դեպի Վերխնիյ Բականսկ: Բարձունքը գրավելու համար հրամանատարությունը լեյտենանտ Ավթանդիլյանին պարգևատրում է Կարմիր դրոշի շքանշանով:

Բուժվելուց հետո, ավագ լեյտենանտ Ավթանդիլյանը նշանակվում է կարմրադրոշ 389-րդ հրաձգային Բերդիչեյան-Կլեցկյան դիվիզիայի կարմրադրոշ 545-րդ հրաձգային գնդի 2-րդ վաշտի հրամանատար, որն այդ ժամանակ մարտեր էր մղում Ուկրաինական 1-ին ռազմաճակատում: Այստեղ նա աչքի է ընկնում իր քաջագործություններով: 1944 թվականի նոյեմբերի 7-ին Ավթանդիլյանի մորն ուղղած նամակում հրամանատարությունը գրում է. «Ձեր որդին՝ Թեմիկ Յովհաննեսի Ավթանդիլյանը համարձակ սպա է: Նա արիաբար մարտնչում է գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ: Ձեր զավակը մեր ստորաբաժանման պարծանքն է: Նրա լայն կուրծքը զարդարում են Կարմիր դրոշի եւ Կարմիր աստղի շքանշանները»:

Ահեղ մարտերի բովով անցավ այն գումարտակը, որի կազմում էր Թեմիկ Ավթանդիլյանի վաշտը: 1945 թվականի հունվարին այդ վաշտը կռիվներ էր մղում Լեհաստանի տերիտորիայում: Յունվարյան հաղթական հարձակման ժամանակ Սլոպեց Շլյախեցկիի շրջանում թշնամու ամրություններից մեկի ճեղքման առաջադրանքը հանձնարարվում է ճակատամարտերում կոփված ավագ լեյտենանտ Ավթանդիլյանի հրամանատարությամբ գործող վաշտին: Յունվարի 13-ին գրոհային մարտերի վարպետը իր վաշտով ճեղքում է թշնամու խրամատները, դուրս գալիս մի բարձունք եւ ամրանում նրա արեւմտյան լանջերին: Վաշտի խիզախ մարտիկների առաջին կրակային հարվածից ոչնչացվում է վեց կրակային կետ: Անձամբ Ավթանդիլյանը ձեռքի նռնակով ոչնչացնում է մի ինքնագնաց հրանոթ, իսկ թշնամուց գրաված գնդացրով ոչնչացնում ավելի քան 50 հիտլերականի:

Իշխող բարձունքում գտնվող հակառակորդը երեք անգամ դիմում է հակագրոհի, բայց Ավթանդիլյանի կտրուկ եւ վճռական միջոցառումների շնորհիվ այդ հակագրոհները ետ են մղվում: Այդ հերոսական մարտերում Ավթանդիլյանի վաշտը ոչնչացնում է ավելի քան 100 ֆաշիստ, գերի վերցնում 50 զինվոր ու սպա, ոչնչացնում 8 հաստոցավոր եւ 16 ձեռքի գնդացիր, շարքից հանում 7 զրահատրանս-

պորտյոր: Այդպիսով, Ավթանդիլյանի վաշտի զինվորներն ապահովում են ամբողջ գումարտակի առաջխաղացումը մինչեւ Օդերի գետանցումը:

1945 թվականի փետրվարի 10-ին Ավթանդիլյանի վաշտին մարտական առաջադրանք է տրվում՝ մասնակցել գերմանական Կլեյն քաղաքի գրավմանը: Ավթանդիլյանը կազմելով քաղաքի մի հատվածի գրավման պլանը՝ անցնում է հարձակման: Թշնամին մոլեգին դիմադրում է՝ փորձելով դարան սարքել խորհրդային վաշտի համար: Կռահելով թշնամու մտադրությունը՝ Ավթանդիլյանն իր մարտիկներին հրամայում է թեւանցել հակառակորդին եւ հարվածել թիկունքից: Առաջադրանքը կատարվում է հաջող. վաշտը սրընթաց գրոհով մասնակցում է քաղաքի գրավմանը: Կլեյն քաղաքի գրավման մարտերում Ավթանդիլյանի վաշտի կողմից ոչնչացվում է 60 հիտլերական, 5 կրակային կետ եւ ռազմական տեխնիկա: Սակայն այդ մարտում հերոսաբար զոհվում է հայ ժողովրդի զավակ Թեմիկ Ավթանդիլյանը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով ավագ լեյտենանտ Թեմիկ Ավթանդիլյանին հետմահու շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:



**ԳԵՎՈՐԳ ԹԱՄՐԱԶԻ
ՀԱԿՈԲՅԱՆՑ**



**ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական,
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական խնդիրներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

1. Մայրո **Գեորգ Թամրազի Հակոբյանցին:**

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 3 հունիսի 1944թ.:

Նրա ծնողներն այդտեղ էին տեղափոխվել Ղարաբաղի Շուշի գավառի Արանգամիս գյուղից՝ դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Եվ նա՝ Գեուրգ Թամրազի Յակոբյանցը, ծնվել է 1920 թվականին այստեղ՝ Յուսիսային Կովկասի Պյատիգորսկ քաղաքում, քարտաշ-որմնադիրի ընտանիքում:

1928 թվականին Գեուրգն ընդունվում է Պյատիգորսկի միջնակարգ դպրոցը եւ 1939 թվականին ավարտում այն: Նույն թվականին նա սովորելու է գործուղվում Կրասնոդարի ռազմա-հետեւակային ուսումնարանը: Այստեղ նա ընդունվում է ՀամԼԿԵՄ շարքերը:

1941 թվականի մայիսին Գ. Յակոբյանցը ավարտում է ռազմա-հետեւակային ուսումնարանը, ստանում լեյտենանտի կոչում եւ նշանակվում հրաձգային դասակի հրամանատար՝ Լվով քաղաքում գտնվող 81-րդ մոտո-մեքենայացված դիվիզիայի 323-րդ գնդում:

Երբ սկսվեց Յայրենական մեծ պատերազմը, նրա առաջին իսկ օրերից 21-ամյա լեյտենանտ Գեուրգ Յակոբյանցը մտավ ահեղ մարտերի մեջ: 8-րդ մոտո-մեքենայացված դիվիզիան ծանր պաշտպանական մարտեր էր մղում Փաշիստական գավթիչների դեմ:

Յեշտ չէր հորհրդային մարտիկների համար թշնամուն թողնել հարազատ Յայրենիքի թեկուզ մի թիզ հողը: Երիտասարդական ավյունով ու թշնամու նկատմամբ լի ատելութամբ, մարտի էր նետվում կոմերիտական լեյտենանտ, դասակի հրամանատար Գ. Յակոբյանցը: Դժվարին նահանջի ճանապարհին, Շեպետովկայի մոտ, Չուզնո ավանում 1941 թվականի հուլիսի 20-ին Գ. Յակոբյանցը ոտքից ծանր վիրավորվում է: Բուժվելուց հետո, նույն թվականի նոյեմբերին նա ուղարկվում է Արմավիր՝ Յարավային ռազմաճակատի շտաբի տրամադրության տակ, ուր նշանակվում է 347-րդ դիվիզիայում վաշտի հրամանատար: Այդ միավորման կազմում նրա վաշտը մասնակցում է Դոնի Ռոստովի, Տագանռոգի եւ Վորոշիլովգրադի ազատագրման համար մղած մարտերին:

1942 թվականի հունվարին ավագ լեյտենանտ Յակոբյանցը նշանակվում է գնդի շտաբի պետի տեղակալ, իսկ ապրիլին՝ գումարտակի հրամանատար: Մարտերում աչքի ընկած գումարտակի հմուտ ղեկավար Յակոբյանցին 1942 թվականի հուլիսին շնորհվում է կապիտանի կոչում: Մարտից-մարտ, օրեցօր աճում եւ կոփվում է երիտասարդ սպան:

Ժամանակավոր, ծանր նահանջից հետո, հորհրդային զորքերը 1943 թվականի հունվարյան ցրտաշունչ օրերին Կովկասի ռազմա-ճակատում անցան ընդհանուր հարձակման: Կապիտան Գ. Յակոբ-

յանցի գումարտակն ակտիվորեն մասնակցում էր Արմավիր, Կրասնոդար, Կրիմսկայա եւ այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման համար մղած մարտերին:

1943 թվականի ապրիլին Յակոբյանցը հատուկ գումարտակով, դժվարին տեղանքներում, 15 օր անընդհատ համառ մարտեր է մղում Ադաբամկա գետի ափերին եւ ճանապարհի հարթում Կելերովի-Կիելսկի բնակավայրերի ուղղությամբ: Սակայն ֆաշիստների ստեղծած ուժեղ պատնեշները շրջանցելու նպատակով, ռազմաճակատի հրամանատարությունը փոխում է հիմնական հարվածի ուղղությունը դեպի Կրիմսկ-Թաման: Կարճ ժամանակից հետո Յակոբյանցն իր զորամասով տեղափոխվում է Միուսի եւ Մոլոչնայա գետերի շրջանը եւ աչքի ընկնում Դոնեցկ, Արմյանսկ եւ այլ քաղաքների համար մղած մարտերում:

1943 թվականի հուլիսին Գ. Յակոբյանցն ընդունվում է ԽՄԿԿ շարքերը: Շուտով նրան շնորհվում է մայրոքի կոչում:

Խորհրդային զորքերը վճռական հարվածներ հասցնելով գերմանական զավթիչներին՝ արագորեն մոտենում էին Դնեպրին, որտեղ թշնամին հույս ուներ կասեցնել նրանց առաջխաղացումը: 1944 թվականի մարտի 13-ին մայրոք Գ. Յակոբյանցն առաջադրանք է ստանում Խերսոն քաղաքի շրջանում իր գումարտակով անցնել Դնեպրը, հենակետ գրավել նրա աջ ափին եւ ապահովել մյուս զորամասերի գետանցումը: Գ. Յակոբյանցը գումարտակից առանձնացնում էր հարվածային հատուկ խմբեր եւ հրետանային ուժեղ կրակի պաշտպանությամբ հմտորեն կազմակերպում նրանց գետանցումը: Չորսժամյա համառ մարտերից հետո նրանց հաջողվում է փոքրիկ հենակետ գրավել եւ ամրանալ Դնեպրի աջ ափին:

Վարպետորեն օգտագործելով ձեռքի տակ եղած հնարավոր բոլոր միջոցները՝ մայրոք Գ. Յակոբյանցն ամբողջ գումարտակը արագորեն փոխադրում է Դնեպրի աջ ափը եւ համարձակ ձեռնամարտի դիմելով, թշնամուն դուրս շարտում խրամատներից: Ետ մղելով հակառակորդի երկու հակագրոհ՝ Յակոբյանցի ղեկավարած ստորաբաժանումը սրընթաց գրոհով ճեղքում է թշնամու պաշտպանությունն ու մտնում Խերսոնի արվարձանը: Վեցժամյա փողոցային համառ մարտերից հետո գումարտակը միանում է արեւմտյան կողմից արդեն քաղաք մտնող իրենց գնդի մյուս գումարտակին:

Դնեպրի անցման եւ Խերսոնի ազատագրման ժամանակ ցուցաբերած անձնական համարձակության, խիզախության, ինչպես նաեւ բարդ իրադրության մեջ գումարտակը հմտորեն ղեկավարելու համար, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1944 թվականի

հունիսի 3-ի հրամանագրով, մայրո Գելորգ Թամրազի Զակոբյանցին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Բարձրագույն պարգևը՝ Նորանոր սխրագործությունների ներշնչեց Զակոբյանցին: Հետագայում նա իր զորամասով փայլուն կերպով կատարեց հրամանատարության առաջադրանքները՝ Նիկոլաե, Օչակով, Օդեսա եւ այլ քաղաքների ու գյուղերի ազատագրման եւ Ղևեստրի անցման մարտերում:

1944 թվականի ամռանը Խորհրդային զորքերը ձեռնամուխ են լինում Յասսի-Քիշինովյան խոշոր օպերացիայի իրականացմանը: Այդ մարտերին մասնակցում էր նաեւ փոխգնդապետ Գ. Զակոբյանցի ղեկավարած զորամասը:

Զակոբյանցն այնուհետեւ իր զորամասով հանդես է գալիս Վիսլայի օպերացիաներում, հաղթական մարտերով անցնում Լեհաստանի տարածքով եւ շարունակում թշնամու հետապնդումը բուն գերմանական հողում:

Պատերազմի հաղթական ավարտից հետո, 1945 թվականի սեպտեմբերին, Խորհրդային Միության հերոս Գելորգ Զակոբյանցն ընդունվում է Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որն ավարտելուց հետո 1948 թվականին 31-րդ մոտո-մեքենայացված դիվիզիայում նշանակվում է գումարտակի հրամանատար:

1949 թվականի դեկտեմբերին նա տեղափոխվում է 89-րդ Զայկական Թամանյան դիվիզիան՝ որպես մոտոցիկլետային գումարտակի հրամանատար: 1952 թվականին Զակոբյանցը նշանակվում է Նույն դիվիզիայի 400-րդ գնդի հրամանատարի տեղակալ: 1953 թվականի ապրիլի 30-ին նրան շնորհվում է գնդապետի կոչում:

1956 թվականին Գելորգ Զակոբյանցն աշխատանքի է անցնում Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտում:

Պահեստի գնդապետ Գելորգ Թամրազի Զակոբյանցի կուրծքը զարդարում են Լենինի երկու, Կարմիր դրոշի, Զայրենական պատերազմի առաջին եւ երկրորդ աստիճանի, Կարմիր աստղ շքանշանները, «Ոսկե աստղ»-ը եւ այլ մեդալներ:

Երկարատեւ եւ անբասիր զինվորական ծառայության համար Գ. Զակոբյանցը երկու անգամ պարգևատրվել է Զայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով:



**ՌՈՒԲԵՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ
ԲԱՂԻՐՈՎ (ԲԱՂԻՐՅԱՆ)**



**ԽՍՀՄ ՊԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի-
րեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

10. Լեյտենանտ **Ռուբեն Քրիստափորի Բաղիրովին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Կարճ էր նրա մարտական ուղին: Պատերազմում եղավ ընդամենը մեկ ամիս եւ այդ կարճ ժամանակամիջոցում իր հմուտ ղեկավարությամբ եւ անձնական քաջությամբ նա աչքի ընկավ ու հայտնի դարձավ ամբողջ դիվիզիայում:

Մինչեւ ռազմաճակատ մեկնելը Ռուբեն Բաղիրովն աշխատել է Աշխաբադում, որպես Թուրքմենստանի կոմունալ-բնակարանային շինարարության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահ: Նրանց ընտանիքը Թուրքմենստան էր տեղափոխվել Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքից, որտեղ 1908թ. ծնվել էր Ռուբենը:

1944 թվականին, ավարտելով Աշխաբադի ռազմա-հետեւակային ուսումնարանը, կոմունիստական կուսակցության անդամ, լեյտենանտ Ռուբեն Բաղիրովը մեկնում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ եւ նշանակվում 350-րդ դիվիզիայի վաշտի հրամանատար:

Գունդը պետք է հաղթահարեր Արեւմտյան Բուզ գետը: Վաշտի հրամանատար, լեյտենանտ Ռուբեն Բաղիրովն առաջադրանք է ստանում՝ հետախուզել գետանցի հարմար տեղը եւ գրավել Կրիստինոպոլ քաղաքի (Լվովի մարզ) մոտ գտնվող երկաթուղային կամուրջը, որով պետք է անցնեին մեր ռազմական տեխնիկան եւ հետեւակը: Վաշտը սողեսող մոտենում է գետին: Պարզվում է, որ գետն այստեղ խոր չէ, եւ մարտիկները լողալով անցնում են գետի մյուս ափը: Մոտ մեկ կիլոմետր առաջանալով աջ ափով՝ հեռվում նրանք նկատում են, որ գերմանացիներն ականապատում են կամուրջը: Ուշանալ չէր կարելի: Բաղիրովն անմիջապես որոշում է ընդունում՝ հարձակվել հիտլերականների վրա եւ թույլ չտալ, որ նրանք կամուրջը պայթեցնեն: Գերմանացիների համար բոլորովին անսպասելի՝ վաշտը հարձակվում է կամրջի ուղղությամբ: Հիտլերյան սակրավորները փորձում են փախուստի դիմել, սակայն միայն մեկին է հաջողվում ազատվել: Կամուրջը փրկվում է: Շուտով հարձակման է անցնում գերմանական հետեւակը: Բաղիրովի վաշտն ընդունում է մարտը եւ, հետ քաշվելով դեպի կամուրջը, ամրանում է այնտեղ: Այդ ժամանակ օգնության են հասնում դիվիզիայի առաջապահ զորամասերը: Թշնամին չդիմանալով մեր հարձակմանը՝ փախուստի է դիմում: Կամուրջը գրավվում է: Առաջադրանքը կատարված էր: Դա 1944 թվականի հուլիսի 18-ին էր: Այդ մարտում Բաղիրովի վաշտը գրեթե ոչնչացնում է գերմանական մեկ վաշտ, գրավում վեց ականանետ եւ մեկ գնդացի:

Լեյտենանտ Բաղիրովի առաջին մարտական փորձությունն

ավարտվում է փայլուն հաղթանակով, որի համար նա պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով: Պարգևատրվում են նաև վաշտի մարտիկներից շատերը:

Այնուհետև մեր զորամասերն արագորեն անցնում են Արեւմտյան Բուզը եւ հետապնդում նահանջող թշնամուն:

Յուլիսի 24-ի վաղ առավոտյան դիվիզիան առաջադրանք է ստանում՝ անցնել Սան գետը: Վաշտի կուսկազմակերպիչ Ռուբեն Բաղիրովին հանձնարարված էր ապահովել վաշտի անցումը: Նա կազմակերպում է մարտիկներին, ինքն առաջինը նետվելով, կոչ է անում հետևել իրեն: Նրան հետևում են մյուսները: Գետի արեւմտյան ափին անմիջապես սկսվում է ահեղ մարտ՝ հակառակորդի գերակշռող ուժի դեմ: Թշնամին մեծ ուժերով ճնշում էր: Ի՞նչ անել: Յետևում գետն էր: Նահանջի տեղ չկար: Բաղիրովն իր ուժերը բաժանում է երեք մասի. մի խումբը, ավագ Կոստենկոյի հրամանատարությամբ, կենտրոնում պետք է նահանջեր եւ կեղծ տպավորություն ստեղծեր, մյուս խումբը, Ելովսկու հրամանատարությամբ, գրոհելու էր աջ թեւից, իսկ երրորդ խումբը, Բաղիրովի հրամանատարությամբ, հարձակվելու էր ձախից: Գերմանացիները նկատելով, որ մեր մարտիկները նահանջում են, դուրս են գալիս դիրքերից՝ նրանց դեպի գետը հետապնդելու համար: Այդ ժամանակ վաշտն անցնում է հարձակման եւ թշնամուն վերցնում աքցանի մեջ: Չդիմանալով վաշտի գրոհին՝ հիտլերականները խուճապահար նահանջում են: Այդ կռվում թշնամին տալիս է մոտ հիսուն սպանված եւ ավելի քան հարյուր գերի: Բաղիրովն անձամբ սպանում է 12 հիտլերական:

Յետապնդելով նահանջող թշնամուն եւ ապա անցնելով նրա թիկունքը՝ վաշտը գնդի մյուս զորամասերի օգնությամբ ազատագրում է լեհական Լեժայսկ քաղաքը:

Այսպիսով, Բաղիրովի հրամանատարությամբ վաշտն առաջինն է անցնում Սան գետը եւ ապահովում գնդի գետանցումը:

1944 թվականի հուլիսի 27-ին գումարտակի 1-ին եւ 3-րդ վաշտերը Բաղիրովի հրամանատարությամբ, հաջող մարտ են մղում հակա-հարձակման անցած հիտլերյան ուժերի դեմ: Յետ մղելով թշնամու երկու ուժեղ գրոհները՝ Բաղիրովի մարտիկները նրան փախուստի են մատնում: Այդ մարտում գլխից վիրավորվում է Բաղիրովը:

Նույն օրը դիվիզիայի հրամանատարն իր մոտ է հրավիրում քաջագործությամբ արդեն շատերին հայտնի դարձած Ռուբեն Բաղիրովին եւ հետախուզական խիստ կարեւոր ու, միաժամանակ, դժվարին մի նոր առաջադրանք տալիս: Յարկավոր էր պարզել գետանցի հարմար տեղը եւ թշնամու ուժերի դասավորությունն ու քանակը

Վիսլա գետի մյուս ափին: Բաղիրովն ուրախությամբ ընդունում է այդ առաջադրանքը եւ, շնորհակալություն հայտնելով վստահության համար, անցնում նրա կատարմանը:

Իր հետ վերցնելով հինգ քաջ մարտիկի՝ թփերով պատված տեղանքով նա մոտենում է գետին եւ լեռ պարտիզանների օգնությամբ, հուլիսի լույս 28-ի գիշերը, փոքրիկ նավակով անցնում այն: Անհրաժեշտ տեղեկություններ հավաքելուց հետո, նույն գիշերը նա վերադառնում է: Լուսադեմին ամբողջ դիվիզիան արդեն գետն անցել էր: Թշնամին այդ մասին իմացավ եւ հարձակման անցավ միայն հաջորդ օրը, երբ մեր զորամասերն ամուր դիրքեր էին գրավել: Յենակետը պահպանելու եւ ընդլայնելու համար ծավալվում են կատաղի մարտեր, որոնք չեն դադարում օրեր շարունակ: Միայն մեկ օրվա ընթացքում՝ օգոստոսի 1-ին, Կոպչիվկիցա բնակավայրը գրավելու ժամանակ Բաղիրովի վաշտը հետ է մղում թշնամու հետեւակի եւ տակերի ինը հակագրոհ՝ ոչնչացնելով 60 զինվոր ու սպա, իսկ Բաղիրովն անձամբ խփում է մեկ տանկ:

Օգոստոսի 3-ին, կատարելով առաջադրանքը, Ռուբեն Բաղիրովը յոթ մարտիկի հետ միասին ոչնչացնում է թշնամու կրակակետը, 16 հիտլերական եւ վերցնում երկու հաստոցավոր գնդացի որ այլ ռազմավար:

Այսպես, քայլ առ քայլ, կատաղի մարտերով մեր զորամասերն ընդլայնում էին գրաված հենակետը: 1944 թվականի օգոստոսի 16-ին ուժեղ կռվում Ռուբեն Բաղիրովը ծանր վիրավորվում է:

Դա նշանավոր Սանդոմիրյան պլացդարմն էր Վիսլայի ձախ ափին:

Արեւմտյան Բուզ, Սան, Վիսլա գետերը հաղթահարելու, «սիստեմատիկ կերպով անձնական հերոսություն եւ ռազմական վարպետություն ցուցաբերելու համար» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թվականի սեպտեմբերի 23-ի հրամանագրով, վաշտի հրամանատար եւ կուսկազմակերպիչ Ռուբեն Բաղիրովին շնորհեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Բուժվելուց հետո, մինչեւ 1945 թվականի վերջերը, Բաղիրովը ծառայում էր Երեւանում գտնվող զորամասերից մեկում, որտեղից զորացրվելով, մեկնում է Աշխաբադ: Իսկ հետագայում տեղափոխվում է Պյատիգորսկ քաղաքը, ուր էլ շարունակում է աշխատել առողջաբանների տերիտորիալ վարչությունում:

**ԻՍԱՀԱԿ ՄԱՐԿՈՍԻ
ՄԱՆԱՍՅԱՆ**



**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի պետկազմին եւ շարքային կազմին
Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին*

Ֆիննական սպիտակ գվարդիականության դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

62. Կրտսեր հրամանատար **Իսահակ Մարկոսի Մանասյանին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 7 ապրիլի 1940թ.:

հասակ Մարկոսի Մանասյանը ծնվել է 1917 թվականի հուլիսին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Խերխան գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում:

Թշվառությունն ու զրկանքը Մարկոս Մանասյանի բազմաևնդամ ընտանիքի անբաժան ուղեկիցն են եղել, որոնցից նրանք քիչ, թե շատ ազատվեցին միայն խորհրդային տարիներին:

1927 թվականին Մանասյանն ընդունվում է գյուղի ոչ-լրիվ միջնակարգ դպրոցը եւ այն հաջողությամբ ավարտում 1933 թվականին: Ընտանիքին օգնելու համար 1934 թվականին նա մեկնում է Բաքու եւ աշխատանքի ընդունվում որպես ատաղձագործի աշակերտ եւ շուտով դառնում որակյալ բանվոր:

Մանասյանը 1935 թվականին մտնում է կոմերիտմիության շարքերը եւ նույն թվականին զորակոչվում բանակ: 1939 թվականին ավարտելով զինվորական կրտսեր հրամանատարների դպրոցը՝ նա նշանակվում է 4-րդ հրաձգային դիվիզիայի 39-րդ գնդում դասակի հրամանատար: Այստեղ էլ ընդունվում է Կոմկուսի շարքերը: Կոմունիստ հրամանատարը 1939 թվականի նոյեմբերին իր դասակով մասնակցում է Արեւմտյան Բելոռուսիայի եւ Արեւմտյան Ուկրաինայի ազատագրմանը, իսկ նույն թվականի վերջերին՝ խորհրդա-ֆիննական պատերազմին: Մարտերն այստեղ դաժան ու ծանր էին: Հակառակորդը մոլեգին կերպով դիմադրում էր: Այդ մարտում հերոսաբար զոհվում է գնդացրորդ, նշանառու Շաեւը: Մանասյանը անմիջապես փոխարինում է զոհված գնդացրորդին եւ դիպուկ կրակով շարքից հանում դիպուկահարների երկու կետ ու գերում հակառակորդի մեկ զինվոր: Սուանտո-Յարվ լճի մոտ մղվող մարտերում թշնամին լիակատար պարտություն է կրում:

Այնուհետեւ գնդին տրվում է նոր առաջադրանք. գրավել Կիրկ կոչվող բարձունքը, որը ոչ մեծ լեռնային գանգված էր՝ ծածկված խիտ անտառով: Նրա առջեւում փռված էր մի հարթություն, որի վրայով անցնում էր երկաթգիծը: Բարձունքից ոչ հեռու գտնվում էր մի եկեղեցի եւ գերեզմանատուն, որտեղ դիրքավորվել էին ֆինները եւ անընդհատ կրակի տակ էին պահում բարձունքից ոչ հեռու գտնվող գնդի շտաբը:

Հակառակորդը օգտվելով իր հարմար դիրքից՝ պատասխան կրակով հարվածում է շտաբը պաշտպանող մեր գնդացրի ուղղությամբ եւ շարքից հանում գնդացրորդին: Ստեղծվում է ծանր դրություն: Անհրաժեշտ էր անհապաղ հեռացնել սպառնացող վտանգը: Այդ պահին գնդացրային վաշտի հրամանատար Մանասյանը առա-

ջադրանք է ստանում՝ խափանել հակառակորդի կրակակետը: Խիզախ հրամանատարը, առանց վարանելու, սողեսող մոտենում է լռած գնդացրին: Կարգավորելով այն, նա տեղատարափ կրակով ոչնչացնում է թշնամու կրակակետը:

Գունդը համառ մարտեր մղելով՝ դանդաղորեն առաջանում էր դեպի բարձունքը: Հրետանային նախապատրաստությունից հետո նրա ստորաբաժանումներն անցնում են հարձակման: Գրոհայինների շարքերում էր գտնվում նաեւ Մանասյանը՝ գնդացրային իր վաշտով:

Մանասյանի հրամանատարությամբ գործող գնդացրային վաշտը, մյուս ստորաբաժանումների հետ միասին, հիմնովին ամրանում է բարձունքի վրա: Ահա այդ ժամանակ, դահուկավոր կամավորների մի ջոկ, հատուկ խնդիր ունենալով, անցնում է ռազմաճակատի գիծը, որպեսզի ներթափանցի թշնամու թիկունքը: Հակառակորդը գլխի ընկնելով՝ ջանում է օղակել ջոկին:

Մանասյանը, հետեւելով դահուկավորների շարժմանը եւ կռահելով մոտալուտ վտանգը, իր վաշտի անընդմեջ կրակով հարվածում է թշնամուն եւ դահուկավորներին ազատում վերահաս վտանգից:

Կիրկ բարձունքի գրավման եւ այնտեղ ամրանալու ժամանակ մարտական առաջադրանքները հմտորեն կատարելու, անձնական խիզախությունն ցուցաբերելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1940 թվականի ապրիլի 7-ի հրամանագրով Իսահակ Մարկոսի Մանասյանին շնորհում է Խորհրդային Միության հերոսի բարձր կոչում:

Ֆիննական պատերազմի հաղթական ավարտից հետո, հերոս Մանասյանը գործուղվում է Գորկի՝ Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմաքաղաքական ուսումնարանում սովորելու: Ավարտելուց հետո, 105-րդ հրաձգային գնդում նա նշանակվում է մարտկոցի կոմիսար, որտեղ ծառայում է մինչեւ 1942 թվականի փետրվար ամիսը:

1942 թվականի մայիսից-նոյեմբեր ամիսներին Մանասյանը աշխատում է Բաքվի N 12-88 հոսպիտալում՝ որպես պետ, իսկ 1943 թվականի հունիսից՝ Երեւանի N 372 հոսպիտալի պետի քաղաքական գծով տեղակալ: Նա իր ջանքերը, կազմակերպչական ընդունակությունները չի խնայում վիրավոր ռազմիկների բուժման, նրանց մարտունակությունը վերականգնելու եւ անձնակազմի քաղաքական պատրաստվածությունը բարձր մակարդակի վրա պահելու համար:

1943 թվականի հուլիսին Մանասյանը գործուղվում է Թբիլիսի՝ «Վըստրել» դասընթացներում սովորելու: Այն ավարտելուց հետո,

1944 թվականին նշանակվում է հրաձգային գումարտակի հրամանատար 26-րդ հրաձգային դիվիզիայի 976-րդ գնդում, որտեղ ծառայում է մինչեւ 1946 թվականը: 1947 թվականին Մանասյանը զորացրվում է Խորհրդային բանակի շարքերից, որից հետո ավարտում է բարձրագույն կուսակցական դպրոց եւ 1949-1952 թվականներին աշխատում Բաքվի Լենինի անվան տեքստիլ կոմբինատում՝ որպես դիրեկտորի տեղակալ: Սկսած 1952 թվականից Մանասյանը աշխատում է Ադրբեջանի ԽՍՀ հասարակական կարգի պահպանման նախարարությունում:





**ԳՐԻԳՈՐ ՄԻՔԱՅԵԼԻ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի պետկազմին եւ շարքային կազմին
խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին*

Ֆիննական սպիտակ գվարդիականության դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

1. Կրտսեր լեյտենանտ **Գրիգոր Միքայելի Հայրապետյանին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 7 ապրիլի 1940թ.:

Գուրգեն (Գրիգոր) Միքայելի Հայրապետյանը Հայրենական պատերազմը դիմավորեց արդեն որպես Խորհրդային Միության հերոս: Այդ փառքին նա հասել էր խորհրդա-ֆիննական պատերազմում:

Գուրգեն Հայրապետյանը ծնվել է 1914 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մինգրեյսկ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում:

1929 թվականին Գուրգենը ընդունվում է տեղի յոթնամյա դպրոցը: Սովորելու հետ մեկտեղ, 1930 թվականից սկսում է աշխատել կուլտուրեսուսություներում: Այդտեղ Գուրգենը ընդունվում է կոմերիտմիության շարքերը: Յոթնամյակն ավարտելուց հետո, 1936 թվականին, Հայրապետյանը զորակոչվում է կարմիր բանակի շարքերը: 1938-1939 թվականներին նա սովորում է հրամանատարական դասընթացներում եւ այն ավարտում կրտսեր լեյտենանտի աստիճանով եւ 75-րդ հրաձգային գնդում նշանակվում վաշտի հրամանատար: Երիտասարդ սպան մասնակցում է Արեւմտյան Ուկրաինայի եւ Արեւմտյան Բելոռուսիայի ազատագրմանը:

Խորհրդա-ֆիննական պատերազմի ընթացքում, երբ կատաղի մարտեր էին մղվում Մաներհայնի խիստ ամրացված պաշտպանական գծի ճեղքման համար, կազմակերպվում են առանձին կամավորական գրոհային խմբեր: Այդպիսի գրոհային խմբերից մեկի հրամանատար է նշանակվում կրտսեր լեյտենանտ Հայրապետյանը:

1940 թվականի փետրվարի 11-ին դիվիզիայի առաջընթաց հարձակումն ապահովելու նպատակով լեյտենանտ Հայրապետյանի գրոհային խմբին մարտական առաջադրանք է տրվում՝ գրավել այդ հատվածում գտնվող երկու դոտերը: Այդ գրոհային խումբը բաղկացած էր 32 մարտիկից: Առաջադրանքը բավականին բարդ էր եւ պատասխանատու: Խմբի հրամանատար Հայրապետյանը հրամայում է մարտիկներին՝ նետել պայուսակները եւ պահեստային շինելները, վերցնել միայն նռնակներ, զենքեր, փամփուշտներ եւ մոտենալ ֆիննական խրամատներին: Շուտով մեր գրոհայինները հուժկու ուռայով հարձակման են անցնում: Ֆինների մի մասը, կարծելով, թե խորհրդային զինվորներն արդեն մոտ են, խուճապի են մատնվում: Մարտը տեղափոխվում է խրամատների ներսը: Մեր գրոհայիններին հաջողվում է գրավել թշնամու դոտերը եւ ընդլայնելով գրաված տարածությունը՝ առաջ են շարժվում: Խրամատային մարտի ժամանակ առանձնապես իրեն լավ է դրսևորում կրտսեր լեյտենանտ Հայրապետյանը: Խրամատներում կուտակված թշնամու վրա նռնակներ

րի տարափ է տեղում: Նրան հաջողվում է շարքից հանել ավելի քան 20 զինվոր ու սպա: Հրամանատարության մարտական առաջադրանքը կատարված էր. գրավված էին Մաներիայմի ամրության երկու կարեւոր դօսեր, ոչնչացված էին ավելի քան 200 ֆիննական զինվոր ու սպա, վերցված էին շատ տեսակի արժեքավոր փաստաթղթեր, անհրաժեշտ սխեմաներ եւ գեւք:

ԽՍՀՄ Չերագույն խորհրդի նախագահությունը, 1940 թվականի ապրիլի 7-ի հրամանագրով, սպիտակ ֆինների դեմ մղված մարտերում հանդես բերած անձնուրացության ու հերոսության համար կրտսեր լեյտենանտ Գուրգեն Միքայելի Հայրապետյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

1941 թվականի հունիսի 22-ին, երբ հիտլերյան Գերմանիան հարձակվեց մեր Հայրենիքի վրա, Խորհրդային Միության հերոս Գուրգեն Հայրապետյանը Լենինգրադի Կիրովի անվան հետեւակային ուսումնարանի այն հրամանատարներից էր, որն առաջինը ցանկություն հայտնեց մեկնել ռազմաճակատ: Հայրենական պատերազմի առաջին օրերից նա մասնակցեց Նարվա եւ Լուգա քաղաքների պաշտպանական մարտերին, այնուհետեւ տեղափոխվելով Կովկաս, նշանակվեց 8-րդ առանձին լեռնա-հրաձգային ստորաբաժանման հրամանատար: Ավագ լեյտենանտ Գուրգեն Հայրապետյանն իր ալպինիստական ստորաբաժանման մարտական գործողություններով օժանդակում էր 20-րդ դիվիզիայի մերձծովյան խմբավորման եւ 40-րդ մոտո-հրաձգային բրիգադի ստորաբաժանումների լեռնանցումներին: Այստեղ խիզախ հրամանատարն ընդունվում է ԽՄԿԿ շարքերը:

1942 թվականի դեկտեմբերին Հայրապետյանը 236-րդ դիվիզիայում նշանակվում է հրաձգային գումարտակի հրամանատար եւ մասնակցում Կուբանի ազատագրման համար մղվող մարտերին: 1943 թվականի օգոստոսին 236-րդ դիվիզիան մեկնում է Միլերովո՝ հանգստի եւ համալրման: Այդ ժամանակ Հայրապետյանն ստանում է կապիտանի զինվորական աստիճան: Միլերովոյում Հայրապետյանը նշանակվում է 409-րդ հայկական դիվիզիայի 814-րդ գնդում գումարտակի հրամանատար: Դիվիզիան Նորից մեկնում է ռազմաճակատ եւ Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի զորքերի շարքերում մասնակցում Չմեւեկա քաղաքի ազատագրմանը, ապա հարձակման անցնում Դնեպրոձերժինսկի ուղղությամբ եւ ընդհուպ մտնում ուկրաինական մայր գետին՝ Դնեպրին:

Դնեպրի ձախ ափը, որը հարուստ էր տերեւախիտ ծառերով՝ բնական քողարկում էր ստեղծում մարտական գործողությունների

համար: Կապիտան Յայրապետյանն այդտեղ հասնելով՝ անմիջապես հրավիրում է վաշտի հրամանատարներին, յուրաքանչյուրին բացատրում իր դիրքավորման վայրը եւ անելիքները: Յագիվ էր ավարտվել խորհրդակցությունը, երբ գնդի հրամանատար Մալինինը իր մոտ է կանչում Յայրապետյանին, նրան նշանակում գրոհային խմբի հրամանատար եւ առաջադրանք տալիս՝ հենակետ գրավել Դնեպրի աջ ափին:

Ծառախիտ խորշերում Յայրապետյանը դասավորում է իր գնդացորդների եւ ականաձիգների լաստերն ու նավակները եւ սպասում գետանցի ազդանշանին: Նշանակված ժամին սկսվում է հրետանային ուժեղ գնդակոծությունը: Յակառակորդը իր հերթին բացում է պատասխան կրակ: Վերջապես անցնում է երկար սպասումի ժամը: Յայրապետյանը տալիս է գետանցի հրամանը: Խորհրդային մարտիկներն արհամարհելով մահը՝ դժվարին գետանցը կատարում են արագությամբ եւ հաջողությամբ: Յրետանու պաշտպանությամբ անցնելով Դնեպրի աջ ափը, Դնեպրոձերժինսկից դեպի հյուսիս՝ Յայրապետյանի գրոհայինները կատաղի մարտի են բռնվում հիտլերականների հետ: Մեր ռազմիկներին հաջողվում է ետ շարտել հակառակորդին, Դնեպրի աջ ափին ձեռք բերել հենակետ եւ այն ընդլայնել մինչեւ օժանդակ ուժերի հասնելը:

...1944 թվականի հունվար ամսվա առաջին օրերն էին: Յամառ ու կատաղի մարտեր էին մղվում մարզային կենտրոն Կիրովոգրադ քաղաքի համար: Այստեղ 409-րդ հրաձգային դիվիզիային առաջադրանք է տրվում անցնել Կիրովոգրադի հարավային մասով, ապահովել դեպի քաղաքը շարժվող մեր զորամասերի առաջընթացը, հնարավորություն տալ առաջապահ միավորումներին շրջապատել եւ ոչնչացնել Կիրովոգրադում կենտրոնացված թշնամու խմբավորումը:

409-րդ հայկական հրաձգային դիվիզիան պատվով է կատարում հրամանատարության կողմից տրված այդ առաջադրանքը: 1944 թվականի հունվարի 8-ին մեր զորքերը ազատագրում են Կիրովոգրադը: Կիրովոգրադի համար մղված մարտերում առավել աչքի ընկնելու համար դիվիզիան արժանանում է «Կիրովոգրադյան» կոչմանը: Այնուհետեւ դիվիզիան գետանցում է հարավային Բուգ, Դնեստր գետերը եւ հետապնդելով նահանջող թշնամուն՝ անցնում է Յունգարիայի սահմանը եւ գետանցում Տիսսան: Այդ մարտերի ընթացքում Յայրապետյանը նույնպես հանդես է բերում հրամանատարական հմտություն եւ արիություն:

1944 թվականի հոկտեմբերին, Տիսսա գետն անցնելուց հետո

Չայրապետյանն ուղարկվում է Մոսկվա՝ «Վըստրել» դասընթացներում սովորելու: Չայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո մայրը Չայրապետյանը, ավարտելով գնդի հրամանատարների այդ դասընթացները, նշանակվում է նախ ավագ հրահանգիչ, ապա՝ գնդի հրամանատարի տեղակալ, իսկ 1951 թվականին տեղափոխվում է Անդրկովկասյան ռազմական օկրուգ: 1948-1952 թվականներին նա հեռակա կարգով ավարտում է Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան՝ փոխգնդապետի կոչումով:

Սկսած 1955 թվականից Չայրապետյանն աշխատում է Երեւանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես դասախոս: Գուրգեն Չայրապետյանի կուրծքը զարդարում են Լենինի շքանշանը, հերոսի «Ոսկե աստղ» մեդալը, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի երկու շքանշանները եւ մի շարք այլ մեդալներ:





**ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏԻ
ԲԱՂՅԱՆ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի-
րեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

1. Փոխգնդապետ **Գրիգոր Կարապետի Բաղյանին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 29 հունիսի 1945թ.:

Կարմիր բանակի կադրային սպա Գրիգոր Կարապետի Բաղյանը պատերազմի սկզբնական շրջանում մարտերին մասնակցում էր որպես քաղաշխատող՝ գնդի պրոպագանդիստ: Պատերազմի փոթորիկներում նա կոփվեց եւ քաղաշխատողից աճեց ու դարձավ գնդի հրամանատար:

Գրիգոր Բաղյանը ծնվել է 1912 թվականին Ելիզավետպոլի (Կիրովաբադ) նահանգի Խաչակապ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում: Այնուհետեւ նա տեղափոխվել է Բաքու քաղաքը եւ ուսումը շարունակել այնտեղի Բ. Թումանյանի անվան հայկական N 22 միջնակարգ դպրոցում: Աշխատանքային գործունեությունը Գրիգորն սկսել է բանվորությունից: Այդ տարիներին նա ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը եւ շուտով ընտրվում կոմերիտական կազմակերպության քարտուղար: Դեռ նա տեղափոխվում է Լեռնային Ղարաբաղ, աշխատում որպես ուսուցիչ, ժողկրթբաժնի մեթոդիստ, ժողկրթբաժնի վարիչ: 1937 թվականին նա աշխատում էր «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ: Բաղյանը ԽՍՀՄ շարքերն է ընդունվել 1938 թվականին: Որոշ ժամանակ անց նա դպրոցական բաժնի վարիչ է նշանակվել կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեում:

1941 թվականի հունվարին Բաղյանը մեկնում է կարմիր բանակի շարքերը, որտեղ էլ նա նշանակվում է 136-րդ դիվիզիայի 387-րդ գնդի պրոպագանդիստ: 1941թ. օգոստոսին դիվիզիան Լենինականից մեկնում է ռազմաճակատ եւ սեպտեմբերին մարտի մեջ մտնում Չապարոժիեի շրջանի Մալայա Բելոգորկա գյուղում: Այնուհետեւ դիվիզիան ետ է շարժվում Վասիլկովա, Կրասնոարմեյսկ, Տագանռոգ քաղաքների ուղղությամբ՝ մեր մյուս զորամասերի հետ միասին մարտեր մղելով ֆաշիստական զենքերալ Կլեյստի տանկային բանակի զորամասերի դեմ:

Այնուհետեւ դիվիզիան շարժվում է դեպի Դիակովա, Նովո-Շախտինսկ, Նովո-Չերկասկ՝ Ռոստով քաղաքը Զյուսիսից պաշտպանելու համար: Այս մարտերում առավել աչքի ընկնելու համար, 136-րդ դիվիզիան արժանացավ Կարմիր դրոշի շքանշանի եւ գվարդիական կոչման: Այդ օրերին Բաղյանն արդեն գնդի զինկոմ էր: Բաղյանի գունդը մասնակցում է Վոլգոգրադի հերոսական պաշտպանությանը եւ աչքի ընկնում իր մարտական գործողություններով:

1943 թվականի մայիսի 15-ին 7-րդ գվարդիական բանակի ռազմական խորհրդի որոշմամբ, կապիտան Բաղյանն ուղարկվում է

գնդի հրամանատարների «Վըստրել» դասընթացներում սովորելու: Նույն թվականի նոյեմբերին, դասընթացներն ավարտելուց հետո, Բաղյանն անմիջապես մեկնում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ, նշանակվում 30-րդ հրաձգային կարմրադրոշ դիվիզիայի 71-րդ գնդի հրամանատարի տեղակալ, իսկ հրամանատարը զոհվելուց հոտո՝ գնդի հրամանատար: Գունդը մասնակցում է Կամենեց-Պոդոլսկ քաղաքի ազատագրմանը, Դեսնայի գետանցմանն ու Ստա-նիսլավ քաղաքի ազատագրմանը: Այս մարտերում հմուտ ղեկավարելու համար Բաղյանն արժանանում է Ալեքսանդր Նեւսկու շքանշանին:

1944 թվականի օգոստոս ամսին դիվիզիան մարտերով հասավ Կարպատների «Ռուսական լեռնանցք» կոչված վայրը, որտեղ հատկապես կատաղի մարտեր մղեց 987-րդ բարձունքի համար: Այստեղ մեկ օրվա ընթացքում խորհրդային ռազմիկները ետ մղեցին թշնամու 15 հակահարձակում: Լեռնանցքը գրավելու մարտերը լավ ղեկավարելու եւ անձնական քաջության համար գնդի հրամանատար Բաղյանը պարգևատրվում է Յայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով:

1945 թվականի փետրվարի սկզբներին Ռուբկա քաղաքի շրջակայքում դիվիզիայի զորամասերը հրաման են ստանում ճեղքել գերմանացիների պաշտպանական գիծը եւ դուրս գալ Մեծ-Տատրայի լեռնանցքը, թիկունքից չթողնել գերմանացիներին օժանդակ ուժեր ստանալ: Այս կարեւոր խնդրի կատարումը վստահվում է մայրը Բաղյանի գնդին: Բաղյանի հրամանատարությամբ ավտոմատավորներից եւ սակրավորներից կազմված մի գումարտակ, ձյունապատ եւ անանցանելի ճանապարհներով, բարձրանում է լեռները: Գիշերը գումարտակը իջնում է լեռներից, իսկ լուսաբացին հանկարծակի գրոհելով թշնամու վրա, գրավում է Ռուբկա քաղաքը: Քաղաքի գրավումով Բաղյանի գունդը ապահովում է մյուս զորամասերի առաջխաղացումը 50 կիլոմետրով: Մարտական առաջադրանքը հաջող կատարելու համար գնդի հրամանատարը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

Սկսած 1945-ի ապրիլի 15-ից գվարդիայի փոխգնդապետ Գրիգոր Բաղյանի գունդը մարտեր է սկսում Մորավյան կղզիների շրջանում. գրոհային գունդը չեխոսլովակյան Ռոզով գյուղի շրջակայքում, ճեղքելով գերմանացիների ամուր պաշտպանությունը, կրելով մարտի ողջ ծանրությունը, սրընթաց անցնում է Օպավա գետը եւ աստիճանաբար ընդլայնում գետի ձախ ափին գտնվող հենակետը: Մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու եւ ցուցաբերած

անձնական խիզախության համար Բաղյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով:

Նույն թվականի մայիսի 7-ին գվարդիայի փոխգնդապետ Բաղյանի գունդը առաջադրանք է ստանում՝ գրավել Մորավա գետի ափին գտնվող Օլոմուց քաղաքը, որը գերմանացիների պաշտպանության ուժեղ հենակետ էր:

Բաղյանը գունդը բաժանում է առանձին խմբերի: Խմբերը անտառի միջով, գիշերը աննկատելիորեն մոտենում են քաղաքին՝ գետի կողմից: Գետի վրայով կամուրջը պաշտպանվում էր թշնամու գնդացրային ուժերով: Շուտով Խորհրդային ռազմիկները լիկվիդացնում են կամուրջի պաշտպանությունը եւ ներխուժում քաղաք: Այդտեղ նրանց է միանում մեր տանկային գումարտակներից մեկը: Չամատեղ գործողություններով նրանք զարգացնում են հարձակումը եւ մայիսի 8-ին գրավում քաղաքը: Օլոմուց քաղաքը գրավելու ժամանակ զորամասերը հմտորեն ղեկավարելու, հրամանատարության մարտական առաջադրանքը ժամանակին եւ օրինակելիորեն կատարելու, ցուցաբերած անձնական սիրագործությունների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1945 թվականի հունիսի 29-ի հրամանագրով փոխգնդապետ Գրիգոր Կարապետի Բաղյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով նրան Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

Չայրենական պատերազմի ավարտից հետո Խորհրդային Միության հերոս Բաղյանը շարունակում է զինվորական ծառայությունը:

1953-1955 թվականներին փոխգնդապետ Բաղյանն ավարտում է Խորհրդային բանակի գլխավոր շտաբի բարձրագույն ռազմական ակադեմիան եւ գնդապետի աստիճանով շարունակում ղեկավար աշխատանք կատարել ռազմական օկրուգում:

Նա մահացել է սեպտեմբերի 27-ին, 1965թ. Գրողնում:





**ԳՐԻԳՈՐ ՇԱՅՈՒՄԻ
ԿԱԼՈՒՍՏՈՎ**

**ԽՍՀՄ զերմագույն հորհրդի նախագահության
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գրահատանկային եւ մեխանիզացված զորքերի
սպայական կազմին հորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի-
րեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար շնորհել հորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

1. Գվարդիայի գնդապետ **Գրիգոր Շահումի Կալուստովին:**

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 4 նոյեմբերի 1943թ.:

1942 թվականի հուլիսին գերմանա-ֆաշիստական զորքերը հարձակման անցան ռազմաճակատի հարավային հատվածում: Թշնամին ցանկանում էր հարվածել Վոլգոգրադին, Ռոստովին, անցնել Դոնն ու Վոլգան, ջախջախել Խորհրդային բանակի ձախ թեւը, ծավալել հարձակում դեպի Նավթային շրջանները, գրավել Կովկասը:

Դաժան օրեր ապրեց մեր Հայրենիքը Վոլգոգրադի (Ստալինգրադի) եւ Կովկասի պաշտպանության օրերին: Ահեղ ճակատամարտեր ծավալվեցին Վոլգոգրադի տափաստաններում եւ Կովկասյան Նախալեռներում:

Վոլգոգրադը պաշտպանում էին խորհրդային բոլոր ժողովուրդների զավակները, որոնք ցուցաբերեցին հայրենասիրության վառ օրինակներ եւ փառքով պսակեցին իրենց անունները:

Այդ հերոսների շարքերում էր նաեւ հայ ժողովրդի զավակ, գվարդիայի գնդապետ Գրիգոր Շահումի Գալստյանը (Կալուստովը):

Գրիգոր Գալստյանը ծնվել է 1908 թվականին Բաքվում, բանվորի ընտանիքում: Նա 1915 թվականին ընդունվում է տեղի տարրական դպրոցը, բայց թերավարտ թողնելով ուսումը՝ սկսում է աշխատել Նավատորմում: Բաքվի պրոլետարիատի շարքերում Գրիգորը ձեռք է բերում աշխատանքային եւ հեղափոխական ունակություններ:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո, նա սկսում է ծառայել «Բոյեւոյ» Նավի վրա, որի անձնակազմը մեծ դեր է խաղում Գրիգորի դաստիարակման գործում: 1925 թվականին Նավի բազմազգ ու համերաշխ ընտանիքը Գրիգորին ընդունում է լենինյան կոմերիտմիության շարքերը: Աշխատանքի հետ մեկտեղ նա շարունակում է ուսումը եւ ավարտում միջնակարգ դպրոցը:

1928 թվականին Գրիգոր Գալստյանը զորակոչվում է Կարմիր բանակի շարքերը եւ ողջ կյանքը կապում Խորհրդային Հայրենիքի պաշտպանության գործին: 1929 թվականին Գալստյանն ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը: Ավարտում է Բաքվի հետեւակային դպրոցը, ապա Թիֆլիսի հրամանատարական դասընթացները, դառնում բանակի քաղաշխատող:

Ֆաշիստական զորքերը մեր հայրենիքի վրա հարձակվելուց հետո, Գրիգոր Գալստյանը մեկնեց ռազմաճակատ:

Վոլգոգրադի պաշտպանության օրերին Գրիգոր Գալստյանն արդեն տանկային ստորաբաժանման հրամանատար էր: Հարեւան ստորաբաժանումների հետ միասին իր խիզախների զլուխն անցած, Գալստյանն ամուր պատնեշում է թշնամու առաջխաղացման ճանա-

պարհները եւ մինչեւ վերջ մասնակցում հակառակորդի խոշոր խմբավորման շրջապատման ու լիկվիդացման մարտերին: Այստեղ Քալստյանն աչքի է ընկնում իր կատարած խիզախությամբ, ինչի համար պարգևատրվում է Լենինի շքանշանով:

Խորհրդային բանակի հարձակողական մարտերի ժամանակ փոխգնդապետ Քալստյանը աննկարագրելի սխրանքներ է գործում, որի համար արժանանում է գվարդիայի գնդապետի կոչման: Չինվորական նոր աստիճանն էլ ավելի է ոգեւորում Քալստյանին: Տանկային նոր զորամասով նա մասնակցում է Կուրսկ քաղաքի ազատագրության համար մղած մարտերին: Այդ մարտերում նա հանդես է բերում ռազմավարական մեծ շնորհք եւ հմտություն: Դժբախտաբար, երկար չտեսց նրա կյանքը: 1943 թվականի հուլիսին Կուրսկի տակ մղված կատաղի մարտերում հերոսի մահով ընկնում է գնդապետ Քալստյանը:

Բարձր գնահատելով գվարդիայի գնդապետ Գրիգոր Քալստյանի մատուցած ծառայությունները հայրենիքի հանդեպ՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943 թվականի նոյեմբերի 4-ի հրամանագրով նրան հետմահու շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:



**ՅՐԱՆՏ ԱՐՄԵՆԻ
ԱՎԱԳՅԱՆ**



**ԽՍՀՄ ՔԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

ԽՍՀՄ գինված ուժերի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

2.Լեյտենանտ *Յրանտ Արսենի Ավագյանին:*

ԽՍՀՄ Քերագույն Խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Քերագույն Խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 15 մայիսի, 1946թ.:

Յրանտ Արսենի Ավագյանը ծնվել է 1924 թվականին Բաքվում, ատաղձագործի ընտանիքում: 1941 թվականի նոյեմբերին 10-րդ դասարանի աշակերտ, կոմերիտական Յրանտը կամավորագրվում է հայրենիքի պաշտպանությանը:

1942 թվականի հոկտեմբերին, երբ մեր զորքերը ծանր մարտեր էին մղում Յյուսիսային Կովկասում, Բաքվի ռազմածովային բժշկական ուսումնարանի կուրսանտ 18-ամյա Յրանտ Ավագյանը ստացավ իր մարտական մկրտությունը: Յակատանկային հրացանի նշանառու, ապա գնդացրային հաշվարկի հրամանատար Ավագյանը մարտնչել է Յյուսիսային-Կովկասյան, Ուկրաինական երրորդ եւ չորրորդ, Բելոռուսական առաջին ռազմաճակատներում:

1943 թվականի նոյեմբերից նա գումարտակի կոմերիտական կազմակերպիչ էր եւ իր անձնական օրինակով ոգեւորում ու մարտի էր տանում կոմերիտականներին՝ ցույց տալով խիզախության եւ արիության օրինակներ: Նույն թվականին Ավագյանն ընդունվեց կոմունիստական կուսակցության շարքերը:

Ուկրաինական Բոլշայա Լեպատուխա բնակավայրի մոտ մի բարձունքի համար մղած կռվում, առաջնորդելով գրոհող մարտիկներին, Ավագյանն առաջինն է հասնում բարձունքին եւ նրա վրա բարձրացնում կարմիր դրոշը: Ետ մղելով գերմանացիների հակագրոհը՝ խումբը մի ամբողջ օր իր ձեռքում է պահում բարձունքը, մինչեւ օգնության եւ հասնում մեր զորամասերը:

Ուժեղ մարտեր էին ընթանում Դնեպրի աջ ափին՝ գրաված հենակետը ընդլայնելու համար: Բարձունքներից մեկը պաշտպանող վաշտի հրամանատարը զոհվել էր: Իր վրա վերցնելով վաշտի հրամանատարությունը՝ Ավագյանը կազմակերպում է բարձունքի պաշտպանությունը: Գերմանացիները տանկերի օգնությամբ շարունակում էին հակագրոհները: Մեկ օրվա ընթացքում ետ մղելով թշնամու չորս հակագրոհ եւ մեծ կորուստ պատճառելով նրան՝ վաշտը ոչ մի քայլ ետ չնահանջեց գրաված դիրքերից:

Խորհրդային զորքերի 1945 թվականի հունվարյան հարձակման ժամանակ այն գումարտակը, որի կոմերիտական կազմակերպիչն էր լեյտենանտ Յրանտ Ավագյանը, Բելոռուսական առաջին ռազմաճակատի հատվածներից մեկում հաջողությամբ կատարեց գերմանացիների պաշտպանությունը ճեղքելու հրամանատարության

առաջադրանքը, որի համար պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով:

1945 թվականի ապրիլի 16-ին սկսվեց մեր զորքերի վճռական հարձակումը Բեռլինի ուղղությամբ: Թշնամուն հասցվող այդ վերջին հարվածի հենց առաջին օրը Յրանտ Ավագյանի մարտական գործերը հարստացան փայլուն սխրագործությամբ: Կյուստրինի հենակետում (Օդեր գետի ձախ ափին) երկաթուղային կայարաններից մեկի մոտ գտնվող տնակում եւ նրա շրջակայքում ամրացել էին զգալի թվով թշնամու ուժեր, որոնք խանգարում էին մեր գնդի հարձակմանը: Ավագյանը եւ մարտիկ Իլյան շարժվում էին դեպի թշնամու ուժերի դասավորությունը: Սողեսող մոտենալով տանկին՝ Ավագյանը լուսամուտից ներս է նետում երեք նռնակ: Շատերը սպանվում են: Կենդանի մնացած հիտլերականներն, անսպասելի հարձակումից հանկարծակիի եկած, խուճապահար փախուստի են դիմում: Այդ մարտում ոչնչացվեց 56 հիտլերական եւ գերի վերցվեց 14 զինվոր ու սպա: Գրավվեց երկու սարքին զրահափոխադրիչ: «Այդ խիզախության շնորհիվ,- գրել է հրամանատարությունը Ավագյանի պարգևաթերթիկում,- գունդը ճեղքեց գերմանացիների պաշտպանությունը մեծ խորությամբ»:

Մի քանի օր անց, դիվիզիան, որի կազմում էր նաեւ Ավագյանը, մոտենում է Շպրեն գետին եւ պատրաստվում գետանցման: Չորամասի շարժման ուղղությամբ առաջին անցնողներից էր կոմերիտական կազմակերպիչը, գումարտակի մի խումբ համարձակ կոմերիտականների հետ միասին: Թշնամու ուշադրությունը շեղելու նպատակով դիվիզիայի հրամանատարությունը «մարտ խաղաց» աջ թեւում, իսկ կոմերիտական մարտիկներն Ավագյանի ղեկավարությամբ, Բեռլինից ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա, հաջողությամբ անցան Շպրեն: Յինգ ժամ անց գունդն արդեն գտնվում էր գրավված հենակետում: Իսկ լուսադեմին հարձակման անցավ ամբողջ դիվիզիան:

1945 թվականի ապրիլի 24-ին Բեռլինի համար մղվող կատաղի մարտում Յրանտ Ավագյանը ծանր վիրավորվեց:

Բեռլինի ճակատամարտում գումարտակի կոմերիտական կազմակերպիչ, լեյտենանտ Յրանտ Ավագյանի կատարած համարձակ եւ խիզախ գործողությունների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1946 թվականի մայիսի 15-ի հրամանագրով

Նրան շնորհեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Հրանտը պարգևատրված է Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի երկու, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով, հերոսի «Ոսկե աստղ» եւ մի շարք այլ մեդալներով:

Հայրենական պատերազմի ավարտից հետո, Հրանտ Ավագյանը շարունակեց ծառայել Խորհրդային բանակում: Ավարտելով Լենինի անվան զինվորական-քաղաքական ակադեմիան՝ փոխգնդապետի կոչումով հետագայում շարունակեց ծառայությունը Խորհրդային բանակի շարքերում՝ որպես քաղաքական աշխատող:



**ՎԱՂԻՆԱԿ ՍԻՄՈՆԻ
ՉԱՔԱՐՅԱՆ**



**ԽՍՀՄ ՔԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում
հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի-
րեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու
հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝
հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

91. Գվարդիայի ավագ լեյտենանտ **Վաղինակ Սիմոնի Չաքաբանին:**

ԽՍՀՄ Քերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Քերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945թ.:

Վաղինակ Սիմոնի Չաքարյանը ծնվել է 1920 թվականին Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի Մարտունաշեն գյուղում: Կիրովաբադում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1939 թվականին Վաղինակը մեկնում է գինվորական պարտադիր ծառայության:

Երբ սկսվեց Չայրենական պատերազմը, կոմունիստ տանկիստ Վաղինակ Չաքարյանն անմիջապես մարտերի մեջ մտավ թշնամու դեմ: 1943 թվականի դեկտեմբերից, Ուկրաինական առաջին ռազմաճակատում քաջարի տանկիստը մասնակցել է Աջափնյա Ուկրաինայի, Արեւմտյան Ուկրաինայի, ինչպես նաեւ Լեհաստանի մի շարք շրջանների ազատագրմանը: Իր խիզախությամբ հատկապես աչքի ընկավ նա Շեպետովկա, Տերնոպոլ եւ այլ քաղաքների համար մղած մարտերում, ուր էլ երկու անգամ վիրավորվեց:

Մարտերում ցուցաբերած խիզախության ու արիության համար անվախ տանկիստը 1944 թվականի փետրվարին պարգևատրվել է Կարմիր աստղի, նույն թվականի օգոստոսին՝ Չայրենական պատերազմի առաջին աստիճանի եւ սեպտեմբերին՝ Կարմիր դրոշի շքանշաններով:

1945 թվականի սկզբներին Ուկրաինական առաջին ռազմաճակատում Վաղինակ Չաքարյանը նոր սխրագործություններ կատարեց: Այդ ժամանակ անգլիական զորամասերը ծանր վիճակի մեջ էին ընկել Արդենների շրջանում: Անգլիական կառավարության խնդրանքով խորհրդային զորքերը նրանց օգնելու նպատակով՝ նախատեսված ժամկետից շուտ հարձակման անցան նրանց դրությունը թեթեւացնելու համար: Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը, նույն թվականի հունվարի 12-ին, անցնելով հարձակման, ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը եւ շարունակեցին ազատագրել Լեհաստանի հարավային շրջանները: Այդ մարտերի ժամանակ գվարդիայի ավագ լեյտենանտ Վաղինակ Չաքարյանը տանկային դասակի հրամանատար էր 4-րդ գվարդիական տանկային կորպուսի 13-րդ գվարդիական գնդի 2-րդ զումարտակում: Այդ մարտերում, - ինչպես գրել է հրամանատարությունը, - նա իր գործողություններով ցուցաբերեց բացառիկ հերոսություն, կայունություն եւ խիզախություն: Ղեկավարելով հետախուզությունը՝ Չաքարյանն իր տանկով թշնամու համար անսպասելի, առաջինը մտավ Իվանովիցա գյուղը, որտեղ գտնվում էր հակառակորդի դիմադրության ուժեղ ամրացված հանգույցը: Հանկարծակիի բերելով եւ շարունակելով գերմանացիներին՝ Չաքարյանն իր տանկով ճգմեց երկու տանկային

հրանոթ՝ նրանց անձնակազմով, եւ դիպուկ կրակով ոչնչացրեց երկու գնդացի:

Գերմանացիները Չաքարյանի տանկի դեմ արագորեն նետեցին երեք ինքնագնաց հրանոթ: Անհավասար մարտի մտնելով, Չաքարյանը հմտորեն մանևրելով, մեկը մյուսի հետեւից նրանց ճգմեց իր տանկի թրթուրների տակ: Տեխնիկական կորստից բացի, թշնամին կռվի դաշտում թողեց 110 զինվոր ու սպա:

Այսպիսով, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի եւ տեխնիկայի մեծ կորուստներ, Չաքարյանի տանկային դասակը գրավեց մեր զորամասի առաջխաղացման համար կարելուր նշանակություն ունեցող Իվանովիցա գյուղը: Այնուհետեւ, վիրավորված վիճակում, նա հաջողությամբ հետ է մղում թշնամու հակագրոհը՝ մինչեւ մեր հիմնական զորամասերի օգնության հասնելը: Հենց այդ ժամանակ էլ, 1945 թվականի հունվարի 16-ին, թշնամու գնդակից զոհվում է տանկային դասակի հրամանատար, կոմունիստ Վաղինակ Չաքարյանը:

Գերմանական զավթիչների դեմ մղած պայքարի ճակատում հրամանատարության առաջադրանքը գերազանց կատարելու եւ ցուցաբերած հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով գվարդիայի ավագ լեյտենանտ, տանկային դասակի հրամանատար Վաղինակ Չաքարյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:





**ԳԱՐԵԳԻՆ ՇԵԿՈՅԻ
ԲԱԼԱՅԱՆ**

**ԽՍՀՄ զերագույն հորհրդի նախագահության
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական եւ
շարքային կազմին հորհրդային Միության հերոսի կոչում
շնորհելու մասին*

Կիւնից հարավ՝ Դնեպրը հաջողությամբ գետանցելու, Դնեպրի
արեւմտյան ափին ամուր հենակետ ստեղծելու գործում հրամանա-
տարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կա-
տարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսու-
թյան համար շնորհել հորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձ-
նելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

8. Կապիտան **Գարեգին Շեկոյի Բալայանին:**

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 23 հոկտեմբերի 1943թ.:

Դնեպրն անցնող խորհրդային բազմազգ մարտիկների շարքերում էր հայ ժողովրդի պանծալի զավակ Գ. Բալայանը, որը Յայրենական պատերազմում անթառամ փառքով պսակեց իր անունը: Նա զոհվեց Դնեպրի ափերին՝ Ուկրաինայի ազատագրման համար մղվող մարտերում:

Գարեգին Շեկոյի Բալայանը ծնվել է 1912 թվականին Գանձակի շրջանի Գյուլիստան գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Կրթություն է ստացել նա հարազատ գյուղի դպրոցում:

1928 թվականին ընդունվել է լենինյան կոմերիտմիության շարքերը:

1934-ի նոյեմբերին Բալայանը զորակոչվում է Խորհրդային բանակի շարքերը: Ընդունվում է հրաձգային գնդի դպրոցը: Գերազանց գնահատականներով ավարտում է այն եւ նշանակվում ջոկի հրամանատար: 1936 թվականին վերջացնելով զինվորական ծառայությունը, Բալայանը մնում է բանակում՝ որպես գնդի դպրոցի ավագ, այնուհետեւ՝ 1939 թվականի ապրիլին, ավարտելով համապատասխան դասընթացներ, ստանում է կրտսեր լեյտենանտի կոչում: Այդ թվականին նա ընդունվում է ԽՄԿԿ շարքերը:

Գ. Բալայանն իր ռազմական մկրտությունն ստացել է 1939 թվականին Կարելական պարանոցում սպիտակ ֆինների դեմ մղած պատերազմում, ուր նա վիրավորվում է, կատարած սխրանքների համար մի քանի անգամ արժանանում է խրախուսանքի:

Գ. Բալայանը Յայրենական պատերազմի առաջին օրերից մասնակցել է մեր երկիրը ներխուժած ֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերին: Նրա ղեկավարած ստորաբաժանումը ակտիվ մասնակցել է Վոլգոգրադի պաշտպանությանը, Արեւմտյան եւ Վորոնեժի ռազմաճակատներում մղվող մարտերին. ցուցաբերած խիզախության համար Գ. Բալայանը պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով եւ «Վոլգոգրադի պաշտպանության համար» մեդալով:

1943 թվականի սեպտեմբերին մեր զորքերը մոտեցել էին Դնեպրին: Կապիտան Գ. Բալայանի ստորաբաժանումը մարտական առաջադրանք էր ստացել՝ անցնել Դնեպրի աջ ափը: Սեպտեմբերի 22-ի գիշերը կապիտան Գ. Բալայանը հմտորեն կազմակերպում է իր գումարտակի անձնակազմի գետանցումը Դնեպրի աջ ափը: Ղեկավարելով գետանցումը, նա իր մարտիկներին ոգեշնչելով, ասել է՝ «Քաջերին ջուրը չի տանում»:

Դնեպրի աջ ափին թշնամին ցույց էր տալիս համառ դիմադրություն: Բալայանի ստորաբաժանման մարտիկները, մյուս ստորաբաժանումների համատեղ գործողությամբ, թշնամուն քայլ առ քայլ ետ են շարտում, իրենց գրաված հենակետը ընդարձակելու եւ մեր զորամասերի գետանցումն անվտանգ դարձնելու համար: Ոչ թշնամու դիմադրությունը, ոչ ավազուտները, ոչ փոսերն ու արգելակները չեն կանգնեցնում Բալայանի մարտիկներին, որոնք իրենց քաջ հրամանատարի օրինակով մարտնչում են թշնամու դեմ, նրան քշում դեպի Արեւմուտք:

Չորս օր շարունակ կատաղի մարտեր են մղվում Դնեպրի աջ ափին: Թշնամին հուսահատ դիմադրություն է ցույց տալիս, բայց Բալայանի մարտիկները, մյուս ստորաբաժանումների հետ առաջ են շարժվում՝ ընդարձակելով հենակետը: Նրանք ազատագրում են Չարուբենցի գյուղը եւ դրանով ապահովում բրիգադի գետանցումը:

Գումարտակը մարտերով մոտենում է Գրիգորենկա գյուղին: Բալայանը վճռում է թշնամուն դուրս մղել գիշերային սվինամարտով: Երբ ազդանշանի հրթիռը երկինք է սլանում, Բալայանի մարտիկները գրոհի են անցնում, նրանք թշնամուն ոչնչացնում են ավտոմատային կրակահերթով, հրացանի խզակոթով եւ այլ միջոցներով: Լուսաբացին թշնամին նահանջում է՝ թողնելով իր զինվորների ու սպաների տասնյակ դիակներ, երկու բեռնատար ավտոմեքենա, երկու ականանետ, երկու ձեռքի գնդացիր, մեծ քանակությամբ հրացան ու փամփուշտ:

Հաջորդ օրը կապիտան Բալայանի գումարտակը կասեցնում է գերմանացիների հակահարձակումը: Մեր զորքերն ամուր պահպանում են հենակետը: 1943 թվականի սեպտեմբերի 25-ին, հենակետի համար մղվող դաժան մարտերում հակառակորդի ավիացիայի հարձակման ժամանակ, կապիտան Գ. Բալայանը զոհվում է հերոսի մահով:

Դնեպրի աջ ափին, Ուկրաինայի ազատագրման համար ընկավ հայ ժողովրդի հերոս զավակ Գարեգին Բալայանը: Դեպի արեւմուտք շարժվող նրա մարտիկները, ատելությամբ լցված դեպի թշնամին՝ դաժան վրեժ էին լուծում:

Կապիտան Գ. Բալայանի խիզախության մասին ռազմաճակատի պոետները ոտանավորներ գրեցին, որոնց մի մասը երգի էին վերածվել եւ երգում էին նրա մարտիկները:

Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության,

հերոսության եւ համարձակ մաներելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը 1943 թվականի հոկտեմբերի 23-ի հրամանագրով կապիտան Գարեգին Շեկոյի Բալայանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Դնեպրի աջ ափին, Չարուբենցի գյուղի մոտ գտնվող մի գերեզմանաթմբի հողակտորի վրա գրված է. «Այստեղ թաղված է կապիտան Գարեգին Բալայանը (1912-1943 թթ.), որը հերոսաբար զոհվեց Դնեպրի ափին հայրենիքի ազատագրման համար մղված մարտերում»:





**ԷՂՈՒԱՐԴ ՄԵԼԻՔԻ
ԱՅԱՆՅԱՆ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

ԽՍՀՄ Չինված ուժերի սպայական, սերժանտական, շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

1. Ավագ սերժանտ **Էղուարդ Մելիքի Այանյանին:**

**ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ**

**ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ, 15 մայիս 1946թ.:

Էդուարդ Մելիքի Այսնյանը ծնվել է 1919 թվականի մարտի 25-ին, Գանձակի գավառի (այժմ Ադրբեջանական հանրապետության Խանլարի շրջան) Գետաշեն գյուղում: 1925 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Կիրովաբադ: 1936 թվականին ավարտելով Կիրովաբադի միջնակարգ դպրոցը՝ նա ընդունվում է Բաքվի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1941 թվականին, երբ նա վերջին պետական քննություններն էր հանձնում, սկսվում է Չայրենական պատերազմը: Է.Այսնյանը զորակոչվում է խորհրդային բանակի շարքերը, անմիջապես՝ հրետանային դպրոց: 1942 թվականի հոկտեմբերին ավարտում է դպրոցը եւ նշանակվում Պենզա քաղաքում գտնվող 91-րդ պահեստային գնդում որպես դասակի հրամանատար, հետո, այստեղից՝ Վորոնեժի ռազմաճակատ՝ 183-րդ զենիթա-հրետանային գունդը:

Այդ միավորումը պաշտպանում էր Վոլգոգրադ տանող երկաթգիծը: 1943 թվականի դեկտեմբերին նրան փոխադրում են 5-րդ զենիթային դիվիզիա՝ դասակի հրամանատար: Միավորումը 1943 թվականի հուլիսին մասնակցում է Բելգորոդ-Կուրսկի ուղղությամբ մղվող ճակատամարտին: Այստեղ Այսնյանի մարտիկները խփում են գերմանական 3 ինքնաթիռ: Ռազմաճակատի զորքերի մյուս միավորումների հետ միասին նրանց զորամասը, հետապնդելով թշնամուն, հասնում է մինչեւ Խարկով: Վերջինիս ազատագրման մարտերում Այսնյանը խփում է թշնամու մի ինքնաթիռ, որի համար պարգևատրվում է «Խիզախության համար» մեդալով:

Խարկով քաղաքն ազատագրելուց հետո նրանց զորամասը գետանցում է Ղնեպրը, որտեղ հազարավոր մարտիկների հետ Ղնեպրի աջ ափին հենակետ են գրավում նաեւ Այսնյանի մարտիկները, որոնք թշնամու օդային հարձակումներից հերոսաբար պաշտպանում են գրաված հենակետը: Մարտական այդ առաջադրանքը հաջող կատարելու համար, Այսնյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով:

1944 թվականի մայիսի 5-ին Խորհրդային զինված ուժերի միավորումները հասնում են Ռումինիա, որտեղ Այսնյանի ղեկավարած ստորաբաժանումը մարտեր է մղում Կուկուտին գյուղի մոտ: Գերմանացիները հինգ անգամ գրոհ են կատարում: Այսնյանի հրետանավորները թշնամու գրոհները հետ են մղում եւ պաշտպանում այդ տեղամասը: Ակտիվ մարտական գործողությունների համար հրամանատարությունը Այսնյանի ստորաբաժանմանը շնորհակալություն է հայտնում, իսկ իրեն պարգևատրում Չայրենական պատերազմի

առաջին աստիճանի շքանշանով:

1944 թվականի օգոստոսի 22-ին մեր զորքերը հասնում են ռումի-
նական Ադջյունովո քաղաքը, որի մի մասը գերմանացիների ձեռքում
էր: Գերմանական ռազմական ինքնաթիռները մեր տանկերին հնա-
րավորություն չէին տալիս առաջ շարժվելու: Այանյանի մարտկոցը
առաջադրանք է ստանում. քաղաքի հրապարակից կրակի տակ պա-
հել գերմանական ինքնաթիռը: Ի կատարումն այդ առաջադրանքի՝
նրանք խփում են մի ինքնաթիռ եւ թույլ չեն տալիս, որ թշնամին քա-
ղաք թափանցի:

Ռումինիայից հետո մեր զորքերը մտնում են Յունգարիա եւ մոտե-
նում մայրաքաղաք Բուդապեշտին: Այստեղ գերմանացիները
պաշտպանական ամուր գծեր էին ստեղծել: Մի շարք միավորումնե-
րի հրետանավորներ, որոնց թվում նաեւ Այանյանի մարտկոցը, 1944
թվականի դեկտեմբերի վերջերին առաջադրանք է ստանում գրոհել
Բուդապեշտի վրա: Ինչպես նախորդ, այնպես էլ Բուդապեշտի ազա-
տագրման համար մղված մարտերում մարտկոցի հրամանատար
Է. Այանյանն իրեն դրսեւորում է որպես ուժեղ կամքի տեր անձնավո-
րություն: Նա գերազանց տիրապետելով հրետանուն, իր ստորաբա-
ժանման գլուխն անցած՝ ուժեղ հարվածներ եւ կորուստներ պատ-
ճառեց թշնամուն: Այանյանի մարտկոցի մարտական հաշվում
գրանցվեց՝ թշնամու խփված 14 ինքնաթիռ, 3 տանկ եւ միևէն 300
զինվոր ու սպա: Նրա պարգևաթերթիկում գրված է. «Բուդապեշտ
քաղաքի մերձակայքում թշնամու խմբավորման վերացման համար
մղված մարտերում, գործող մյուս միավորումների շարքում, թշնա-
մու դեմ համառ մարտեր է մղել նաեւ Այանյանի մարտկոցը՝ ոչնչաց-
նելով թշնամու կրակային կետերը»:

1945 թվականի հունվարի 5-18-ը, Բուդապեշտում մղված մարտե-
րում, Այանյանի մարտկոցը հետ է մղել թշնամու 27 հակազրոհ,
ոչնչացրել է 36 հրանոթային, 20 դիպուկահարային եւ 40 տներում
տեղավորված կրակային կետեր, 12 ավտոմեքենա՝ ռազմական բեռ-
ներով եւ այլն: Բուդապեշտի փողոցներում հրանոթային եւ զնդաց-
րային ուժեղ մարտերի ժամանակ, Այանյանը արհամարհելով մահը,
իր հրանոթները հարմար դիրքերում տեղադրելով եւ հայտնաբերե-
լով թշնամու կրակային կետերը, հաճախ անձամբ ինքը 300-400
մետրի վրա ուղիղ նշանառությամբ ոչնչացրեց դրանք:

1945 թվականի հունվարի 6-ին, թշնամու հակազրոհի ժամանակ,
ավագ լեյտենանտ Այանյանը վիրավորվում է, բայց նա այդ վիճա-
կում շարունակում է ղեկավարել իր մարտկոցի գործողությունները:

1945 թվականի հունվարի 10-ին Այանյանը ոչնչացնում է դիպու-

կահարների երկու կետ, որով մեր ստորաբաժանմանը հնարավորություն է տալիս առաջ շարժվելու: Բուդապեշտի արելեյան մասի ազատագրման համար մղած մարտերում Այանյանն իր մարտկոցի անձնակազմով առաջինն է անցնում Դանուբ գետը:

Բուդապեշտի մարտերում աչքի ընկած քաջագործությունների համար ԽՍՀՄ Ֆերագույն խորհրդի նախագահության 1946 թվականի մայիսի 15-ի հրամանագրով ավագ լեյտենանտ Էդուարդ Մելիքի Այանյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Չայրենական մեծ պատերազմն ավարտվելուց հետո, 1946 թվականին, շատերի պես տուն է վերադառնում նաեւ Այանյանը: Նա 1947 թվականին ընդունվում է Չայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնի ասպիրանտուրան: Ավարտելով ասպիրանտուրան՝ նա տեղափոխվում է Մոսկվա, աշխատանքի ընդունվում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի մեխանիկական ինստիտուտ՝ գիտական աշխատող եւ շարունակում աշխատել երկար տարիներ:





**ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԵՔՍԱՆՐԻ
ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**ԽՍՀՄ զերագույն հորհրդի նախագահության
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին հորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել հորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

1. Գվարդիայի կապիտան **Անդրանիկ Ալեքսանդրի Մանուկյանին:**

**ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ
ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ**

Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի 1945թ.:

Խորհրդային Միության հերոս, գվարդիայի կապիտան Անդրանիկ Ալեքսանդրի Մանուկյանը Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ մտավ որպես հմուտ եւ արիասիրտ հետախույզ-հրամանատար:

Անդրանիկ Մանուկյանը ծնվել է 1917 թվականի մայիսի 17-ին Բաքու քաղաքում, ծառայողի ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո կոմերիտական Անդրանիկը 1934 թվականին ընդունվում է Բաքվի Ս. Մ. Կիրովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը եւ միաժամանակ ուսուցչի աշխատանք կատարում N 8 դպրոցում:

1939 թվականի սեպտեմբերին Մանուկյանը զինակոչվում է Խորհրդային բանակի շարքերը: 1940 թվականին նա ընդունվում է Կոմունիստական կուսակցության շարքերը: Հայրենական պատերազմի սկզբից մեկնում է ռազմաճակատ եւ մասնակցում մեր Հայրենիքի սահմանները ներխուժած ֆաշիստական զավթիչների դեմ Խորհրդային բանակի զորամասերի մղած համառ ու արյունահեղ պաշտպանական մարտերին:

Այն զորամասը, ուր ծառայում էր Մանուկյանը, համառ դիմադրությամբ նահանջելով թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ, աշնանը հասնում է Սեւաստոպոլ քաղաքին: «Այստեղ մենք որոշեցինք. լավ է մեռնել, քան գերմանացիներին հանձնել Սեւ ծովի սիրտ Սեւաստոպոլը», - ասում է Անդրանիկ Մանուկյանը: Նրա ստորաբաժանումը մոտ հինգ ամիս պաշտպանում է քաղաքի բնագծերից մեկը եւ թշնամուն թույլ չի տալիս թափանցելու նավահանգիստը: Այստեղ Անդրանիկը խիզախ ռազմիկի համբավ է ձեռք բերում: Գիշերային հետախուզությունների ընթացքում մի քանի անգամ նա հակառակորդի խրամատները մտնելով՝ «լեզու» է որսում, ճանաչվում որպես համարձակ հետախույզ եւ Սեւաստոպոլից հեռանում է միայն ծանր վիրավորվելուց հետո:

1942 թվականի ամռանը Մանուկյանը Վոլգոգրադի (Ստալինգրադի) հերոս պաշտպանների շարքերում էր: Վոլգոգրադի ռազմաճակատի մեր զորքերի հարձակման ժամանակ նա գվարդիական առաջին տանկային բրիգադի ավտոմատավորների թվում թշնամու դեմ մարտեր էր մղում Մամեւ Կուրգանում եւ Կալաչ քաղաքի տակ: Այդ արտակարգ արյունահեղ մարտերում նա երկրորդ անգամ վիրավորվում է, սակայն չի թողնում մարտը: Մարտը հաջողությամբ ավարտելուց հետո միայն, հոսպիտալում բուժվում եւ կրկին վերադառնում է զորամաս: 1943-ի հուլիս-օգոստոսին մասնակցում Կուրս-

կի աղեղի ճակատամարտին, որտեղ խորհրդային զորքերն իր գրոհներով հյուժում է հակառակորդի ուժերին եւ ջախջախելով գերմանական զորքերին, հուժկու հարձակումով դուրս է գալիս Ղնեպրի ափը ու մասշտաբային հարվածներով սկսում ազատագրել օկուպացված խորհրդային տարածքները:

1943 թվականի սեպտեմբերին Մանուկյանն արժանանում է կրտսեր լեյտենանտի սպայական կոչման: Նա նշանակվում է տանկային գնդի ավտոմատավորների վաշտի հրամանատար: Գետանցելով Ղնեպր գետը՝ դեկտեմբերին գունդը, որի կազմում էր Մանուկյանի վաշտը, ազատագրում է Կազատին քաղաքը: Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար առաջին անգամ Անդրանիկը պարգևատրվում է «Կարմիր աստղ» մարտական շքանշանով:

Այնուհետեւ, նրանց բրիգադը շարունակում է իր գրոհները: Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում հարձակումներ է սկսում Մերձկարպատներում՝ Չերնովիցի քաղաքի ուղղությամբ: Մանուկյանի վաշտը գնդի հրամանատարի առաջադրանքով, անցնելով Ղնեստրը, նրա արեւմտյան ափին գրավում է ամուր հենակետ: Համառությամբ ետ մղելով թշնամու զորամասերի կատաղի գրոհները՝ վաշտը ապահովում է խորհրդային տանկային ստորաբաժանումների գետանցումը: Առաջ շարժվելով՝ գունդն ազատագրում է Գորոդենկա եւ Աբերտին քաղաքները: Համարձակ գործողությունների համար լեյտենանտ Մանուկյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով: Օր-օրի ավելանում էր երիտասարդ հրամանատարի փառքը:

1944 թվականի հուլիսին գվարդիայի ավագ լեյտենանտ Անդրանիկ Մանուկյանը նշանակվում է բրիգադի գնդերից մեկի շտաբի պետի տեղակալ՝ հետախուզության գծով: Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում գունդը ակտիվորեն մասնակցում է Բուզ, Սան, Վիսլա եւ այլ խոշոր ջրային բնագծերի հաղթահարման մարտերին:

Հետախուզությունը Մանուկյանի տարերքն էր: Իր մտոհետախուզական խմբով 1944 թվականի ամռանն անցնելով Արեւմտյան Բուզ գետը, նա դուրս է գալիս ԽՍՀՄ պետական սահմանը եւ ոտք դնում լեհական հողին: Լեհական Յարոսլավ քաղաքի ուղղությամբ մարտերով առաջ շարժվելով, բրիգադի զորամասերը հակառակորդից մաքրում են բազմաթիվ բնակավայրեր, որոնց թվում՝ Ալեշիցա քաղաքը: Այնուհետեւ նրանք Յարոսլավ քաղաքից 12 կիլոմետր հյուսիս, անցնում են նաեւ Սան գետը, նրա ձախ ափին մահու եւ կենաց կռիվ մղում գերմանական 24 տանկերի դեմ ու ամուր պահպանում

հենակետը մինչեւ բրիգադայի հիմնական ուժերի հասնելը: Շուտով բրիգադան ազատագրում է Յարոսլավ քաղաքը: Այստեղ կապիտան Մանուկյանը պարզեցատրվում է Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով եւ նշանակվում գվարդիական տանկային առաջին բրիգադայի հետախուզության պետ:

1945 թվականի ձմռանը Խորհրդային բանակի ընդհանուր հարձակման ժամանակ բրիգադը հունվարի 14-ին, Բելոռուսական առաջին ռազմաճակատի գորքերի կազմում, հարձակման է անցնում Վիսլա գետի ուղղությամբ գերմանացիների Մագնուշեյան տեղամասի ամրակետի վրա: Ռազմաճակատի միավորումների հետ միասին, ճեղքելով գերմանացիների պաշտպանությունը եւ կիլոմետր առ կիլոմետր առաջ շարժվելով, բրիգադան մասնակցում է Վարշավայի ազատագրմանը, Վարդա գետի անցմանը, Կոնեն, ապա Պոզնան քաղաքների համար մղված մարտերին:

Կապիտան Մանուկյանը հմտորեն գլխավորելով բրիգադայի հետախուզությունը՝ նորանոր հաջողությունների է հասնում: Վերահաս հրամանատարությունը բարձր է գնահատում Մանուկյանի մարտական ծառայությունները Յայրենիքի հանդեպ, 1945 թվականի հունվարի 19-ին նրան ներկայացնում է Խորհրդային Միության հերոսի կոչման: Այդ առթիվ բրիգադի հրամանատարության կողմից կազմված պաշտոնական բնութագիր-պարգևաթերթիկում՝ հունվարյան հարձակման առաջին չորս օրվա ընթացքում, Մանուկյանի կատարած մարտական գործողությունների մասին արձանագրված է հետեւյալը. «Մարտական առաջադրանքի համաձայն, Մանուկյանը հունվարի 15-ի գիշերը հետախուզների հետ անցնելով ռազմաճակատի գիծը՝ թափանցում է թշնամու պաշտպանության երկրորդ գիծը եւ հայտնվում նրանց մարտակարգերի մեջ Ցիցեյուվկայի շրջանում: Մանուկյանը համարձակորեն ներխուժելով գետնափոր տնակներից մեկը՝ նռնակներ է նետում հիտլերականների վրա, սպանում յոթ զինվոր, վիրավորում 2-ին եւ գերի վերցնում գերմանական 19-րդ տանկային դիվիզիայի 73-րդ մոտոզնդի հրամանատար, կապիտան Վայսին եւ բերում շտաբ: Գերին արժեքավոր տեղեկություններ է տալիս, որոնք հիմնականում վճռում են բրիգադի այդ օրվա հարձակողական մարտի հաջողությունը:

Յունվարի 17-ին շարժվելով Եժով քաղաքի ուղղությամբ՝ Մանուկյանը իր հետախուզների խմբով հանդիպում է հակառակորդի ուժեղ ուղեկալի: Զաղաքի արեւելյան կողմում թողնելով հետախուզական խմբի հիմնական ուժերին՝ երկու հոգու հետ շրջանցում է քաղաքը եւ մանրամասն հետախուզում թշնամուն: Այդտեղ՝ քաղաքի

արեւմտյան ծայրամասում, մարտի է բռնվում գերմանացիների մի խմբի հետ: Նրա ազդանշանով հետախուզական խմբի մյուս մարտիկները օգնության են հասնում եւ հարձակման անցնում արեւելյան կողմից: Երկու կողմերից նեղելով հակառակորդին՝ ոչնչացնում են նրանց մի մասին, 15 հոգու գերի վերցնում եւ արտակարգ համարձակություն հանդես բերելով՝ օժանդակում են Եժով քաղաքի ազատագրմանը»:

Բրիգադայի հրամանատար, գվարդիայի գնդապետ Տեմիսիկը, հպարտ իր հետախույզներով, այդ օպերացիայի մասին գրել է. «Գվարդիայի կապիտան Մանուկյանը, շնորհիվ իր համարձակ նախաձեռնության եւ արտակարգ քաջության, հետախուզական խմբի ուժերով օժանդակեց գրավելու Եժով քաղաքը»:

Պարգևաթերթիկում արձանագրված է նաեւ, որ այդ նույն օրը ճանապարհին հետախույզներն իրենց խիզախ հրամանատարի գլխավորությամբ հարձակվում են գերմանական գումակի եւ զորքի մի շարասյան վրա: Ոչնչացնում են չորս հրանոթ, գրավում ավելի քան 60 ավտոմեքենա, գերի վերցնում \$աշխատական 20 զինվոր ու սպա: Հունվարի 18-ին, նույն կարգով, թափանցելով Պոտոմբիցա երկաթուղու կայարանը, հետախույզները ոչնչացնում են ժամապահներին, գերում կայարանապետին եւ նրա 2 պաշտոնյաներին ու բերում շտաբ: Այդ գերիների տված տեղեկություններն օգնում են բրիգադին հաջողությամբ կատարելու սկսած օպերացիան:

Ահա, այս խիզախությունների համար ԽՄԿՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1945 թվականի փետրվարի 27-ի հրամանագրով Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհում գվարդիայի կապիտան, հայ ժողովրդի խիզախ զավակ Անդրանիկ Մանուկյանին:

Ոգեշնչված բարձր պարգևից՝ հերոս Մանուկյանը, կրկնապատկված եռանդով՝ շարունակելով իր մարտական ուղին, հետախուզական հաջողություններով մասնակցում է Օդերի գետանցմանը, Ֆրանկֆուրտի եւ Բեռլինի գրավմանը եւ \$աշխատական բանակի վերջնական ջախջախմանը:

Գերմանական Բոմենտ քաղաքը գրոհելիս, Մանուկյանը, հրամանատարության առաջադրանքով իր 20 հետախույզներին, գերմանական զինվորի հագուստ հագցնելով, ինքն էլ օբեր-լեյտենանտի համազգեստ կրելով, մի ամբողջ օր հետախուզում է ռազմաճակատի գծի վրա գտնվող, գերմանացիներով բնակեցված այդ քաղաքը: Հաջորդ օրը հարուստ տվյալներով ետ վերադառնալով, մասնակցում է քաղաքի գրավման համար բրիգադայի մղած համառ մարտե-

րին: Այդ կարգով Մանուկյանը շատ անգամներ օգնել, դուրս է բերել բրիգադային ծանր վիճակից:

Պատերազմի եզրափակիչ շրջանում, Մանուկյանն արդեն տակային գումարտակի հրամանատար էր: Նա պատերազմն ավարտեց Բեռլինում:

Խորհրդային Միության հերոս Ա.Մանուկյանը բանակից զորացրվում է 1946 թվականի սեպտեմբերին, վերադառնում Բաքու եւ աշխատանքի է անցնում Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի ապարատում, իսկ հետագայում՝ դպրոցներում, որպես պատմության դասատու: Նրա կուրծքը զարդարված են Լենինի, Կարմիր դրոշի՝ երկու, Կարմիր աստղի շքանշաններով, հերոս «Ոսկե աստղ» մեդալով, Լեհական «Գրյունվալդե» շքանշանով եւ մի շարք այլ մեդալներով:





**ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵՂԱՐԻ
ՄԵԼԻՔՅԱՆ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ:

Ավագ սերժանտ **Խաչատուր Բեգլարի Մելիքյանին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 5 նոյեմբերի 1942թ.:

Խորհրդային Միության առաջին հայ հերոսների շարքերում իր արժանի տեղն է գրավում ավագ լեյտենանտ Խաչատուր Բեգլարի Մելիքյանը: Նա անձնվիրաբար մարտնչել է ֆաշիստական զավթիչների դեմ եւ հերոսաբար ընկել մարտական առաջադրանքը կատարելիս:

Խաչատուր Մելիքյանը ծնվել է 1911 թվականին Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Չագլիկ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: 1920 թվականին նա ընդունվում է գյուղի յոթնամյա դպրոցը, որն ավարտում է 1927 թվականին: 1928 թվականին Խաչատուրն ընդունվում է Կոմերիտմիության շարքերը: 1931 թվականին նա մեկնում է Գրոզնի եւ «Կրասնի մոլոտ» գործարանում աշխատանքի ընդունվում որպես խառատի աշակերտ: Մեկ տարի աշխատելուց հետո, 1932 թվականին նա մտնում է Դոնի Ռոստովի մանկավարժական տեխնիկումը, որն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի գյուղ եւ աշխատանքի անցնում «Բուշեիկ» կոլտնտեսությունում:

1934 թվականի հունվարին Խաչատուրը զինակոչվում է բանակ եւ ընդունվում հրաձգային գնդի դպրոցը: Ավարտելով այդ դպրոցը՝ նա նշանակվում է ջոկի հրամանատար: Ծառայության ընթացքում Խաչատուրն իրեն դրսեւորում է որպես օրինակելի եւ կարգապահ հրամանատար: Չինվորական պարտադիր ծառայությունը կատարելուց հետո, Մելիքյանը զորացրվում է 1935-ի սեպտեմբերին եւ մինչեւ 1939թ. օգոստոսը աշխատում Կիրովաբադի տարբեր հիմնարկներում:

1939 թվականի օգոստոսին նա նորից զինակոչվում է բանակ: 1940 թվականի ապրիլին, Մելիքյանը նշանակվում է վաշտի հրամանատարի տեղակալ, իսկ երկու ամիս անց՝ վաշտի հրամանատար՝ 227-րդ հրաձգային դիվիզիայի 707-րդ գնդում: Նույն թվականին նա ընդունվում է ԽՄԿԿ շարքերը:

Երբ 1941 թվականի հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա, թշնամու անակնկալ հարվածներն առաջինն իրենց վրա ընդունեցին խորհրդային սահմանապահ զորքերը: Նրանց շարքերում էր նաեւ Մելիքյանի ստորաբաժանումը: Մարտերից մեկում ստորաբաժանումը շրջապատման վտանգի մեջ է ընկնում: Ցուցաբերելով համառություն եւ ռազմական հմտություն՝ Մելիքյանը ստորաբաժանումը դուրս է բերում շրջապատումից: Հրամանատարությունն ըստ արժանվույն գնահատելով նրա կատարած սխրագործությունները՝ շնորհով նշանակվում է գումարտակի հրամանատար:

1941 թվականի ամռանը հակառակորդը հասել էր Նիժնայա Սի-րովատկա գյուղը եւ ամեն միջոց գործադրելով՝ ջանում էր գրավել այն: Տեղի են ունենում ահեղ մարտեր: Մելիքյանի գումարտակի մարտիկները չորս անգամ գրոհում են թշնամուն՝ պատճառելով կենդանի ուժի եւ տեխնիկայի մեծ կորուստներ:

Պրոխորովկա գյուղում ամրացված թշնամու ուժեղ խմբավորումը ջախջախելու համար 223-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարությունը ավագ լեյտենանտ Մելիքյանին առաջադրանք է տալիս: 1941 թվականի դեկտեմբերի 7-ի լույս 8-ի գիշերը Մելիքյանի գումարտակը, օգտվելով մթությանից, հանկարծակիի բերելով թշնամուն, անսպասելիորեն մտնում է Պրոխորովկա եւ գրավում գյուղի հյուսիս-արեւելյան մասը եւ ոչնչացնում տներում պատսպարված մոտ 150 ֆաշիստների: Տեղի է ունենում փողոցային ուժեղ մարտ: Հիտլերականները երեք անգամ գրոհում են մեր մարտիկների վրա, բայց հանդիպելով կատաղի դիմադրության՝ հետ են քաշվում: Այս մարտն ավարտվում է լուսադեմին՝ գումարտակի հաղթանակով:

Որոշ ժամանակ անց՝ դեկտեմբերի 28-ին, Մելիքյանի գումարտակին նոր առաջադրանք է տրվում՝ Դոբժիկովի ղեկավարած գնդի հետ միասին, ոչնչացնել ֆաշիստական զավթիչներին՝ Դումնոյե գյուղում:

Մելիքյանը նախօրոք ուսումնասիրում է տեղանքը, թշնամու ուժերի քանակը եւ դասավորությունը, մշակում գիշերային գործողությունների պլան: Անցնելով ընդհանուր հարձակման՝ Մելիքյանի եւ Դոբժիկովի քաջերը հակառակորդին առնում են արքանի մեջ, ջախջախում նրա գլխավոր ուժերը, ազատագրում Դումնոյե գյուղը: Մարտի արդյունքում մերոնք թշնամուց գրավում են 1 թնդանոթ, 5 գնդացիր, 1 ականանետ, 16.000 փամփուշտ եւ կարելոր փաստաթղթեր:

Դումնոյե գյուղի գրավման ժամանակ Մելիքյանի մարտիկները, հետեւելով իրենց հրամանատարի օրինակին, ցույց են տալիս խիզախության օրինակներ: Ծանր մարտերում ցուցաբերած խիզախության եւ գումարտակը հմուտ ղեկավարելու համար Մելիքյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

1942 թվականի հունվարի առաջին օրերին խորհրդային զորամասերը համառ մարտեր են մղում հակառակորդի դեմ՝ Կուրսկի մարզի Օբոյան քաղաքի շրջանում: Այդ օրերին բարձր հրամանատարությունը ավագ լեյտենանտ Մելիքյանի գումարտակին առաջադրանք է տալիս՝ քաղաքին մոտենալ հարավից: Հրամանը կատարելու վճռականությամբ լցված, գումարտակը նախքան Օբոյան քա-

դաքին մոտենալը, մարտերով ազատագրում է Վեսյուլի, Պերեսիպ, Օրլովկա, Չորինսկիե Դվորի բնակավայրերը: Պերեսիպ բնակավայրը հակառակորդի ձեռքից ետ վերցնելու ժամանակ գումարտակը գրավում է 2 ծանր գնդացիր, 14 հրացան, 2 ականանետ, 10000 փամփուշտ, գերի է վերցնում 2 գերմանական սպա, ոչնչացնում ավելի քան 80 հիտլերական:

«Գիշերային մարտի վարպետ»-ը 1942 թվականի հունվարի 4-ի գիշերը, իր ստորաբաժանումով սրընթաց գրոհով ներս է խուժում Չորինսկիե Դվորի գյուղը, ոչնչացնում ֆաշիստական հետեւակի մոտ մեկ գումարտակ եւ գրավում ռազմական բեռով բարձրած 15 ավտոմեքենա, 10 ծանր գնդացիր եւ ռազմական հանդերձանք: «Գումարտակի անվախ հրամանատարը Չորինսկիե Դվորի գյուղի համար մղված մարտում ցույց տվեց քաջության, խիզախության եւ հերոսության հրաշքներ»,- գրել է հրամանատարությունը Մելիքյանի պարգևատրությամբ:

Գյուղը ազատագրելուց հետո, գումարտակը դիրքեր է գրավում դեպի Օբոյան քաղաքը տանող ճանապարհի վրա: Կոփված հրամանատարը եւ նրա մարտիկները երկու օր կտրում են հակառակորդի առաջխաղացման ճանապարհը եւ գրավում ռազմամթերքով բեռնված 21 ավտոմեքենա, ծանր թնդանոթների 2 մարտկոց, 8 գնդացիր, 22 հրացան եւ ետ վերցնում բնակչությունից հափշտակված շատ մթերքներ: Սոտ 40 կմ ետ շարտելով թշնամուս՝ գումարտակը խորանում է նրա թիկունքում եւ 223-րդ հրաձգային դիվիզիայի կազմում առաջինն է հասնում Օբոյան քաղաքի մատույցներին: Ցավոք, այստեղ, քաղաքի մատույցներում մղված մարտերում Մելիքյանն ընկնում է հերոսի մահով:

Օբոյան քաղաքի ազատագրման մարտերում ցուցաբերած հերոսության եւ անձնագոհության համար 1942 թվականի նոյեմբերի 5-ի հրամանագրով, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը ավագ լեյտենանտ Խաչատուր Բեգլարի Մելիքյանին հետմահու շնորհում է Խորհրդային Միության հերոսի բարձր կոչում:





**ՎԱՂԻՄԻՐ ՀԱԿՈՒԲ
ՅԱՎՐՈՒՄՈՎ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության եւ հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

լեյտենանտ **Վլադիմիր Հակոբի Յավրումովին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ՎԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945թ.:

Յայ ժողովրդի զավակ, ավագ լեյտենանտ Վլադիմիր Յակոբի Յավրումովը (Յավրումյանը) Խորհրդային բանակի 1945 թվականի հունվարին ծավալված ընդհանուր հարձակման ընթացքում՝ Վիսլայի Սանդոմիրյան պլացդարմի ճեղքման մարտերում աչքի ընկած հերոսներից մեկն է:

Վլադիմիր Յավրումյանը ծնվել է 1922 թվականին՝ Բաքվում, տակառագործ բանվորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 1939 թվականի հունիսին Վլադիմիրը 6-րդ դասարանից թողնելով դպրոցը՝ աշխատանքի է անցնում Բաքվի լեյտենանտ Շմիդտի անվան մեքենաշինական գործարանում: Այստեղ նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը եւ շուտով դառնում 4-րդ կարգի հմուտ զոդող բանվոր՝ միաժամանակ շարունակելով ուսումը իննամյա բանվորական երեկոյան դպրոցում:

Կոմերիտական Վլադիմիրը դեռ նոր էր ոտք դրել ինքնուրույն աշխատանքի ասպարեզը, երբ սկսվեց Յայրենական մեծ պատերազմը: Նա 1941 թվականի նոյեմբերի 18-ին զինակոչվում է բանակի շարքերը եւ ուղարկվում Վոլգոգրադի ավիա-դեսանտային ռազմական դպրոցը: Ինչպես գործարանում, այնպես էլ զինվորական դպրոցում առաջավորների շարքերում գտնվելով, Վլադիմիրը դառնում է մարտական ու քաղաքական պատրաստության գերազանցիկ: Այդ մասին մորը գրած նամակներում նա հայտնում է՝ «Սովորում եմ գերազանց գնահատականներով, գերազանցորեն էլ պիտի խփեմ հիտլերականներին... եւ տուն կվերադառնամ հաղթանակով»:

Չինվորական դպրոցն ավարտելուց հետո, Վլադիմիր Յավրումյանը կրտսեր լեյտենանտի կոչումով 1942 թվականի ապրիլի 15-ից մեկնում է գործող բանակ եւ նշանակվում Պոլտավյան կարմրադրոշ 9-րդ գվարդիական օդա-դեսանտային դիվիզիայի 28-րդ գնդի 2-րդ գումարտակի ավիա-դեսանտային դասակի հրամանատար: Նա մարտական մկրտությունը ստանում է Յյուսիս-արեւմտյան եւ Վոլգոգրադի ռազմաճակատներում:

1943 թվականի գարնանը լեյտենանտ Յավրումյանը փոխադրվում է հարավ եւ իր ստորաբաժանումով, Տափաստանային ռազմաճակատի զորքերի կազմում, մասնակցում Օրյոլ-Կուրսկ աղեղի վիթխարի ճակատամարտին:

Գնդի հրետանու մատակարարման պետ կապիտան Ա. Կարապետյանը, նկարագրելով Բելգորոդի ուղղությամբ Օբոյան քաղաքի շրջանում իրենց զորամասերի ու ստորաբաժանումների մղած մար-

տերը, Յավրումյանի մասին գրել է.

«Ռազմաճակատում մեր համատեղ աշխատանքում ես մոտիկից ծանոթացա եւ բարեկամացա Յավրումյանի հետ... Նա միշտ կարողանում էր իր մարտիկներին հմտորեն կռվի տանել գերմանացիների դեմ եւ նրա ստորաբաժանումը շարունակ առաջավոր ու հաղթանակող ստորաբաժանումներից մեկն էր»:

1943-1944 թվականներին ավագ լեյտենանտ Յավրումյանը Ուկրաինական երկրորդ ռազմաճակատում մասնակցում է Կրեմենչուկ քաղաքի ազատագրմանը, Դնեպրի, ապա Դնեստրի գետանցումներին, ձախափնյա եւ աջափնյա Ուկրաինայի, Բեսարաբիայի տարածքների ու բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանը: 1944 թվականին Յավրումյանը ռազմաճակատում ընդունվում է Կոմունիստական կուսակցության շարքերը: Այդ տարվա հուլիսի 15-ից նրանց դիվիզիան փոխադրվում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ: Այստեղ Յավրումյանը առաջ է քաշվում եւ նշանակվում 28-րդ գնդի 2-րդ գումարտակի 5-րդ վաշտի հրամանատար, մասնակցում Արեւմտյան Ուկրաինայի համար մղվող մարտերին:

Այդ շրջանում Ուկրաինական առաջին ռազմաճակատի գործերը հարածուն թափով զարգացնելով հարձակողական գործողությունները՝ մտնում են լեհական հողը եւ հասնում Վիսլա գետին: Կատաղի մարտեր են սկսվում Վիսլա-Վիսլիցա գետերի շրջանում, որտեղ գերմանացիներն ուժեղ դիմադրություն են ցույց տալիս:

Առանձնապես դաժան մարտեր են ծավալվում Դեմբիցա քաղաքի ազատագրման համար: Այս քաղաքը գրավելու ժամանակ աչքի է ընկնում ավագ լեյտենանտ Յավրումյանի ղեկավարած վաշտը, որը գնդի զորամասերից առաջինն է թափանցում քաղաք եւ մյուս զորամասերի հետ միասին կործանիչ կրակով ու սվինային հարվածներով թշնամուն դուրս մղում դիրքերից, ոչնչացնում մեծ թվով հիտլերական զինվոր ու սպա: Այդ հաղթանակների համար 28-րդ գունդը գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով ստանում է «Դեմբիցյան» անունը, մեծ թվով մարտիկներ պարգևատրվում են մարտական շքանշաններով ու մեդալներով: Ավագ լեյտենանտ Յավրումյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով:

Ավագ լեյտենանտ Յավրումյանը եւ նրա վաշտը, առանձնապես աչքի են ընկնում եւ մեծ փառքի արժանանում 1945 թվականին Խորհրդային բանակի հունվարյան ընդհանուր հարձակման ժամանակ:

Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը հարձակման են անցել Վիսլայի աջ ափից՝ Սանդոմիր քաղաքից դեպի արեւմուտք:

Այդ կատաղի մարտերում Յավրուժնի վաշտին առաջադրված էր գրոհել Ստոպնիցա քաղաքի խճուղու երկարությամբ եւ թշնամուս դուրս շարտել ամրացած կետերից: Վաշտը մյուս զորամասերի հետ միասին հարձակում է սկսում հունվարի 12-ի վաղ առավոտյան:

Յավրուժյանը շարունակ հարձակվող իր վաշտի ընդհանուր շղթայի կենտրոնում գտնվելով՝ «Յանուն հայրենիքի, հանուն հաղթանակի, առաջ իմ արծիվներ» բացականջություններով ոգեւորում էր մարտիկներին: Նա իր վաշտով, հաղթահարելով հակառակորդի ուժեղ կրակը, հասնում է թշնամու խրամատների առաջին գծին եւ սրընթաց գրոհում հակառակորդի վրա: Սկսվում է ձեռնամարտ:

Նռնակային ու ավտոմատային զենքերի կրակով ու սվինամարտով վաշտի ռազմիկները ոչնչացնում են 53 հիտլերական զինվոր ու սպա, 12 հաստոցավոր ու ձեռքի գնդացիր: Ավագ լեյտենանտ Յավրուժյանն անձամբ ոչնչացնում է 15 ֆաշիստական զինվոր ու սպա, վերցնում մեկ հաստոցավոր ու երկու ձեռքի գնդացիր:

Այսպիսով, Յավրուժյանի վաշտը հաջողությամբ կատարում է մարտական առաջադրանքները: Արագ կերպով լիկվիդացվում են խճուղու երկարությամբ հենակետային ամրություններում կենտրոնացված թշնամու կրակային միջոցները: Դա խոշոր չափով նպաստում է մեր զորամասերի կողմից Ստոպնիցա քաղաքը ազատագրելուն:

Մի այլ մարտի ժամանակ վաշտի աջ թեւը դեմ է առնում ականապատված դաշտի: Վաշտի հրամանատար Յավրուժյանը, որը ուսից ծանր վիրավորվել էր եւ արյունաքամ էր լինում, հավաքելով իր վերջին ուժերը, անցնում է զորամասի աջ թեւը: Արագ կերպով կողմնորոշվելով տեղանքում՝ նա հմտորեն շարունակում է առաջ տանել մարտիկներին: Այդտեղ, լեհական Ստոպնիցա քաղաքի շրջանում, Մարիյսկ գյուղի մոտ, վաշտը հաղթահարելով թշնամու դիմադրությունը, եւ հետապնդելով ջախջախված հակառակորդին, ոչնչացնում է 13 ֆաշիստական զինվոր ու սպա: Յենց այդ մարտում էլ Յավրուժնի զոհվում է հերոսի մահով:

Գվարդիական 9-րդ կարմրադրոշ Պոլտավյան օդա-դեսանտային դիվիզիայի 28-րդ «Դեմքիցյան» գնդի հրամանատարությունը՝ բարձր գնահատելով ավագ լեյտենանտ Վլադիմիր Յավրուժյանի հրամանատարական հմտությունները եւ անձնական խիզախությունները, նրան ներկայացնում է Խորհրդային Միության հերոսի

կոչման: Նրա պարգեւաթերթիկում արձանագրված է. «Գլխավոր ուղղություններում թշնամու պաշտպանության գիծը ճեղքելու համար հրամանատարության առաջադրանքը կատարվեց շնորհիվ Վլադիմիր Յավրուժովի հերոսության, որն իրեն գոհաբերեց հանուն հաղթանակի»:

1945 թվականի հունիսի 27-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության հրամանագրով գվարդիայի ավագ լեյտենանտ Վլադիմիր Յակոբի Յավրուժյանին հետմահու շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:



**ՂԱԶԱՐՈՍ ԱՎԵՏԻՍԻ
ԱՎԱԳՅԱՆ**



**ԽՍՀՄ ՔԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

1. Լեյտենանտ **Ղազարոս Ավետիսի Ավագյանին:**

ԽՍՀՄ Քերագույն Խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Քերագույն Խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945թ.:

Խիզախ լեռնցի Ղազարոս Ավետիսի Ավագյանը ծնվել է 1918 թվականին Գանձակի գավառի (այժմ՝ Ադրբեջանական Հանրապետության Խանլարի շրջան) Գետաշեն գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Նա սկզբում սովորում է իրենց գյուղի տարրական, ապա հարեւան Չավդար գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում: Այնուհետեւ շարունակելով ուսումը՝ ավարտում է Կիրովաբադի բանֆակը:

1940 թվականի հունվարին Ղազարոսը զինակոչվում է խորհրդային բանակի շարքերը եւ ուսումը շարունակում ռազմական դպրոցում:

Ավարտելով ռազմական դպրոցը՝ Ղ. Ավագյանը ստանում է լեյտենանտի կոչում: Մեծ հայրենականի առաջին իսկ օրերից, նա գտնվում է գործող բանակի շարքերում:

1942 թվականին համառ մարտերից մեկի ժամանակ, մի խումբ մարտիկների թվում, նա ընկնում է շրջապատման մեջ՝ Սմոլենսկի մարզի Մեդվեդովկա գյուղում: Ավագյանը որոշ ժամանակ թաքնվում է մի կոլտնտեսականի տանը, որից հետո դառնում է պարտիզան: Սմոլենսկի մարզը ազատագրելուց հետո նա վերադառնում է խորհրդային բանակի շարքերը եւ հերոսաբար շարունակում կռվել թշնամու դեմ, Օրյոլյան N հրաձգային գնդում՝ որպես հրաձգային դասակի հրամանատար:

Մարտերից մեկում Ղ. Ավագյանի դասակը դարան է մտնում, իսկ ինքը՝ հրամանատարը, դիրք է գրավում մարտիկներից մի փոքր հեռու: Մութն ընկնելուն պես թշնամու ստորաբաժանումները հարձակումներ են գործում՝ ճանապարհը փակելու համար: Ավագյանի դասակը հերոսաբար կռվելով ետ է մղում թշնամուն: Հակառակորդը կրկնում է գրոհները: Ավագյանի դասակը ընկնում է օղակի մեջ: Օղակը քանի գնում սեղմվում էր: Լեյտենանտ Ղ.Ավագյանը հիտլերականների վրա տեղատարափ կրակ է բացում: Թշնամու զինվորները աղմուկով վազում են դեպի Ղ.Ավագյանը: Նա մեկը մյուսի հետեւից գետին է գլորում նրանց: Գերմանացի մայորը, ատրճանակը օդում ճոճելով, հարձակվում է Ավագյանի վրա: Բայց նրա ոտքերի տակ պայթում է Ավագյանի նետած նռնակը եւ նա անշնչացած ընկնում է գետինին: Գերմանացի զինվորները տեսնելով իրենց հրամանատարի մահը՝ ետ են քաշվում:

Բելոռուսիայում մղվող մարտերին ակտիվ մասնակցություն ունենալու համար Ղ.Ավագյանը 1944 թվականի մայիսին պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով: Նրա պարգևաթերթիկում

այդ առթիվ գրված է. «Մոզիլեի մարզի Չերվինսկու շրջանի Պյատի-գոտկա խորհունտեսության մոտ 1944 թվականի հուլիսի 6-ին հակառակորդի շրջապատված խմբավորումը լիկվիդացնելիս՝ Ղ.Ավագյանը պահում էր դժվարին տեղամասերից մեկը: Գերմանացիների շրջապատված խոշոր ուժերով խմբավորումը որոշում է շրջապատումից դուրս գալ այն տեղով, որտեղ դասավորված էր Ղ.Ավագյանի հրաձգային դասակը: Հակառակորդը վեց անգամ գրոհի է դիմում, բայց թշնամու գրոհները ետ են մղվում, ընդ որում ոչնչացվում է գերմանական 180 զինվոր ու սպա: Ղ.Ավագյանն անձամբ ոչնչացրեց գերմանական 22 զինվոր, մեկ մայրո եւ երկու օբեր-լեյտենանտ: Մարտի դաշտը զննելիս բոլոր սպանված գերմանացիները Ղ.Ավագյանից 2-10 մետր հեռավորության վրա էին գտնվում»:

Լեյտենանտ Ավագյանը ծնողներին ուղարկած մի նամակում, նկարագրելով իր վարած մարտերից մեկը, գրում է. «Մեր վաշտով հարձակվեցինք գերմանացիների վրա: Նրանք թողեցին իրենց չորս ականանետները, արկերը, ձիերը, սայլերն ու փախան: Մենք այնպիսի կարկուտ թափեցինք նրանց վրա, որ նրանց մի մասը չհասցրեց փախչել, ոչնչացավ գետնափորում: Մենք նրանց վրա նետեցինք մոտ 400 արկ»:

Հայրենիքի նկատմամբ ցուցաբերած անձնագոհության եւ այդ մարտերում կատարած խիզախության ու հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով Ղազարոս Ավետիսի Ավագյանին շնորհում է Խորհրդային Միության հերոսի կոչում:





**ՎԼԱԴԻՄԻՐ ԱՔՐԱՅԱՍԻ
ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ**

**ԽՍՀՄ ՊԵՐԱՊՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՊԱՐԻՅԱՆ
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի գեներալներին, սպայական եւ սերժանտական կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության եւ հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

Գվարդիայի լեյտենանտ **Վլադիմիր Աբրահամի Յովհաննիսյանին:**

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ՎԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 27 օգոստոսի 1943թ.:

Գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Յովհաննիսյանը Օրյուկ-Կուրսկ աղեղում մղված մարտերի աչքի ընկած հերոսներից է:

Նա ծնվել է 1905 թվականին Բաքվում, հորատող բանվորի ընտանիքում: Վլադիմիրը 15 տարեկան հասակից սկսեց իր աշխատանքային գործունեությունը պարենային ժողկոմատի սիստեմում՝ վարելով զանազան պաշտոններ:

Յովհաննիսյանն աշխատում էր Մոսկվայի մարզի ամբարի ցանցում, երբ սկսվեց Չայրենական մեծ պատերազմը: Շուտով նա գորակոչվում է ուղարկվում է Չարավ-արեւմտյան ռազմաճակատ:

Կուսակցության անդամության թեկնածու Յովհաննիսյանն ակտիվ մասնակցություն է ունենում Մոսկվայի պաշտպանությանը: Նա առաջին անգամ մարտի մեջ է մտնում 1941 թվականի սեպտեմբերին՝ Ելնյա քաղաքի համար մղվող մարտերին: Այստեղ նա վիրավորվում է ձեռքից, բայց շարքից դուրս չի գալիս: Այնուհետև 11-րդ գվարդիական դիվիզիայի 27-րդ գվարդիական գնդի կազմում Յովհաննիսյանը մասնակցում է Յարցեւո քաղաքի համար մղված մարտերին, որտեղ վիրավորվում է երկրորդ անգամ:

1943 թվականի ամռանը կատաղի մարտեր էին մղվում Կուրսկ-Օրյուկի ուղղությամբ: Այդտեղ էր նաեւ 27-րդ գվարդիական գնդի 2-րդ գումարտակը, որի դասակներից մեկի հրամանատարն էր գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Յովհաննիսյանը: Հուլիսի 12-ին համառ մարտեր են սկսվում Օրյուկի մարզի Ուլյանովսկի շրջանի Տրոստյանկի գյուղի շրջակայքում: Խորհրդային հրետանային մարտկոցները հուժկու կրակ են բացում թշնամու ամրությունների վրա, որից հետո հարձակման են անցնում հետեւակայինները: Գվարդիայի լեյտենանտ Յովհաննիսյանն իր մարտիկների հետ միասին ընդհուպ մոտենում են գերմանական պաշտպանական առաջավոր գծին, հաղթահարում փշալարերի խիտ ցանցը եւ ներխուժում թշնամու խրամատները: Հակառակորդի համար խորհրդային մարտիկների երեւալը անսպասելի էր: Սկսվում է ուժեղ մարտ, որի ընթացքում խիզախ վեցյակը ոչնչացնում է թշնամու 63 զինվոր ու սպա եւ գերի վերցնում 18 հիտլերական: Այդ մարտում գվարդիայի լեյտենանտ Յովհաննիսյանն անձամբ շարքից հանում է թշնամու 38 զինվոր ու սպա:

Ուլյանովսկի շրջանի Բելի Վերխ գյուղը պաշտպանող գերմանական երկու վաշտ գնդացրային եւ գեներալի այլ տեսակների կրակով խանգարում էին մեր հետեւակի առաջխաղացումը: Հակառակորդը

մի քանի անգամ փորձում է անցնել հակազորի: Այդ ժամանակ գվարդիայի լեյտենանտ Յովհաննիսյանը որոշում է թշնամու հարված հասցնել թիկունքից: Նա յոթ խիզախների գլուխն անցած, հակառակորդի տեղատարափ կրակի տակ թափանցում է թշնամու թիկունքը: Մարտն ավելի է ուժեղանում, Յովհաննիսյանը հրամայում է իր խմբին ավտոմատային կրակ բացել հակառակորդի վրա: Թշնամին շփոթվում է: Կարճատեւ, բայց թեժ մարտում հիտլերականները կորցնում են 70 զինվոր ու սպա: Մեր մարտիկները գրավում են մեկ հաստոցավոր գնդացի էւ երեք ինքնաձիգ: Այնուհետեւ առաջ շարժվելով, խիզախների յոթնյակը նռնակներով պայթեցնում է ռազմամթերքով բեռնված երկու ավտոմեքենա:

Ուլյանովսկ շրջանային կենտրոնի համար մղված մարտերում Վլադիմիր Յովհաննիսյանի ստորաբաժանումը ոչնչացնում է գերմանական 360 եւ գերի վերցնում 70 զինվոր ու սպա: Յովհաննիսյանն անձամբ ոչնչացնում է գնդացրային երկու կրակակետ էւ հակառակորդի մի քանի տասնյակ զինվոր ու սպա:

Կարաչեւ քաղաքի համար մղած մարտում՝ 1943 թվականի օգոստոսի 6-ին, մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ զոհվում է գվարդիայի ավագ լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Յովհաննիսյանը: Հաջորդ օրը մարտական ընկերները նրա դին հողին են հանձնում հենց նույն տեղում էւ երդվում վրեժխնդիր լինել իրենց սիրելի ընկերոջ էւ հրամանատարի համար:

Հայրենիքը բարձր գնահատեց գվարդիայի ավագ լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Յովհաննիսյանի անձնուրաց, հերոսական սխրագործությունները էւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943 թվականի օգոստոսի 27-ի հրամանագրով հետմահու շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:



**ԱՐՄԵՆ ԱՐԱՄԻ
ՏԵՐ-ՕԳԱՆՈՎ**



**ԽՍՀՄ ՔԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության եւ հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

Գվարդիայի ավագ **Արսեն Արամի Տեր-Օգանովին:**

ԽՍՀՄ Քերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Քերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի 1945 թ.:

Խորհրդային Միության հերոս Արսեն Արամի Տեր-Օհանյանը ծնվել է 1923 թվականին, Բաքու քաղաքում, ծառայողի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Բաքվի N 133 միջնակարգ դպրոցում: Փոքր հասակից Արսենը զբաղվել է սպորտով: 1941 թվականի հունիսին նա ավարտելով դպրոցը՝ կամավոր մեկնում է բանակ, ընդունվում Բաքվի զենիթա-հրետանային ուսումնարանը, իսկ հետո՝ 1942 թվականին, գործուղվում Բաքվի հակաօդային պաշտպանության զորամասերում ծառայելու:

1942 թվականի վերջերին Արսենն արդեն մասնակցում է Հյուսիսային Կովկասում՝ Սալսկի լայնարձակ տափաստաններում մղվող արյունահեղ կռիվներին: Շուտով նա նշանակվում է հրաձգային դասակի հրամանատար:

1943 թվականի օգոստոս-սեպտեմբերին Տեր-Օհանյանի դասակը կռվում էր Խարկովի եւ Պոլտավայի միջև ընկած շրջանում, որտեղ թշնամին մեծաքանակ տանկերի օգնությամբ, համառ դիմադրություն էր ցույց տալիս խորհրդային զորքերին: Այդ մարտերից մեկում Տեր-Օհանյանը կոնտուզիա է ստանում եւ ժամանակավորապես դուրս գալիս մարտադաշտից: 1944 թվականի հունվարին Արսենը վերադառնում է նույն զորամասը եւ փետրվարին մասնակցում Կորսուն-Շենչենկովսկի շրջանում շրջափակված գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախմանը: Այստեղ Արսեն Տեր-Օհանյանը վիրավորվում է երկրորդ անգամ: Բուժվելուց հետո, գվարդիական 94-րդ հրաձգային դիվիզիայի 288-րդ Զիշինեյան գնդի 3-րդ գումարտակում նշանակվում է գնդացրային ջոկի հրամանատար եւ մասնակցում Բալտա եւ Կոտովսկ քաղաքների համար մղվող մարտերին: Համառ մարտերից մեկում Տեր-Օհանյանը մեկ անգամ եւս վիրավորվում է: Հաղթահարելով ցավը՝ նա շարունակում է ղեկավարել ջոկի գործողությունները: Հաջող կերպով անցնելով ականներով եւ փշալարերով պատված ռազմադաշտով՝ Տեր-Օհանյանի մարտիկները կռվի են բռնվում հակառակորդի ջախջախված ուժերի մնացորդների դեմ: Գնալով մարտը կատաղի բնույթ էր ստանում: Թշնամու գերակշռող ուժերը, չնայած իրենց կորուստներին, ջանում էին ոչնչացնել խորհրդային ռազմիկներին: Սակայն այդ նրանց չի հաջողվում:

Այնուհետեւ, Տեր-Օհանյանը մասնակցում է նաեւ հակառակորդի Յասսի-Քիշինեյան խմբավորման ջախջախմանը: Նա 1944 թվականին ընդունվում է ԽՄԿԿ շարքերը եւ որպես կոմունիստ՝ մասնակցում Լեհաստանի ազատագրմանը:

1945 թվականի հունվարյան հաղթական մարտերում գվարդիա-

կան 44-րդ հրաձգային դիվիզիայի վաշտերից մեկը առաջինն է ճեղքում թշնամու կարեւոր ջրային արգելքը եւ անցնում Պիլիցա գետը ու ամրանում գետի արեւմտյան ափին: Թշնամին ձեռնարկում է մի շարք գրոհներ՝ ջանալով գվարդիականների թափել ջուրը: Հակառակորդի մի գումարտակ ինքնագնաց հրանոթի պաշտպանությամբ անցնում է հակահարձակման: Գվարդիական հրաձիգները, բացի Տեր-Օհանյանի «մաքսիմից», ուրիշ գնդացիներ չունեին եւ դեռ չէին խրամատավորվել: Սակայն նրանք չէին շփոթվում, թշնամու դեմ կռվում էին քաջաբար: Մարտիկ Իվան Բոյկոն վազում է դեպի գնդացիը եւ Արսենի հետ միասին նետվում առաջ, դեպի թշնամին: Արսենը մի քարե պատնեշի հետեւում հարմար դիրք է գրավում, իսկ նշանառուներ Չերնեցկին եւ Ստրուտինսկին, տեղադրելով գնդացիը, սպասում են հիտլերականների մոտենալուն: Երբ հարմար պահը մոտենում է, նրանք գնդացրային կրակով շարքից հանում են քսան հիտլերականի, փակում դեպի վաշտի դիրքերը տանող ճանապարհը եւ նրանցից խլում հարձակման նախաձեռնությունը: Դրանից հետո վաշտի մարտիկները ավտոմատային եւ հրացանային ուժեղ կրակով անցնում են հարձակման ու պարտության մատնում թշնամու գերակշիռ ուժերին:

Վիսլայի ձախ ափին, Սանդոմիրի մոտ, հակառակորդի խիտ ամրացված գիծը ճեղքելու, Պիլիցա գետն անցնելու եւ նրա ձախ ափին հենակետ ստեղծելու գործողությունների ժամանակ ցուցաբերած հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1945 թվականի փետրվարի 27-ի հրամանագրով գնդացրային վաշտի ավագ Արսեն Տեր-Օհանյանին շնորհում է Խորհրդային Միության հերոսի կոչում: Թշնամու Սանդոմիրյան խմբավորումը ջախջախելուց հետո գնդացրային վաշտը մարտերով անցնում է Լեհաստանի տերիտորիայով եւ առաջիններից մեկը մտնում գերմանական Պոմերանիա:

1945 թվականի հունվարյան հարձակողական մարտերում Արսեն Տեր-Օհանյանի ցուցաբերած սխրագործությունների մասին հրամանատար, գեներալ-մայոր Գասպարյանը գրել է. «...Հունվարյան հարձակման 15 օրում նա իր հաստոցավոր գնդացրով անցել է 570 կիլոմետր մարտական ուղի՝ ոչնչացնելով տասնյակ հիտլերականներ: Նա թշնամուն հարվածում էր հմտորեն եւ քաջաբար՝ ֆաշիստներին հասցնելով հսկայական կորուստներ:

Նրա փառքը տարածվել էր միավորման սահմաններից շատ հեռու»:

Մի շարք քաղաքների ազատագրման եւ գրավման ժամանակ

մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար Արսեն Տեր-Օհանյանը գերագույն հրամանատարության կողմից արժանացել է 19 շնորհակալագրի: Նա մարտնչել է Օդերը գետանցելու եւ նրա ձախ ափին հենակետ ստեղծելու, ապա Բեռլինի գրավման մարտերին:

1946 թվականին Տեր-Օհանյանը զորացրվում է բանակի շարքերից եւ վերադառնում Բաքու: Նույն թվականին նա ընդունվում է Բաքվի ինդուստրիալ ինստիտուտի նավթամեխանիկական ֆակուլտետը, 1952 թվականին ավարտում այն եւ ավագ ինժեներ նշանակվում ԽՍՀՄ նավթարդյունաբերության մինիստրության նավթահանույթի մեքենա-վերանորոգման տրեստում: Հետագայում Տեր-Օհանյանը շարունակում է աշխատել Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր պետական անվտանգության կոմիտեում...



**ԳԱՐՈՒՇ ՍԵՐՊԵՅԻ
ԿՈՍԱՆԴԻՆՈՎ**



**ԽԱՅՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

Կարմիր բանակի սպայական, սերժանտական եւ շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության եւ հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

Ավագ սերժանտ **Գարուշ Սերգեյի Կոստանդինովին:**

ԽՍՅՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՅՄ Գերագույն Խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ ցուցաբերած անձնական խիզախության ու արիության համար գվարդիայի ավագ սերժանտ Գարուշ Սերգեյի Կոստանդինովին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով հետմահու շնորհեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Յակատանկային հրանոթի նշանառու Գարուշ Կոստանդինովը ծնվել է 1921 թվականին Բաքու քաղաքում, բանվորի ընտանիքում: 1928 թվականին Գարուշը սկսում է հաճախել Բաքվի N 49 դպրոցը: Աշակերտական տարիներին նա աչքի է ընկնում իր ընդունակություններով: 1938 թվականին Գարուշը ընդունվում է ՅամԼԿԵՄ շարքերը եւ ամբողջովին նվիրվում կոմերիտական աշխատանքների:

1939 թվականին ավարտելով դպրոցը՝ Գարուշը աշխատանքի է անցնում Ալի-Բայմանովի անվան կարի ֆաբրիկայում: 1940 թվականի սեպտեմբերին նա զորակոչվում է բանակի շարքերը, ուր զինվում է ռազմական գիտելիքներով եւ դառնում հակատանկային հրանոթի նշանառու:

Երբ սկսվում է Յայրենական պատերազմը, իր զորամասի հետ միասին Կոստանդինովը մեկնում է ռազմաճակատ եւ ահեղ մարտերի բովում ընդունվում կոմունիստական կուսակցության շարքերը:

1944 թվականի հոկտեմբերին Բելոռուսական երրորդ ռազմաճակատի զորքերը ավիացիայի, հրետանային կրակի փոխգործողության մեջ անցնում են հարձակման, ճեղքում գերմանացիների խոր էշելոնացված պաշտպանությունը եւ խորանում Արեւելյան Պրուսիայի տերիտորիայում: Այդ զորքերի մարտակարգում էր առաջին գվարդիական կործանիչ-հակատանկային առանձին բրիգադան, որի 3-րդ զնդում ավագ սերժանտ Գարուշ Կոստանդինովը հմուտ հրետանավոր էր:

Յոկտեմբերի 23-ին, Արեւելյան Պրուսիայի Գոլդապ քաղաքը գրավելուց հետո, Բելոռուսական երրորդ ռազմաճակատի մի խումբ զորամասեր ուժեղ մարտեր են սկսում Գոլդապից հյուսիս-արեւելք: Նոյեմբերի 4-ին թշնամին մի քանի անգամ անցնում է հակագրոհի Գոլդապից 2 կմ հյուսիս-արեւելք գտնվող հրաձգարանի ուղղությամբ եւ նեղում հրետանային այն հաշվարկին, որի կազմում էր նաեւ Կոստանդինովը: Յրետանային հաշվարկը գործում էր հերոսաբար: Քանի զնում՝ թեժանում էր անհավասար մարտը գերմանական հետեւակի եւ 11 տանկերի հետ: Առանձնապես մեծ վարպետու-

թյամբ էր մարտնչում գվարդիայի ավագ սերժանտ Գարուշ Կոստանդինովը:

Ետ մղելով հակառակորդի հետեւակի եւ 11 տանկերի հակագրոհը՝ Կոստանդինովը իր ընկերների հետ հրկիզում է երեք տանկ եւ ոչնչացնում թշնամու 40 զինվոր ու սպա: Հակառակորդի երկրորդ տանկը հրկիզելիս, Կոստանդինովը ծանր վիրավորվում է, սակայն հրանոթը չի թողնում եւ շարունակում է կրակ տեղալ թշնամու վրա: Երրորդ տանկը Գարուշը ոչնչացնում է արդեն վիրավոր վիճակում: Կատաղի մենամարտը դադարում է միայն այն ժամանակ, երբ խիզախ ռազմիկը կորցնում է գիտակցությունը: Գվարդիայի ավագ սերժանտ Կոստանդինովն ընկնում է հերոսի մահով: Խորհրդային ռազմիկի անձնագրիության շնորհիվ գերմանացիների հակագրոհը տապալվում է: Մեր հետեւակն ամուր կերպով պահում է իր բնագծերը եւ նախապատրաստվում նոր հարձակման:

Այսպիսին է Խորհրդային Միության հերոս Գարուշ Կոստանդինովի կյանքի կարճատեւ, բայց փառահեղ ուղին:





**ՍԱՐԳԻՍ ՍՈԴՈՄՈՆԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԽՍՀՄ զերագույն հորհրդի նախագահության
ՅՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

*Կարմիր բանակի գեներալներին եւ սպայական կազմին
Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին*

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու եւ այդ ժամանակ ցուցաբերած խիզախության եւ հերոսության համար շնորհել Խորհրդային Միության հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան եւ «Ոսկե աստղ» մեդալ.

14. Գեներալ-մայոր **Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանին:**

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ.ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ զերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա.ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 29 մայիսի 1945 թ.:

Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը խորհրդային զինված ուժերի կադրային սպաներից է: Նա շարքային մարտիկից աճել, դարձել է կորպուսի հրամանատար: Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատում զորքերի հմուտ ղեկավարման, անձնական խիզախությունների համար արժանացել է գեներալ-լեյտենանտի եւ խորհրդային Միության հերոսի բարձր կոչումների:

Սարգիս Մարտիրոսյանը ծնվել է 1902 թվականի սեպտեմբերի 21-ին, Ադրբեջանական ԽՍՀ Շամախու շրջանի Մադրասա գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում: Հետո, սովորել է Էջմիածնի հոգեւոր ճեմարանում, որը կիսավարտ թողնելով, վերադարձել է իր ծննդավայրը եւ այդտեղից 1917 թվականի մայիսին կամավոր մտել Բաքվի կարմիր գվարդիայի շարքերը:

Մարտիրոսյանը մասնակցել է Ադրբեջանում եւ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը եւ քաղաքացիական կռիվներին: 1922 թվականին նա հայկական հրաձգային դիվիզիայի 2-րդ գնդի գնդացրային դասակի հրամանատարն էր: Մտահոգվելով իր ռազմական գիտելիքները հարստացնելու, կրթված հրամանատար դառնալու ցանկությամբ, Մարտիրոսյանը 1923 թվականից հաճախում է ռազմական մի շարք դասընթացներ: Նա ավարտում է Թբիլիսիի հետեւագորային դպրոցի հրամկազմի վերապատրաստման դասընթացների գնդացրային, ապա հետախուզական բաժինները, իսկ 1928 թվականին Մոսկվայում՝ ԲԳԿԲ գլխավոր շտաբին կից բարձրագույն հետախուզական կադրերի կատարելագործման դասընթացները:

Ս. Մարտիրոսյանը 1925 թվականից ԽՄԿԿ անդամ է: 1924-1938 թվականներին նա հրամանատարական պաշտոններ է վարել 76-րդ հայկական լեռնա-հրաձգային դիվիզիայում՝ վաշտի հրամանատար, հետախուզության բաժնի պետ, օպերատիվ բաժնի պետ եւ այլն:

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին՝ լծվելով սոցիալիստական Հայրենիքի եւ նրա բանակի շինարարության գործին, Մարտիրոսյանը պատրաստել է մեծ թվով հետախույզներ, գնդացրորդներ եւ դիպուկահարներ, դաստիարակել է հրամանատարական կադրեր:

1938 թվականին մայր Սարգիս Մարտիրոսյանը փոխադրվում է Բելոռուսական ռազմական օկրուգ: 1936-1940 թվականներին նա հրամանատարական ղեկավար աշխատանք է տարել 30-րդ եւ ապա՝ 121-րդ դիվիզիաներում եւ իր ղեկավարած զորամասերով ակտիվորեն մասնակցել Արեւմտյան Բելոռուսիայի եւ Մերձբալթյան երկրների ազատագրմանը:

Երբ սկսվեց Չայրենական մեծ պատերազմը, փոխգնդապետ Մարտիրոսյանը ծառայում էր Խարկովի ռազմական օկրուգում: Նա վերադաս հրամանատարության հանձնարարությամբ Դոնբասի բանվորներից կազմակերպում է 227-րդ հրաձգային դիվիզիան եւ նշանակվում նրա շտաբի պետ:

1941 թվականի հունիսի 26-ից Մարտիրոսյանն այդ դիվիզիայի հետ միասին մեկնում է ռազմաճակատ: Դիվիզիան սկզբում Չարավային ռազմաճակատում, ապա Կիեւից հարավարեւելյան շրջաններում ու Դնեպրի ափերին պաշտպանական մարտեր է մղում մեր Չայրենիքը ներխուժած ֆաշիստական զավթիչների դեմ: Ապրելով ժամանակավոր նահանջի բոլոր դառնությունները՝ նա հենց սկզբից հանդես է բերում խորհրդային կադրային սպայի անընկճելի կամք ու տոկունություն:

Մոսկվայի պաշտպանության մարտերի լարված շրջանում, գնդապետ Մարտիրոսյանը 340-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարն էր: Նրա դիվիզիան 49-րդ բանակի միավորումների հետ միասին, կատաղի մարտեր մղելով գերմանական տիրապետչական Գուդերիանի զրահատանկային զորամասերի դեմ, ետ է շարտում նրանց, դեկտեմբերի 19-ին մեծ հաղթանակ տանում Տուլայի մոտ:

Չետապնդելով նահանջող թշնամուն՝ խորհրդային զորքերը ազատագրում են Մոսկվայի եւ Տուլայի մարզերի քաղաքներն ու գյուղերը:

Այնուհետեւ, Մարտիրոսյանի զորամիավորումը մտցվում է 50-րդ բանակի կազմը, որը մասնակցում է Ալեկսին, Կալուգա, իսկ 1942 թվականի փետրվարին նաեւ Յուխնով քաղաքների եւ շատ այլ բնակավայրերի ազատագրմանը: Տուլայի պաշտպանության եւ ձեռք բերած հաղթանակների համար դիվիզիայից մեծ թվով մարտիկներ ու սպաներ պարգևատրվում են շքանշաններով ու մեդալներով: Դիվիզիայի հրամանատար Մարտիրոսյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

50-րդ բանակի ռազմական խորհուրդը, շնորհավորելով Մարտիրոսյանին պարգևատրման առթիվ, գրել է.

«...Ձեր ղեկավարությամբ դիվիզիան անցավ փառավոր մարտական ուղի, լուրջ հարված հասցրեց գերմանա-ֆաշիստական զորքերին»:

Մոսկվայի պաշտպանությունից հետո 1942 թվականի հուլիսին տանկային 5-րդ բանակի կազմում Մարտիրոսյանի միավորումը առաջադրանք է ստանում ջախջախել դեպի Դոնի տափաստանը գրոհող թշնամու զորքերի խմբավորումը եւ ընդլայնել գետի արեւմտյան ափի դիրքերը: Չաջողությամբ պաշտպանելով իրենց

դիրքերը եւ ետ մղելով հակառակորդի իրար ետեւից կրկնվող գրոհները՝ Մարտիրոսյանի զորամասերը հուլիսի 21-ին վճռական հակազորհով ջախջախում են թշնամու խմբավորումը եւ առաջ շարժվելով՝ ամրանում են ստրատեգիական տեսակետից կարեւոր նշանակություն ունեցող բնագծերում:

Այդ մարտերում Մարտիրոսյանի միավորումը ցրիվ է տալիս հակառակորդի 15 զումարտակ, ոչնչացնում 85 տանկ եւ այլ սպառազինություն: Թշնամին կռվի դաշտում թողնելով մի քանի հազար սպանված՝ նահանջում է: Դիվիզիան 1942 թվականի սեպտեմբերին Վորոնեժի ռազմաճակատում ակտիվ պաշտպանական մարտեր է մղում նաեւ 38-րդ բանակի կազմում: Որպես արժանի գնահատություն, զորքերի հմուտ ղեկավարման եւ տարած հաղթանակների՝ ԽՍՀՄ Ժողկոմսովետը գնդապետ Մարտիրոսյանին 1942 թվականի դեկտեմբերի 20-ին շնորհում է գեներալ-մայորի կոչում:

1942-1943 թվականների ձմեռային հարձակումների ժամանակ Մարտիրոսյանն իր դիվիզիայով 40-րդ բանակի կազմում 200 կիլոմետր մարտական երթ է կատարում Դոնի միջին հոսանքի ուղղությամբ:

1943 թվականի հունվարի 12-ին, մյուս միավորումների համագործակցությամբ, Ուձիվ գյուղի շրջանում հարձակման անցնելով եւ Վորոնեժից հարավ ճեղքելով հակառակորդի երեք խոր էշելոնացված պաշտպանական ամրությունները, գեներալ Մարտիրոսյանի զորամասերն ազատագրում են Օստրոգորժսկ քաղաքը: Հմտորեն կիրառելով թշնամու ուժերի թեւանցման տակտիկան՝ դիվիզիայի զորամասերը փետրվարին մեծ հաջողությամբ մասնակցում են Ստարի Օսկոլ, Կորոչա, Բելգորոդ, Խարկով, ապա Պիսարեւկա, Տրոստյանեց, Գադյաչ քաղաքների եւ շատ ուրիշ բնակավայրերի ազատագրմանը, ոչնչացնում ու գերի են վերցնում հազարավոր հիտլերական զինվոր ու սպա, գրավում են մեծ քանակությամբ զենք ու սպառազինություն:

Այդ հաղթանակների համար 340-րդ դիվիզիան եւ նրա հրամանատար գեներալ-մայոր Մարտիրոսյանը նշվում են գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններում: 1943 թվականի փետրվարի ընթացքում գեներալը պարգևատրվում է Սուվորովի երկրորդ աստիճանի եւ Կարմիր դրոշի շքանշաններով: Վորոնեժի ռազմաճակատի խորհուրդը եւ նրա հրամանատարը 40-րդ բանակին ուղարկած հրամանում, հանրագումարի բերելով ձմեռային կամպանիայի արդյունքները եւ շնորհակալություն հայտնելով բանակի դիվիզիաների անձնակազմին ու հրամանատարներին՝ ձեռք բերած հաղթա-

նակների համար, հատուկ կետով արձանագրել են. «Առանձնապես նշում են դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Մարտիրոսյանի լավ աշխատանքը՝ մարտեր ղեկավարելու գործում»:

1943 թվականի հուլիսի 8-ին վերադաս հրամանատարությունը գեներալ Մարտիրոսյանին նշանակում է 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, որը մտնում էր 38-րդ բանակի մեջ: Այդ բանակը պաշտպանական մարտեր էր մղում Սումի քաղաքից արեւելք եւ նախապատրաստվում էր մասնակցելու խոշոր հարձակումների՝ Ուկրաինայի տերիտորիան ազատագրելու համար: 50-րդ կորպուսի մեջ էին մտնում 340, 232 եւ 167-րդ հրաձգային դիվիզիաները:

Գերմանացիները երկար ժամանակ ամրացել էին Սումի քաղաքում: Գեներալ Մարտիրոսյանի կորպուսը օգոստոսի 8-ից գրոհներ սկսելով՝ փողոցային համառ մարտերից հետո սեպտեմբերի 2-ին ազատագրում է մարզային այդ կենտրոնը, ապա Ռումի ու Պրիլուկի քաղաքները: Այնուհետեւ գետանցելով Դեսնան՝ կորպուսը մոտենում է լայնահուն Դնեպրին եւ սեպտեմբերի երկրորդ կեսին՝ Կիելցից հյուսիս, մարտերով հաղթահարելով ջրային այդ խոշոր բնագիծը, ամուր պլացդարմ է գրավում նրա աջ ափին: Ոչ թշնամու օդային ու հրետանային ռմբակոծությունները, ոչ էլ տանկերի ու հետեւակային զորքերի համառ դիմադրությունը չկարողացան կասեցնել կորպուսի դիվիզիաների առաջխաղացումը, որոնք հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում, հալածելով նահանջող թշնամուն եւ մարտերով 337 կիլոմետր առաջ շարժվելով դեպի արեւմուտք, ազատագրեցին 569 բնակավայր, սպանեցին ու վիրավորեցին 30000-ից ավելի ֆաշիստական զինվոր ու սպա, վերցրին մեծ թվով գերիներ, սպառազինություն եւ տեխնիկա:

Գերագույն գլխավոր հրամանատարը շնորհակալություն է հայտնում կորպուսի միավորումների անձնակազմին եւ նրա 340, 232 եւ 167-րդ դիվիզիաներին շնորհում է «Սումիյան», իսկ սեպտեմբերից կորպուսի մեջ մտած 163-րդ դիվիզիային՝ «Ռումիյան» կոչումը:

Մարտիրոսյանը զարգացած, խորագիտակ զորավար էր, մարտիկների համար հոգատար հայր, մի բան, որը նշանակալիորեն օժանդակում էր նրա հաջողությանը: Դնեպրի ափերին մղվող մարտերի օրերին, ռազմաճակատում Մարտիրոսյանին հյուր է գնում ակադեմիկոս խորհրդային գրող Իլյա Էրենբուրգը, որը Մարտիրոսյանի մասին գրել է հետեւյալ ուշագրավ տողերը. «Բրովարիում Վ. Ս. Գրոսմանի հետ մենք մինչեւ կես գիշեր նստեցինք գեներալ Ս. Ս. Մարտիրոսյանի մոտ: Նա մեզ զարմացրեց իր մարդկայնությամբ, հումանիզմով, մտքերի եւ զգացմունքների արտասովոր ազնվությամբ»:

1943 թվականի նոյեմբերի սկզբից Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը՝ բանակի գեներալ Վատուտինի ղեկավարությամբ սկսում են Կիեւի ազատագրական մարտերը: Շատ զոհեր եղան, հակառակորդը կատաղի դիմադրում էր, բայց զորամասերը անզուսպ թափով առաջ էին նետվում, անցնելով կրակի հեղեղի միջով, շտապեցնում հարազատ քաղաքամայր Կիեւի ազատագրումը:

Այդ ժամանակ հյուսիսային խմբավորման՝ Լյուտեժից դեպի Կիեւ գրոհող 38-րդ բանակի շարքերում էր գործում նաեւ Մարտիրոսյանի կորպուսը:

1943 թվականի նոյեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը, վաղ լուսաբացին Ուկրաինական առաջին ռազմաճակատի քաջարի զորքերը կենտրոնացված հարվածով ազատագրում են Խորհրդային Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւը: Առաջինը քաղաք մտած տանկային զորամասերի հետ էին Մարտիրոսյանի հրաձգային կորպուսի դիվիզիաները: Գերմանական օկուպանտներից ազատագրված Կիեւի կայազորի առաջին պետ է նշանակվում գեներալ Մարտիրոսյանը: Կորպուսի դիվիզիաները ռազմաճակատի աչքի ընկնող միավորումների թվում նշվում են Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանում, «Կիեւյան» կոչում են ստանում եւ պարգևատրվում մարտական շքանշաններով: Կորպուսի հրամանատար Ս. Մարտիրոսյանը պարգևատրվում է Լենինի շքանշանով: Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով է պարգևատրվում նաեւ կորպուսի կազմում գտնվող չեխոսլովակյան առաջին հրաձգային բրիգադան, որի հրամանատարն էր գնդապետ Լյուդվիգ Սվաբոդան:

Կրկակոխ հետապնդելով թշնամուն՝ Մարտիրոսյանի գլխավորած քաջարի զորքերը այնուհետեւ ազատագրում են Վասիլկովի, Ֆաստով, Ժաժկով, Բելայա-Ցերկով քաղաքները: Սկսվում է հերոսապատումներով լի մարտերի մի նոր շրջան: Ճեղքելով թշնամու ուժեղ ամրությունների բնագծերը՝ կորպուսի դիվիզիաները Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի զորքերի կազմում գետանցում են Զարավային Բուզը, Դնեստրը: Ապրիլի 3-ին կորպուսը անցնելով Պրուգ գետը եւ պլացդարմ գրավելով նրա արեւմտյան ափին՝ առաջինների թվում է հասնում Խորհրդային պետական սահմանին, մտնում Ռումինիա, գրավում Խատին, Դորոխոյ, Սերետ, Սուչավա, Ռեդեուցի, Մարգինա, Սուկա, Միխայիլեն քաղաքներն ու 377 ուրիշ բնակավայրեր: Այդ հաղթանակների համար կորպուսի դիվիզիաները պարգևատրվում են շքանշաններով, դառնում են Կարմրադրոշ եւ Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր միավորումներ:

Երկրորդ անգամ Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով է

պարզեատրվում նաեւ կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Մարտիրոսյանը:

1944 թվականի ապրիլից Մարտիրոսյանը 40-րդ բանակից փոխադրվում է Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի 52-րդ բանակը եւ նշանակվում նրա 73-րդ հրաձգային կորպուսի հրամանատար: Այդ կորպուսի կազմում էին գտնվում 50, 115 եւ 254-րդ հետեւակային դիվիզիաները:

Չայ ժողովրդի արժանավոր զավակը, որը նախորդ մարտերին ցույց էր տվել զորավարական կարողություն, ռազմական լայն մասշտաբի գործողություններ պլանավորելու եւ կենսագործելու հմտություն, շարժվում է դեպի Կարպատները: Նա 1944-1945 թվականների ընթացքում իր նոր կորպուսով, մեծ հաջողությամբ մասնակցում է Ուկրաինական երկրորդ եւ առաջին ռազմաճակատների ձեռնարկած կարելու բոլոր օպերացիաներին՝ Յասսի-Քիշինեյան խմբավորման ջախջախմանը եւ Սանդոմիրյան հզոր պլացդարմի ստեղծմանը: Խորտակիչ հարվածներ հասցնելով թշնամուն եւ կրակակոխ հետապնդելով նրա բարոյալքված, ցիրուցան եղած զորքերին՝ 73-րդ կորպուսի զորամասերը, Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում, հունվարի 21-ի գիշերը մտնում են Գերմանիայի տարածքը. գետանցելով Օդերը, Նեյսեն՝ շարունակում են իրենց հաղթարշավը դեպի Բրեսլաու եւ Տիլզիտ քաղաքները:

Այդ մարտերի ընթացքում Մարտիրոսյանի միավորումը հինգ անգամ նշվում է գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններում: Կորպուսի դիվիզիաները անվանվում են «Օդերյան», իսկ նրա հրամանատար Մարտիրոսյանը երկրորդ անգամ պարգևատրվում է Լենինի շքանշանով եւ Կարմիր դրոշի եւս երկու շքանշաններով:

Վրա է հասնում բեռլինյան օպերացիան: Մարտիրոսյանն իր կորպուսով նորից Ուկրաինական առաջին ռազմաճակատի քաջարի զորքերի շարքերում է, նրանց հետ միասին գրոհում է Բեռլինի ուղղությամբ:

Ապրիլի 16-ի լուսաբացին, ավիացիայի եւ հրետանային մթնկոծությունից հետո, նրա զորամասերը, հարձակումը զարգացնելով Դրեզդենի ուղղությամբ, անցնելով Նեյսե գետը, թշնամուն դուրս են մղում խրամատներից եւ մոտենում Բեռլինի մատույցներին:

Մարտիրոսյանի կորպուսը հենց միայն Գերմանիայի տերիտորիայում գրավել է 16 քաղաք, ավելի քան 1000 բնակավայր, ոչնչացրել ավելի քան 20.600 ֆաշիստական զինվոր ու սպա, 83 տանկ, 21 ինքնաթիռ, վերցրել մեծ քանակությամբ գերիներ, ռազմական գույք եւ այլն: Այդ մարտերում կորպուսի մարտական առաջադրանքներն ան-

թերի կատարելու եւ անձնական խիզախությունների համար գեներալ Սարգիս Մարտիրոսյանը վերադաս հրամանատարության կողմից ներկայացվել է Խորհրդային Միության հերոսի կոչման: ԽՍՀՄ Քերագույն խորհրդի նախագահությունը 1945 թվականի մայիսի 29-ին նրան շնորհում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Բեռլինի մատուցներից Մարտիրոսյանը իր կորպուսով, մի շարք այլ միավորումների թվում շարժվում է Էլբայի ափերով դեպի Չեխոսլովակիա եւ պատերազմն ավարտում 1945 թվականի մայիսի 10-ին՝ մասնակցելով Պրահայի ազատագրմանը, որի համար պարգևատրվում է Չեխոսլովակյան «Սպիտակ առյուծի» երկրորդ աստիճանի եւ «Խաչ սուսերով» մարտական շքանշաններով:

Մարտիրոսյանը ուկրաինական եւ չեխ եղբայրական ժողովուրդների սիրելի զավակներից մեկն է: Նա հերոսական մարտեր մղեց Ուկրաինական ամեն մի թիզ հողի համար, մի շարք խոշոր միավորումների թվում օգնության հասավ Պրահային:

Ավարտվեց Չայրենական մեծ պատերազմը: Չայ ժողովրդի արժանավոր զավակը մարտական փառքով վերադարձավ հայրենի տուն:

Բանակի հրամանատարությունը 1945 թվականի մայիսի 15-ին Մարտիրոսյանի մասին կազմած բնութագրում նշում է.

«Չայրենական մեծ պատերազմի մարտական գործողությունների ամբողջ ժամանակամիջոցում գեներալ-մայոր Մարտիրոսյանը ցույց է տվել զորքերը հմտորեն ղեկավարելու վարպետության օրինակ, մարտերում ցուցաբերել է քաջություն եւ խիզախություն, Չայրենիքին անսահմանորեն նվիրվածություն: Նա դաստիարակել է հարյուրավոր, հազարավոր շքանշանակիրներ ու հարյուրավոր Խորհրդային Միության հերոսներ»:

Մարտիրոսյանի կուրծքը զարդարված է 14 մարտական շքանշաններով՝ Լենինի 4, Կարմիր դրոշի 4, Սուվորովի երկրորդ աստիճանի, 2 Կարմիր աստղի, Չայրենական պատերազմի առաջին աստիճանի եւ 2 Չեխոսլովակյան շքանշաններով ու մի շարք մեդալներով:

Չայ ժողովրդի արժանավոր զավակ, Խորհրդային Միության հերոս, պահեստի գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանն ապրել է Երեւանում, եղել Երեւանի քաղաքային խորհրդի դեպուտատ, ակտիվորեն մասնակցել հասարակական-քաղաքական աշխատանքներին:

Իր մահկանացուն նա կնքել է 1984-ի փետրվարի 15-ին, Երեւանում:

ԿԻԵ քաղաքի կայազորի պետի

6 նոյեմբերի 1943թ.

N 2

ք.ԿԻԵ

§ 1

